



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

L57.  
1625

1099

1999

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ  
Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ





# ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ԳՐԵՑ

ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ



ԶՄԻՌՆԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1883

# ԿՈՒՆԻՅ

ԱՌ ՄԵԾԱՇՈՒՐ ՏԻԿԻՆ Ա. ՏԻԻՍԱՐ

Տիկին,

Արևելահայ Մայր մեջ հրատարակուած ուղեգրու-  
քեանցս հասարոյքը կը համարձակիմ Ձեզ նուիրե-  
լու, մեր տոհմային գրականութեան աշխարհին առ-  
ջեւ արտայայտելու համար համակիր զմայման զգա-  
ցումը, որով ազգին քե' հին է. քե' նոր գրիչներն  
իրաւամբ կը համակուին' ի Ձեզ տեսնելով իզական  
սեռին գրական փառքը է. իրաւանց անան շահա-  
տակը:

Հաւաստի եմ քե Մայրայի հանձարեղ հեղինակին  
անունն երկիս ճակատը դրուելով' շուր ու վայլ  
պիտի տայ անոր: Ուստի կը խնդրեմ որ հաճիք ընդ-  
ունիլ այս նուէրը ինչպէս նաեւ խորին յարգանացս  
է. մեծարանացս հաւաստիքը:

Գ. Բ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Գարանրինա, 24 յունիս 1885:

4 1625-60  
ՅԲ. 1631

Ազնի՛ն, Բարեկամ,

Մեծ է ան որ ճշմարտութիւնը ըմբռնելու կարողութիւն է. հռչակելու արիւրքիւնը ունի: Դուք իրաւամբ կրնաք պանծալ բէ այդ արիւրքիւնը ունեցաք էք, զի ուր որ գեղծում, ուր որ ստութիւն նշմարեցիք, մատնանիշ ըրիք՝ արդարութեան սկզբանց պաշտպան կանգնելով:

Ձեր Ուղեւորութիւնն է Կոստանդնուպօլիս նոր փաստ մ'է ի հաստատութիւն ըսածիս:

Կը բարեհաճիք նուիրելու ինձ ձեր ընտիր բանականութեան է. փիլիսոփայական ու բանահիւսանկան տաղանդին այդ գեղեցիկ արդիւնքը: Կ'ընդունիմ զայն՝ փառասիրութեամբ: Շնորհակալ եմ ՚ի սրտէ:

Ս. ՏԻՒՍԱԲ

Սան Սթեֆանօ, 1 յուլիս 1883:

Մեր Ուղեւորութիւնն է Կոստանդնուպօլիս վերնագրով նամակները Արեւելեան Մասնայ մէջ ներողամտութեամբ ընթերցող բարեկամներ և ծանօթներ առաջարկել էին մեզ անոնց հաւաքոյթը նաև զատ մատենի մը ձևով հրատարակել: Առաջարկութիւնն ողորդել և զայն ընդունիլ զրեթէ պարտ մ'երևցաւ մեզ:

Ահա՛ կը կատարենք այս ախորժելի պարտքը, և այս ուղեգրութեանց վերատպման առթիւ անօգուտ չենք համարիր մեր թուիքը յայտնել նախ այն անձանց, որը խիստ և ծայրայեղապէս անողորմ կը գտնեն ժամանակիս մարդկանց և իրաց և ինչ ինչ պատմական կամ աւանդական իրողութեանց նկատմամբ մեր քննասիրական նշմարումները և անաչառ ուղեւորի տպաւորութիւնները. երկրորդ՝ այն կարգի ընթերցողաց որք այս նամականիւն վաղահաս ընդհատումէն կը հաճին ամբողջիլ:

Հայ դրագէտներէ և լամազիրներէ ոմանք սքորութիւն ունին մեր ազգին վարչական և ընկերական մանր պակտութիւնները ծածկելու, կամ ցոյց տալու այնպիսի Բարեբանութեամբ (euphémisme) որ աւելի վեհերոտ ջատագովի մը խնկաւէտ փոփոխութիւն քան թէ արդարատէր դիտողի մ'անվեհեր բողոքին կը նմանի:

Համողութեամբ ենք թէ ամեն բարոյական տղեղութեանց վրայ իրը շլակն նայիլ կամ անոնց հետ կոյրի:

պէս վարուիլ կամովին, իսկ խնայականութեան և բարոյականութեան կարգերուն վերաբերող ամենափոքր գեղեցկութիւնները ախնով և ուխտանաճանքով հոջակելը մարդ կութեան և հայութեան էական շահերուն դէմ դաւաղութիւն մ'է: Այս դատադրութիւնը դրադէտի արժանապատուութեան զգացումը կը քննէ, և անկեղծ դրադէտներու արհամարհութեան կ'ենթարկուի:

Ամենեւին համամիտ չենք կրնար ըլլալ որոնց հետ որ կ'երեւակայեն թէ ընկերային և տնտեսային մտլութիւնները աւելի դիւրաւ բոյժ կը գտնեն պահուելով քան թէ երեւան ելնելով: Յառաջադիմութեան, իրական յառաջադիմութեան ոգին, այն որ այսօր ժողովրդոց բարօրութեան անդրիպելի առաջնորդը կը սեպուի, սլաշտօն ունի վտիտ և շնչասպառ ազգի մ'երեւուն կամ աներեւոյթ հիւանդութեանց ախտաշնչանները քննելու, որպէս զի ըստ այնմ դարման տանի և անոր էութիւնը վասնզու պատճառները հետաջինջ ընէ:

Պարոյ Հայոց մէջ ընդհանրապէս արմատ բռնած գեղծմանց և փրատար սովորութեանց, վարուց ու բարուց, թաղուն ազականութեան և մանաւանդ զայս մ'անձանց թեթևութեան մասին մեր կարծիքը յայտնեցինք աներկեան, բայց ուշադիր և անկողմնատպահ ընթերցողը կը պարտաւորին հաստատել թէ մասնաւորներու յատուկ անուն և գործ զիջանք չյիշելու, վասն զի չէինք ուզեր կիրքերը գրգռել, և վասն զի մեր նպատակն էր հանրական յատկանիչ ունեցող ազգութիւնները միայն նշտակել և ա-

նոնցմէ զլուչութիւն քարոզել: Այսքանը բաւ չեն պեցինք, և արդարատիրութեան զգացումը մեր վերայ պարտ դրաւ նաև գովեստիւ յիշատակելու հայ արանց և կանանց կենաց և իրաց յարակից այլ հազուադէպ գեղեցիկը, ճշմարիտը, օգտակարը:

Ինչպէս գրեթէ ամեն հայաբնակ քաղաքներու նոյնպէս և Բիւզանդիոնի մէջ հայերը յատկապէս թեթևութեան խնդիրը աւելի խօսքով քան թէ գործքով կը լուծեն: Մածձինիի հետ կը կարծենք սակայն թէ մի գործքի սրբութիւնը հազար խօսքի պերճութենէն աւելի օգտակար է մարդ կութեան:

Նրբ գործիչներու խարուսիկ դիմակին ներքև միայն խօսողներու, նա մանաւանդ խօսքէ տխրած ուղներու գունատ գէմքը ընդհանրեցինք, չգարմացանք, այլ մեր հին ցաւին ստատկանալը զգացինք:

Հայերն՝ ըստ մեծի մասին՝ մարդուս իրաւունքները մի առ մի համբել, անոնց նուիրականութեան վրայ յուզուիլ, կրթութեան շնորհիւ արտագրուած սրտի և մտքի անկախութեան վրայ երբեմն իմաստասիրարար խորհիլ, զմայիլ իսկ կը ձևացնեն, աւսանց սակայն համբելու և ուսումնասիրելու նաև մարդկային պարտաւորութիւնները, որով միայն հնարին է իրաւանց արժանի ըլլալ, աւսանց զխտելու կամ զխտել ուզելու թէ տակաւին կը պահեն գերիի յատուկ վարք ու բարք, որով անարժան կը մնան թէ այս իրաւանց փոքրադուլին և թէ՛ այս բարոյական անկախութեան շուքին իսկ: Պերի է և գերութեան արժանի այն մարդն որուն զբաղմանց միակ շարժատիլն է՝ հումիական սամիկին պէս՝ հայ ու-

այլ և զբոսորդութեանց այսպիսի ստորին և անասնային նպատակ մը նշանակելու ու միանգամայն լուսաւորուելու ու փրկուելու ուղիքը հակասութեանց ամենէն տխուրն է : Այսպիսի դերութեան վիճակի մը, այսպիսի ստականութեան հոսանքի մը բնական հետեւանքն է աստիճանութեան խաւարիլն որ սրտին հիւժում կը տայ և իմացականութեան թմրիլն որ մտքին ամբողջութիւն կը բերէ : Անկնարկներ չէ թէ օրինաց անիրաւութիւններէ հետեւած այս կամ այն դերութեան, այլ անասնային յօժարութիւններէ և մարդկային բարձր շահերու նկատմամբ անդիտակցութենէ արտադրուած բարոյական դերութեան որ չլի մանրու ամենէն ստակալին է :

Երբ ազգ մ'այսպիսի ծանր վտանգի մտանուած է, երբ մանաւանդ ներքին թշնամիներու դիմակը, սուտ ազատասիրութեան շղարքը, ազաժամ ակնկալութիւններ և կամէութիւններ միականխներու առջև կը վարագուրեն այս վտանգը, և ազգին անմիջական ու ստիպողական շահերուն վրայ հսկելու պարտքը կը մոռցնեն, այս վտանգը ցոյց տալու, այս պարտքը յիշեցնելու արիւթ թիւն պէտք է ունենալ, երբ օրէնքը գէթ այս արիւթ կեան զործադրութիւնը շարգիլեր :

Եթէ խօսիլ զիտցողին միտքը պարտաւոր է թե առնուլ՝ ճշմարտը և գեղեցիկը բարձրացնելու և անոնց հետ թուելու համար, պարտաւոր է նաև ճիւրան մ'ըլլալ՝ սուտը և ազեղը վարատելու յառաջագրութեամբ :

Սակաւաթիւ են այն զբիճներն որը վազբային

մտղիլի զործ կը կատարեն, և կը փառաւորեն ազգային դրականութիւնը և լրագրութիւնը, աներկիւզ զխնայ զաւելով հասարակային սխալ կարծեաց հոսանքին դէմ, իսկ բազմաթիւ այն զբաղէաներն որը ճշմարտութեան կը փարին ամբողջ իր ներքինի, աւելի անասնային քան թէ մարդկային լեզու մը խօսելով, որը սեխն սև և ճերմակին ճերմակ ըսելու համար կը ծպտին, այսինքն կը զարնեն չէ թէ իրր դինուոր այլ իրր զարանակալ՝ երբ տէրութեան օրէնքն այսպիսի զարանակալութեան հարկ չգներ անոնց վրայ, որք իրենց մեղքը կը գեղեխն ազբորակով համեմելու, որոնց կազմարն աւելի խնկաման քան թէ վառօդ տառափ մ'է, և որք անթութեանէ զրդուելով իրենց մտապմտան նկուղէն դուրս կ'ելնեն և թուզթ կը մրտեն յառօթ և 'ի նախատինս մեր զբաղանութեան :

Տանիքներու վրայ լուսաւորութիւն քարոզել, յառաջդիմութեան բանուոր հոշակուել, գողնիլ գազափարներով և թամբու զգացումներով ազգասիրութիւն քարոզել, և զհողութեան հետ համանիչ այս վտեմ բասը բառերուն յետինը և հեղնալին ընել, հանդարտօրէն և անձայն մեր ազգին սիրտը և միտքը մշակելու գարտքը փողարով քարոզել, և առանց զործ տեսնելու, առանց զործ ողները քաջալերելու ծափ զարները տեսակ մը մտանութիւն է :

Պէտք է զխել սակայն թէ մենք զատապարտելի կը սեպենք զբաղիտաց և խմբազբայ ամանց լուսթիւնը կամ շղղմարտութիւնը մեր ազգին միայն վարչական և բնկերական սպախութեանց նկատմամբ,

որոնց վրայ տարագրական օրէնքէն բնաւ չեն արդիւ-  
 լուիր ազատօրէն խօսելու: Իրօք կան նաև ընդհա-  
 նուր պակասութիւններ, որք քաղաքական ընկերու-  
 թեան կազմակերպութենէ և օրինաց անպատեհու-  
 թիւններէ կ'արտադրին, և որոնց վրայ համարձակ  
 խօսելու իրաւունքը ջնջուած կամ սերմուած է քա-  
 նի մը տարիներէ ի վեր, և ահա մեր նամականիին  
 վաղահաս ընդհատման դիւսաւոր պատճառն ալ այս  
 է: Բացատրենք մեր միտքը:

Վստանդնուսօրոյց անցեալն ու ներկայն, քա-  
 ղաքային և քաղաքական ընկերութեանց թերութիւն-  
 ները, վաճառականական, հնարադիտական, դան-  
 ճաղիտական, կրթական և այլ տեսակ հիմնադրու-  
 թեանց ևս քան զևս բարեօրման և բարդաւածման  
 խնդիրներն անշուշտ տակաւին անսպասելի նիւթ կը  
 մատակարարեն հետաքրքիր և զիտուղ ուղեւորի մը,  
 և Թիւրքիան սիրող ամեն գրիչներու պարտքն է ա-  
 նոնց վրայ խօսիլ՝ վիասակարը մեղադրելով և օգտա-  
 կարը ցոյց տալով: Բայց պէտք է այս պարտքը հա-  
 մարձակապէս կատարելու թէ՛ պաշտօն և թէ՛ ազա-  
 տութիւն ունենալ, և մենք կը ցուլինք ըսելու թէ  
 մեր անձնական գրադմանց պատճառաւ ոչ միայն  
 չենք կրնար կանտնաւորապէս կատարել այսպիսի  
 պաշտօն մը, այլ եթէ ժամանակ ունենայինք անգամ  
 այսպիսի ախորժելի գրադման մի համար, չպիտի յա-  
 ջուղէինք արժանապատուութեամբ և օգտակար կեր-  
 պով ճշմարտութեան ծառայել, քանի որ այսօր մեր  
 երկրին ազատասիրաց գրիչը խտաիւ գրպուած է:

Մեզ անընդունելի կերեւայ ստուգապէս քաղաքա-

կրթեալ ընկերութիւն մի առանց անբռնարարելի  
 իշխանութեան մի որ անոր վրայ հսկելու պարտաւոր  
 է, և որ լի բարոյական օրէնքէն կը բղխի: Այս ազ-  
 մայ իտութիւնը, ոչ վաճառականութիւնն և ոչ ալ  
 նիւթական շահերու տեսութեամբ և նպատակաւ  
 մշակուած գրականութիւնն ու դիտութիւնը կրնան  
 երբէք սոց մը սահմանել և անոր էութիւնը սպա-  
 հովել թէ՛ բազմին և ոյժին ամարդութեանց դէմ,  
 և թէ՛ բարոյականի բարձր օրինաց վրայ հիմնուած  
 լուսաւորութեան մ'անդիմաց բելի արջաւանաց հա-  
 կառակ: Այնքան պարզ է այս ճշմարտութիւնն որ  
 պատմութեան դիմելու, այս կամ այն քաղաքակա-  
 նացեալ ընկերութեան անկման պատճառները մո-  
 ռացկոտ կամ յամառ յիշողութեանց առջև դնելն  
 աւելբող կը թուի մեզ: Ներկային առօրեայ շահե-  
 բովն գրազած և սպաղային նկատմամբ անտարբե-  
 րութեան քաղաքականութեամբ գրաւուած իշխա-  
 նութիւններն այսօր դիտութեամբ կամ անդիտու-  
 թեամբ կ'անարդեն պատմութեան դասերը, չտես-  
 նել և չհասկնալ կը ձևացրնեն ինչ որ անխուսելի  
 է, ճակատադրային է ազդերու այժմեայ յառաջդի-  
 մութեան պայմաններուն մէջ:

Այս անարդութիւնն թէ՛ ներկային և թէ՛ ապա-  
 դային համար ունի տխուր հետեանք, որ կը նշմա-  
 րուի արդէն: Բնկերական և քաղաքական հիմնաբ-  
 կութեանց վիճակն երբ ընկերութեան մը դերաց ոյն  
 շահերը կառավարող բարոյական օրինաց սահման-  
 ջումներուն չհամապատասխաներ, երբ այս անհա-  
 մաճայնութիւնն ազդի մը բռնած մի՞նչ ճանրուն

վրայ կը բանայ կորստեան վիճ մը, ասոր եղերաց վրայ ճրագ մը գնել և վտանգը չտեսնողներուն քայլը լուսաւորել պարտ մ'է արդարև :

Այս ճրագը մամուլն է : Գծրաղղարար այս լոյսին վրայ ահադին գրուան մը գրուած է : Գրաքննութիւնը գէնք մ'է գրչին գէմ : Այս գէնքն անողուտ, մանաւանդ թէ փաստակար եղած է թէ՛ զայն գործածողին և թէ՛ որուն գէմ որ ուղղուած է այն : Այն նմանի այն հասակական գնաակին որ գիտական ճշմարտութիւն մը գտնելու և գրելու գրաղած գրիչը և գրողը յանկարծ անչարժութեան կը դատապարտէ, Սիրակուղայի գծրաղղ երկրաչափին սէս : Այս վտանգին էութիւնն ու գաղափարն կը ջլատեն միտքը, կը հաշմեն գաղափարները, և ահա հրապարակի վրայ խօսելու պաշտօն ունեցողը կը հարկադրուի՝ ճշմարտութիւնը յայտնելու ատեն թոթովելու և չէ թէ խօսիլ :

Թոթովումը ճշմարտութեան դիմակն է : Մողիլը կարծես քնքոյշ թաթիլի դէր կը խաղայ սղեղին և մոլիլին հետ : Խօսելու տեղ թոթովումը կը նմանի այն վիրահատին որ կարոց ի ձեռին քաղցիկեղի մը մօտէլու ատեն կերերայ, և վէրքը փոխանակ բուժելու աւելի կը վտտթարէ : Արդ՝ լաւաղոյն կը համարինք խօսելէ դադրիլը քան թէ թոթովումը և անարժանութեամբ վարուել ճշմարտութեան հետ : Բայց կը սխալի կարծողը թէ մամուլը լուսութիւնը դաս մը չէլսելու պարտաւորութիւն ունեցողներու համար . . . :

Գ. Բ. Զ. Ի. Կ. Ե. Բ. Ե. Ե.

# ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



ՆԱՄԱԿ Ա.

Ալին Մամուրեան,

Մայիսի 2ին վերջին անգամ մ'ալ պազ նուելն ետք երբ բաժնուեցանք, երբ աւտորիական Սաֆուրեան անուն շոգ ենաւն, ուր մտեր էի Պոսֆորի ավուանքը վերստին տեսնելու համար, սխաւ շարժիլ և Խզմիրի ավերէն հեռանալ, երբ քարափանց հոյակապ շինութիւնները, եկեղեցիներու զանգակատունները, մզկիթներու Ֆաթիմները, Բակուս լեռին ստորոտի անտիկներն և Տաճիկի գերեզմանատանց բարձրարեւ նոճիկները տեսութենէ խոյս տալով աներեւոյթ ըլլալու չափ փոքրացան, երբ վերջապետական նշոյլը հորիզոնին անջրպետներուն մէջ գրեթէ անորոշելի գիծերու նմանեցուց թէ Զմիւռնիան՝ զոր Լամարդին Արեւելից մարգրիտը կ'անուանէ բանահիւստական երեւակայութեամբ, և թէ Միմասի, Բակուսի և Սիրիլի լեռանց շղթաներն որք հարաւային, արեւելեան և հիւսիսային կողմերէն այս յանրական մարգրիտը կը

պահպանեն, Մախուրնայի յարկին վրայ կունակա սիւնակի մը տուի, ճնօտս մեքենայաբար ձեռներուս մէջն առի, թարթ ախուսն նայուածքս անտպանելի ալիներու յախտենական շարժման վրայ յառեցի և սկսայ մտախոհել :

Անտակի յուզումով մը համակուած, ուրախութեան և տրամուխեան անըմբռնելի խառնուրդէ մը գրաւուած՝ կը մտածէի ճակատապրիս քմածին խաղերուն վրայ, որոնց մարդս անմուսնչ կը համակերպի միշտ՝ երբեմն անոնց նահատակն և երբեմն ալ ուղորակի զորձիքն ըլլալով :

Այս քմահաճութեանց մին կը սեպելի յանկարծ կարճատե բացակայութեան մը դատապարտուիր, և Տիկին տը Սթանլի հետ համամիտ կ'ըլլայի խոստովանելով թէ « Ճամբորդութիւնն արդարև մարդկային կեանքի արտադի գրօսանաց մին է » :

Պահ մ'առաջ ծննդեան երկրիս մէջն էի, սիրելի անձեր և առարկաներ չուրջս կը բոլորուէին, կը խօսէինք, կը խնդայինք, և հիմակ կարծես լքուն և նկուն մեղապարտի մը պէս միտջնակ և լռիկ ջրային անդունդներուն վերեւը կը տատանէի՝ կեանքս յանձնելով զիւրբարեկ կեղեի մ'որ ծովերու անբաւութեան մէջ աննշմարելի հիւլէի մ'արժէքը ունի :

Երևակայութեանս առջև մի առ մի կը շարուէին բոյնս՝ իր ամեն հրապոյցներով, բարեկամներս՝ որոնց խնդումներս կերպարանքը մտահոգութեանցս ծանրութիւնը կը թեթեւէր, բարեկամահիներս՝ որոնց սիրուն կերպերն և համակիր ժպիտներն անսպասելի էին, ածուրս երպնեբանդ ծաղիկները զոր կը

խնամէի՝ իրենց անոյշ հասերովն արբշիտ, ծառերն՝ որոնց զովաշունչ շուքին կ'ապախնէի ամառուան արևադարձային ջերմութեան գիւնագրելու համար, թոչուններն՝ որք տերևախիտ ոստերու միջև թառած՝ կը զեղզեղէին դարնան գալուստը և տիեզերական կենդանութեան զարթումը աւետելով, ծովեզերքի նաւամատոյցն ուր արշալուսի ժամանակ կը նստէի և ժամերով ձկնորսութիւն կ'ընէի՝ թոյլ տալով որ նայուածքս մերթ Ալֆոնս Գարի Լ'ար Բէշէս Էսթէնը անուն գրքին երեսներուն վրայ թափառի, և մերթ հորիզոններու հեռաորսութեան մէջ ընկղմի, և ծննդեան երկրի այս ամեն առաւելութիւններէ և գեղեցկութիւններէ առժամանակեայ կերպով զատուած և զրկուած ըլլալուս գիտակցութիւնն ևս քան զես սիրտս կը ճղմէր չզխանձ ինչուն, մեղամաղձային տրամագրութիւնս կ'աւելցնէր և չէր թողուր որ բոլորովին վայելիմ նոր երկիր և ծով, նոր մարդ և կեանք անսնելու այն սովորական ուրախութիւնը որ ամեն ճանբորդի յատուկ է՝ երբ ճանբորդութեան բուն նպատակն ըստ ինքեան ախտը կամ մաստանջութիւն պատճառելու չափ ծանրակշիւ չէ :

— Ո՞ր անդունդին յատակը կը զեղեցրիս, հարցոց յանկարծ ձայն մ'որ անձանօթ չէր ինձ :

Կարծես խոր քունէ նոր արթնցողի մը պէս նախ յաջ և յահեակ ժուս ածեցի նայուածքս, փոքր ինչ ուշաբրեկցայ, վեր բրի զլուխս, և ահա առջևս կեցած տեսայ մեր բարեկամ Պ. Տ․․․ը, որ՝ ինչպէս գիտես՝ նաև պարզ հարցումի մը բանահիւստիս դարձուած տալու մուտքիւնր ունի :

— Սրտին, պատասխանեցի:

Եւ պահ մը լուռ կենալէն ետք, ես ալ հարցուցի.

— Ո՞ւր էիր մինչև հիմա, և ո՞ր ծակէն ելար:

— Խցիկին (cabine) մէջն էի. ուղևորի սպասներս տեղաւորելու և գիշերուան հանդատութեան միջոցները պատրաստելու կը պարտուէի, պատասխանեց:

— Ո՞ւր կ'երթաս:

— Պօլիս. և դ՛նն:

— Նոյնպէս:

Որքան տկար է մարդկային բնութիւնն և որքան փոփոխական: Դեռ պահ մ'առաջ հովին և օդին, ծովին և կոհակներուն յանձնուած բանուոր մը կը համարէի ինքզինքս, կ'զգայի թէ ներելի չէր վատահիշ այս կասկածելի և շատ անդամ անողք բանտապահներուն որք ստէպ ճանրորդներու և նաւատիրներու դահիճներն եղած են ի բնէ անտի, և հետեւարար սև գազափարներու, տխուր զգացումներու բռնն դամբանական կախարչի մ'անողորմութեամբ մտքիս և հողիիս վրայ կը ծանրանար: Գլխովս մերժուած, բարեկամութենէ մատնուած թշուառի մը պէս կ'երեւակայէի թէ իմ և աշխարհի մէջ ալ մշտնջենասպէս քսուած է սև վարագոյր մ'որու վրայ կասկածոտ երեւակայութիւնս կը կարգար Տանդէի գեհնահան զբան վրայ գրուած այս վճիռը.

Lasciate ogni speranza.\*

Կը թուէր ինձ, — և ծայրայեղ զգայնութեան և

\* Ա՛յ որ ես ե յոյս մի՛ ունենար:

հոգւոյ հիւանդութեան մը պէտք է վերադրել այս ուսման անհիմն վիշտերը, տխուր տեսիլները, աղայական կասկած ոտութիւնները և վախերը, — կը թուէր ինձ, կ'ըսեմ, թէ ծովային անխուսելի ազէտից տեղի տուող սովորական պատճառներուն մին թերեւս ամեն ուղևորներու կեանքին հետ նաև իմս զոհ պիտի տար անյատակ անդունդներու. թէ ալ բոլորովին անյոյս և աննահ՛ հրաժեշտ կը տայի կեանքի ուրախութեանց, և մահուան նկատմամբ անարգու անտարբերութեանս և սովորական աներկիւզութեանս հակառակ Ժօւրլէյի հեղինակին հետ սրտիս կ'ըսէի:

L'amitié te trahit, la pitié t'abandonne,

Et, seule, tu descends le sentier des tombeaux.\*

Արդ՝ բարեկամական ճայն մը վերջ տուաւ այս անախորժ մտահոգութեանց. բնկերի մը քով գլուխուրդ զգալով հոգեին արտիեցայ, բոլորովին փոխուեցայ. անոր հետ չիչ մը գարեջուր պարպելէն ետք զուարթութեան զգուէլի հովի մը դէմքիս վրայ ծաւալելը զգայի, միտքս և սիրտս թեթեւան, զողցես հետաջինն եղան այն ամեն տեսիլներն որք զիս կը չարչարէին: Սկսանք թե ՚ի թե չոգեհափն յարկին վրայ ճեմել, խօսիլ ու միանգամայն մեր շուրջը նայիլ առանց որոշապէս բան մը տեսնել կարենալու: Եէնէ՛ գալէն, Չէ՛Ֆէ՛ գարնոսշաբէ՛ և Միմաս

\* Տե՛ս Le Vallong. Premières méditations poétiques, ՚ի Լամարպիմէ:

† Les Deux Mamelles.

լեռին բոլոր շղթաներն արդէն հեռաւորութեան և մթութեան մէջ աներևոյթ եղեր էին: Սախաբուն Իզմիրի ծովածոցին նեղուցը կազմող երկու թերակղզիներուն միջևէն կ'երթար, հորիզոնին վերևը սևեռած քանի մը սպառնական ամպեր հետզհետէ կը թանձրանային, հիւսիսային արևմտեան հով մ'ալիները կ'ուռեցնէր՝ անոնց գագաթը փրփրապէս սպիտակելով, և շողենաւը կ'սկսէր քիչ մը սպրել:

Նոյն միջոցին ճաշի զանգակը հնչուեցաւ. Պ. Տ. . . ին հետ վար իջանք, սեղան նստանք և պատրաստուեցանք մեր անհամբեր ստամոքսներու բողոքարկու բարկութիւնը հանդարտելու:

Մեր զիմացի կողմն եկան շարուեցան անզիլացի և գերմանացի զուարթ և շատխօս ուղևորներ՝ որք խցահան 'ի ձեռին՝ մինչդեռ Հոկնոսի գինիի շիշեր կը բանային ու միանգամայն անձեզի պէս անընդհատ կ'ը շաղակրատէին, ես և բարեկամս չուտով կերանք լամպինք, և իսկոյն վեր ելանք մեր թոքերը ծովին ազի և խօփայն սննդաւէտ օղէն աւելի երկար ժամանակ շրջկելու համար:

Գլանիկ 'ի բերան՝ սկսայ ման դալ Պ. Տ. . . ին հետ որ տակաւին Իզմիրի ծովածոցէն նոր դուրս կ'ելնէր ճանբորդութեան համար:

— Ո՛րք ենք, լինչպէս կ'անուանին այս լեռները, հարցուց՝ նեղուցին երկու կողմի երկիրները ցոյց տալով:

— Իզմիրի ծովածոցին նեղուցէն կ'անցնիք, ըսի: Սա ձախակովեան լեռներու ծայրը Գարա Պարոնի հրուանդանն է, որ հին ժամանակները Էրիթրէա ը-

սուած թերակղզիին մի մասը կը կազմէ, աջակողմեան լեռներու հրուանդանն ալ Գըղըլ Պարոն կ'անուանի, որ Էջիտիայի գաւառին մի մասն է, և որ իր Կարֆի Հրոանդան անունը առած է հրալեռնային հողերու կարմիր դոյնէն: Էջիտիա ևս թերակղզի մի է, և համբաւաւոր Ֆոջան անոր հիւսիսային կողմին վրայ շինուած է: Էրիթրէա թերակղզին ըսելով կ'իմանանք այն ծովեզերքը զոր մանր մունր խորչեր կը կտրեն և որ արևելքէն արևմուտք կը տարածուի Թէօսէն մինչև Սպիտակ Հրուանդան. Յոյն դաղթականներ առենօք այս խորչերուն մէջ ամբողջ իւրենք շիներ էին: Թէօս քաղաքը շինուած էր այս թերակղզիին հարաւային ծովեզրին այն նեղ մասին վրայ ու: Իզմիրի ծովածոցին և Սուսամի ծովին մէջուեղն է, այսինքն պարանոցի մը վրայ, զոր կը կազմէին արևմտեան կողմէն Արզաճըզի խորչն և արևելեան կողմէն ալ Թէօսի խորչն որ այսօր բոլորովին լեցուած է\*: Հին պատմիչներն և աշխարհագիրները, Սորաբոն, Պաւսանիաս, և Փոքր Ասիոյ զիտնական ուղևորները, նա մանաւանդ Թուրնըֆօր և Շարլը Թէքսիէ կը հաստատեն թէ . . .

Բայց զիտեցի որ հնազիտական կամկուլիւններս փուլ մ'անդամ չէին արժեր Պ. Տ. . . ին համար, որմէ հետաքրքիր ուշադրութիւն կը յուսայի միամտաբար, և որ արդէն կը մրափէր ամբողջ մը վրայ ուր

\* Թէօս յոնիական դաշնակցութեան տասներկու քաղաքներուն մին է, եւ այսօր կ'անուանի Արզաճըզ: Անակրեօն և Արեկիքօն նոն ծնած են:

նստած էր երբ սկսեր էի խօսիլ՝ իր հարցումին պատասխանելով:

Հովն իջած և ամպերը ցրուած էին արդէն, աստղերն երկնից վերևը կը փողփողէին, և այլ առաջուան սղէս կատկածելի և թշնամի շէին երևար ինձ օդն ու ծովը, ուստի վստահութեամբ խցկս իջայ և ննջեալս մտայ:

Առտու թենեատօսի առջևն էինք: Միտիլիէն և Պապա Գալէսիէն գիշերն անցած և ոչինչ տեսած էինք: Հեակարար պիտի ներես որ Սաֆօյի հայրենեաց վրայ լուծեամբ անցնիմ:

Պատմութիւնը նաև հարեանցի կերպով խառնած, զասական բանահիւստութիւնները փոքր ինչ կարդացած ըլլալ և՛ կանգ չառնուլ թենեատօսի առջև՝ որ այսօր Պօղոս Արաբը կ'անուանի՝ անկարելի է հետաքրքիրներու, նա մանաւանդ օտարազգի ուղևորներու համար:

Անդլիացի և գերմանացի ճանրորդներն իսկոյն հեռադիտակի ձեռնին սկսան ուշադիր քննել այս կղզիին դիրքը, տեսքը, նաև հանդիպակայ ծովեզերքը, սպա աշխուժով խօսիլ:

Պ. Տ. . . նոր արթնցած և աչերը շփելով օտարական ուղևորներուն մօտեցած էր:

— Ի՞նչ կայ, ի՞նչ է ասոնց իրարանցուցին սպառնալով: միթէ Տարտանէլ հասանք, հարցուց Պ. Տ. . . :

— Ահա՛ թենեատօսի կղզին, ըսի, Տարտանէլի ներդուցին մօտ և անոր հարաւային արևմտեան կողմն է այն: Ինչպէս հին ժամանակները նոյնպէս և հիմա համբաւաւոր է այս կղզին:

— Իր գիւնիովն, այնպէս չէ՞. կը հասկնամ այս խմաններուն հետաքրքրութիւնը:

— Հիմակ իր գիւնիովն, իսկ հին ատեններն որիչ բանով:

— Ի՞նչ է ուրիշ բան ըսածդ, հարցուց Պ. Տ. . . :

— Թենեատօս նշանաւոր է նաև զատմութեան և բանաստեղծութեան տեսութեամբ: Վերդիլիոս կ'ենթադրէ թէ Յոյները Տրովադայէն մեկնել կեղծելով՝ փայտաշէն երկվարը սա գիմացի ծովեզերքը թողուցին և այս կղզիին մէջ պահուեցան . . . թէ օձերը հոն խեղդեցին Ասագուհը որ Պրիամու զաւակն էր: Իսկ հանդիպակայ դաշտերն և լեռներն են Տրովադայի նահանգը զոր կը պարփակեն Ելլեսպոնտ, Եգեան ծովն և Խոս լեռին շղթաները: Մայրաքաղաքն է Տրովադա ուսկէ կը հոսին այս շղթաներու ստորտաներէն թղխող Միսիս\* և Սղամանտր՝ գետերը . . . : Աքիւլէս որ Հեկտորը մեռցուց և երեք անգամ Տրովադայի պատերուն թողորտիքը ժուռ ածեց՝ իր բարեկամ Պատրօկլի վրէժը լուծելու համար, Պարիս՝ որ այս դիւցազանց դիւցազնը ներբանէն վիրաւորեց, Պօլիքսէն՝ որ ըստ Հոմերոսի . . .

Դիտեցի որ այս անգամ Պ. Տ. . . ուշադրութիւն կ'ընէր՝ թերևս իր ժամանակը վատնելու աւելի ախորժելի միջոց մը չունենալով: Յիշեցի անոր առջի գիշերուան անուշադրութիւնը և քունը, և խօսքս ընդմիջելով՝ ըսի.

\* Հիմակ այս գետին անուցն է Մէնդերէս . . . :  
: Այժմ կ'անուանի Գլբէ կեղեք:

— Մնացորդն ուրիշ անգամ :

Եւ զինքը հրաւիրեցի Ռոբէտիանին եւ Էնեօկանին զի մեղու : Պ. Տ . . . զէմքը ծուեց , սրդողիլ ձեացուց , հեւացաւ քովէս , մտեցաւ զաղլիացի դերասանուհիի մ'որու լեզուանութիւնն եւ պէջրասիրական թեթեւութիւնն արդէն իր ուըզ գրաւեր էին առջի իրիկուն :

Շողեհնաւը նորէն սկսաւ ճանբայ առնուլ , Ելլեսպոնա մտաւ շուտով եւ կեցաւ Չանազ Գալէսիի առջև : Ժամէ մ'աւելի պիտի սպասէինք հոս . ուստի ժամանակ ունեցանք հանդարտօրէն նայելու այս նշանաւոր նեղուցին , որուն երկու եզրին վրայ շինուած ահագին ամրոցները կարծես խրոխտաբար գրգռու կը տան թշնամիի նաւատորմիչներուն : Հետաքրքիր ուղևորներուն հեռադիտակներն իսկոյն աչերու վրայ տեղաւորեցան , Թրակիոյ եւ Մեսիպիի ափունքը , հասարակային եւ մասնաւոր շինութիւնները , մարտիոցներն եւ հուր ու դունդ արձակելու պատրաստ թնդանօթները սկսան քննուիլ կարգէ դուրս հետաքրքրութեամբ : Ճանբորդներուն այս խլրտումն եւ իրարանցումը վերստին քովս բերին Պ. Տ . . . ը , թէև իր յօժարութեանց նայելով լաւազոյն համարէր զերասանուհիին նայուածքովն ու ժպիտովն ապրիլ , անոր վրայ թաղուն եւ անհուն կատարելութիւններ ընդնշմարել եւ երազել . . . քան թէ աշխարհագրական կամ պատմական իրողութեանց վրայ տեղեկութիւններ ստանալ :

— Ինչ պաշտելի արարած . ինչ սիրագրգիւ ժպիտ . սիրտս արդէն կը վառի յիրաւի , ըսաւ Պ. Տ . . . :  
Եւ շարայարեց .

— Դժբաղդաբար հոս կը վերջանայ անոր ուղևորութիւնը . ահա՛ կը պատրաստուի նաւակ մտնելու եւ ցամաքն ելնելու :

— Ի՛նչ շուտով բռնկեցար . միթէ լուցիլք է սիրտդ . քեզի պէս կնիկի վրայ հոգի տուող մարդ քիչ տեսած եմ , պատասխանեցի :

— Անգղայներու հետ գործ չունիմ , ըսաւ : Գեղանի հրեշտակ մը տեսնել , խորհրդաւոր հրապոյրներ նախազգալ եւ մեռնելու իսկ չհաւանիլ կրանիթէ սիրտերու յատուկ է :

— Տղայ ես տղայ , ըսի :

Ապա թեէն բռնելով իր նայուածքը հրաւիրեցի Տարտանէլի Թրակիոյ կողմին մի բլուրին վրայ :

Եւ շարայարեցի .

— Սիրելի վտանգաւոր շուայլութիւն մ'է : Կր տեսնես սա զարաւանդը . Սեստոս ահա՛ անոր վրայ շինուած էր սակից հազար հինգ հարիւր տարիի չափ առաջ . այս քաղաքին մէջ կը բնակէր Հերօ անուն անտիական հելլենուհին , Աստղիան քրմուհիներուն մին որ անշուշտ՝ զերասանուհիից պէս՝ գեղանի հրեշտակ մ'էր , խորհրդաւոր կատարելութեանց անսպասելի հանք մ'էր , եւ որ Ալեանտի սիրտը վառած եւ անոր սրտին տիրուհին եղած էր նոյնպէս : Այս յոյն երիտասարդը կը բնակէր Ապիտոսի մէջ , որ ահա՛ ճիշդ Սեստոսի սա հանդիտակայ կողմին , հիմա Նաղարա Պոսթոնս ըսուած հրուանդանին վրայ շինուած էր : Ալեանտր ես քեզի պէս բռնկուն եւ սիրապաշտ սիրտ մ'ունէր , եւ իր գեղանիին հետ տեսնուելու համար ամեն գիշեր Ելլեսպոնաի մէկ եզրէն միւսը

կանցնէր և Սեստուս կը գար: Խեղճ պատանի, իր  
 յանդգնութեան պատիժը գտաւ, զիչեր մը փոթոր-  
 կի հանդիպեցաւ, և ծովամայն հետաջինջ եղաւ:  
 Մեղք որ Քսերքսէսի կամուրջը տակաւին չըննուած  
 էր այս նեղուցին վրայ: Հերո իմանալով իր սիրակա-  
 նին մահը ծովը նետուեցաւ՝ անդունդներուն յա-  
 տակն անոր հետ յաւիտենապէս սպակուելու համար:

— Կ'երազե՞ս, հարցուց Պ. Տ... քիչ մը մտմտու-  
 քի երթալով:

— Եթէ չես հաւատար, կարդա՛ Միւզէի Հէքօ և  
 Լեոնարդ անուն քերթուածը, և պիտի տեսնես որ սի-  
 րուհիի մ'եառէն երթալու համար ծովէն անցնիլն իր  
 վտանգը ունի: Եթէ տեղը ըլլայի, յանուն սիրոյ  
 թերևս համարձակէի կեանքս արկածներու յանձնե-  
 լու եթէ ձկնային թևեր ունենայի լորտ Պայրընի պէս՝  
 որ Ելլեսպոնտի մէկ եզրէն միւսն անցաւ լողալով,  
 և կամ եթէ կարենայի ապաւինիլ սրբութեանս՝ Քիւ-  
 քիւֆէնին պէս որ՝ եթէ սուա չխօսիք Վօլթէր՝ ճիգը  
 վիթներուն իր սրբազոյնը Բօթէնցայի գետակին  
 վրայէն քայլելով կ'անցնէր առանց թըջուելու . . . :

— Կրնո՞ղ տանի Վօլթէրոյ ալ, Քիւքիւֆէնիոյ ալ,  
 ազադակեց Պ. Տ... յանկարծ: Մինչ քեզ մտիկ կ'ը-  
 նէի, ահա՛ սիրուհիս դուրս ելաւ և աներևոյթ եղաւ.  
 Շարակրասներուն ուշ դնողին պատիժն այս է ահա:

Թոյլ տուի որ Պ. Տ... իր կատգութիւնը կրծէ, և  
 ներքնապէս գոհ եղայ իր գծ գոհութիւնը տեսնելով:

Մինչ այս, մինչ այն Սալուարնօ շարժելով Մարմա-  
 րայի բերանը հասաւ, Կալիպոլիի առջև քիչ մը կանկ  
 առաւ, ճաշի զանգ ահը զարնուեցաւ. Պ. Տ... ին

հետ հաշտուեցանք և շիջ մը գիւնի սարսկելով փոքր  
 ինչ զլլիւեցանք, նորէն վեր ելանք, մինչև կէս գի-  
 շեր յարկին վրայ կեցանք մերթ ման գալով, մերթ  
 խօսելով, և հինգ ժամի չափ քնելէն, առտու Ձէք-  
 մէճէներու ափուհը քերելէն, Սան Աթեֆանօյի և  
 Մազրիի գիւղի առջևէն նստելէն, Խլխանաց կղզիներ-  
 րու արշիպէղադոսին նայելէն ետք Մէրայ Պուրնու-  
 հասանք, անցանք Լէանտրիի աշտարակին առջևէն,  
 հասանք Ոսկեղջիւրի առաջին կամուրջն, և ահա՛ Բիւ-  
 զանդեան պանդոկին մէջ քիչ մը հանգչեւէն ետք  
 առջի գործս եղաւ քեզ առած խոստումս կատարել՝  
 այս առաջին նամակս գրելով:

Ա մայիս 1881:



**Ն Ա Մ Ս Կ Ի**

Տխուր երազի մ'ազգումովն այսօր սովորականէս  
 աւելի կանուխ արթնացայ, բայց և այնպէս ժամի մը  
 չափ անկողնիս մէջ կեցայ նաև բարոյապէս արթըն-  
 նալու համար:

Մինչդեռ յիշտութիւնս ամբողջելով անընդհատ  
 իրողութեանցս վրայ կը խորհէի և անոնց նշանակու-  
 թիւն մը տալու կ'աշխատէի, միտքս ուրիշ ուղղու-  
 թիւն մ'առաւ:

Ահայ մտածել թէ վեց օրէ ՚ի վեր Բերայի թա-

փառաշրջիկ ուղևորներուն մին եմ. թէ քանի մ'օտարականներու և օտարասիրտ Հայերու հետ միայն տեսնուեցայ տակաւին, թէ Թիւրքիայի մայրաքաղաքը գտնուիլ և հոն բնակող Հայերուն ազգային և ընկերական կենաց, բարուց և սովորութեանց, հայ մամուլին և զրական շարժումին վրայ դադարաբար մը կազմելու առիթ չունենալը ամօթ մ'էր ինձ, թէ նա մանաւանդ անդարմանելի կորուստ մ'ըրած պիտի ըլլայի եթէ ՚ի մօտուստ ճիշդ տեղեկութիւններ չկրնաւ յի առնուլ հայկական խնդիրին վրայ, խնդիր որու էութեան չէին ուզեր հաւատալ զահլիճները վերջին պատերազմէն առաջ, և զոր պատահարներն Եւրոպայի զիւանազէտներուն խղճին բռնի ընդունել տուին, ենթադրելով թէ խիղճ մ'ունին անոնք:

Ո՞ր են, կ'ըսէի մտովին, այն Հայերն որք քանի մը տարիէ ՚ի վեր հրապարակի վրայ կը խլրտին, յառաջդիմութեան առաքեալները կը հանդիսանան խօսքով և քիչերը գործքով, հայ անունը առասպելական կեղծիքներու քառօն հանելով պատմական իրողութեանց կարգը կը դասեն, հայրենասիրութիւն . . . պարտիք և իրաւունք կը քարոզեն և լրագիրներու մէջ կը փառաւորուին:

Կ'երևակայես անուշտ այն տաղնապը որ առաւօտեան հանգստութիւնս կը վրդովէր երբ կը մտածէի այսպիսի փիւնիկեան թռչունի մը չհանդիսած Խզմիր վերադառնալու անպատեհութեան վրայ, տագնապ որ ևս քան զևս կը սաստկանար՝ երբ կը մտարեղէի թթու-անուշ զիտողութիւններդ որով սովորած ես զիս գրգռելու՝ կարծելով թէ հոս աւելի իտալական

Ֆար Զէնիէի քաղցրութեանց կը նուիրեմ ժամերս քան թէ ազգային և զրազիտական շարժումին կեղբոնները զիմելու և տպաւորութիւններս Արևելեան Մաճըս հաղորդելու:

Ես հնարք, որ կարծես սարգին պէս հազարաւոր աչք ունի, արդէն ամիսն անգամ մ'այդ պաշտօնը կը կատարէ՝ իր սուր նայուածքը ամենուրեք սուղելով, ուղիւր գովելով, ծուռը պախարակելով, ամօթուն և իրական տաղանդը շոյելով, անամօթ տղի-տութիւնը սպտակելով, գրեթէ միշտ անկողնասպաս հուժեամբ և ուր ուրեմն խտուժեամբ դատասպարտելով այս տեղի անձերը և իրողութիւնները, և հետևարար կրնայի իր արդոսական պաշտօնին չխառնուիլ՝ եթէ ես ինքս ալ չփախարէի հետաքրքրութեանս յաղուրդ տալ:

Իսկոյն վար ցատկեցի անկողնս, քի լիւնքս՝ դրի նախ Կալաթայի Ս. Լուսաւորչի եկեղեցին երթալ չէ թէ աղօթքով հոգիիս կեղտերը սրբելու — այդ գործը Յորդանանու ջուրերուն կը վերապահեմ — այլ Երեսփոխանական Ժողովին նիստը տեսնելու, կարծելով թէ հոն պիտի հանդիպիմ հայասիրտ ատենաբաններու, ազգային զիւանազէտներու, զրազէտներու, խմբագիրներու և դադարաբար համար դոհուելու պատրաստ քաջերու:

Վար իջայ պանդոկէն և ուղեցի քայլել: Բայց մոռցեր էի թէ մայիսն Խզմիրի մէջ գարնան և Պօլիսի մէջ ձմեռուան ամիսներուն մին ըլլալու քմահաճութիւնը ունի երբեմն: Օղբ խոնաւ, փոքր ինչ անձրևոտ և փոփոխական էր: Բերայի երկինքը գամէլէ-

օնեան յատկութիւններ ունի իր ներքև պատասպա-  
րուող տեսակ մը կիներուն պէս: Քաջութիւն ունե-  
ցայ ճանբայ ելնելու և անցնելու փողոցներէն որք՝  
ինչպէս զիտես՝ համբաւաւոր են իրենց տիղժովն և  
ինչ ինչ անցորդներու կեղտովը: Տիրմը քարայտա-  
կին վրայ և կեղտը սիրտերու մէջ փնտռէ՝ . . . :

Գիտեցի որ անկարելի էր ինձ հետի երթալ ա-  
ռանց ցեխի ցայտէ ազատ՝ և հոտած սիրտէ հեռի  
քայլելու: Առաք մը մտայ, հասայ Ս. Լուսաւորչի մա-  
տենադարանը և ժողովին բացման հանդիսաւորու-  
թիւնը տեսնելու և միանգամայն ազգային բեմին  
վրայ Հային ճակատադիրը բացատրող տելիեան  
պատգամները լսելու պատրաստուեցայ:

Մատենադարանին մէջ բարեկամներու, ծանօթ-  
ներու և անծանօթներու հետ տեսնուելէ ետք  
հրաւիրուեցայ՝ նեղ ու ցած դուռէ մ'եկեղեցիին  
դահլիճը մտնելու: Փոքր ինչ վարանեցայ, վասն զի՝  
ինչպէս ըսի արդէն՝ ժամերգութիւն լսելու և ծուներ  
դնելու չեկեր էի: Մտնելէ առաջ անգամ մը ներս  
նայեցայ և վերջապետական ստուերներու մէջ թա-  
ղուած միջավայր մը, փայտաշէն նստարաններ, ա-  
թոռներ, երերուն գլուխներ, վեղարներ և վարա-  
գուրով գոցուած խորան մը տեսայ: Թուեցաւ ինձ  
մտնել այն հռոմէական քաթառներուն\* մին՝ ուր  
քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ Յիսուսի  
սակաւաթիւ հետևորդները կը սուղէին Գիտիլէտիա-  
նոսներու հարածանաց չմատնուելու համար:

\* Ստորերկրեայ գերեզմանատուն:

Երկար տարիներէ ՚ի վեր չտեսեր էի Ներսէս  
Սրբազանը. բնականաբար նախ ուշադրութիւնս իր  
վրայ դարձուցի: Իր սևահէր գլուխը, ներհուն ճա-  
կատը, աշնահար դէմքը և աչերուն անկեան խորշու-  
րը գիտեցի: Խոս գիւղի վաղեմի քարոզիչը Թիւրքի-  
այի Հայ Պատրիարքին հետ բազմատեցի, և մտահո-  
գութեանց խորունկ հետքը, ինչպէս նաև ազնիւ  
փառասիրութեան մը զգացումին հետ խառնուած  
անկեղծ հայրենասիրութեան մը հնչնուքին դրոշմը  
նշմարեցի իր գիմական գիծերուն վրայ, և համա-  
կրութեամբ գրաւուեցայ:

Աորդն եկաւ նայուածքս ուղղելու դէպ'ի դիւանն,  
ուր կոկիկ և լայն սեղանի մ'առջև յանձնապատաս-  
նութեամբ կը դահէր գրեթէ սպիտակահէր գլու-  
խով, կիսովին խորշմուտ դէմքով, բուռի նայուած-  
քով, թերևս անհանգիստ խիղճով մարդ մը զոր շէի  
ճանչեր և որ զիւանին նոր անգամներուն մինչև ընտ-  
րուին առժամեայ ատենապետութեան պաշտօն կը  
վարէր: Այս անձին քանի մը խօսքերէն և շարժում-  
ներէն հետևեցուցի թէ իր ատենապետական վաղան-  
ցուկ փառքը աւելի հասակին քան թէ գլուխին մե-  
ծութեան կը պարտաւորի: Անունը տրուեցաւ ինձ,  
և չկրցայ արհամարհական քմծիծաղ մը զսպել՝ տես-  
նելով թէ դիպուածն ինչ թեթեալիւ ըզդնեցու  
մատներ է ազգին ամենէն մեծ ժողովին բարեկար-  
գութեան և վիճարանութեանց կանոնաւորութեան  
հսկելու փափուկ պաշտօնը:

Սրբազան Նախագահին և ատենապետ Պ. Ք. . .  
ին ընծայած այս հակադէմ պատկերին նայելէն դադ-

րեցոյ՝ երբ զիւանին ձախակողմեան նստարանն երուն մէկուն վրայ նշմարեցի ծանօթ կերպարան մը : Ս... Փ... մերթ իր նայուածքը ժողովին վրայ կը ժուռածէր՝ կարծես հակառակորդներուն մինչե խղճին խորը տեսնելու զխառնորութեամբ , և մերթ կը խորհէր իր զլուխին մէջ անոնց զէմ փաստ և առարկութիւն դարբնելու համար , և կարծես անհամբերութեամբ և սպառնայիքով կ'սպասէր խօսելու կարգին՝ իբր թէ միտք ունենար Միրատոյցին պէս՝ իրաւունք ունեցողներուն հետ վիճելու , իսկ չունեցողները իր լեզուին ծանրութեան ներքև ճգմելու :

Եթէ կալի մտարանական զրութիւնը ուսումնասիրած ըլլայի , թերևս աւելի ուշադրութեամբ քննել իր քանի մը սրբազան կամ սրբանման համախոհներուն և կողմնակիցներուն ձախատները , ըսելու համար քեզ թէ գանկարաններու կարծիքին համեմատ մարդուս ունեցած քոսնեօթն հիմնական յատկութիւններէն որոնք աւելի կամ նուազ կ'ըլլակին այս կարապի պէս սպիտակ խիղճերուն վրայ : Ասոնց վրայ մեղամաղձապէս մտախոհելէ զաղբեցոյ՝ Նախադաս Սրբազանին ձախակողմը սպինդեան զէմ մը , իսկ զիւանին առաջակողմը սիրիլեան կերպարան մը նշմարելով :

Առջինն էր Եղևուֆեան Տիգրան Էֆէնտին , վարչական խորհրդոյ ատենապետ , երկրորդն էր Յարութիւն Էֆէնտի Մերեէմզուլի՝ նախկին ատենապետ Երեսփոխանական ժողովոյ : Ասոնք համեստ և ծանր զիրք մը կը սրահէին համարաբար , և իրենց լուծութիւնը կարծես անհանգստութիւն կը տար քանի մը

անհամբեր ժողովականներու : Աերջապէս քառասնի չափ երեսփոխաններու ներկայութեամբ ժողովը բացուեցաւ , զիւանին զրոգիքները զրիչ ՚ի ձեռին իրենց սղագրային յաջողակութիւնը գործածելու պատրաստ զիրք առին : Մեջպէս գրեթէ միշտ , նոյնպէս և այս անգամ օրակարգը միրկալի նախ մը տարերքը չունէր : Նախադաս Սրբազանն իր շնորհակալութիւնը յայտնեց ժողովին՝ ասոր նախորդ չրջանին մէջ ցոյց տուած ժրութիւնը և կանոնաորութիւնը հաստատելով , ապա իր հրաժարականին վրայ խօսեցաւ՝ երկու ամիսէն ետք պատրիարքական գահը լքելու հաստատ որոշումով : Հեռոյնեակ սկսան խօսիլ Ստեփան Էֆէնտի Փափազեան , Պեր. Մ. Իզմիրլեան , Տիգրան Էֆէնտի Եղևուֆեան , Յարութիւն Էֆէնտի Մերեէմզուլի և ուրիշ մի քանի երեսփոխանք որոնց անունները չյիշելուս կը ցաւիմ : Գրեթէ ամենքն ալ գոհացուցիչ կերպով խօսեցան , Եղևուֆեան և Մերեէմզուլի Էֆէնտիները մտնուանց իրենց յատակ սձովը , կոկիկ բառերովն և մերթ ընդ մերթ գալանապէս կ'ծու ախնարլութիւններովն ու շաղրութիւնս գրաւեցին և համոզեցին զիր թէ բազմութեանց սոջև անվրդով խօսելու սովորութիւն և զիւրութիւն ունին , թէ իրենց խօսքերու մէջ մի բառը կուէլն ետք կ'արտասանեն անօգուտ և վտանգաւոր բարկութեանց աեզի չտալու համար : Այնձարանութեանց նիւթերն էին Ս. Պատրիարքին հրաժարականն և քուէարկութեան իրաւանց հիմը սեպուած տուրքի խնդիրը :

Այնձարանութիւնները ժամէ մ'աւելի տեսցին ,

այլ կը ցաւիմ՝ ըսելու թէ երկու խնդիրներուն վրայ ոչ ոք ուզեց խօսիլ այն բարձր տեսակէտով որուն անհամբեր կ'սպասէի և որով անշուշտ նիսար մեծ հրապոյր պիտի ունենար թէ՛ ժողովականներուն և թէ՛ հանդիսականներուն համար:

Պատրիարքական դահլը թափուր մնալու վտանգն ինչո՞ւ ստեպ կ'սպառնայ ազգին զլուխին վերեն իբր Տամոզլէսի սուրբ. ինչ են թաղուն պատճառները. ինչ է վարչական մարմնոյն այս շրջանաւոր հիւանդութեան դարմանը: Պարձեալ քանի որ ազգային ժողովներն պատերազմի և խաղաղութեան խնդիրներ յուզելու, համազգային սառուտուրի դաշնադիրներ լինելու, քաղաքական և քաղաքային օրէնքներ հիմնելու, Տրադօնի արձան կործանելու և Սողոմի յիշատակարան կանդներու պաշտօն չունին, և քանի որ անոնց զլխաւոր դբաղումն է դպրոցի, հիւանդանոցի, եկեղեցիի, ազգային երկտպոցի վրայ վիճիլ միայն, ինչ հարկ կայ այդ պաշտօնը վարողներուն ընտրութեան իրաւունքը դրամական տուրքի մը ենթարկելու և սեղմելու. ինչո՞ւ գրեւ և կարգաւ դիտնալու պայմանը բաւական չհամարուի ընտրողութեան և ընտրելիութեան իրաւունքին. և դարձեալ ինչ պատճառաւ Հայ մ'օտար տէրութեան հպատակ գտնուելով այս իրաւունքէն գրիտի՝ քանի որ քաղաքական մեծ նշանակութիւն չունին բնաւ մեր ազգային ժողովներու վէճերը: Ահա հարցումներ, որոնց պէտք էր պատասխանել, ահա խնդիրներ զոր պէտք էր յուզել Նրեափոխանական ժողովին մէջ, և որք ճշմարտութիւններ յայտնելու, սկիզբ

ներ հաստատելու, և անդ ապէս խօսելու և յուզուելու ընդարձակ ասպարէզ մը կը կազմէին ըստ իս:

Յաւեցայ ամուլ նիստ մը, բաժակ մը ջուրի մէջ փոթորիկ մը տեսած ըլլալուս, և աւելի բերրի և հետաքրքրական նստի մը ներկայ գտնուելու առաջադրութեամբ մեկնեցայ:

Իկրա, 7 մայիս 1881:



Ն Ա Մ Ա Վ Գ.

Վիրակի առու, չգիտեմ ինչո՞ւ, անտանելի ձանձրոյթ մը բաղձոտնի (pulpe) մը պէս սիրտս գրաւելով կը ձգմէր: Երբ կը փնտռէի այս ձանձրութեան պատճառը, յանկարծ յիշեցի նորանշան վճիռներու նմանող այն ախորժելի կատակներու գ մի քանին, որով երբեմն երեկարատէս ցնցելով կը զրգուես իրենց ծամելիքը խախտելու շտի յորանջողներ անդամ, և որոնց մին էր պնդել թէ ձանձրանալը լեցուն քսակ և թափուր սիրտ մ'ունենալ է . . . :

Ստուգիւ կը ձանձրանայի սաստիկ՝ սուանց սակայն ոսկերուզլս զբոյսն և գտտարի սիրտ մը կրելու, երբ յանկարծ դուսս զարնուեցաւ, բացուեցաւ, և ներս մտաւ Պարոն . . . որ քու հին և իմ նոր բարեկամներու մին է:

Պարոն . . . հիմա գրեթէ երեսներկու տարեկան,

միջահասակ, թխագոյն, երևնօսի պէս սևահեր և սևակն, վայելչակազմ, գրեթէ վառվռուն, տոկուն, փոքր ինչ յամսու և անաչառ, մոռացկոտ և անհոգ երիտասարդ մ'է, հայ մ'է՝ բառին ամբողջ նշանակութեամբ: Ոչ պահանջոտ գաղափարներ և ոչ ալ ուռեցիկ զգացումներ կը տածէ: Քիչ կը կարգայ՝ կարգացածը լաւ մարտելու և ժամանակին սուսուճանկաններէն զանազանուելու համար: Իր խելքը և ժամանակը ազդին յառաջդիմութեան կը ծառայեցնէ, խոնարհամտութեամբ կը խօսի, մտիկ ընել զիտէ, պատիւը կրօն մը կը համարի իր խղճին համար՝ որ նուստտ դիջումներու անընդունակ է, ճշմարիտ տաղանդը կը սիրէ և կը յարգէ առանց նախանձի, Պօլսի քանի մ'անմօրուք ստիեստիկներու և մօրու քաւոր գրչակներու զէմ սրամտութեամբ կ'որոտայ երբ զրդուի: Իր արժանատւատուութեան վրայ կը հսկէ՝ իր ճագը պաշտպանող վաղրի մը պէս, առանց երբէք հաւանելու անպատիւ համակերպութեանց կամ վատ լուծեան մ'իր այս զգացումին զէմ անիրաւարար յարձակողներուն առջև: Իր մտահոգութեանց գլխաւոր առարկան է ողնասիւնը չարլիցընել ծաւելու մարդկացին բռնութիւններու առջև, անմուռնչ խոնարհելով սակայն լոկ կնային բռնապետութեան առջև, և ընկերական անկախ զիրք մը ստանալ, վասն զի առանց անկախութեան սղատուութիւն և առանց աշխատութեան անկախութիւն չկայ: Հետեւաբար ժրութեամբ կ'աշխատի՝ գրիչը գրականը կոկելու, իսկ լեզուն զրուժան սիրուհի մ'անիծելու յասկացնելով . . . :

— Եթէ ազատ ես այսօր, շուտ հագուէ՛ սգուէ՛, ճանրայ ելնենք, ըսաւ Պարոն . . . :

Սգուելու կամ չքուելու հրամանը հետաքրքրուած թիւնս չարժեց:

— Հարանիք կ'երթանք, հարցուցի:

— Հարանիք կամ Բրիտքիրօ, մի և նոյն բանն է: Տէ՛, շուտ բըէ՛, պատասխանեց:

Կ. Պօլիս գալէս 'ի վեր կը փախաբէի տեսնել այս կղզին, և սակայն չկրցեր էի կատարել փախաբս՝ սո՛վ զորութիւն չունենալով մինակս արքայութիւն անգամ երթալու:

Ուստի պատմական, աշխարհագրական արշիպեղագոսի մը տեսքը վայելելու, բիւզանդեան սիպարիթներու կամ կենսամոններու և բնական գեղեցկութեամբ սիրտիւողներու ժամադրութեան վայրն այցելութիւն մ'ընելու հրաւէրը ընդունեցի՝ առանց գեղեւուտի, և իսկոյն կամուրջը հասանք, շողենաւ մտանք և անգլաւորուեցանք՝ խուռներամ անցորդներու հոսանքէն քշուելէն և անոր ասոր արմուկին զարնուելէն ետք:

Քիչ մը շունչ և հանգիստ առի, ապա նայուածքս բոլորաթիւր ժուռածեցի անգամ մը:

Թէ՛ գեղեցիկ և թէ՛ գոհ սեռին վերաբերող բաբելոնեան բազմութիւն մ'անհամբերութեան ցոյցեր կը տար ժամ առաջ ճանրայ ելնելու համար:

Քանի մը հասակաւոր մարդիկ լրաթերթ կը կարդային: Այս կ'որոճար Վաֆլին մի հալը հաղբը, այն կը ջանար մարտելու Մասէսին նորեկ շարագիրներուն նորաստուութիւնները և տքնութիւնները՝ Պ. Իւթիւ-

ձեանին կոկիկ դրչին չափազանց հանդչիլը դատարան  
 պարտելով, ուրիշ մ'ալ Պար Կիւ Պոֆօբի հայասիրու  
 թեան վրայ կը ցնծար, և ոմանք ալ իրենց կասկա  
 ծոտ նայուածքը կարծես լրտեսի մը յանոսական  
 դէմքին վրայ սեեռած՝ իրարու ականջին կը փսփոսա  
 յին, թերևս պատրաստուած դատական մեծ տրա  
 մի մը յեղակարծ փոփոխումներուն ակնարկելով,  
 իսկ շատերը կը խօսակցելին իրենց տոհմային բար  
 բառով: Տաճիկը թուրքերէն, Ֆրենկը Ֆրանսերէն,  
 անգլիարէն կամ իտալերէն, Յոյնը յունարէն, Եփ  
 րայեցին հրէարէն, Առաստորչական հայն Արամին,  
 Հասունեան կաթողիկ հայն ալ օմանեան լեզուն կը  
 խօսէր՝ իր անազգի և անլեզու, իսկ Սալուացի պա  
 տանի մը կիթաուի մ'աղիքը քերեկէն և ազատաշունչ  
 երգ մը նուագելէն ետք իր աշխատութեան վարձքը  
 կը հոբարձ՝ նախ շքեղապէս հաղուածներու դիմելով,  
 իրը թէ հազուստի կապուստի պերճութիւնը սրտի  
 պերճութեան բացարձակ ապացոյցն ըլլար . . . :

Փեղըյններու, փետուրներու, երփներանգ ժա  
 ալաւեններու, նորածե և դունեղ բօլաներու և լօ  
 գիկներու պերճանքովը շքացող արամբի և սյրի  
 կիներ, երիտասարդուհիներ, պատանուհիներ կը  
 խլրտին, կը ծիծաղին, կը ժպտին, մերթ բերնով,  
 մերթ աչքով կը խօսին, մին սիրամոյր աղքատի մը  
 առջև ոչքասիրաբար և կարծես անզգուշարար ե  
 րևան կը հանէ Փիտիասին գրոցին արժանի, նրբա  
 շէն և բարեձև ոտ մ'որ անձուկ և կոկիկ սփարթի  
 մը կամ Լոսէ Գէնդեան բարձրակրուկ կօշիկի մը մէջ  
 կը չարչարուի. միւսը Ժիւէնի ձեռնոցի մը մէջ սեղ

մուած նեղ ու նուրբ մատերը գլուխը կը տանի՝ աւե  
 լի բոլորածե և մտուտ բազուկի մը թագուն փա  
 ոաւորութիւնը դուշակել տալու քան թէ դնդասեղ  
 մը տեղաւորելու համար, և սոս սգաւոր գեղանին  
 ալ իր պատուոյն փոսապեղին (fossoyeur) զիբը նե  
 տուելու պատրաստ աղջկան մը կուրծքին պէս ելե  
 կջ առնող սրտին բազխումը զսպելու փորձ կ'ընէ  
 համեստաբար՝ չարամիաներու քմծիծաղը, հետա  
 քրքրի կնորաներու ուշադրութիւնը չգրգռելու, և  
 կամ իր սուգին անկեղծութեան և յախտենութեան  
 օրինակով հաստատելու համար թէ կիներն ալ կամը և  
 յարատեութիւն ունի, և թէ ուխտ մը կատարելու  
 և բարոյական հրիտակ մը յարգելու կարող է սյրա  
 պէս, և այս ամեն բնական կամ շինծու ձևերու,  
 շարժումներու և սեթեկթներու ծարաւի իդասեր  
 ներ մեղրի լուսնէն կարմիր լուսինն անցնող ամու  
 սիններու կամ եղբայրներու, կամ բարեկամներու  
 հետ կը խառնուին, թիթեռներու պէս կը թռչտին  
 ակնխափող լոյսերու բոլորափրը, ամեն մէկն իր խել  
 քը գեղանիի մը տալով և օրուան դրօսանքը անրջա  
 յին կամ իրական երանութեան յոյսով մը համեմե  
 լով . . . :

Վերջապէս չողենաւը շարժեցաւ՝ Գատը-Գիւղի  
 ուղղութիւնը բռնելով:

Սուլթան Ահմէտի, Այա Սօֆիայի, Պայպղիտի  
 մէկիթներուն, Աէրայ Պուրնուի ասիերուն և վտան  
 դաւոր հոսանքին, ապա այս հրեանդանին ծալքը  
 կանդնած հինաւուրց պալատին կը նայէի, որուն  
 վրայ շրջափակ և լքուն պարտեղի մը նոճիկները, և

զևիներն և սօսիները տխուր չուք մը կ'արձակէին, չուք որ Օսմանեան կայսրերու և կայսրուհիներու այս դարաւոր հանգստարանին վրայ կարծես անոր ներքին և հին իրողութեանց իր մի խորհրդաւոր նշոյլը կ'անդրադառնայ և մարդուս ուշը դրաւելով խորունկ մտմտութի կը տանի: Երևակայութեանս առջև կը բերթի հեշտութեան, շուայլութեան, բացարձակապէսութեան այն անտիպ և դարաւոր տրամները որք՝ քաղաքականութեան հետ կապակցութիւն չունենալով՝ արքայական ծնունդները, ամուսնութիւնները, պատերազմները, աշխարհակալութիւնները արձանագրելը բաւ համարող վեհերոտ կամ կողմնապահ պատմիչներուն ուշադրութեան կը վրիպին, և որոնց վրայ նոր ծիւղէնալի մը գրիչը տակաւին չհամարձակած է ձռնչել:

Օսմանեան պերճութիւններու, սիրային տրամներու լքուն տեսարանի մը, ճարտարապետական հնութեան մը, հուրիներու և քաջերու յատուկ մագալան բնակարանի մը տեսքն ու դազափարը մինչդեռ ուշ կը գրաւէին և յուզմունքով կը համակէին զիս, «Ալհամպրան, Ալհամպրան, պալատդ զիւթական, զոր ոգիները շինեցին՝ երազի մը պէս ոսկեգօծելով և ներդաշնակութեամբ ողորկելով» ըսի մտովին Վիգթօր Նիւկոյին յետագայ նշանաւոր տողերը յիշելով.

L'Alhambra! l'Alhambra! palais que les génies  
Ont doré comme un rêve et rempli d'harmonies;  
Forteresse aux crénaux festonnés et croulants,  
Où l'on entend la nuit de magiques syllabes.

Quand la lune, à travers les mille arceaux arabes,  
Sème les murs de trèfles blancs!

Եւ յանկարծ Յեռքի Ապէնտերաֆի հեղինակին երևակայութեան առաջնորդութեամբ միտքս Եւրոպայի արևելեան յետին ասիական գէպի՝ Նրընատ կը սրանար և կը թափառէր մտաբխանան այս հայաշէն և ճարտարապետական հրաշակերտին վրայ, և սրահ մը մեկամղձօրէն կը բաղդատէր անոր անցեալը Օսմանեան ազարանաց անցելոյն և ներկային հետ:

Մտաբխանիկ իշխանները քրիտոսնեայ աշխարհի գէմ իրենց մղած ճակատամարտներու և տարածյալ թանակներու դափնիներուն վրայ և Ալհամպրայի հեշտաւէտ ստուերներուն ներքև կը հանդէլին, գրաւանութիւնը, գիտութիւնը, գեղարուեստները կը պաշտպանէին, բանահիւստութիւնը կը ծագկեցնէին, սիրոյ, երանութեան, զեզխտութեան նեկտարովը արբշիւ՝ կը մոռնային սակայն իրենց բնական վեհանձնութիւնը, համբերատարութիւնը, արիւթութիւնը, յաբաւութիւնը և այն սուրբատական յատկութիւնները որով առեն մը Եւրոպայի աշ ու դող ազդեցին, առաթուր կը կոխէին արդարութեան և ճանարտութեան սկիզբները, Սբանիացոց և ուրիշ հպատակաց իրաւունքը և ազատութիւնը կը սանձէին, տկարին գէմ յարձակող զօրաւորը անպատիժ կը ձգէին, և կը խրախուսէին խոլ՝ տոհմային տարրի արբապետութիւնը ընդարձակելու և զօրացնելու գիտաւորութեամբ, և այս ընթացքով իրենց գէմ կը գրգռէին հպատակ ժողովուրդները որոնց մշտնջենական

հատատարմութիւնը և համակրութիւնը շահէլու պարտաւոր էին . . . : Արարացոց այս մտացումն, այս մեղիւթիւնը, այս կողմնադաճութիւնն և անհեռաւան քաղաքականութիւնը հուսկ յետոյ իրենց պէս ասպետարարոյ և քաջազուն ազգի մ'անկախութեան և հայրենեաց գերեզմանը պեղեցին . . . :

Եթէ ներկայն անցեալին օրինակէն չօգտիր, ինչ բանի կը ծառայէ պատմութիւնը . . . :

Մինչ այս մինչ այն, շոգենաւը կը մօտէր Քաղկեդոնին: Հեռուէն գիտեցի Քըզ Գուլէսին կամ Լէանարի աշտարակը, և արտմալի դադափարներուս յաջորդեց միւրիւրական տեսիլ մը, ուրախութեան զգացում մ'երբ խորհեցայ ժամանակին զօրութեան և մարդկային բարեշրջումին (évolution) յախտեան հան օրէնքին վրայ: Այսօր իր փարոսովն գիշերին, իր լոյսովը խաւարին հեռ կը կուռի, նաւերուն ընթացքը կ'ապահովէ և յատկապէս ծովային երթևեկութեան կը ծառայէ աշտարակ մ'որուն հիւնքը Մանուէլ Գօմէնէ կայսեր օրով ժայսի մը վրայ գրուեցան՝ Ասիան Եւրոպայի հեռ շղթայով մը կապելու և Վասիլորին անցքը արգիլելու համար\*:

\* Յայտնի է թէ Լեւոնտը ջէ թէ Վասիլորէն այլ ելլեալունի ծովէն կ'անցնէր իր սիրահին՝ Հէրօն՝ գտնելու համար, ուստի Եւրոպացիք կը սխալին Քըզ-Գուլէսին Լէանարէն աշտարակը անուանելով: Շարքը Թէրսիէ պատմիչներու հետ կը կարծէ թէ Մանուէլ Գօմէնէն է այս աշտարակը շինողը, կ'ըսէ նաեւ թէ Վասիլորի անցքը արգիլելու համար զբաւած

Երբ շոգենալին անխնեքը վերափն սկսան դատնալ և հետզհետէ հեռանալ Քաղկեդոնի սահմանէ:

շորային մէկ ծայրն այս աշտարակին ժայռին կապուած էր: Կը պարտաւորիմ խոստովանիլ թէ ուրիշ նշանաւոր ուղեւոր մը, Էմիլ Իգամպէր, համամիտ ջէ անոր հետ: Այս վերջինը կը կարծէ նաեւ թէ շորայն Սերայ-Պարնաւի ավաւերէն կայարայի ծովեզերքն երկնցած էր: Գըզ-Գուլէսի նկատմամբ Օսմանցոց մէջ աւանդութիւն մը կայ, զոր Էմիլ Իգամպէր կը յիշէ: Ահա՛ այս աւանդութիւնը. Գնջուհի մը կանխաւ խմացուցած էր Սուլթան Մեհմէտին թէ իր աղջիկն օճէ մը խայրուելով պիտի մեռնի: Սուլթանն աղջիկը բանտարկելու համար շինել տուաւ Գըզ-Գուլէսին ուր որ է և սողուն ջէր կրնար մտնել: Մեհար Շեհիտ (այս է բանտարկուած իշխանուհիին անունը) հոն մեծցաւ և խիստ գեղանի արարած մ'եղաւ: Իր գեղեցկութեան համբաւը տարածուելով հասաւ մինչէն Պարսից շահին սրբոյն ականջը: Սիրահարեցաւ պարսիկ իշխանագունն և միջոց գտաւ գեղանի Մեհար Շեհիտին հասցնելու ծաղկեփունջ մ'որուն խորհրդաւոր լեզուն իր սէրը պիտի յայտնէր կայանաւոր դշտային: Դժբաղդաբար ծաղիկներուն մէջ սպրդած էր իժ մ'որ խայրեց կայսերագուն գեղանին: Նէ մեռնելու վրայ էր երբ յանկարծ հասաւ իր սիրահարն և անոր կեանքն ազատեց՝ բռնաւոր վերքը ձծելով: Սուլթան Մեհմէտ Պարսից շահին տղուն քաջութիւնը վարձատրելու համար անոր կնութեան տուաւ Մեհար Շեհիտը:

րէն, Ֆէնէր Պաղչէսի ախորժակի եզրերէն, Էրբ Մարմարայի երկնագոյն ընդարձակութիւնը մեր առջև պարզուեցաւ, Պիթինիայի ախունքը, դալարազարդ բլուրները, վիմուտ ու դերբուկ լեռները, Նիւ հովիղիայի ծովածոցին առջևի կղզիներն երբ սկան ուրուաղբիլ, Պարոն . . . որ մինչև այն ատեն ծածանի մը սլէս լուս կենալով կը մասձէր՝ թերևս սրտին թաղուհին կորզող հայ Տօն ժուանին յիշատակը առնիծելով, բերանը բացաւ և ցոյց տուաւ ինձ անցորդներու խումբ մը զոր կազմին երկու կին և երեք պարոն, և առաջարկեց հայթայթել ինձ անոնց հետ տեսութիւն մը:

Իսկոյն հաւանեցայ առաջարկութեան և տեսնուեցայ խումբը կազմող հայերուն և հայուհիներուն հետ, որք անունս ճանչեցին կամ ճանչել ձեացուցին: Հայուհիներուն մին հասակաւոր, միւսը գեռաւ հաս, երկուքն ալ փոքր ինչ ուսում առած կ'երևային: Հազիւ տասն վայրկեան տեղ խօսակցութեան մ'առթիւ քանի մը լեզու խօսեցան, Պրանսայի նշանաւոր հեզինակներու շատերուն անունները յիշելու չգիտեմ ինչպէս առիթ գտան, խելանի երևալու ջանք ըրին, մերթ ընդ մերթ լուսագոյն համարեցին հանճարամտութիւն ցոյց տալով չարամիտ սեպուիլ քան թէ ազնիւ զգացում մը յայտնելով բարեսիրտ երևալ, և երբ աւարտեցաւ մեր խօսակցութիւնը, գիտէի արդէն թէ ինչ օտարասիրական գաղափարներու և դժուծ զգացումներու տէր էին անոնք:

Անշուշտ ընտիր զգացումներու հետ նաև ընտիր գաղափարներ ունենալ, սրտի կրթութեան հետ նաև

մտքինը ընդունած բլլալ կիներու համար մեծ ոյժ և անկաւելի առաւելութիւն մ'է: Աան կեանքի մէջ պարագաներ ուր միտքը սրտին օգնութեան կը հասնի, գաղափարը թե կը տայ զգացումին: Ըստ իս ողորմելի ճակատագրի մը սահմանուած կը սեպուի այն ազգն ուր կիները հարեանցի կրթութեան և դաստիարակութեան մը չարսով կը դարդարուին, իրենց սեպական և բնական դերը բուրովին կ'ուրանան, գեղեցիկ զգացում մը գեղեցիկ խօսքի մը կը գոհնե՞, գգուելու տեղ կը խայթեն, չըջու տեղ կ'ապտակեն, և իրենց ֆիզիկային յատկութիւնները նիւթական առաւելութեանց միջոց և զէնք կը համարին աւելի քան թէ իրենց և ուրիշներուն երանութեան համար ՚ի բնուստ շնորհուած գեղեցիկ սարգեւներ:

Այսօրին մօտ Բրիտքիրոյի կամուրջը հասանք, և մեր առջի գործն եզաւ ճաշարան դիմել: Սեղանին տեսքը, զինիի շէշրուն չարքն արդէն սկսան գոհունակութեան հով մը տալ ինձ, նա մանաւանդ Պարոն . . . ին, որ գաղբեցաւ ունքը պուտուէլ: Շարայի նախանձը զրգուէր թերևս մեր ծամելիքի ժրութենէն, զոր կ'արծարծէին Պարոն . . . ի յեղակարծ դուարթութիւնն ու ճարտասանութիւնը՝ ալգօօրեան չոզիներու ազդումին շնորհիւ: Գրեթէ կարկանդակային յատուկ կերութեամբ մ'ետք երբ հասաւ բապլէ-

\* Quand les femmes se mêlent d'avoir de l'esprit, le royaume est en danger; les beaux sentiments s'éffacent sous les beaux mots. ARSÈNE HUSSAYE

տիան վայրկեանը, ահա հռոմէական քաջերու, ահա պրետորական պահակներու յետինը, ըսաւ Պարոն . . . ոսկի մը նետելով պանդոկապետին առջև :

Իսկոյն կառք մտանք՝ կղզիին նշանաւոր վայրերը տեսնելու, քիչ մը հով առնելու և մեր զլուխի շոգիները ցրուելու համար :

Եթէ Պօլի, Իզմիրի և Թիւրքիայի ուրիշ քաղաքներու մէջ կառքով զլտորուելը տանջանք մ'է, կը խոտտովանիմ թէ վայելում մ'է Բրինքիբօյի չըջապատ կառուղիին վրայ, ուր անիւններն անարդէլ կը հողովին, կը սահին առանց ամենափոքր ցնցումի :

Ինչպէս գիտես, գիւղը կղզիին հիւսիսային ծայրին վրայ շինուած է : Գարնան վերջին ժամանակ և ամառուան մէջ Բերայի հայ-լայֆէն (high-life), Աղէքսանդր Տիւմայի հեռաշաքիչն վերաբերող էրիզիւրեան կենսամոլները, ինչպէս նաև կուրծքի կամ սիրոյ հիւանդութեամբ տառապողները, գիշերը լսադարանի մը բոլորտիքն իբր առլէզ թափառող և ցորեկը Քասկին (Borsa) քամծին հետտուժեանց զէմ կուսելով բաղլին անիրաւութիւնները սրբադրելու ջանացող անարծաթ և գունարեկ Լօպարտրոմօնները հոն կը չուեն :

Արդարև երջանիկներու և ապերջանիկներու համար ժամադրութեան և օգախոխութեան զմայելի վայր մ'է այս կղզին զոր բնութիւնն իր անբաւ ճախութեամբ և մարդս իր շահաղիտական գործունէութեամբ զարդարել են, և որան բարձունքէն հէռաբքիբօյի և հոգեպիշ հիանալու տրամադիր ուղեւորին նայուածքը զինքը չըջապատող բնական պերճու-

թեանց և չքեղութեանց հմայական ազդումին ներքև նախանձելի անհողութեան մը հայելին կը դառնայ, և տարտամ ու թարթախուռ կերպով կը թափառի չըջափակ հորիզոններու, երկնային անբաւութեանց և վիհեր ծածկող ջրային կապտադէզ մակերևոյթներու վրայ :

Ժամի մը չափ յամբարար մեր պտոյտը շարունակելէն ետք նոճիներու անտառի մը մօտ կառքէն վար իջանք, զրեթէ մաղլցելով վեր ելանք բաւական ցից զտիպէրէ մը, և կրային ու վանաքարուտ գետնի մը վրայ, ծառի մը շուքին տակ Լածժարօնէլի պէս ծուլութեամբ նստանք՝ կէսօրուան արևին ջերմութիւնը մեղմող զովաչունչ քամին և անտառին խնկարոյր օզը ծծելու և հանգչելու համար :

Շքեղ տեսարան մը կը պարզուէր մեր ստջև :

Բրինքիբօյ կամ Գըշլը-Արսու իր բարձր զիրքով և հինգ հազարամեղբի չափ տարածութեամբն իրթապուհի կ'իշխէ Նիկոմիդիոյ խորշին բերանը սիւսուած միւս կղզիներուն վրայ զոր և բոլալցիք Իշխասայ, լակ յոյները Բէրէնբօ (Կեմնեմէ) կ'անուանեն : Այս կղզիներն են Բրօթէ կամ Գընուլը, Անթիօն կամ Պօզալը, Խալքի կամ Հէյլէլէ, Բօլլիթօ կամ Թաուշան, Անթի-Բօլլիթօ կամ Սարէֆ-Արսու, որոնց միջևէն նաւակներ կը սահին հանդարաիկ, կամ պղտի չոգենաւեր կ'անցնին, արշիբեղեան լարիւրինթոս ուր տանօք Պարսից և Տաճկաց նաւախումբերը կը մրցէին Բիւզանդիոյ վրայ յարձակելու համար . . . :

Եթէ հիւսիսային կողմին վիմուտ և չորարեկ բարձունքը մեկուսի թողունք, Բրինքիբօյ մրդաստանն է

բու, ձիթեհիններու, նոճիի անտառներու, այգիներու, պարտեզներու, ճօխ ու շտայլ բոցներու դեռ զեցիկ փունջ մը կը կազմէ, և երկրային բերրութեանց ծարաւի երջանիկները կամ բարոյական վիշտներու նահատակ ապերջանիկները բանաստեղծական ծուլութեան և երանութեան, նաև մխիթարութեան և սիրտուժի անընդհատ հրաւէր կ'ընդունին Մարմարային այս թագուհիէն: Յիբաւի այս թագուհիին արժանի է իշխանաց կղզի բուսելու, և բիւզանդեան իշխաններն և իշխանուհիներն՝ որոնցմէ մնացած է այս անունը՝ երբ անոր հրաշալի գիրքը, անդաւէտ օղջ, առողջարար կլիման վայելելու և միանգամայն երկնային արքայութեան հեշտութիւններէն չզրկուելու համար հոն հոս, բլուրներու կուշտերուն վրայ, ձորերու մէջ ամառատուններ, փանքեր, քաւարաններ, եկեղեցիներ կը շինէին, անշուշտ չէին դուշակեր թէ դեղանին և խելանին իրեն, Հարուն-Ել-Քաւի առջև խոնարհելով իր կայսերական թագին և գահին իբր վրկանք իր արժանապատուութեան մնացորդը նուիրող կայսրուհի մը, գաւկէն աչքը փորել տուող իմասիրտ և փառամոլ մայր մ'այս կղզիին մէջ պիտի բանտարկուի ցմահ. թէ զեղխութեանց և ցնծութեանց այս արեծուփ օթեանին մէջ բիւզանդեան ուրիշ իշխանուհի մ'ալ, Չօի, Միշէլ Պարլոֆաթի անողբելի կամքին ներքև սրկուելով կրօնուհի պիտի ըլլայ՝ սիրողի մը հետ գաւաղ բլէն, բիւզանդեան կայսրերու սպառառ Տէքաֆթնի նամնցներէն և կնային բանամուլութեան մ'ամենքման հաճութիւնները կատարելն ետք Սուրբ-Քաթրիկի

ծակը\* մտնելու և իր մեղաց քաւութիւն դանելու համար: Ինչո՞ւ չէ. միթէ Մագդաղինէ աղանիլի մը պէս անմեղ չեղան արասուքովն ու խնկաւէտ իւզերով աշխարհիս Փրկչին սրբաշուք ոտները լուալէն և մագերովը սրբելէն ետք. և միթէ երբէք զթոտ ու կարեկից սրբութիւններ սակրամձ են դահազուրկ մեղուհիներու համար, ոսկեթել առագաստներու մջջէն և թագակիր ամուսիններու գիրկէն զլիշբը լուելայն դուքս սարդող և Հոռոմի շուկաներն արշաւող Մեսալիներու համար . . . :

Մինչդեռ այսպէս կը խորհէի ու միանգամայն անյաղարար կը լափէի այս կղզիին ճերբին և արտաքին բնական գեղեցկութիւնները, անգամ մը սատահարար Պարոն . . . ին նայեցայ, ձեռքին մէջ լուսանկար մը, և հանդիսակայ կղզիներուն մէկին վրայ անկուած աչքին մէջն ալ արտասուքի կաթիլ մը տեսայ: Իր վրեարթութեան այսպէս արամուլեան փոխուած ըլլալը զարմանք տուաւ ինձ, և արդահատական յուզումով մը հարցուցի.

— Ի՞նչ կը լստ:

— Չգացուի մը մահը, սրատախանեց:

Այսերուն վրայ սկսաւ շիթ առ շիթ հոսիլ իր արտասուքը: Պահ մը լուելի՛ իր վիշտը յարդելու համար:

Նամակիս սկիզբն ըսի արդէն թէ Պարոն . . . կ'ա-

\* Իրլանտայի մեջ քարայր մը կայ գոթ Իրլանտայիք Սուրբ-Քաթրիկի ծակը կ'ամուսնեն և քաւարանին դուռը կը համարին: 1010 թ. Բ

նիճէ բացակայ սիրունի մ'որուն պատկերը քովն էր արդ: Յիրաւի գմայելելի կիւն: Ստիպումներուս տեղի տալով պատմեց ինձ այս ծանօտան բոլոր պարագաները: Առաջին սիրոյ իբր նահատակ մը սրամտութեամբ ու ճարտասան լեզուով բացատրեց զինքը մասնող զրուժանին գեղեցկութիւնը, հրապոյրները և միանգամայն խարէութիւնները, սև գոյներով նկարագրեց անոր սիրաը, որ՝ իր ըսածին նայելով՝ յոռի կրից և գարշելի զգացումներու աղբնոց մ'էր: «Ուրիշ անտան անցնի այդ սրտէն, գարձեալ չմաքրուիր»\*, կ'ըսէր, և, զարմանալի բան, Պարոն . . . ին անհնաբին ատելութեան զգացումի մը հետ նաև սիրոյ զգացումի պղտեցութենէ գրաւուած ըլլալը կը զիտէի:

Արդարև արտում և գծբաղդ էր Պարոն . . . : Աստեն մը բարոյական անեզրութիւն մը կը կրէր իր սիրան և երանութեան կը հաւատար: Հիմալ՝ այն անեզրութենէ զրկուելէն ետք՝ յանկարծ՝ կը գտնուէր ֆիզիզական աշխարհի մ'անեզրութեան տեսարանին առջև. երկու անհունութիւնները իրարու հետ կը բաղդատէր, ևս քան զևս դառնութեամբ կը համարուէր՝ գլխովին անմխիթար, և այս սիրարեկ սիրան իր վիշտը կ'երդէր: Տեղն էր երգելու . . . :

Առաջին արեփէ (passion) մը գրաւուած սիրա մը, յուսահատութեան մատնուած հոգի մը սոխակի կը նմանի երբեմն: Մին իր գերմարդկային ներդաշնակութեան զայլալիկները նուազելու համար վարդե-

նիի ստաի մը, միւսն ալ իր անդունդներէն ժայթքող վիշտերուն մրմունջները և հեծկլտանքը երգելու համար անեզրութեան մը վրայ թառելու պէտք ունի . . . :

Նեւգասիրտ կիւն մը Պարոն . . . ի առաջին դողաբիլ զգացումը սպաննած և անդարձանելի վիշտ մը տուած էր անոր. ևս ալ այս վիշտը սպաննելու վտրմ մ'ընել ուզեցի:

— Բարեկամ, ըսի յուզումս զսպելու ջանալով, կը տեսնեմ որ տակաւին շատ անխորձ ես սիրոյ և կիւներու մասին: Տղայութիւն է այդքան զգածուիլ և վշտանալ այնպիսի կնիկի մը համար, որ քեզի սիրել ձեռացնելու և ուրիշ մը սիրելու սատանութիւնը ունի: Ար հաւանիմ թէ այդ կիւնն իր գէմքին վըրայ և գեղեցկութեան մջ հեշտութեան անհաշուելի խոստումներ գրոյծած է, սակայն անուրանալի է թէ սիրան ալ մատնութեան և անհատատարմութեան անսպաւելի հանք մ'է: Ար լսս, վասն զի մատնուեցար, վասն զի ուրիշ մը տեղը բռնեց, և սակայն այսպէս լացք կ'աղայցուցանէ թէ տակաւին կը սիրես զինքը, այսինքն իր գեղեցկութիւնը և հրապոյրները: Քանի որ հիմակ այրի է, աշխատէ սիրուելու և երջանիկ ըլլալու: Սղաւորութիւնն ինչ ինչ կիւներու համար սիրելու գրդիւս մ'է աւելի քան թէ արդէր: Ա՛րեսս թէ ուխտ ըրած է յաւիտեան իր սիրականին սուզը պահելու: Ար ցաւիմ միտմտութեանդ վրայ: Այդ տեսակ այրի և գեղանի կիւն մ'իր մարմնային հրապոյրները սևերով կը ծածկէ, այլ իր սիրար ոչ երբէք . . . :

\* L'océan y passerait sans laver la souillure.  
A. DE MUSSET

— Կամ կը բանդադուշես, և կամ բնաւ չես սիրած, ըսաւ Պարոն . . . :

— Ե՛կքորիւր կարդացի՛ր երբէք . ահա՛ քեզ սգաւոր կին մը, լ՛տի Աննա, որ իր ամուսնոյն դադաղին քով և անոր սիրտը դաշուճող ապիրատին առջև հերարձակ կը լայ, մարդասպան իշխանագունին, Ռիչար Երրորդին սիրաբոյր խօսքերուն իրր պատասխանն աւնոր երեսը կը թքնէ, դանակը անոր սիրտը մխելու և իր հօրն ու նաև կենակցին վրէժը լուծելու կը պատրաստուի Գօրսիգացի ամազոնի մը կատղու թեամբ, և սակայն վայրկեան մ՛ետք, մի և նոյն դադաղին քով իր անձն և սիրտը մի և նոյն անդամին յանձնելու կը հաւանի: Ահա՛ կինը, ահա՛ սգաւորութիւնը: Խե՞ս, Բնչես: Լոկ անկողնի ընկերուհի ըլլալու արժանի և հիմա քեզի սիրելու պատրաստ կին մը, ինչպէս է դրուժանդ, արտաուքիդ և ոչ մի կաթիլին արժանի է: Պիտի ըսես դուցէ թէ ա՛լ չես ուզեր սիրել զինքը քանի որ ուրիշի մը զոհեց քեզի: Բայց այդ հաշիւը սխալ է, այդ զգացումն անհիմն է: Սիրէ՛ պահ մը, և ապա մոռցի՛ր զինքը: Ի՞նչ կ'ըսէ Տէժընէ իր բարեկամին Օդիթավին որ քեզի պէս խենդ էր և օշինդրի մէջ կը փնտաէր իր ցաւերուն դարմանը: «Լինն երկնային բրուտէ մը շինուած անօթ մ՛է, իսկ իր պարունակածն, իր սէրն անմահական նեկտար մը: Խմէ՛ այդ նեկտարը, երջանիկ եղիր պահ մը, և ոտքիդ ներքև խորտակէ անօթը՝: Եթէ անօթն

\* Տե՛ս Դարսաս Ժէկ պատմիկն Խոսարժանանէք: Հեղիւնակ Ա. Տը Միւսէ:

է սիրածդ և չէ թէ նեկտարը, այն ատեն սիրահար չես այլ ճարտարագէտ (artiste) մը, և իրր այն կը փնտաես գեղեցիկ ձևերու և զիծերու հրաշակերտ մը: Իսկ եթէ լոկ նեկտարն է, բուն իսկ կինն է, այս կամ այն էզն է սիրածդ, և եթէ ատոր մասնու թեան վրայ է լացդ, վնայ խելքիդ . ուզածդ կին, սիրուհի ըլլայ . մի թէ այդպիսիներ կը պակին քանի որ հիմա դաս մը կիներ փոխանակ զգալու կը հաշուեն, և չեն կարմիր ծափ զարնելու Մարտոսուէլ որ Մօքէնի այն յառաջարանին ուր Թէոֆիլ Կօթիէ մուլութիւնը կը ջատագովէ . . . : Վիճակդ լաւ, հասակդ երիտասարդական, առողջութիւնդ քաջ և քսակդ պարտա է . ուրեմն՝ փոխանակ վայնասունով մոշուէլու՝ զնա սիրէ՛ դրուժան սգաւորդ, կամ մոռցի՛ր զինքը ուրիշի մը զիրկը նետուելով:

— Աստուած քեզ ալ խելք տայ, ըսաւ Պարոն . . . բարեկանարով և թերես չգիտելով թէ իմա չէին այն կարծիքները զոր յայտներ էի կրակին վրայ իւղ թափելու պէս:

Շոգ ենաւ սկսաւ սուլել . կասք մտանք նորէն, նաւամետոյցը հասանք, չոգ ենաւ մտանք և մեկնեցանք կղզիէն, և երբ Կալաթայի կամուրջին վրայ լուրարու մնաս բարեաւ պիտի ըսէինք,

— Յոյոդ մի կտրեր . կինն ուղբմած է, ըսի:

— Աստուած ալ ողբմած է, ըսաւ Պարոն . . . մերամոզճութեամբ:

Բէրա, 14 մայիս 1881:



Ն Ա Մ Ա Ն Գ .

Հայերը յառաջդիմական խնդիրներու նկատմամբ երբեմն շատ խոնարհամիտ և երբեմն ալ կարբի սարսաղամիտ են : Պզտի զեղծուծի մը բարձման առթիւ ուղաննա կը կարդան հրճուելով, երեւակայական առաւելութեան մը վրայ կը հիանան՝ պատրանքը լրահանին, կրկներեւոյթը (mirage) իրողութեան տեղ զնելով : Անոնց այս յօժարութիւնն աւելի իրենց տոհմային փառաքներուն սատակութիւնը քան թէ կատարումը կը հաստատէ : Յառաջդիմութեան թեթեւ քայլ մը կ'առնուն, և ապա առանց ժրութիւն և յարատեւութիւն ցոյց տալու, առանց զոհուելու լռելեայն և 'ի շնորհս նոր սերնդոց, կը կասին, կը կազան, և այս դադարման միջոցին թմբուկ կը զարնեն և կը պարծին իրենց ջանագրութիւններով որք նոր սկսան, կը փառաւորուին այն արդիւնքով զոր 'ի սկզբան կը յառաջադրեն և որ տակաւին սկզբնական և լոկ հաւանական է : « Միայն սկզբնաւորութիւններ կան » ըսաւ Տիկին Տը Սթաէլ : Առաջին Նարպէտնի սպաննալիքը զրչին ծայրովը մշրող քաջասիրտ հեղինակուհիին այս հեղեալի վճիւր կարծես մասնաւորապէս Հայերուն համար արուած է :

Չափազանցութիւն չէ կարծել թէ մեր սոցիալն բնաւորութեան այս պախարակելի հանդամանքն օտարներու օրինակին հետեւելու, բայց տղայապէս հետեւելու սովորութեանն ծնունդ կ'առնու :

Երկ հ առա օ ա ս պ ս պ է ս կը խորհի՛ր՝ լսելով թէ Սահմանադրութեան տարեդարձի հանդէսը պիտի կատարուի Եէտի-Գուլէի դուբը, հիւանդանոցին մօտ :

Երբ Անգլիացին Շէյքսպիրի կամ Մթիֆընընի տարեդարձը կը տօնէ, կը հասկնամ թէ բռնահիւսական աննման հանճարի մը յիշատակը կը նուիրագործէ, հանճար որուն վրայ « Ապուշի մը սէս կը հիանամ » կ'ըսէ Վիգթօր Հիւկօ, և չոզեկաւքի գիւտովն աշխարհիս անտեսադիտական վիճակը հիմն 'ի վեր յեզաշրջող գիտունի մ'անունը կը փառաւորէ 'ի քաջալերութիւն այլոց . երբ Գաղղիացին Պասթիյլի անկման տարեդարձին առթիւ ցնծուծի անբաւ ծափ մը կը զարնէ և Ֆրանսան հրախաղի լոյսերով կ'ողողէ, ժամանակիս բռնապետներուն խմաց կը տայ թէ միջին դարու, աւատական ժամանակներու հին ու փուտ անիրաւութիւնները, արքայական տարփուհիներու, Տիւպարիներու և Բօմբաստերներու այլանդակ քմահաճութիւնները բռնակալութեան այն դարաւոր պատուարին փլատակներուն ներքև ընդմիշտ թաղուեցան, և ժողովուրդներու իրաւանց համար նոր թուական մը սկսաւ . երբ վերջապէս Ամերիկացին ազգային անկախութեան, Վաշինգտին Գալտերօնի, Իտալացին Տանթէի տարեդարձը կամ դարադարձը (centenaire) կը տօնախմբեն, նկուն աղբերը, հանճարի և տաղանդի մասին իրենց անցելոյն նայելու ամաչող ժողովուրդները կ'ըմբռնեն այս հանրական ցոյցերու և ուրախութեանց փիլիսոփայական ոգին, և իրենք ալ կ'զգան բերկրութիւն մը որ յոյսի կը նմանի :

Բայց ես, բարեկամ, չեմ հասկենար սահմանադրութեան տարեդարձի ազմկալի տօնախմբութիւնը, եթէ պարզապէս կերուխոււմի և խնդումի, ճառերու և պարերու, արինկերու և խմելու պատրուակ մը չհամարիմ դայն, վասն զի ՚ի զուր կը փնտուեմ իրողութիւնները, շօշափելի արդիւնք և գործեր որք կարենան զիս համոզել թէ սահմանադրութեամբ ազգային ճշմարիտ զարթումի նոր թուական մը սկսաւ, և ՚ ինչպէս ըսի արդէն՝ կ'ստիպուեմ կարծելու թէ Հայը շատ խոնարհամիտ է՝ քանի որ պատրիարքարանի ինչ ինչ զեղծ ումներու բարձման յիշատակը այսպէս ծափաձայն կը տօնէ, և կամ ազգային զարթումի թուական մը նուիրագործելով ինքզինքը կը խաբէ քանի որ կատարեալ զարթում չկայ :

Ատեն մը պատրիարքները, ամիրաներն և ասոնց նենդամիտ արբանեակներն ինքնազլուխ կը տնօրինէին ազգին գործերը : Քանի մը բանիրուն անձինք ազնիւ զիտաւորութեամբ ուզեցին օրէնսդրի դեր խաղալ և ինքնազլուխ կառավարողներուն ընթացքին և արարքին վրայ ազգին քննութեան իրաւունքը հաստատել, սակայն Հայ ժողովուրդին իմացական և բարոյական հանդամանքը, ընկերական և քաղաքային կեանքի պայմանները առանց ճշգրտէս քննելու սահմանադրութիւն մը Կառնալի օտար օրինադիրներէ, և կառավարութեան վաւերել տալէն, Ալի և Գուստ փաշաներուն իրաւացի քմծիճաղը շարժելէն ետք կարծեցին վերջ տալ սեւերես կրօնաւորներու և կամապաշտ ամիրաներու իշխանութեան : Ժողովուրդի մը յաւաք խմութեան համար հաստատուած «լաւ»

դոյն հիմնադրութիւններն ընկերութեան մէջ նետուած խառնակութեան տարրեր են միայն, եթէ կրթութիւնն այսպիսի հիմնադրութեանց բողբոջը ծլելու և բարգաւաճելու չափ սաստկացած և հանրացած չէ այն ժողովուրդին մէջ» : \*

Այն օրէն, այսինքն քսան տարիէ աւելի ժամանակէն ի վեր այս տեղի Հայերուն մեծագոյն մասն ազգային գործունէութեան շրջանի մը մէջ անընդհատ կը խլրտի, կ'երերայ, կը յուզուի, կը վիճի, կը լսօսի, կը դրէ, կեցցէ կ'ազաղակէ՝ սահմանադրութիւնը իրեն առաջնորդ ունենալով և ազգերու կարգն անցնելու յոյսով, ճիշդ այն Խորայէլացիներուն պէս որք քառասուն տարի անապատին մէջ թափառեցան Աւետեաց երկիրն երթալու համար՝ առաջնորդութեամբ մարդարէի մ'որ Եգիպտոսցի մը մեօցնելէն ետք Քորեբ լեռան վրայ բոցախառ մացառի մը մէջ Աստուծոյ հետ դէմ առ դէմ խօսելու սրտիւր ունեցաւ :

Սահմանադրութեան համեմատ ամեն դաւառնեբու մէջ կանոնաւոր վարչութիւններ պիտի կազմուէին, կեդրոնին հետ յարաբերութիւններ պիտի հաստատուէին, ուսումնական ժողով մը դաւառական գալրոցներու վրայ պիտի հակէր կրթական խորհուրդ :

\* Les meilleures institutions, lorsque l'instruction d'un peuple n'est pas assez profonde, assez générale pour en développer le germe, ne sont que des éléments de perturbation jetés dans la société.

ներու միջոցաւ որպէս զի ազգային կրթութեան և գաստիարատութեան արուի այն ծանր և զգօն ուզողութիւնն որ կեդրոնին մէջ պիտի պատրաստուէր ժամանակիս ուղւոյն, յառաջդիմութեան պահանջումներուն և մարդուս ամեն նիւթական, բարոյական և մտական պիտոյից համեմատ. պիտի բարեկարգուէին նաև վանքերը և պիտի դադրէին ծոյլ և ազգազաւ կրօնաւորաց հանդատարաններն ըլլալէ, թէև ստուգապէս յառաջդիմել ուզող ժողովուրդի մի պարտքն է այս վանքերը ալ անօգուտ համարել, բոլորովին փակել և բառնալ և կամ դպրոցներու փոխել . . . : Ըստ իս ազգային վերածնութեան մասին սահմանադրութեան ազգեցութիւնը խիստ փանաքի եղաւ : Սակաւութիւ անձերու նկատմամբ բացառութիւն մ'ընելէն ետք կը համարձակեմ ըսելու թէ ամիրաներու քնածին կամքին յաջողեց ամիրայական բեկորներու խռով և անզգայ ժողովականներու խռովածը : Աննսահազդ մ'այս խօսքին և թութովութեան ունկնդիրն է երկար տարիներէ ՚ի վեր, և անդիտակից իր դժբաղդութեան՝ կը կարծէ թէ կը շարժի և առջև կ'երթայ :

Վարչական օրէնքին այս ամբողջութիւնն իր պատճառները ունի անշուշտ :

Ինչպէս ըսինք արդէն, սահմանադրութիւնը մեր ազգին քաղաքական և ընկերական վիճակին անյարմար և չփոթ է : Սրբազրուելէն, պարզուելէն ետք իսկ կը մնայ դանել այժ մ'որով կարելի ըլլայ անոր անթերի գործադրութիւնը ապահովել : Ամեն մարդկային օրէն իր գործադրութեան սահմանուած նա-

խաղոյ ոյժի մ'էն թիւեր կ'ենթադրէ : Այս ոյժը չուներ մենք : Աւնինք միայն բարոյական իշխանութիւն մը : Այս իշխանութիւնը մեծ ներդրածութիւն չունի ոչ օրէնքին կիրառութեան պաշտօնը վարողներուն և ոչ օրէնքին հնազանդելու պարտաւորողներու կամքին վրայ : Առաքինութեան զրդ ումով գործող կամքը թոյլ, անտարբեր և ստեղ հետ և անդու թէ : Ճիշդը խօսելով նիւթական ոյժն իսկ ոչ այնքան կը դրուէ և կը դերէ մարդկային կամքը, որքան շահու ոյժը : Արդիւնաւոր ծառայութիւն մ'ընդունելուն միակ դադանիքն է ծառայողին աշխատութիւնը լաւ վարձատրել, բաւ ժամանակակից քաղաքապէտ մը : Եւ կեդրոնական վարչութիւնը քսան տարիէ ՚ի վեր տակաւին չգտաւ այս ոյժը, դրամի գորութիւնը, վասն զի տակաւին գործնական կերպով չըս ճեց և թերևս պիտի չկրնայ լուծել ազգային փոքրէ, անտեսազիտական տեսութեամբ ըմբռնուած սուրբ խնդիրը ասանց Բարձրագոյն Գրան հաստատութեան : Ինչ հարկ ուրեմն Արքիմեաի զձեռն գտնել — ենթադրելով թէ գտանք — ծախսաւոյն հրճուիլ քանի որ յենակէ չգտանք դեռ . . . Ինչ հարկ այս հրճուումներով խարսկու և ոչ միայն անօգուտ այլ նաև վտանգաւոր անպատահութեանց և կասկածոտ հակադրութեանց սեղի տալու . . . :

Կրնաւ ուրեմն երեւոյթել թէ սրբան նուազ արամազ իր էի տարեկարձի հանդիսին մեծ նշանակութիւն մը տալու և անձամբ հանդիտական ըլլալու : Սակայն հայերու մեծ բազմութիւն մ'և անոր ազգային հանդէս մը տօնելու կերպերը ու միջոցները մե-

տուևստ տեսնելու, նա մանաւանդ Ս. Փրկչի հիւանդանոցին այցելութիւն մ'ընելու վաւարքիս առջև ամեն վարանում դադրեցաւ, և կէսօրէն ետք բարեկամի մը հետ Եէտի-Գուլէ հասանք:

Այս բերդը զոր Սուլթան Մէհէմէտ Երկրորդ շինած է 1468ին, Օսմանեան տէրութեան Պատմիչը, պետական բանտն էր, և իր անցեալը հետաքրքիր ուղևորներուն սարսուռ մը կը տայ: Եէնիչէրիներու ահակալութեան (terreur) օրերը բաղմամբիւ վէզիրներու և նշանաւոր անձերու բանտն եղած է: Դեսպանական տարեգրութիւնները կը հաստատեն թէ հոն կը զրկուէին այն դեսպաններն որոնց տէրութեանց հետ Օսմանեան պետութիւնը պատերազմ ունէր: Եէտի-Գուլէի բերդին ներքին տեղերը աչքովս տեսնելու հրաման մը ստացած չըլլալս ցաւ եղաւ ինձ, վրան զի անով Էմիր Իզամպէրի Ուղևորութեան Սըրտէս 'ի ձեռին պիտի կարենայի տեսնել այն աշտարակը ուր կը բանտարկուէին դեսպանները, այն պզտի դաւիթը որ քալիֆներու հրապարակ կ'անուանի, և մի և նոյն աշտարակին քովի խորին ծակը որ պեճան-հօր կ'անուանի, մարդկային ոսկերտութիւն կազմուած պատն որ պարխայներուն բարձրութիւնը ունի, և անոր մօտ մահապարտներու աշտարակիկը, նաև ժայռաշէն պրը: Բարեյիշատակ Սուլթան Մահմուտի, Ապտիւլ-Մէճիտի, Ապտիւլ-Ազիզի, և արդի Սուլթան Ապտիւլ-Համիտի պէս Օղոստափառ կայսրերու արդարատէր քաղաքականութեան շնորհիւ աշխարհս պարծելով կը հաստատէ թէ բարեբաղդաբար Եէտի-Գուլէն (յունարէն Էրթարիթիօն) այսօր անվնաս և

անտարբեր դեր մը կը խաղայ և պատմական արժէք ունեցող հնութեան մը նշանակութիւնը ունի միայն անցելոյն անդուսկին վրայ մեղամաղձօրէն յառողքի բերու համար:

Եւրդին արտաքին պարխայներուն հանդիպակայ կողմը շինուած է Ազրիանուպոլսոյ երկաթուղիին կաշարանը, քիչ մ'անդին Սուրբ Փրկչի հիւանդանոցն ուր բարեկամիս հետ ուղղեցանք դափնեզարդ կամարներու և երփներանգ դրօշներու տակէն անցնելով, և զովաշունչ հովի մը հետ ծծելով օդ մը զոր կը տողորէին քօքէթ արմենուհիներու կուրծքերուն վրայ դահող վարդի, շահորթամի փունջերն, ինչպէս նաև զդեսպաներէ, թաշկինակներէ և այլ շորերէ արտարուող քօճեթ և ուրիշ անուշարոյր հոտեր:

Նախ հիւանդանոցին դուրսի ծառազարդ և դաշտաբուս հրապարակին առջև կանկ առինք պահ մ'և նայեցանք:

Ահագին բազմութեան մը շշուկին և ձայներուն հետ կը լսէինք ներդաշնակաւոր եղանակներ զոր վրանակներու տակ կեցող երաժիշտները կը նուազէին. ձառողներուն աշխոյժը, պարողներուն խանդը, բոլոր հանդիսականաց զիմական զուարթութիւնը նոր դրդիւ և սաստիկութիւն կ'ստանային ներդաշնակութեան այս հողեզրաւ ձայներէն. թոթովուն բերաններ թրթրակ լեզուներու կը փոխուին. պարելու համար նախ հաշմոտներու պէս շարժող ոտներ սպանիական թեթևաքայլ պարուհիներու պէս կը կայթին, կը սահին աւելնով և հազիւ հազ դեռնին զալարիքը քերելով:

Հասակաւոր և դեռահաս տղերք ու կիներ հոյլ ՚ի հոյլ կը լալրտին, կը քայլեն, կը ձեմեն, կ'ոտոտան, կը խօսին, կը խնդան, կը ժպտին, ծափ կը դարնեն և անբաւ բերիլութեան ու վիճուկի տեսարան մը կ'ընծայեն: Ազգային պաշտօնաւորներ, գրագէտներ, խմբագիրներ, վարժապետներ, ուսանողներ, աշակերտներ խումբ խումբ ման գալով, աթոռներու, աթոռակներու կամ բազմոսներու (banquette) վրայ նստելով ազգային օրէնքին պիտանութեան, լուսաւորութեան, սիրոյ և երանութեան վրայ կը խօսակցին, կը հրճուին, կը յուզուին, կը կարմրին: Արարմուք որ առնական ճակատներու և կուսական այտերու վրայ մերթ կը ծաւալի և մերթ կ'անհետի՝ դարեջուրի շողիին սաստիկութեան կամ կնախնդ իր Տօն Ժուաններու քծնասիրական բանասիրութեան համեմատ: Ոմանք երամովին կը դիմեն դէպ ՚ի բեմն ատենարանութիւն մը լսելու և իրենց սրտին գէթ միօրեայ ազգասիրութեան մը պաշարքը հայթայթելու համար, և ոմանք ալ ծառերու շուքին ներքեւ հանդարտօրէն նստած իրենց ներքին դոհունակութիւնը կը լափեն՝ ազգային հանդիսի մը փառաւորութեան վրայ դմայելով:

Քեղանի կիներ, շնորհալի օրինակներ պարզասիրուհիներուն աւելի օրինակին քան թէ խրատին հետեւելով շքեղասցէս հաղուած սղուած կը փողփողին, պաճուճանքի և պերճանքի մասին ցոյց կը տան կիրթ ճաշակ՝ հաստատելու համար թերևս թէ «գարգարանքը կնոջ ոճն է»: Ապարդիւն չմնար այս փողփողումը, և դժբաղդ տղեղներուն սիրտը կրծող

այս ամեն գեղեցիկները կամ աղւորները յայտնի կամ գաղտնի կերպով կը փնտռուին, կը շոյուին, կը յարգուին, անյագ և անպատկառ նայուածներու, կտակած ելի փափսուքներու, չարաչուք ակնարկութիւններու, սպառնական քիժիժաղներու կ'ենթարկուին, ոմանք փառք և ոմանք անարդանք համարելով այս ենթարկութիւնը. մին իր սիրականին, միւսն իր բարեկամին, այս իր եղբոր, այն իր հօրը հետ թև թև կը չըջի: Նայուածներ, բնական և արուեստական ճարտարութեամբ կազմուած կամ սպառաժատուած նայուածներ եզրպտանջանական հաղորդակցութիւններ կը հաստատեն, սիրտերը թռնոտ կ'ելեն և խորհրդաւոր կերպով կը բաղխեն, տարիտ ընկուրձքեր, ծիծի պէս սպիտակ վիզեր և վտանգաւոր շուրթեր սիրավատ երեակայութիւնները կը գերեն, նորաթիթի սիրտերը կը հրահրեն և մի և նոյն ժամանակ անբաւ գառնութեամբ կը համակեն սպիտակահեր երիտասարդները, սևահեր ձերերը, տարիներու բեռին ներքեւ ճգմուած և խորտակուած ամեն մարդկային աւերակները . . . :

Ի դուր կը փնտռէի գէմք մ'որ դուարթ ջըլլար, աչք մ'որ նայելու պաշտօնը չվարէր, լեզու մ'որ չխօսէր, շուրթ մ'որ չմտայր, բերան մ'որ եղբայրութեան կամ սիրոյ համար փոխանակելու պատրաստ չդանուէր: Ամենուրեք խնդում, կերուխում և ուրախութիւն անպատում, նա մանաւանդ ուսումնական և ժիր երիտասարդներու խումբի մը մէջ, ուր — հոս տեղն է լսելու — համակիր և սիրալիր քննուանելութիւն գտայ և պատիւ ունեցայ տեսնուելու

անոնց մի քանիին հետ որք ազդին համար յոյս և լոյս կրնան սեպուիլ իրաւամբ :

Այս ընդհանուր ցնծութեան և դրօսանաց ժամանակ, նուազարանաց ներդաշնակութեան, զգացմանց գէթ վայկենական համաձայնութեան միջոցին դժգոհութեան և արամութեան երկու պատկեր տեսայ միայն . մին էր դրօշազարդ կամարին ներքև սպասող ախաէն որ հանդիսականաց ժլատութեան և ինքնամոլութեան գէտ լռիկ մնչիկ կը բողբէր պատասպարուած դժբաղչներու կողմէն, միւսն էր հիւանդանոցին ներքին կողմը դրուած կիսարձան մ'որ Պէզձեանինն էր, որու վրայ սրբային բարկութեան մ'և նուիրական սրամտութեան մը խորհրդաւոր հետքը նշմարել կը կարծէիր, և որ խորհող իմաստասիրին ուշադրութիւնը արամապէս կը հրաւիրէր այն հեղնապէս հակադէմ պատկերին վրայ զոր կը կազմէին հիւանդանոցին ներքը պատասպարուող անբաւ թշուաութիւնն ու դուրսը դզրդող անպատմելի ցնծութիւնը : Ամակատար և քաղաքավար հողաբարձութեան մը շնորհիւ մեր ազդին բարեարդտական հիմնարկութեանց ամենէն նշանաւորին մէն մի սրահը, մէն մի սենեակը, լսցիկը, խորը հետաքրքրութեամբ տեսայ, հարցուփորձ ըրի հիւանդներու, նա մանաւանդ քանի մը խևերու հետ խօսեցայ՝ ասոնց խելքը դուրսի դաս մը խելանիներուն հետ բաղդատելու համար, և գոհունակութեան ու միանգամայն դժգոհութեան զգացումով մը դուրս ելայ :

Գոհ էի, վասն զի հասոյթի միջոցներուն անբաւականութեամբ հանդերձ արդի հողաբարձութիւնն իր

պարտքը մարդասիրարար կը կատարէ իր հսկողութեան և խնամակալութեան՝ յանձնուած թշուառները կարելի եղածին չափ սիրով կը համար : Տժգոհ էի, վասն զի հիւանդանոցն իր տարեկան ծախսոց կէտին համապատասխանող հասոյթ ունի միայն, վասն զի այս թշուառներուն, որբերուն, հիւանդներուն, խելաղարներուն պիտոյքը անթերի հոգալու մասին Պօլտոյ և գաւառաց հայերուն կողմէն ցոյց չտրուիր այն ողորմասիրութիւնը որուն զգեցելի օրինակը մեզ կը տրուին դարուս Բիսօթիներուն, ինչպէս նաև Յ. Ստարթապետի, Ս. Արևիկեանի և ուրիշ ասոնց նման առարկիի և բարեգործ հայերու կողմէն :

Նիթէ գիտութիւնն բնկերական աշխարհի տիրութիւն է, զի թութիւնն ալ բարոյական աշխարհի թատաղան է :

Նիթէ կրթական հաստատութեանց թիւն ու վիճակն ազդի մը իմացական յաստատութեան մակարդակը (niveau) ցոյց կը տայ, բարեպաշտական հաստատութեանց թիւն ու վիճակն ալ ժողովուրդի մը բարոյական զգայութեան մակարդակը կը յայտնեն :

Նիթէական շահերու նկատմամբ մարդկային համերաշխութիւնը ցնորական դադաւար մ'է ասոնց բարոյական շահերու համերաշխութեան : Ար որ այս վերջինը կը պակսի, հոն բնկերային ահաւոր տաղնաող մը կայ : Անցելոյն և ներկային պատմութիւնը կը հաստատէ թէ այս տաղնաող մեծ հնհնուք պատճառած է և կը պատճառէ պետութիւններու և փոխտոմարներու :

Քոտորազէտները ժողովրդային ստորին դաս

րու տնտեսական վիճակը բարւոքելու համար ինչ ինչ տնտեսական միջոցներ գործածելով վտանգին էութիւնը կը ճանչեն, և տնտեսագէտներն ալ այս միջոցներուն օգտակարութիւնը գիտութեան տեսութեամբ հաստատելով հանդերձ կը խոստովանին թէ անոնցմով թշուառութիւնը հիմնովին բառնալն անկարելի է, և թէ մարդասիրութիւնն ու զթութիւնը կը պարտաւորին միանալ նոյն միջոցներուն հետ: Նոր ճշմարտութիւն մը չէ այս: Բայց ճշմարտութեան մը հնութիւնը պայն կրկնելու արդեւ մը չէ, քանի որ խլութիւններու ամենէն սոսկալին մարդկային սրտին խլութիւնն է . . . :

Բէրա, 23 մայիս 1881:



**Ն Ա Մ Ա Վ Ե .**

Որոնք որ քիչ շատ կ'ուսումնասիրեն մարդկային մտքի զարգացման պատմութիւնը, կը պարտաւորին հաստատելու թէ յառաջըլիմութեան ոգին փրկաւէտ և անդ խնայրելի շարժում մը կը տայ ընկերական աշխարհին:

Այս ոգին դարերէ, նա մանաւանդ տասնութերորդ դարուն վերջերէն և տասնևիններորդ ին սկիզբներէն ՚ի վեր կը ծնի այնպիսի քաղաքական և ընկերական երեւոյթներ որք ժողովրդոց անցեալը և ներ-

կայն քննող, դատող և աւելի բարեկարգ և հանգիստ սաղագ այի մը պայմանները ուրուադրող իմաստասէրներուն ուշադրութիւնը կը գրաւեն:

Այս զարմանալի երևոյթներուն գրեթէ առաջինն է բնութեան, տեսանելի աշխարհի, կեանքի և իրականութեան քննութենէն և ուսումնասիրութենէն արտադրուող նոր գաղափարներու առջև մարդկային հին մտքին յամրաբար այլ անընդհատ նահանջելն և նոր մտքին կազմուիլն ու ծագիլը, գաղափարներ որք գիտութեան և փիլիսոփայութեան, ինչպէս նաև ընկերային վերանորոգմանց համար նորանոր հորիզոններ կը բանան:

Թէ քաղաքական, թէ ընկերական և թէ գրական բարեշրջումներու ոգին ճիշդ այս երևոյթով կ'ըմբռնուի և կը մեկնուի:

Այս մեծ փոփոխութիւնը, որ ժողովրդոց բարօրութեան և լաւագոյն ճակատագրի մը նկատմամբ անհաշուելի հետեւանք ունի, անշուշտ պէտք է վերագրել այն ուղիղ գաղափարաց և այն ազնիւ զգացմանց, զոր կրօնական, քաղաքական և գրական համոզմանց տէր միտքեր և սիրտեր քաղաքակիրթ ընկերութեանց ծագումէն ՚ի վեր առ ոչինչ գրելով հալածանքը, զոհողութիւնը, մահը իսկ, համարձակած են յայտնելու իրենց երկրին ընկերական հիմնադրութեանց, մարդերուն և իրերուն վրայ, և որք թեկադրուած են մարդուս նիւթական և բարոյական շահերը բռնաբարող օխտուր իրողութեանց տեսարանէն:

Մարդկային նոր մտքին կազմուելին կ'արտայրի

պարտք մ'որ է ցոյց տալ մինչև հիմա իբր ճշմարիտ և իբր օգտակար ընդունուած դազափարսները և իբրերը, սովորութիւնները և օրէնքները, մարդուս վարքը և բարքը վերաքննելու, սրբազրելու և վերանորոգելու կարևորութիւնը :

Հին միտքը, կամ լաւ ևս է ըսել, աւելորդապաշտութեանց, նախապաշարմանց, սին և անհեթեթ տեսիլներու աւանդարանն առանց քննութեան, կրաւոր հնազանդութեամբ, զիտի յատուկ համակերպութեամբ կ'ընդունէր աստուածայետութիւնը, աւատական բռնակալութիւնը, միապետական իշխանութեան երկնային իրաւունքէ բխումը, գահին և խորանին բացարձակ հրամանակալութիւնը, սուտ զիտութիւնը, ամուլ գրականութիւնը և այն ամեն օրինակոր սեպուած հիմնադրութիւնները զոր նենգամիտ կամ պարտգաներէ ստիպուած օրէնդիրներ աշխարհակալութեան և ժառանգական իրաւունքի վրայ կ'ովնող զօրաւորներու աջակցութեամբ հաստատած են նախապատմական ժամանակներէ ի վեր :

Նոր միտքն այս ամեն հնաւանդ իրերուն խուզարկու աչքով կը նայի, պետական և եկեղեցական գերիշխանութեանց արարքը և ընթացքը զնութեան մաղէն կ'անցունէ, հին ու փուտ ստութիւնները կը հերքէ, արդարը և ճշմարիտը, օգտակարը և գեղեցիկը կը հրապարակէ իբր անհրաժեշտ պիտոյք մարդկային ցեղի նիւթական և բարոյական կենաց, և ամենուրեք մարդուս գործողութեանց գովելի և ստուգապէս օգտակար շարժառիթներ ցոյց տալով՝ ընկերային նոր աշխարհի մը հիմքերը դնելու կը նկրտի :

Այս ջանադրութիւններն արդէն ունեցան գործնական և մեծ ամեծ արդիւնք որմէ մարդկութիւնն սկսած է օգտիլ, մասնաւորապէս դազդիական յեզաշրջումէն ի վեր :

Երկրային և երկնային ամեն տեսակ իշխանութիւններ մարդուս մարմինը և հոգին առանց համարատուութեան և անկախ կառավարելու սովորութիւնը կ'ստիպուին հետզհետէ մտնալու : Արթութեան և դաստիարակութեան ազդեցութեամբ կազմուած այժմեաց միտքերն ու սիրտերը կառավարուելու պարտաւորութեան հետ նաև կառավարելու իրաւունքը և կարողութիւնը կ'ստանան, և ընկերութեան ստորնադոյն խաւերէն ելնող անչուք անհատը լուսաւորութեան և յաստգիմութեան շնորհիւ կրնայ ոչ միայն իշխանութեան մինչև գաղաթը մատչիլ և կառավարողի պաշտօն վարել, այլ նաև հոն գտնուողներուն վրայ հսկել, հաշիւ պահանջել ու միանդամացն իր ժամանակի մարդերուն և իրերուն վրայ կարծիքը յայտնել՝ չարը դատապարտելով, բարին ջատագովելով, մարդկային մթութիւնները փառատելով և ամենուրեք լոյս սփռելով :

Արդ՝ այս լոյսը տխուրը, երկնային և երկրային խնդիրներու, բարոյական և նիւթական շահերու, մարդկային կեանքին ամեն գործերուն մէջ ճշմարտութիւնը ստութեան, արդարութիւնը անիրաւութեան, գեղեցիկը տգեղին գէմ պաշտպանելու, լաւ գաղափարաց, լաւ զգացմանց հունտերը միտքերու և սիրտերու մէջ սերմանելու և ծլելու, մէն մի յաստգիմական քայլէն անսխալապէս ետք ուրիշ քայլի

մը հարկը զգացնելով տղէտ և թշուառ դասերու լուսաւորութեան և բարօրութեան նպաստելու համար մշակուած և յղիւած միտքն անընկճելի աջակից մը գտած է :

Այս աջակիցն է մամուլը :

Ստուգիւ տիտանեան աջակից որ ընկերական Պրիւարէի մը դերը կը խաղայ, և անարդարութեան սահման մը գնելով՝ անոր քմահաճութեանց հոսանքը կը զսպէ, և ժողովրդոց համար հրատարակելով նոր հոգի մը՝ անոնց անկապտելի իրաւունքը կը նուիրազ ործէ :

Լուսաւորութեան ծաւալման շնորհիւ այս իրաւունքները, այս շահերն ամենուրեք մի և նոյն հանգամանքը, մի և նոյն կարեորութիւնը ստանալու և ընդարձակուելու կը միտին իբր անհրաժեշտ հետեանք մարդուս անհատական զարգացման, և քանի որ հրատարակային թերթերու պարտաւորութիւնն է այս շահերուն վրայ հսկել, ամեն երկիրներու, աւելի կամ նուազ զարգացած ազգերու մէջ այս պարտաւորութեան գրեթէ մի և նոյն պայմաններով դործադրուելն անհրաժեշտ է :

Կան երկիրներ, ինչպէս Ամերիկա և Եւրոպայի մեծադոյն մասն, ուր լրագիրները տէրութեան մէջ տէրութիւն մը կազմած ըլլալու չափ զօրութիւն ունին, և՛ իբր այն՝ իրենց այս բարոյական ազգեցութիւնը կը տարածեն քաղաքական իշխանութեան ամեն ճիւղերուն վրայ : Ներհուն և զգայուն զլուխներ մարդուս բարոյական և նիւթական ամեն շահերը և գործերը հանրական օգտակարութեան տեսութեամբ կը նկատեն, և այս մասին իրենց գրիչը՝ դողցես սու-

րի սպասնական յատկութիւնը ստանալով՝ շատ պարագաներու մէջ մտատանջութիւն և անհանգստութիւն կը տայ վարչական մարմիններու, պետական մարդերու, և Նուի Հնգետասաներորդը կը հարկազրէ թնդանօթին գոռունը՝ զրչին ճսինչէն նախաձեռար համարելու\* :

Ար հասկնամ արքայական ականջներու այս ճանճարոյթը և կնամով սրտի մը վախը : Նուի ժե՛ս իր տարփուհիներուն յատկացած ուշադրութեան մի մասը երբեմն կը յաջողէր նուիրելու ընկերային միջնորդտին, և հոն զիջուած ամպերէն, թերևս բնազդու մով կամ գուցէ կանխատեսութեամբ կը գուշակէր ՅՅի որոտումը և ՅՏին կայծակը . . . :

Սուր գրիչներու այս հոհուք, յառաջադէմ ազգերու հրատարակային թերթերն այս զօրութեան տէր եղած են ճամարտապէս ըմբռնուած հրատարակութեան և վեճաբանութեան շնորհիւ :

Օրէնսդիր ժողովներու վիճաբանութիւնները, վարչական մարմիններու անօրինութիւնները, դործադիր իշխանութեան որոշումները, հասարակաց կրթութեան պաշտօնատան ծրագիրները, դատարաններու վէճերն ու վճիռները, կրօնական իշխանութեան արարքն ու ընթացքը, գիտութեանց և արհեստից, գրականութեան, ճարտարութեանց և գեղարուեստից վերաբերող զիւտերն և իրողութիւնները, ներքին և արտաքին քաղաքականութեան նկատ-

\* Mieux vaut encore les éclats du tonnerre que tous ces grincements de plumes. LOUIS XV

մամբ կարեւորութիւն ունեցող ամեն պատահարներն  
 և լուրերը կանոնաւորապէս, արագ ապէս, ուշադրու-  
 թեամբ և դրամական գոհողութեամբ կը հրատարա-  
 կուին օրական կամ շաբաթական կամ ամսական լրա-  
 գիրներու, հանդէսներու, հաւաքածոներու և ուրիշ  
 պարբերական թերթերու մէջ:

Խմբագիրները, գրողէաներն իրենց գրիչը այս  
 ամեն բարոյական շահերու պաշտպանութեան յատ-  
 կացները բաւ չեն համարիր: Հանրական օգտակարու-  
 թեան տեսութեամբ ըմբռնուած նիւթական շահերը  
 նոյնպէս 'ի նկատի կ'առնուեն, և՛ յանուեն հասարա-  
 կաց կարծեաց և զգացմանց՝ կը պահանջեն որ ասը-  
 քը տրամաբաշխական արդարութեան սկիզբին հա-  
 մեմատ բաշխուի, Տէրութեան ելմտացոյցն անկեղծ  
 և մեկին կերպով պատրաստուի, դրամագլուխներու  
 շրջաբերութիւնը անուեսողիտական օրինաց համե-  
 մատ կանոնաւորուի, բանուորին վարձքին քանակու-  
 թիւնն իր աշխատութենէն արտադրուած արդեանց  
 համեմատութեամբ սահմանուի, աղքատութեան և  
 մուրդութեան դարման տարուի, անդործ կիներու  
 և պատանիներու դրազում պատրաստուի, ճանրորդ-  
 ներու և ապրանքի փոխադրութիւնն աւելի խնայու-  
 ղական դրութեան մը վերածուի, գատական իշխա-  
 նութեանց դրամական պահանջումներուն խտու-  
 թիւնը մեղմուի, խառնաշփոթ վարչութեան մը շար-  
 ժական գործիները պարզ դրութեամբ մը վերակազ-  
 մուին, ծայրայեղ կեղբոնացման մ'անպատեհութիւն-  
 ներն և աստիճանական սպակեղբոնացման մ'առ-  
 աւելութիւններն ըմբռնուին, գիւղերու մէջ նախա-

երթական դարոյցները բազմապատկին, երկրագոր-  
 ծական դարոյցներ, արուեստանոցներ հիմնուին, ըն-  
 կեցի'յներու և սխտակներու ներկայն և ապագայն  
 սպաստօրին, աղքատներուն, հիւանդներուն, խե-  
 լաղ արներուն խնամք տարուի, ճանրաներու և փո-  
 զոցներու կանոնաւորութիւնն և մարտութիւնը հսկու-  
 ղութեան ներքե տանուին, երկաթուղիներն երկրին  
 ամեն կողմը տարածուին և իրարու հետ հազորդա-  
 կցութիւն ունենան իշր մի և նոյն մարմինի կենսա-  
 տու երաշխերը, նաւահանդիւտոները բարւոք վիճակի  
 մէջ պահուին, վերջապէս աշխատութեան, կրթու-  
 թեան և բարեկեցութեան սահմաններն ամեն տեղ  
 ընդ արձալուին: Այս ամենը պահանջելով չեն մոռ-  
 նար կրօնական և քաղաքական նախապաշարումները  
 և վիստակար աւանդութիւնները հալածել, սոցիալու-  
 թեան դէմ կուռիլ, աստրինուութիւնը դուռնու-  
 անն մարտութիւնը ապտակել, երկրխմութիւնը նշուա-  
 կել, զեղծումները ջնջելու աշխատիլ՝ անձնական  
 կրխներէ կարելի եղածին չափ դուռնաւորով, իրենց  
 խմբագրական կամ գրող խտական արժանապատու-  
 ութիւնը առաջուր չիթխելով, համոզելու կամ հա-  
 մոզուելու անկեղծ դիտատեսութեամբ և ազատ վի-  
 ճարանութեամբ, մարդկային գործ մը քննելու ա-  
 տեն՝ զայն արդարացնող դիտատեսութիւնը չմոռնա-  
 լով, և իրողութիւն մը դատելու ժամանակ զայն ար-  
 տադրող պարագաները մեկուսի չիթողով:

Այս թէութիւններով հրապարակուին թերթ մը  
 մեծ ազդեցութիւն կ'ունենաց հասարակաց կարծի-  
 քին վրայ և՛ իրը ասոր թարգման՝ իր երկրին իշխա-

նութեան առջև ազդարար զօրութիւն մը կը դատեսցայ :

Անշուշտ ամեն լրագիր ոչ այս ամեն հանգամանքը, ոչ այսպիսի նպատակներ և ոչ ալ այսպիսի սպառնացողութիւն և զօրութիւն ունի: Մասնաւոր շահերու, օրինակի ազագու կուսակցութեան մը յաղթութիւնը պատրաստելու, հնարադիտական կամ երկրագործական ձեռնարկութեան մը յաջողութեան նպատակու, վաճառականական կամ գանձային գործառնութեանց յատկացած այս կամ այն հաւաքական կամ մասնաւոր ջանադրութիւնները արդիւնաւորելու նպատակներով կը հրատարակուին նաև թերթեր որք սակաւաթիւ ընթերցողներու սահմանուած են և կ'ազդին որքան կ'ապրի իրենց նպատակը, և որք ամենեւին վնասակար ազդեցութիւն մը չեն կրնար տարածել հանրութեան վրայ և հանրական հանգամանք կրող շահերու դէմ:

Սակայն հոս տեղն է դիտելու թէ յառաջադէմ երկիրներու մէջ ամեն կարգի թերթերն իրենց աւելի կամ նուազ յաջողութիւնը, ազդեցութիւնը, զօրութիւնը կը պարտաւորին քանի մ'էական և անհրաժեշտ պայմաններու որք են գրողներուն հմտութիւնն ու մտային անկախութիւնը, մամուլի ազատութիւնը, ժողովրդային ընթերցատիրութիւնն և դրամական ոյժը:

Ուր որ խմբագրական ձեռնարկութեան մը կը պակսին այս պայմանները, որք իրարու հետ սերտ կապակցութիւն և յարաբերութիւն ունին, հոն մասնուն ընկերային ոյժ մը, քաղաքա՝ թութեան և լուսաւորութեան զօրաւոր գործի չ'ընար ըլլալ:

Գրամական պայմանը մասնաւոր լրագրին յաջողութեան պայմաններուն առաջինն է . . . : Ամենէն նշանաւոր թերթն է թէ լոկ բաժանորդագրութիւններէ սպասէ գանձային ոյժը, կը պարտաւորի տուժելով շարունակուիլ կամ իր դամբանականը կարդալ: Կրնայ ըսուիլ թէ այն իր էութիւնը ծանուցումներու արդիւնքին կը պարտաւորի: «Ինչ որ է տուրքը կառավարութեան համար, կ'ըսէ Էմիլ Տը Ժիլարտէն, նոյնն է ծանուցումն լրագրի մը համար» և հասցթի այս միջոցն զուրկ խմբագիրներուն վըրայ վայ կը կարդայ:

Բայց, բնական, կարծիքս անզուշարար այսպէս շարելու տեսն յանկարծ կասկած մը կարթննայ մտքիս մէջ: Կը դիտեմ որ քեզ նամակ կը գրեմ և չէ թէ յօդուած, և թէ նամակի մը շրջանին մէջ չեն կրնար ամփոփուիլ մամուլի վերաբերող ամեն խորհրդածութիւններ և զաղափարներ: Ուրիշ կասկած մ'եւս կ'սկսի տանջել միտքս: Թերևս ներքնասլէս և իւրովի ըսես թէ օտար ազդերու մասունին նկատող այս զաղափարներս ոչ նոր են և ոչ ալ առաջին անգամ երկուստ: Եթէ անտեղի չէ կասկածս, կը խոստովանիմ թէ իրաւացի է դիտողութիւնդ:

Գանկիտ տրամադրիժն և ըզզիս տեսալն ու թերևս կշիռը դիս կը հարկադրեն նոր զաղափարներ երկնելու և հայ ընթերցողներու հաղորդելու փառասիրութեան հրաժեշտ տալ, ենթադրելով թէ այսպիսի զգացումէ մը գրաւուած ըլլամ: Այդ յաւակնութիւնը ուրիշներուն, աւելի ծանրակշիռ և բեզմնաւոր միտքերու կը թողում: Սակայն այս պարա-

դայն դիտ լուսեթեան դատապարտելու պատճառ մը չէ կարծեմ: Եթէ հեղինակները, գրող Էանելը, խմբագիրները նոր գաղափար գտնելու, երջնութեան հրատարակելու թելուծեամբ իրուածք ունենային դրիշ շարժելու, կը հարցնեմ քեզ թէ աշխարհիս մէջ քանի՞ հոգի պիտի կարենային այս իրաւունքը վայելել:

«Ամեն բան ըսուած է աշխարհիս մէջ, բայց քանելու կերպն անսպասելի է» ըսաւ գաղղի սցի վիշ պատանուհի մը: Թէև բուրբողին ճշմարիտ չէ այս կարծիքը, սակայն մասնա՛յն ստուգութեան մը գրողը կը կրէ. իսկ Պարօն անորմէ ստաց՝ և աւելի ճշմարտանման կերպով մը կ'ըսէ թէ՛ Մարդիութիւնն իր բոլոր լուսաւորութիւնը կը պարտաւորի հին ժամանակի չորս հանճարներու որոնց գաղափարներուն չորս հազար հոգի հագուստ կը ձևեն\*:

Իրաւ է որ Եւրոպայի խմբագրական ասպար'զին առաջին շահատակին, Էմիլ Տը ժիրարտէին համար ըսողներ եղան թէ ամեն օր նոր գաղափարով մը կը մեծարէր իր ընթերցողներու պահանջօտ քի՛քը: Գուցէ . . . : Ամեն մահճանացուի տրուած չէ այս վե՛տ պիտակին (bâtard) ըզեզը: Թե՛ղ Պ. Պիշոֆ մարդկային ըզեզի նիւթական կշիւէն հետեւութիւններ հանէ և տարբերութիւններ գտնէ աւանդին և կնային ըզե ըներու մէջ: Ըօտ իս ըզեզի մը սեղճական ար-

\* L'humanité doit toutes ses lumières à quatre génies de l'antiquité, commentés par quatre mille habitants de pensées.  
BACON

ժէքն անոր տեսակովն և չէ թէ կշիւովը կը չափուի: Էտիար Պինէ բնագէտներու հետ համա՛խօս գտնուելով կը հաստատէ թէ մէն մի կենդանի իր անհրաժեշտ պիտոյից համապատասխանող գործարաններ ընդ ունած է բնութեան: Եւ բնագէտները կը շուարին կը մնան երբ վայրենիներուն ըզեզին կշիւը լուսաւորեալ մարդուն ըզեզին հաւասար և իրենց կազմագիտական օրէնքին հակառակ կը գտնեն: Գծուարութիւնը կը վերնայ երբ վայրենին իր ըզեզին հետ կը կրթուի, և երբ այս ըզեզը կ'սկսի քաղաքակրթութեան պահանջմանց համապատասխանել՝ իր կրած փոփոխութեան և չէ թէ ֆիզիքական քանակութեան շնորհիւ մարդկային մաքր ամեն գործողութիւնները կատարելու ընդունակութիւն ստանալով:

Ժիրարտէնեան ըզեզ մը չունենալս յայտնելն ետք ըզեզայն շեղմանս վերջ կը տամ և կ'ըսեմ. Եթէ նոր գաղափարներ երջնելու յատկութիւնը չունիմ, ուզող գաղափարներ գտնելու և յայտնելու և ծուռ գաղափարները գատապարտելու նուիրական պարտքը կ'ըզամ, խոստովանելով թէ անշուշտ ես ալ կրնամ սխալիլ և պատրաստ ըլլալով սխալս ճանշելու և ուզողելու, եթէ օրինաւորապէս ինձ ցոյց տրուի այն: Մարդս իր մի սխալը կամ պակասութիւնը ճանշելովը զիւցաղնութեան ծիւ մը կրելը հաստատած կ'ըլայ\*:

Պարտաւորութիւնս այսպէս հաստատելն ետք կը բռնեմ վերստին մամուլին նկատմամբ ընդ հատուած

\* Dans toute faute reconnue il y a un germe d'hé-  
roïsme.  
DANIEL STERN

գաղափարներուս թեւը, և կ'ըսեմ թէ հայն ալ չէ թէ մէկ այլ շատ պատճառներ ունի վայ կարդալու հայ մամուլին վրայ:

Այս մասին կարծիքներս և տպաւորութիւններս ուրիշ նամակի մը մէջ քեզ յայտնելու յառաջողութեամբ վերջ կը տամ ներկայ գրոյս՝ զի թ երևակայութեամբս ձեռքդ ուժգնակի թոթուելէն ետք:

Բէքա, 26 մայիս 1881:



**ՆԱՄԱԿ Զ.**

Հայ լրագիրներու և ուրիշ հրատարակութեանց վրայ կարծիքս և տպաւորութիւններս քեզ հաղորդելու խօսք տուեք էի նախորդ նամակիս մէջ:

Ահա՛ խոստումս կատարելու փորձ մը կ'ընեմ, աշուներ և մասնաւոր իրողութիւններ յիշելէ զգուշանալով՝ որպէս զի անձնասիրութեան զգացումներ չվիրաւորուին և որպէս զի ոմանց պատրանքը մեզի՛կ փարատի: Մէն մի խաբաղի, զբազխի գիտողութիւններէս և կարծիքէս չըջարելու միակ դարմանն է ինքզինքը բացառութիւն համարիլ և ինձ համախոտ գտնուիլ, եթէ անոնք ուղիղ և ճշմարիտ երևին իրեն:

Այս զգուշութիւնը ընելէ և սակաւաթիւ բացառութիւններ ընդունելէ ետք կը համարձակ ըսելու թէ հայ մամուլն ամուլ է թէ եւրոպական հրատարա-

կութեանց և թէ հայ ընթերցողներու բարոյական և իմացական պահանջմանց հետ բաղդատուելով:

Սակայն այս դատումն այն ատեն միայն կ'արդարանայ երբ դատապարտութեան պատճառներուն հետ նշանակուին նաև մեղմարար պարագաներ պատասխանատուութիւնը թեթեւելու համար: Գլտովին մեղապարտ սեպուիլը կ'ենթադրէ յանցանք մ'որ գործողին կա՛մքէն կախում ունեցող պարագաներու մէջ և ասոնց ազդեցութեամբ գործուած է: Արդարասէր խլ՛ի մը, կանխակալ կարծիքէ ազատ մտքի մը պարօքն է իրողութեանց բուն պատճառը փնտռել, մէն մի պատասխանատուութիւն սահմանել, և ապա դատուութիւն մ'ընել:

Հայ մամուլն ամուլ է, ըսինք, վստն զի բեղմնաւորութեան պայմանները կը պակսին, և հետեւաբար շհամապատասխաներ այժմեայ հայ ընթերցասէրներու բարոյական և իմացական պիտոյից:

Հին սերունդներու մէջ, ուր կրթութիւնը հիմնական և ընդհանուր չէ, բնականաբար ոչ հետաքրքրութիւն և ոչ ընթերցասիրութիւն կայ: Իսկ նոր սերունդներն օտար լեզուներ սորվելով երբ կ'սկսին անգլիական կամ ֆրանսիական գիրքերու և թերթերու ընթերցման վարժուիլ և հրատարակուիլ, կը գիտմախին ստակ և ժամանակ վատնելու և կարդալու այնպիսի ազգային լրագիրներ և երկեր որք թէ օտար մտքի արտադրութեանց հաւասար և թէ փոքր ինչ մշակուած ճաշակներու յարմար մեծ բան չեն պարունակեր:

Ուր որ հմուտութիւն և մտքի ու բնաւորութեան

անհրաժեշտ իւր չկայ, հոն ճշմարիտ խորագրութիւն  
և հեղինակութիւն կը պակսին:

Քերականութեան և ճաշակի պահանջմանց դէմ  
արհամարհական դատողութեամբ մը կամ տղիտու-  
թեամբ վարուելով քով քովի խօսք չարել, անիմաստ  
կամ սխալ նշանակութեամբ ըմբռնուած նոր բառեր  
և ասումներ հնարել, սոհմային լեզուի համեստ գան-  
ձարանը փոխանակ ճոխացնելու արդէն գտնուած  
կամ հնարուելով ընդունուածը մեկուսի թողուլ և  
յուրաքանչեւ օտար ու խորթ բառերով լեզուն ևս աւել-  
լի չիօթել և այսպէս հայերէն զրել կարծել, լու-  
սաւորութեան արծաղանք ըլլալու յառաջագրու-  
թեամբ ասպարէզ նետուիլ, այլ հոն կուսելու հա-  
մար ոչ ընտիր գէնք, ոչ մարտադիտութիւն և ոչ ա-  
րիութիւն ունենալ, յանուն անձնական նկատմանց  
ուղղակի կամ անուղղակի միջոցներով հանրական  
չափերու դէմ մաքառիլ, դրամ չափելու ներելի փա-  
փաքով գրիչ շարժել՝ չէ թէ իր դազտիարները,  
սկիզբները, անկեղծ համոզումները հրատարակելով,  
այլ վճարողին արբանեակն ըլլալով, անոր քաղաքա-  
կանութեան, շահադէտ միտումներուն և թագուն  
նպատակներուն նպատուար կարծիքներ և զգա-  
ցումներ յայտնելով և պաշտպանելով, և այսպիսի  
նուաստութեան մը յանձնառու ըլլալն, սրտին և  
մաշին անկախութիւնը ծրարելով՝ իբր աւելորդ կամ  
վրասակար բեռ մը նետելն ետք՝ արդարութիւնը  
անիրաւութեան, ճշմարտութիւնը ստութեան, ա-  
ռաքինութիւնը մոլութեան, տկարը զորաւորին զո-  
հել, ամեն տեսակ հանրական օգտակարութիւն ու-

նեցող իրողութեանց քննութեան մէջ չափ մտքին և  
վսխը խղճին իբր կողմնացոյց գործածել և ըստ այնմ  
ներշնչուիլ, նորեկ գրիչներու և լեզուագար իմաս-  
տակներու թոթովումը պերճախօսութիւն, փափառ-  
քը որոտում և հոտած շունչը ուրական մը համարիլ,  
փքուն և հրապուրիչ խորագրի մը ներքև զիլուած  
խօսքի և հասարակ տեղիքի անասելի չուսելութիւնը  
իբր գրողի տական ընտիր երկ մը, հրաշակերտ մը  
հաշակել՝ անկողմնապահ քննարաններու և տաղան-  
դաւոր գրողէաներու մի անբաւ քրքիջը դրդուելով,  
լղել հարուստին ոտքը՝ որ արդարութեան և առա-  
քինութեան գիտկներուն վրայ քայլելու սովորութիւն  
ունի, համբուրել զորաւորին ձեռքը՝ վրայի մաղ պե-  
տական արատէն առանց գանիլ զգալու և լի բա-  
ժանորդ մուրալու կամ զիմակաւոր մեկենաս մը  
գտնելու յոյսով, գրական ասպարիզին գինուորաց  
յեանորդներուն կարգը գտնուիլ և յառաջամարտի  
մը յանդդնութեամբ սիւզալ կուրծքէն և չէ թէ կոնա-  
կէն վէբը ընդունելու սովորող մարտիկներու հեզ-  
նութեան նշանակէան ըլլալով, շահաւէտ տղեղու-  
թեան մը նայելու ատեն աչքին վրայ քեւադիտակ (ka-  
leidoscope) մը դնել և սպառնական ճշմարտութիւն  
մը տեսնելու համար մանրացոյց գործածելու իսկ  
դժկամակիլ, մատերուն վրայի դպրոցական մեղանի  
բիծերը չարած և պատանեկան անփորձութեամբ  
փքացած՝ յանդդնիլ Եւրոպայի բանահիւստական, գի-  
տական, փիլիսոփայական և պատմական փառքը կազ-  
մող հանճարները և տաղանդները գատելու, հաւ-  
նելու կամ չհաւնելու, քանի մը միջակ յօդուածներ

գրել, անձնագրովու թեամբ ուսել և դուլեստ մուրալ՝ շինծու անուսն մը շահելու և փասաւորուելու համար, օճառի սղաղջակի նման դանկ մը ունենալ և անոր տրամադիւծը Լիթրէին կամ Գլօտ Պլընարին դանկին հետ ճղապէս չափելու ելնել, զիտական կամ իմաստասիրական կամ պատմական կամ կրօնական երկերէ մեր սղղին անմիջական սխտոյից անյարմար և իմացականութեան անհպելի քաղուած մը տպել և Ամբէտողի վիճը նետուելու փաստասիրական կամ Լուծիւններով արդէն խլրտիլ, ամեն նոր հրատարակութիւն անխտիր դուլել՝ առանց քննարանութեան, առանց դեղեցիկին հետ նաև տղեղը, ձևաւորին հետ նաև տձևը, ուղիղին հետ նաև սխալը ցոյց տալու, այս կամ այն աղբային իրողութեան մը, խնդիրի մը նկատմամբ այս կամ այն թերթին մէջ արդէն հրատարակուած յողուածի մը գաղափարները, խորհրդածութիւնները գրականել, և քանի մը փոփոխութիւններէ ետք իւրացնելով իրր առաջին անգամ երկնուած ճշմարտութիւններ ծախել և հպարտանալ, իրական արժանիքի և տաղանդի տէր անձերու գէտ նախանձու զգացումէ զրդուելով անպատկառ յարձակիլ, Երոսոյսի գրական փառքը կաղմող բանահրկաններու և վիպասաններու երկերուն թարգմանութիւնը միամտաբար մեքենական դործ համարիլ, միտտ անունները մաքրափայլ ցոյց տալ և անրիծները արատել թանաքը թափող լըքի (սուփիէս) մը պէս, հայրենիք, ազատութիւն, լուսաւորութիւն, իրաւունք և առանց նման մեծ բառեր ստիպ ծամծրմել, այլ սակայն կրօնական, քաղաքական և գրական

խնդիրներու մէջ ներհակ ընթացքով վարուիլ կամ լուել՝ վտանգաւոր գրութեան մը մէջ չդանուելու համար, գրելի է այս է ահա հայ լրագիրներու և ինչ ինչ զիրքերու մէջ տեսնուած ամբութեան և թշուառութեան տեսարանը, եթէ, ինչպէս ըսի արդէն, 'ի բաց առնունք քանի մը հասակաւոր և երիտասարդ ուսումնականներ, որք քիչ շատ ծանոթ են արդէն, և որք պարզ և համեստ տաղանդ մ'ը գրագիրական փայլուն ապագայ մ'ունին:

Մեր ազգին մէջ անդործ գրիչ մ'երեւան կ'ենէ և թերթ մը կը հրատարակէ ազգին յառաջընթան ծառայելու առերևոյթ պատրաստով, այլ իրապէս քառ շահելու կամ ապրտարը ծարելու նպատակու:

Կ'ընդունիմ բարոյական վայելումներու հարկը: Այ՛րմբունեմ նաև դատարկ ստամբսի մ'անպատկահութիւնները: Անշուշտ մարդ սարոյսպէս և մտապէս ապրիլ կարենալու համար իրաւունք ունի նախ նիւթական կեանքի պիտոյքը պատրաստելու: Ասիկէ կը հետևի անձնական և օրինաւոր շահու վրայ հակելու իրաւունքը՝ մարդ կային անմիջական և նիւթական պիտոյից հայթայթման համար: Այս իրաւունքն՝ ինչպէս ամեն անհատի՛ նոյնպէս և զրադիտի մը համար նուիրական է, անրոնարարելի է: Ասիկին ծայրն է անձնական անխախտ զլըք մ'ունենալու մենաշնորհը, և այս մենաշնորհին մէջ կ'տպաստանի ճշմարտութեան սէրը: Ամեն ընտիր և սուարիներ կաղմու թեանց արուած չէ թշուառութեան դուրը զըտորիլ և անոր յատակն անվթար և անփոփոխ ապրիլ՝ բարութեան և ճշմարտութեան գաղափարներու հաւատարիմ մնալու հա-

մար: Երբ էմիլ Ջօլա, ինչպէս կը հաստատէ Կամօն Շերէր, ամեն բանի բնական և իրական հանդամանքը ճշդապէս նկարելու ծայրայեղութեամբ լրքիթը մինչև բարեկենդանի յետին օրերու աղբնոցը կը մտէ՝ իր քնասէրէ (naturaliste) դերը խաղալու համար, քիթ ս կը բռնեմ և թաշիինակս ճարտնի քօրէլքէփօով հօտաւէտելու պէտքը կ'զգամ երբ սակայն գրականութեան արհեստին մէջ ստակ շահելու անբռնարարելի իրաւունքը կը հաստատէ, գաղափար մ'որ նոր է, զէմքս ծռելէ, քիթ ս գոցելէ կը դադրիմ, վասն զի այս գաղափարին ներքև կը նշմարեմ գրայիտին անկախութիւնը, ամեն գրական նուաստութեանց բարձումը, ամեն գիւրաթեք ողնասիւններու կանգնումը:

Հայ խմբագիրները, գրագէտները ստակ կրնան շահիլ: Ինչպէս այլուր ըսած եմ արդէն, խմբագրութիւնը, գրագիտութիւնը շահարեք արհեստ մը կրնանց նկատուիլ մեր մէջ: Առ այժմ քան լիցի: Ասան զի գրականութեամբ դրամ շահելու համար պէտք է ոչ միայն լաւ գրել, այլ նաև լաւ գրուածին համար դնորդ ունենալ:

Հայերէն թերթերու և՛ դպրոցական գասագիրքերէ՛ ՚ի զատ՝ ուրիշ այլ և այլ հրատարակութեանց վրայ հարևանցի ակնարկ մը նետելը բաւ է՝ համոզուելու համար թէ՛ հայ գրիչն ընդհանրապէս ասպիկար, և հետևաբար անարդիւն է: Լաւ գրելու, ընթերցողին ուշադրութիւնը, համակրութիւնը և հետաքրքրութիւնը գրաւելու, հասարակաց կարծիքը կազմելու, անոր վրայ ազդեցութիւն ունենալով զօ-

րութիւն մ'ըլլալու համար գրիչ մը կը պարտաւորի աղէկ սրուիլ և ժամանակիս երեւելի խնդիրներուն վրայ գրելու ատեն ճշմարտութեան, արդարութեան, գեղեցիկութեան, այսինքն ընդհանուրին բարոյական և նիւթական շահերուն յարիլ: Այն ատեն միայն բարոյապէս և նիւթապէս արդիւնաւոր է գրիչը՝ թէ՛ գրողին և թէ՛ ընթերցողին համար բայց այս արդիւնաւորութեան մէկ պայմանն է մշակուած միտք, մշակուած սիրտ, մշակուած հոգի, մշակուած ճաշակ ունենալ: Ճշմարտին, արդարին, գեղեցիկին և օգտակարին հաւատարիմ երկրպագու ըլլալ: Մէկ խօսքով լաւ գրել, այսինքն մի և նոյն ժամանակ լաւ խօսիլ, լաւ զրալ և լաւ բացատրել, որ բոնէ է խելք, հոգի և ճաշակ ունենալ հաւասարապէս\*:

Սակայն ենթադրելով թէ՛ հայ գրագէտներէ և խմբագիրներէ ոմանք այս յատկութիւններով գրելու չափ հմտութիւն ունին կամ սլիտի ունենան, ենթադրելով թէ՛ գրամական ոյժի զօրութեամբ անկախութիւն ստանալով մեր երկրին կրօնական և քաղաքական հիմնադրութեանց վրայ քննարասնի և արդարասէր դատաւորի անաչառութեամբ սլիտի ու գեն գրել, գեղծմանց ջնջումը պահանջել, անկողմնապահութիւնը պարտք կը դնէ իմ վրայ խոստովանելու թէ՛ այս երկու հրատարակները, հոգիին և մարմինին, բարոյական և նիւթական կեանքի մշատեւ

\* Bien écrire, c'est tout à la fois bien penser, bien sentir et bien rendre. C'est avoir en même temps de l'esprit, de l'âme et du goût. BUFFON

կուիւներուն այս երկու ասպարէզները Թուրքիայի մէջ  
դոց են, վասն զի ճամուլէ առաջաւորէան շէպ :

Անկեղծապէս համոզուած եմ որ եթէ մամուլն  
ազատ ըլլար, եթէ խօսելու, խորհելու, գրելու, ասել-  
լու, հրատարակելու բացարձակ ազատութիւնն իրր  
իրաւունք ճանչուէր, մեր ազգին մէջ երևան պիտի  
դային տաղանդներ, թերևս հանճարներ իսկ որը  
այսօր կամ սազմնական վիճակի մէջ են և կամ բոլոր-  
րովին պահուած և անյայտ : Քրիստոնէութեան ծա-  
գուսնն ՚ի վեր նշանաւոր անձինք, իմաստասէրներ,  
գիտուններ, բանաշիւսներ մարդկային բանաստեղծ-  
ութեան ազատութիւնը հստակած են խօսքով և գործ-  
քով : Պատահարներն և մորձառութիւնը հաստատած  
են թէ մամուլի ազատութիւնը, սանձարձակ ազա-  
տութիւնը ժողովրդոց և տէրութեանց փոխադարձ  
իրաւանց առաջին երաշխաստութիւնն է . քաղաքա-  
կան և քաղաքային ընկերութեանց անդորրութեան  
և բարօրութեան սլատուարն է . թէ այն ընդ միշտ  
կը դոցէ ընկերային ցնցումներու դուռը և մեզմիկ  
յառաջդիմելու սկզբունքը բարուց և սոփութեանց  
մէջ կը տեղաւորէ . . . : Սակայն քաղաքացիները  
տակաւին այս իրաւունքը վայելելու անընդունակ և  
անընտել կը համարին իրենց կառավարութեան ներ-  
քև գտնուած մարդիկը, և շրուշակով կը սանձեն մա-  
մուլը :

« Կրօնական և քաղաքական խնդիրներու վրայ  
չգրելը վատութիւնն է » ըսաւ Վօլթէր : Այս վճիռն  
մըքան արդար է և մինչև մը աստիճան կրնայ պատ-  
կանիլ մեր ժամանակի և մեր երկրին խմբագիրներն :

րուն և գրագէտներուն : Զգիտեմ' . . . : Տպագրա-  
կան օրէնքի խստութիւնն և վարչութեան կամաճիւն  
անօրէնութիւններն իրր Տամօզլի սուր գրողնե-  
րուն զխսուն վերել կախուած կը մնան և ամենէն  
ժիր միտքերը կը ջլատեն :

Ըսուի թերևս թէ երբ Վօլթէր կը գրէր, երբ իր  
հեղնակի խնդումովը տասնութ երորդ դարու հիմերը  
կը քայքայէր, երբ Ժան-ժազ-Բուսօ — աւելի հե-  
ռուները չեմ ուզեր երթալ — Ընկերային Դաշնաբերը  
կը յօրինէր և միապետական իշխանութեան հին հիւ-  
մը, երկնային իրաւունքը կը զգրդէր, նոր հիմ մը,  
երկրային էրառնէ՞ մը ցոյց տալով, Ֆրանսայի մէջ ևս  
մամուլն ազատ չէր . թէ Վօլթէր սպասաւորի մը սկս  
Տը Բօհան ասպետն ծեծը ուտելն և Պատիլիլ նե-  
տուելն ետք իր Անգլիական նախնային գահիճին ձեռ-  
քով հրակոյտին մասնուիլը կը տեսնէր : Իսկ : Սա-  
կայն մարի ազատութեան համար հալածուելը, ընդ-  
հանուրին օգտին համար զոհուիլն արեւելեան կազ-  
մութեանց յատուկ առաքինութիւն մը չէ . . . : Մա-  
նաւանդ որ Վօլթէր իր կրած հալածանաց գառնու-  
թիւնը կը մեզմէր նախազացումով մը, իր ժամա-  
նակի մարդերուն ապերախտութեան և Ֆրեյսոնե-  
րու, Կօնօթներու քսութեան և վայրահաչումեան  
հակակիւտ մտիթարութիւն մը կը գտնէր Սիրէյի զգե-  
կին մէջ՝ Տիւ Դաթըլէ մարդիկուհիին մտերմութեան,  
և ապա Ֆրեյսիլի Բի բարեկամութեան ապաւի-  
նած, ինչպէս նաև Բուսօն՝ որ Դամպէրիի և Դարմէ-  
թիի դեղանիին, Տիկին Տը Ուարէնի ժպտաներուն յի-  
շատակներով գրաւուած դարաւոր միապետութեան

մը դէմ միտքովը կուուելու կը պատրաստուէր, և Տիկին Տ'Երինէյի շնորհիւ իրեն համար յատկապէս կառուցուած մենարանին (ermitage) մէջ մի և նոյն միապետութեան հիմունքը քանդելու կը ճգնէր . . . :

«Ուրիշ ժամանակ, ուրիշ բարբ:»

Իր կարծիքը, իր համոզումը յայտնելը պարտ մը և ոչ թէ իրաւունք մը սեպողն ուր է հիմա: Ո՛ւր է պարտ մը սեպողին տէրը, մտիթարիչը: Ո՛ւր են գեղանին և խելանին Էմիլիի, Տիկին Տ'Երինէյի դերերը խաղալու տրամադիր արմենուհիները, ենթադրելով թէ պարտ մը կատարելու համար կան մեր մէջ զուհողութեան և հալածանքի համակերպող ազատասէրներ . . . :

Սակայն եթէ փիլիսոփայութեան և քաղաքական ու ընկերական գիտութեանց վրայ քննադատութեան ազատութիւն չունի Հայը, եթէ մարտիրոսութեան անընդունակ է, կան ուրիշ ազգային խնդիրներ, իւրողութիւններ, հաւատքի հետ ուղղակի յարաբերութիւն չունեցող կրօնական հիմնադրութիւններ, ազգային վարչութեան տնօրինութիւններ, դպրոցի, հիւանդանոցի, ելմտացոյցի, ամուսնութեան, ժառանգութեան խնդիրներ, որք եթէ անկեղծ և ազատ վիճարանութեամբ յուզուին, ազգը կրնայ մեծապէս օգտիլ: Բայց Թուրքիայի մէջ Տէրութեան և Հայոց կրօնական իշխանութեան գործերուն խառնուիլն և կարծիք յայտնելն եթէ վտանգաւոր է, ոչ նուազ և շատ անգամ աւելի վտանգաւոր է ժողովուրդին կարծեաց և համոզմանց հակառակ խօսիլը, և ըստ իս քանութեանց ամենէն անտանելին այս վերջինն է:

Իբր սկիզբ պէտք է ընդունիլ թէ կարծիք մ'եթէ նաև ամբողջ ժողովուրդի մը համոզմանց և հանրապէս ընդունուած ճշմարտութեանց ներհակ ըլլայ, դարձեալ յայտնուելու իրաւունք ունի: Աթիւրթ Միլ կ'ըսէ թէ մարդուս ազատ գործելու իրաւունքը սահման մ'ունի, որ է ուրիշին վնասը: Իրմէ առաջ Բօպէսրիէր ուրիշ սահման մը տուած էր ազատ գործելու իրաւանց՝ ըսելով. «Ազատութիւնդ կանկ կ'ատնու երբ ուրիշինը կ'սկսի»: Սակայն երկուքին ալ ըմբռնած բարոյական ազատութիւնը գործելու ազատութիւնն է, որ չլրնար անսահման ըլլալ ասանց ուրիշին վնաս տալու: Իսկ խորհելու և խօսելու ազատութեան սահման ոչ որ կ'ընդունի, և այս անսահմանութեանն ամենին վնաս մը չարտադրիր մարդկութեան համար: Եթէ սխալ և մոլոր է յայտնուած կարծիքը, փաստերով կը հերքուի և վնասակար ըլլալէ կը դադրի: Եթէ ճշմարիտ է, բնականաբար մարդկութիւնը կ'օգտի ճշմարտութեան յայտնութեանն:

Ինչպէս կը հաստատվ պատմութիւնը, այլսարհիս մէջ եղած են ժամանակներ ուր անհատ մը համայն մարդկութեան համոզումներուն հակասակ կարծիք մը յայտնած, և այն պատճառաւ հալածուած է իր կարծիքին հետ, որ սակայն այսօր լուսաւորեալ ժողովրդոց իմացական գանձերուն մէջ ընդ հանրապէս ընդունուած է իբր երկրաչափական ճշմարտութիւն: Հայ ժողովուրդն այս սկիզբին համեմատ վարուելու չափ լոյս չունի տակաւին, և Հայ խմբադիրներն ալ եթէ զիտեն և կ'ընդունին այս փրկաւէտ սկիզբը, անոր պահանջումներուն համեմատ վարուելու արիւթութիւնը չունին:

Այս ամբաստանութիւնս եթէ անհիմն դանուղներ  
կան, այսպիսիներու համար կ'ըսեմ. Տէս Աբեէլէան  
Մածաւը, տես մանաւանդ Մանդաֆէն: Այս վերջին  
թերթին յարզի խմբագրապետն այլ և այլ յողուած-  
ներու մէջ Հայկական Խորհրդէն նկատմամբ իր կարծիք-  
ները յայտնեց այնպիսի ժամանակ մ'ուր ամեն հա-  
յու, նա մանաւանդ այս տեղի հայերուն համար է-  
ութեան կամ չէութեան խնդիր մ'եղած էր այն, ուր  
այս մասին ազդային վարչութեան և հայ հասարա-  
կութեան տեսութեամբ չխօսիլն ազգադառ ոճրա-  
դոքծի մը պէս վարուիլ էր, և ուր թերևս 'ի խաչ  
հանէին Մանդաֆէն: Դիտէ որ ասոր կարծիքները և  
զանոնք յայտնելու ձևերը ոչ կը պաշտպանեմ և ոչ  
կը դատապարտեմ: Ար հաստատեմ միտքն որ երբ Պու-  
սի հոյերն իրենց կարծիքներուն և համոզումներուն  
ներհակը նշմարեցին այս թերթին մէջ, զայն կարդա-  
լէ ոչ միայն դադրեցան այլ նաև ուղղակի կամ ան-  
ուղղակի միջոցներով հալածեցին, և այս տեղի հայ  
լրագիրները լռութիւն պահեցին՝ փոխանակ իրենց  
պարտքը կատարելու, որ էր յանուն մաքի ազատու-  
թեան բողոքել այդ հալածանոց դէմ, և անկեղծա-  
պէս, առանց թշնամական ակնարկութեանց վիճիլ  
խմբագրին հետ՝ անոր կարծիքները հերքելու համար,  
եթէ սխալ էին, կամ իրենք ալ ընդունելու և հրա-  
տարակելու համար, եթէ ճշմարիտ էին: Ի՞նչ եղաւ  
այս հալածման և այս լռութեան հետևութիւնը.  
Մանդաֆէի լռութիւնը . . . :

« Եթէ բոլոր մարդկային սեռը, բաց 'ի մէկ ան-  
« ձէ, մի և նոյն կարծիքը ունենար, և միայն մէկ »

« անձ անոր հակառակը մտածէր, մարդկային սեռն »  
« այս անձը լռութեան դատապարտելով չէր արդա- »  
« բանար, ինչպէս որ նոյն անձն ալ չէր կրնար ար- »  
« դարանալ մարդկային սեռը լռութեան դատապար- »  
« տելով, եթէ կարենար դատապարտուել: Եթէ կար- »  
« ծիք մը տիրոջը համար սրժէք ունեցող ստացուածք »  
« մ'ըլլար, եթէ այս ստացուածքը վայելելու մասին »  
« տիրոջն անհանգստութիւն կրելը լոկ անձնական »  
« վնաս մ'ըլլար, կրնար ըսուիլ թէ միայն մէկ անձի »  
« կամ շատ անձերու միտս եղաւ: Սակայն կարծիքի »  
« մ'արտաբայտութիւնը լռութեան ներքև պրկելը »  
« մասնաւորապէս միտառկար է սա միտքով թէ մարդ- »  
« կային սեռին, ներկայ և արագ այ սերունդներուն, »  
« այն կարծիքը ընդունողներուն ինչպէս նաև չընդ- »  
« ունողներուն մի իրաւունքը գողնալ է: Եթէ ու- »  
« ղիլ է այն կարծիքը, անոնք կը գրկուին մուրրու- »  
« թեանէն հեռանալու և ճշմարտութիւնը ընդունելու »  
« պատեհութեանէ մը: Իսկ եթէ սխալ է, գրեթէ աւել- »  
« լի մեծ բարիք մը կրորուսած կ'ըլլան, և այս բարիքն է »  
« ճշմարտութեան աւելի յայտնի կերպով բնութեանին »  
« և աւելի ազդեցութեամբ տարւորուիլը, բարեւում »  
« և տալւորութիւն որք ճշմարտութեան և մուրրու- »  
« թեան ընդհարումէն կ'արտադրին: »\*

Ինչպէս կը տեսնես, բարեկամ, այս խորհրդա-  
ծութիւններս և գաղափարներս հայ մամուլին գրե-  
թէ ընդհանուր վիճակէն և հանգամանքէն ներշնչուած  
սուրբութիւններ են աւելի քան թէ քննարանական

\* Ջ. Ս. Մէլ. On Liberty.

խուղարկութիւններ, պատճառարանութիւններ և մասնաւորապէս հաւքուած և ցոյց տրուած իրողութիւններ: Եւ յիշուի եթէ վերջին ձևը ընտրէի, հարկաւ արդարասիրութիւնն և անկողնասպառնութիւնը պարտ պիտի դնէին իմ վրայ նաև մի առ մի նշանակել այս մտքի հորիզոնին վրայ արձակուած ճոտազայթները կամ նշոյլները, անուանել այն գրիչները որք ստուգապէս յոյս և լոյս ունին, իրենց այն յուսածները և երկերը որք եւրոպական թերթերու կամ գիրքերու մէջ տեսնուածներուն երբեմն մտնելու և երբեմն հաւատարելու կը ճշդին: Այսպիսի մտքերով գրական ասպարիզին այն քանի մը հինաւորաց և նորեկ գիտնորներուն, որք անշուշտ իրենց փանօրթի թերութիւնները ունին, ինչպէս ունինք ամերիայ, որք Պոլիսի, Նյու Յորքի և Տիբիսի գլխաւոր թերթերուն մէջ այժմեայ լուսաւորութեան և յառաձգի մութեան անհաճախելի, ժիր, վառվառն և արթուն սահմանները հանդիսանալու կը նկատին ոչ միայն իրենց խօսքովն այլ նաև գործքով, և որոնց անուաներս չեմ տար, որպէս զի չստիպուիմ նաև նշանակելու այն անունները որք հայ մասնուրին համար նախատինք և անպատուութիւն կը համարուին, և որք նշանակուելու պէտք չունին, արդէն յայտնի ըլլալով ամենուն:

Ըսես ինձ թերևս թէ այս վերջին կարգին վերաբերողներուն պատրանքը փարապեցի նոստակոխ, և հարցնես զուցէ թէ ի՞նչ կը մնայ ըլլալ այսպիսիներուն: Այստեղ յայտեբարգովն ետք ոչ միայն Քաղաքացիք, այլ նաև Մտղիացիք բնուեցան նոր հիւանդութեան մը զոր Միւսէ անշուստակեան անուանեց:

Լորտ Պայրն՝ Անգլիոյ, Շաթօպրիան՝ Գրանապի և Ալօթէ՝ Ալբանիայի մէջ եւրոպական այս նոր հիւանդութիւնը, միտքերը և սիրտերը դրաւող այս անբասգաւորութիւնը նկարագրեցին իրենց նշանաւոր երկերուն մէջ:

Մէտանի պարտութենէն ետքն ալ Քաղաքացիք ուրիշ հիւանդութենէ մը դրաւուեցան, որ է սրտնեղութիւն: Ետևար Գինէ ևս կարծես այսպիսի վէս զգացուի մ'ազգեցութեան ներքև ուսումնասիրելով Հարթմանի և Շօքէնհաուրի յուսահատական փիլիսոփայութիւնը, որուն առջև անբաւ գրո մ'է տիեզերքս, և որ կրնայ ուրիշ փիլիսոփայական գրութիւններէ արտադրուած պարանոսները փարատել, կ'ըսէ՝ խստիւ և անշուշտ զաս մ'անձերու և չէ թէ ընդհանուրին ակնարկելով:

- « Պոսնիկ կ'ըլլայ կինն երբ իր պատրանքը կը փարատի:
- « Յետագէմ ազատական կ'ըլլայ քաղաքագէտն երբ » իր պատրանքը կը փարատի:
- « Ճիզվիթ կ'ըլլայ քահանայն երբ իր պատրանքը » կը փարատի:
- « Սնանկ կ'ըլլայ գանձակալն երբ իր պատրանքը » կը փարատի:
- « Եր բանակը կը մասնէ, և տափ դաշտի վրայ » անձնատուր կ'ըլլայ զօրապետն երբ իր պատրանքը » կը փարատի:
- « Կեսար, Տիբերիոս կամ Պոնտարթ կ'ըլլայ ժողովուրդին բարեկամն երբ իր պատրանքը կը փարատի:

« Գերի կ'ըլլայ ժողովուրդն երբ իր պատրանքը  
» կը փարատի :

« Հապա ի՞նչ ըլլայ այն փիլիսոփայն որուն պատ-  
» րանքը կը փարատի այս գերմանական փիլիսոփա-  
» յութեանէ » կը հարցնէ Յեզաշըլն-օֆ քննադատութեան  
անուանի հեղինակը :

Եւ մենք՝ անոր պէս վշտալի ձայնով մը կը հարցը-  
նենք .

Հապա ի՞նչ ըլլայ այն հայ խմբագիրը կամ գրա-  
գէտն որուն պատրանքը կը փարատի . . . :

Քեզ կը թողում տալ այս հարցումիս պատասխանը :  
Բերա , 29 մայիս 1881 :



### Ն Ա Մ Ա Կ Ի .

Հետաքրքրութեան ոգին անդուլ կը գործէ ՚ի քեզ :  
Բաւական չես համարիր այն մասնաւոր տեղեկու-  
թիւնները զոր մինչև հիմա հազորդեցի քեզ այս կող-  
մի Հայերէն ոմանց այժմեայ գաղափարաց , զգաց-  
մանց և սովորութեանց վրայ , և շարունակ զիս կը  
հրաւիրես զիտողութիւն և տպաւորութիւն համբա-  
քելու և զրկելու Արեւելեան Մաճըլ շտեմարանին որ  
Դանախտներու տակաւին կը նմանի :

Պատահաբար կը գտնուիմ մայրաքաղաքի մը մէջ ,  
ուր կ'սպրին՝ այլ և այլ ազգերէ գատ՝ երկու հարիւր

հազարէն աւելի Հայեր , ուր կան հազարաւոր տա-  
րիներու յիշատակներ և յիշատակարաններու հեւ-  
քեր , պատմական հնութիւններ և աւերակներ , ուր  
կը վստան օգտակար կամ փնասակար հիմնագրու-  
թիւններ , ազգալին և տարազգային հաստատութիւն-  
ներ , մասնական կամ հանրական նպատակներու ծա-  
ռայող ընկերութիւններ , վարժարաններ , ակմբա-  
նոցներ , ընթերցատուններ , պանդոկներ , ճաշարան-  
ներ և տէրաբոսներ : Աւելորի հետաքրքրութեան և  
զիտողութեան ընդարձակ ասպարէզ , կ'ըսես իւրովի ,  
և կարծելով գուցէ թէ Ալլիոնի դաւակի մը ճան-  
բորդութեան ամեն հանգամանքը , աշխարհաշրջիկի  
(touriste) մ'ամեն համբերութիւնը և զիւրութիւն-  
ները ունիմ , կը շարացարես . կեցիր , զիտէ և զրէ :

Գօրեժ օր մը Աստիայէլի հրաշակերաններուն մէ-  
կին ասջելը գտնուելով՝ սքանչացաւ և « Ե՛ս ալ պատ-  
կերահան եմ »\* գոչեց աւիւնով :

Երկնային կամ երկրային ներշնչումներու որքան  
ալ ընդունակ համարիս զիս , ինչպէս շատ մահկանա-  
ցուններու նոյնպէս և ինձ տրուած չէ մարդկային և  
ընկերալին գեղութեանց կամ տղեղութեանց տեսա-  
բանին ասջել այսպէս յանկարծ ներշնչուիլ , Թ՛չ օֆիլ  
կօթիէի վրձինը սակզեղ ապիկար և անուք մատե-  
րուս համար , Լոմպարտիայի երևելի պատկերահանին  
յանդուզն ազազալը արձակել , և « ես ալ ուղեւոր  
մ'եմ » գոչել :

Դիտելու ասաջին պայմանն է՝ տեսնել և լսել :

\* Anch' io son pittore!

առանց տեսնուելու՝ եթէ կարելի է: Մանաւանդ որ դու արդէն դիտող, գրող և կրող մ'ունիս հոս: Ո՛ր է Շահնաւորդ: Սատանային ո՞ր ծակը մտած է: Ինչո՞ւ մինչև հիմա երեսը ցոյց չտուաւ ինձ: Մի՞թէ աներբս է: Իսկ եթէ մարմնեղէն արարած մը չէ, եթէ Պօլիսի մէջ չէ, օղերու ողի՞ն է, Արիէլն է. տիեզերքիս ո՞ր կողմերն աներևութապէս կը սաւառնի և աշխարհիս ո՞ր բարոյական աւերակներուն վրայ կը կքի՝ զիտելու և քեզ պատգամներ արձակելու համար . . . :

Միայն մարդս չէ որ տեղ փոխելով երբեմն ինքզինքն ալ կը փոխէ: Նաև խօսք մ'երկրի և կլիմայի, վարուց և բարուց համեմատ իր նշանակութիւնը կը փոխէ: Ինչ որ ճշմարտութիւն մ'է Քէյթը գեափափերուն վրայ, ստուժիւն մ'է Վափօրի եղբրուն համար: Փամանակը ստակ է, կ'ըսէ Անգլիացին: Ամենևին, կ'ըսէի, հոս գալիս և արևելեան անհողութիւնը՝ ի մօտուստ տեսնելէս ՚ի վեր:

Ինչպէս ամեն բազմամարդ յառաջադէմ քաղաքներու, նոյնպէս և Բերայի բնիկներուն և օտարականներուն կենաց անհրաժեշտ պիտոյից մին եղած է իրենց պարագոյ ժամերը անցունել՝ չէ թէ ընտանեկան յարիւն ներքև՝ այլ տեսակ մը սրճարաններու մէջ, որը միանգամայն օթեան, ճաշարան, ընթերցատուն և ուր ուրեմն «իբր քոյն են»:

Հաստուռ (rentier) պարագորդը, անդ ործ ուղևորը, գործաղուլ թափառականը, կնկանը կուրծքին միջև սիրատուն մը գտնելով իր պատրանքը փարատող ամուսինը, օրը տասն անգամ երգում ընելով և ուտելով տարփուհին խարելու հնարը մտածող «ի-

պարի՛նը, զաւակներուն հացը ճարելէ յուսահատ հայրը, քսա՛ին (պօրսա) տարագիրը, սնանկին գրագիրը, ար՛լլին մէջ կուտ մը չունենալով պտրահանդէս տալու պատրաստուող վաճառականը, ամիրայական պերճութեանց բարձունքէն Յորին աղբնոցին վերայ թաւալլելը տապալկող դժբաղդը, յօգուած մը մրտադրելու առթիւ իր յիշողութեան սնանկութիւնը նշմարող խմբազիրը, գերմանական փիլիսոփայութենէն աշխարհիս անբաւ գրօ մ'ըլլալը նշմարել կարծող ուսումնականը, ամուսկանը չընդունող վարժապետը, խիղճը ծախող դատաւորը, դատը կուրուսող փաստաբանը, բու՛լիէ կոյճակէն զարնուած ժառանգ որդը, Վխտօզէն փնտուռող քսակահատը, Ասաղի՛ի գօտին կտրող կապող կաւատը, ոտտի՛լանութեան լրտեսն և աներեսն այս սրճարանները կամ ընթերցարանները կը զիմեն որպէս զի խնդան, լան, խօսին, կարդան, խորհին, երևալային, տեսնեն, զխտեն, զգան, վշտանան, խաղան, զուարճանան, խմեն և մոռնան . . . :

Արդ՝ Բերայի զիշերային կենաց և իրողութեանց վրայ գաղափար մը ստանալու, սրբազան ցաւի մը ճանճրոյթը փարատելու, դուչէ նաև Շահնաւորիդ հանդիպելու յոյսով և օրուան լրացիրները խառնելու առաջադրութեամբ որոշեցի դուրս ելնել, փոքր ինչ գեղերիւ (flanel) և ապա այս սրճարաններուն մին մտնել:

Ղիւքսանպուրի պանդոկէն դուրս ելնելով՝ դրան առջև կայնած տեսայ — ի՛նչ անակնկալ հանդիպում — չէ թէ թղթա՛իցդ, այլ Պ. Տ . . . այն բարեկամը

որում Սախարեյի մէջ այնքան տաղնապ տուած էր  
դերասանուհի մը և զոր մայրի Աէն 'ի վեր անդ ամ'  
մը միայն տեսեր էի կամուրջին վրայ :

Պահ մը խօսակցեցանք : Պ. Տ . . . Բերա ի / ի 'ը  
ծլիկը սորված՝ կերուխու մի, դրօսանքի և վայելումի  
կեզրոնները յաճախած, Հայ ազգասէրներու , քա-  
ղաքազէտներու , ուսումնականներու հետ ծանօթու-  
թիւն կամ բարեկամութիւն հաստատած ըլլալով իս-  
կոյն հաւանեցաւ ինձ ընկերանալու և Աստուի զաշ-  
տօն վարելու իմ քով :

Թագսի՛ն և Թեփե-Պաշը ի պարտէզներուն մէջ շրջան  
մ'ըրինք , ապա Պլյօղուի փողոցներուն և փողոցի-  
ներուն մէջ սկսանք թափառիլ՝ կարծես Թագսուհան  
Հրեայն պէս յաւիտեան քայլելու տրամադրութեամբ :  
Առաքերու զղրղումը , ձիերու վրնջումը , կառապա-  
նաց մտրակներուն շաշումը , հետեակներու զփուտուքն  
ու սիրատունի միջնորդներու փսփուքը , անցնորդ-  
ներուն բարձրաձայն կամ մեղմաձայն խօսակցու-  
թիւնները , ոմանց իրարանցումն և ոմանց խորհրդաւոր  
շարժումը , հասարակային զբօսարանաց յաճախորդ-  
ներուն վլլուկն ու խնդումները , ստամբակներու  
քրքիջները , այս կամ այն թատրոնէն կամ պարտէ-  
զէն լուած երաժշտային եղանակները , կազի անթիւ  
կտուցներէ արձակուող և լուսնին գունարեկ ճառա-  
գայթները հեզնող պայծառ լոյսերը բաւական գա-  
ղափար մը տուն մեզ այս արուարձանին զիշերախն  
քործունէութեան վրայ :

Ալեգաբին մէջ թիբօլեան գուսանուհիի մ'երգը ,  
Թրօգարեյի մէջ պոհեմական երաժշտուհիներու մի

եղանակը պահ մը լսելէն , Գեօգրեյի մէջ Միխիլպօշ-  
ներու հանգանք և սրունքի ճարտարութիւնները տես-  
նէն , վերնայարկին յայտնի կամ անյայտ իրողու-  
թեանց և խաղարանի նահատակներուն վրայ ան-  
տարբեր նայուածք մը նետելէն ետք մտանք այն հա-  
յեղապարզ սրճարաններուն մին որոնց ակնարկեցի  
պահ մ'առաջ :

Ինչպէս արդէն գիտես , զբօսանաց ամենէն զուար-  
ճախն և օգտակարը կը համարիմ գնդախաղը : Իս-  
կոյն մօտեցայ ղեւեբաբէ մ'որուն բոլորովըը հետա-  
քրքր բազմութիւն մը կը խուսէր : Ժամավաճառու-  
թիւն և անարժանութիւն , ըսես իւրովի թերեւ՝ քէ-  
րէնեան անաշտութեամբ : « Սխմ , բայց որքան  
սխալ » բարեկամ : Պետական երեւելի մարդիկ անդամ  
այս գնդախաղի հետաքրքրութեամբ համակուած և  
իրենց անգին ժամանակը և մեծ գումարներ վստ-  
նած են երբեմն :

Միթէ Ամսպէթթա իրիկուններն իր քարտուղար-  
ներուն հետ ժամերով հանդիսական չէր մնար Արանթ-  
— 0 ժէլի սրճարանին մէջ՝ անձամբ ստուգելու համար  
թէ հեղձեալ քանի՞ կէտ շահելու կարող է վինետ ,  
որ հիմակ աշխարհիս գնդախաղի քաջերուն առաջինն  
է Ֆրանսայի մէջ , և Սօսըն Ամերիկացին որ անդամ  
մ'անորմէն յաղթուելէն ետք այս տարի դարձեալ  
Նոր Աշխարհէն Հինն եկաւ յատկապէս՝ իր խաղըն-  
կերին գէթ այս անդամ յաղթելու յոյսով այլ կրկին  
յաղթուելու համար : — Եղիպտական իշխաններուն  
մին ալ մէն մի գնդախաղի դասի համար միթէ մին-  
չև երկու հազար հինգ հարիւր Ֆրանք չէր վճարեք

գաղղիացի անարժամք վարդապետի մ'որ քիչ ատենուան մէջ հարատու թեան տէր եղաւ իր խաղաղ իտու թեան և այս փարաւոնական շուպլութեան շնորհիւ :

Ուստի խղճի ամենայն հանդարտութեամբ և Պ. Տ. . . ի թախանձանաց հակառակ կէս ժամի չափ հետաքրքրութիւնս յազեցնելն և խաղաղողներու միջակութեան զէմ զժողոնէն ետք հեռացայ բազմութեան քովէն , բարեկամիս հետ տեղաւորուեցանք սեղանի մ'առջև և սկսանք լրացիրները խառնել : Մայիսի 28ի Մառիւս աւեր էի — նոյն օրուանն ուրիշին ձեռքն էր — և տեղական լուրերէն ետք սկսեր էի հետաքրքրութեամբ կարողալ Պրաքեթ Արաքի քանի մը տաղանդաւոր տիկնանց վրայ գրած մի յօդուածը երբ ուժգնապէս շեշտուած հայերէն խօսքեր լսեցի : Վեր բրի գլուխս , հանդիպակայ սեղանի մը բոլորտիքը շարուող երիտասարդներու խմբակ մը տեսայ . Պ. Տ. . . ին ականջին քանի մը հարցում բրի , խմբակը կազմող անձերը իրենց անուններէն ճանչելով անտարբեր կերպարան մ'առի և ուշադրութիւն բրի :

Այս անձերէ ոմանք աղբային գրող էաներու կարգը կը գտնուին և քիչ շատ անուն մ'ունին գրական ասպարիդին մէջ կամ այլուր : Գարեջուրի բաժակները պահ մ'իրարու յաջորդելէն ետք խմբակին խօսակցութիւնը գրգռուեցաւ , և հետզհետէ տաքնալով հետաքրքրական վիճաբանութեան մը կերպարանը առաւ :

Վէճը սկսաւ հայկական գրականութիւնը և ճարտարագիտութիւնը զազգիականին հետ բազղատող ակնարկութեան մը : Վիճաբանողներէն մին Վիգիթօր Հիւ-

կոյի Թշառանքուն վրայ աւիւնով խօսելէն ետք Բաքիցի կոյուղիներուն նկարագրութիւնը անօրուա և անտեղի համարեց , հեղինակին ծերութեան վրայ ամոսալով «հանճարներն ալ կը մեռնին ահա» ըսաւ . Լիթրէի մահուան վրայ ցաւեցաւ , Օլիւսթ Գօնթի աշխարհին հանրագիտական տաղանդը գովեց՝ չմոռնալով սլաք մ'արձակել Տիւրանլու եպիսկոպոսին զէմ որ ժանտախտի մը մերձաւորութենէն խոյս տալու սլս իր Գաղղիական Ճեմարանի ամուսնի փախած էր սրբակեաց անասուածի մը շունչէն շիճուաւորուելու համար : Ուրիշ մը Վամարդինը բանաստեղծներու հայրը սեպեց և դարուս անմահ լալիանը անուանեց . առիթ ունեցաւ Հայ բանաստեղծներու վրայ խօսելու և Մ. Պ. Նիթիմաշեանին երգերուն մին՝ Ա. Նեն՝ խորէն սրբազանին ամբողջ Վարդենիէին հետ շիտխելու , և բանաշիւտական սահմանէն ի նստասիրականին անցնելով ժան-ժոպ Բուսօին Ընկերայէն Պաշտօնէն վրայ Բօսնի սրիէրի կամ «Էրթի» մը յատուկ ես անդով խօսելու — կարողացած և հասկցած էր որդեկօք այս զիրքը — Վօլթ երին Տօմենիքօ Ջարաթի յանդուգն հարցումները կրօնական նախապաշարմանց զէմ լախտի հարուածներ սեպելու , հրաւրելով Պ. Չամուրճեանին կմախքը որ անոնց պատասխան գտնէ Կաղօպարի ուրուականին հետ անդամ մը խորհրդակցելէն ետք : Կարգն եկաւ երաժշտութեան և աղբիւղործութեան . կուսոյի Գառարը Պ. Միլիի Ներթային և Մօզարի Տօն Ժառանգ Պիթօլի սեռաբաններուն հետ բազղատուեցան , մին Տիւմօն Տիւրպիլ ծովապետին գտած Մէլճէ Արաքիւս արձանին վրայ գարմաւ

ցաւ իբր հելլենական ճարտարագիտութեան հմուտ քուրիչ մը Տիկին Տիւպարիի սրունքին, դու իմն արձանին, վրայ պակտութիւն գտաւ և Գուսթմուն՝ դատապարտեց . . . : Այս և ստոնց նման ուրիշ շատ խնդիրներ յուզուեցան, գովեստը մինչև չողորթութեան, քննադատութիւնը մինչև անիրաւութիւն և յանդգնութիւն տարուեցաւ, և կարծիքներու, զգացումներու այս անընդհատ և ազմկալի ընդհարումին յաջորդեց լուսթիւն մը :

Ախորժ զգացի և ուրախացայ յանկարծ. Հայազգի ուսումնականներու փեթակի մը քով գտնուելէս :

Կարծիքներու ընդհարումէն լոյս կը ծագի կ'ըսուի : Անշուշտ :

Մտքի անկախութեան և բարոյական ու իմացական իրողութեանց մասին հաստատ համոզում մը կազմելու միջոցներուն մին վիճաբանութիւնն է :

Մտածող անձինք շատ անգամ կը յայտնեն այնպիսի զգացումներ և տեսիլներ՝ որք ճիշդ և անհերքելի կ'երևին ի սկզբան, և որք՝ երբ հեղինակի մը վրայութեան վրայ կը կռթնին՝ կարծես թէ սրտին և մտքին մէջ աւելի անջնջելի կերպով կը գրոշմուին և կեանքի ընթացից մէջ իբր ընդհանուր օրէնք և կանոններ կը ծառայեն մարդուս : Այլ սակայն մարդկային յոռի միտումներու և բուռն կրից մալընթացութեան և տեղստուրեան ժամանակ, բարոյա-

\* Տասնութերորդ դարուն մէջ եւ Լուի Ժե. ի ժամանակ Ֆրանսայի երեսուց անյրիագործներուն մինն է : Մ. Ք.

կան սաստիկ փոթորիկներու մէջ երբ այսպէս ընդունուած գաղափարներու և զգացումներու ամբողջութիւնը փրկութեան խարխիս մը, յենարան մը չ'լալմեր, երբ կեանքի ալեկոծութեան ժամանակ չկրնար դէպ անքոթ շաւահանդիստ մը տանիլ նաւորզ և ուզեորը, իսկոյն կը դիտենք որ այժ գաղսփարներն և զգացումներն աւազի վրայ նիմուեր են :

Ճշմարիտ համոզումի տէր է և անկախ այն միտքն որ նաև հանրապէս ընդունուած բարոյական կամ դիտական ստուգութիւն մ'իբ թեր ու դէմ առարկութիւններովը քննելն, իւրացնելն և յարձակումի ու կոխի ասան վայն գիտակցութեամբ և անվհեր պաշտպանելու զէնք դարբնելն ետք կ'ընդունի այն սիրան որ զգացման մ'երկնումին բնասոսական պարագաները, շարժառիթները և մարդկային սեռի բարձրագոյն շահերուն նկատմամբ անոր օգտակարութիւնը կամ վնասակարութիւնը զգոնապէս գննելն և կշռելն ետք կ'ընդունի : Միայն այս թէութեամբ կ'արտադրի այն իմացական ինքնութիւնն, այն բարոյական արիութիւնն որ՝ նաև ամբողջ ժողովուրդի մը, աշխարհի մը հակառակ՝ կը պաշտպանի խորին համոզումի մը հիմը կազմող ճշմարտութիւնը, որ՝ նաև հաւատաքննութեան հրակոյտին վրայ՝ անոր թշնամիներուն, ամեն կարգի թօրքեմատաներուն դէմ կը բողբէ անահ, և իբ տուրեութ պարտութեամբը մարդկային ցեղին յառաջդիտութեան կը ծառայէ, որ՝ նաև մտախնդր զէպ ի շուրթերը տանելն ետք՝ կ'արհամարհէ դահիճը, ամեն տեսակ Անիթոսներք, և իբ հոգւոյն հետ կ'աւանդէ այնպիս-

սի կենսաբոյոյր շունչ մ'որ բարոյական և իմացական աշխարհի տպականակիր սերունդը կ'աւլէ, կը տանի, երբեքուն համոզումները կ'ամրապնդէ, զոգը շունչ միտքերը կը կազդուրէ, զիւրաբեկ սիրտերուն ոյժ և յոյս կ'ազդէ, և ընտիր հոգիներու կը ներշնչէ իմաստասիրական և բանաստեղծական նոր ճաշակ մ'որ է մահերուն գեղեցկագոյնը համարիլ Սոկրատիւնը . . . :

Իմ Կրակին վիճարանութեան յաջորդող լուսթեան ժամանակ ունկնդիրներուն մին՝ որ սկսած էր Թեթեմանը Էֆեթարը կարդալ՝ հանդարտօրէն սեղանին վըրայ գրաւթերթը, անդամ մ'իւր ընկերներուն նայեցաւ կիսովին ուրուագրուած Ժախտով մը, և ըսաւ .

— Գրչունի չափ չունի : Կարգացիք սահմանազրութեան տարեդարձի հանդիսին բանահիւսական նկարագրութիւնը : Ահա՛ անմահներու համաստեղութիւն մ'որոնց ազդը կը պարտաւորի արձաններ կ'անդնել : Ո՛ւր են Հայ Բրաքսիթէլները . չ'ուտ, ստորագրութիւն մը բանանք : Մեղք որ ես ալ ներկայ չ'ի հանդիսին :

— Անունները կարդա՛, անունները, զոչեց վիճաբանող երխասարդներուն մին որ փոքր ինչ զգլխած կ'երևէր :

— Ի. Պ. Բրայրեան, Մ. Չերազ, Յ. Արշակունի, Ի. Տէմիրճիպաշեան, Հ. Ասատուր, Գուրբէն, Ա. Լուսինեան, Մամուրեան, Զիլինկիրեան . . . զեւ շարունակեմ, հարցուց Պ. Գ. . . :

— Հոմերոսական թուարկութիւն, կեցցէ՛ Գրչունի, աղաղակեց ուրիշ մ'ալ :

Պ. Գ. . . պահ մ'ամենուն նայեցն և դէպ ի մեր

կողմն ալ կասկածոտ նայուածք մ'արձակելէն ետք՝ շարայարեց .

— Այս պատկերները խիստ ազդու գոյնով նկարուած և սակեցօժ շրջանակներու մէջ գրուած են : Տկարօղն ու նկարասցնէրն աւելի կը շահէին եթէ աւելի նմանութիւն ունենային բնատիպներուն (original) հետ, եթէ Գրչունիին վրձինը Տակելի մետաղեայ տախտակին անաչտուութեան հետեւէր :

— Քու ալ պահանջատու թիւնդ չափ չունի, լրաս Պ. Բ. . . :

— Նաև արգարտարութիւնս՝ պատասխանեց Պ. Գ. . . : Այլ հաւանութեան հիւստական երևակայութեան մ'ախորժելի ծայրայեղութեանց, բայց իրաւունք ունիմ նաև կարծելու թէ զովքու աղատութեան շտայլութիւնն Աստուծոյ և բնութեան գործերուն դէմ սաղլուտ մ'է կերպիւ իւր, իրականը, բնականը չհաւնելու և երևակայական լուսազոյնը սակեցելու յաւակնութիւն մ'է :

Քու և իմ անուան սցոպլս յիշուիլը բնականաբար հետաքրքրութիւնս շարժեց, և երբ խմբակը ցրուեցաւ, բերել տուի լրացիրը, որ Թեթեմանը Էֆեթարին մայիսի 23ի թիւն էր, և կարգացի սահմանազրութեան տարեդարձի հանդիսին նկարագրութիւնը :

Համակրութեան բուսն զգայում մը փառփուն երևակայութեան մ'օգնութեամբ երկնած է սյն յօղուածը : Գրչունիին գրիչն աւելի սրալն քան թէ մտքն կը թեւազրուի : Իր համակրութիւնը գրաւող անձերու յատկութեանց զեզդալիտակով կը նայի և

յարարերական կատարելութեան մը տեղ բացարձակը կը նշմարէ : Հեռացնուաք ինչ քնարերգային քրեղծք, մեղմէ համակրութեան զգացումը, ընդունէ թէ յօդուածը ճաշակի և զոյնի ծայրայեղ քրեանհամութիւն մ'է աւելի քան թէ անաչառ կենսադրի մը դատու մը, և ահա ականոզիքը խաբող պատիր երեւոյթի մը բացարձակութեան հանդամանքը կը նուազի, և ահա իրականն իր յարարերական համեմատութիւններովն երևան կ'երևէ : Յօդուածագիրն Պօլիտի այժմեայ յոսանալով է՝ երիտասարդներուն մին, գրարուեաններու և աշխարհարուեսաններու միջև թերևս չէզոք զիրք բռնող ուսումնական մ'է : Ինքզինքս գուրս ձգելէն և շարունակ ուսնելու և առջև երթալու պարտքս ճանչելէն, քեզի ալ Վ. Հիւկօյի Չօլիին, բնամոլ Կովի Չօլայի առջև ծուներ դնելու հրաւիրելէն ետք կը խոստովանիմ թէ յօդուածին նկատմամբ այսպէս կարծիքս յայտնելով զիտաւորութիւն չունիմ ոչ անոր արժէքը ժխտելու և ոչ ալ անոր մէջ յիշուած միւս յարզի անձերու ազդանդին և արժանեաց վրայ կիսատուեր մ'արձակելու :

Մայրաքաղաքիս Հայ գրականութեան վերաբերող այս յարզի անձերու մի քանիին հետ տեսնուած և ոմանց ալ լոկ գրութիւնները կարգացած ըլլալու առիթը ունեցած եմ :

Մասնաւորապէս համակրութեան և գովեստի արժանի կ'երևին ինձ պարսն Ռ. Պէրպէրեան, որ իր բանահիւստական և գրողիտական ընտիր հրատարակութիւններով, նամանաւանդ իր անկախ վերատեսչութեան ներքև գործող Պէրպէրեան վարժարանին

բարեկարգութեամբն արդէն յայտնի է ամենուն : Պարոն Ալբաղ, որ իր լեզուաղիտական և բանասիրական հմտութեանց նայելով տաղանդաւոր ըսուելու իրաւունքը չահած է, և որ սակայն ոգոցես իր բաւամբ համբաւին ետէն կ'արչուէ չողեղինդ (à toute vapeur) : Պարոն Յ. Արշակունի, որ ուսումնական և լեզուաղէտ երիտասարդ մ'է, նաև Միացեալ Ընկերութեանց մի քան ծանրազուտ բանտրներուն մին : Պարոն Տէմիրճիպաշեան, որուն բեղուն մտքն ու տաղանդն սխաժ են սաղմնային վիճակը թողուլ, և որ արդար զազախար մ'տոյիէն աւելի սիրելու, հոգի մը մարմինն աւելի պաշտելու ատեն ծայրայեղ զգայնութեան մը զրդ ուելով կը ծնրադրէ, իրաւ է որ միշտ վարացոյցի մ'ետե մնալով . . . ինչ համեստութիւն : Թէ՛ ատներ և թէ՛ միւսներն իրենց գրական աշխատութեանց շտիին և տեսակին համեմատ արդէն անուն ունին կամ սխաժ են ունենալ հասարակութեան մէջ : Աւտի . . .

Բայց կը հարկադրուիմ ընդ միջև խորհրդածութիւններս՝ կարդալու համար ինձ ուզողուած նամակ մ'որ այս միջոցիս ձեռքս կը յանձնուի լրագրի մը հետ :

Լրագիրն է ճիշդ Թերճեմանը Էֆէօրին մայիսի 29ի թերթը, և նամակաղբրն է Գրչունին որուն բուն անունը հոս նշանակելու հարկ չեմ տեսներ :

« Ի նշան համակրանոց և համարմանց՝ որ առ » ձեզ՝ կը յղեմ ձեզ Թերճեմանը Էֆէօր, որոյ մէջ ամ » վտիտած են իմ զգացմանց ստանդ և պատանդ » կը գրէ ինձ Գրչունին :

Այլ տեսնես որ պահ մ'առաջ չէի սխալեր՝ ազնիւ զգացման մը բռնութեան վերադրելով այն ողորդալի գոյլեստաները, որոց ակնարկեցի արդէն :

Անզգայ և ապերախտ չտեսնելու, նաև ինչ ինչ կարծիքներս յայտնելու համար պատասխան մը գրեցի, որուն պատճէնը աւելորդ չեմ համարիր հոս գնել :

Բերա, 31 մայիս 1881 :

Յարգի բարեկամ,

Ինչ ունեցայ նամակդ և համակիր ու շաղրութեամբ կարդացի, ինչպէս նաև այն յօդուածը զոր Թէրճէ-ճանք Էֆէտարի մէջ հրատարակեր ես սահմանադրութեան տարեդարձին առթիւ :

Հաճութեամբ կը դիտեմ որ զգալուու համար սիրտ մ'ե երգելու համար քնար մ'ունիս :

Ծանր պարտք, փափուկ պաշտօն :

Խնդիրն ավտրոժելի ձայնով և ներդաշնակութեամբ երգելու վրայ է :

Կան պարադաներ ուր երգելն աւելի օգտակար է ընդհանուր շահերու քան թէ ժամանակին բռնութեան դէմ բողբոքելով գոռալը :

Պերանձէի երգերը քաղաքական ատենաբանութեանց սովորուած ունեցած են :

Քնարիդ եռանդուն թեկերն ոչ մաշուիլ և ոչ հանդարտիլ դիտեն՝ երբ ազգին տունը շինելու ջանադրող բանւորները խրախուսել կը յառաջադրեն, կ'ակնարկեմ այն ժիր բանւորներուն որոնց անունները կը յիշես գրեթէ բանաստեղծարար դրած յօ-

դուածիդ մէջ, և որոց կարգը կը հաճիս դասելու նաև զիս՝ փանաքի աջակցութիւնս պատրուակ բռնելով :

Ապերախտ և անզգայ կը սեպուէի՝ եթէ համարապէս ըլլի չափազանց այլ անկեղծ գոյլեստաներուդ և խնկաւէտ ակնարկութեանցդ սաջիւ : Այլ հաւանիմ թէ արժանի չեմ ասոնց, այլ կը խոստովազիմ թէ անկարելի է ինձ չյուզուել ազնիւ և համակիր զգացմանց արտայայտութենէն՝ երբ մանաւանդ բանաստեղծապէս զգայուն և գոյցես սիրապաշտ սրտէ մը կ'արտարզխին անունք :

Գրագիտութեան ասպարէզն իր դասնութիւնները և վտանգները ունի, և քանի որ դուն ալ արի այլ նորեկ զինուոր մ'ես, անշուշտ անոնց ճաշակը տակաւին չես առած :

Աւելնով և յաղթութեան յոյսերով կը նետուինք այս ասպարէզն առաջին անգամ, և կուրս սկսե՞ն ետք միայն կը եշմարենք թէ հոն նաև յաղթ ուիլ, նաև մեռնիլ կայ :

Ժամանակակից բանաստեղծներու հայրը Գեօրգի-Քլաւճի համար, զոր հօգի՞ծ մը Ռիշարդ-Բեռնեքը կ'անուանէ, նախերգանք մը գրած և՛ մարդկային կենաց սահմանում մը տալու համար՝ բռնած է :

«Մարդուս կեանքը ժպիտով մը կ'սկսի, հեծկըտանք» ըսով կը շարունակուի և անդունդին մէջ արձաղանք» տուող վտարի սոսկալի ձայնով մը կը վերջանայ :

Այս տղերուն մէջ կ'ամբիօփուին ու բախու թիւնն և արամու թիւնը, երանութիւնն և ապերանութիւնը, սէրն և ստելութիւնը, հաւատարմութիւնն և

մատնութիւնը, յաղթութիւնն և պարտութիւնը, վերջապէս մարդկային գեղութիւններէ և սոցեղութիւններէ կազմուած այն ամեն հակադրութիւններն որք՝ իրր ճակատադրին անողոքելի անխնայն՝ իրարու խառնուած շարունակ կը հոլովին, մարդու կեանքը անդառնալի կերպով գրաւելով՝ որորանէն մինչ ի մահ:

Արտադ զգայուն և միտքը բաւական արթուն է: Կրնաս ուրեմն մեղանին անմեռ սևութիւնը դործածել յառաջդիմութեան համար, կրնաս ևս քան զևս գոզարիկ կերպով զգալ և խորհիլ, երգել և խօսիլ, գրել և սպել յօգուտ ազգին, յօգուտ մարդկութեան, բայց թէութեամբ մ'որ է աւելի ազդու կերպով գինուիլ և այժմէն հաւանիլ չէ թէ շարունակ ժպտելու, ինչպէս ժպտէր Ես տարեցարծի տօնը խմբելու առթիւ, այլ նաև լալու, այլ նաև հալածուելու, այլ նաև զոհուելու . . . :

Կլաէ՛ ոյժդ, և եթէ բաւական արիութիւն կ'ըզգաս ի քեզ, շարունակէ՛ երգդ և խօսքդ: Եթէ չես զգար այն բարոյական արիութիւնը, այն անընկճելի ինքնութիւնը, որով միայն կարելի է շոյելու իրաւունքին հետ նաև ապտակելու պարտքը ի դործ գնել, վճ գիր գրիչդ և սուր ինքզինքդ այն հասանքին որ չդիտեմ ո՛ւր կը քէ՛ կը տանի դրացիտի ըսի անունը կրողները:

Խնդրեմ, ընդունէ՛ շնորհապարտ զգացմանցս հաւաստիքը:

Գ. ՋԻԻՆԿԻՐԵԱՆ

Գրչունին տարեցարծի հանդիսին օրը տեսեր, հետը գարեջուրի բաժակ մը պարպեր էի ազգային և գրական խնդիրներու վրայ խօսակցելով, իր կերպերէն և վարմունքի ձևերէն ախորժեր էի, զազաւարներուն և զգացումներուն քիչ շատ ուշադրութիւն բրեր էի՝ առանց սակայն խսկապէս ճանչել կարենալու իր քնաւորութեան էական հանդամանքը:

Նամակիս ընթերցումն ինչ տպաւորութիւն բրաւ իր վրայ, չգիտեմ: Արնայ սակայն հաւաստի ըլլող ան թէ կը յարգեմ և միշտ պիտի յարգեմ գինքը, եթէ երբէք չգողբի յարգելի ըլլալէ:

Բերս, 1 յունիս 1881:



ՆԱՄԱԿ Ը.

«Non, je suis une âme, dit la femme.»  
J. MICHELET. L'Amour.

Գուն ալ ոչ նուազ խստիւ դատած պիտի ըլլաս գիս, եթէ սաստիկ և անողք համարիս այն կարծիքներս կամ տպաւորութիւններս զոր ուզեցրուցութեանցս մէջ երբեմնակի կը համարձակիմ յայտնել այս աեզի շայերուն տոհմային և ընկերային հանդամանաց և իրողութեանց նկատմամբ:

Երևելի քննարանի մը հետ կը հաւանիմ թէ քննա-

դատի մը պարտքն է լուսաւորել և ոչ թէ այրել: Այն թէ ոչինչ լուսաւորեցի ցարդ, կարծեմ թէ նաև ոչինչ այրեցի, վասն զի՝ ինչպէս կ'երևի մինչև հիմա քեզ գրուած նամակներէս՝ աւելի իր տպաւորութիւնները յիշող ուղեորի քան թէ քննադատի յաւակնութիւնը ունեցայ:

Արյիչևս անշուշտ թէ նախորդ ուղեորութեանցս մէկին մէջ հոս ազգային կատարեալ զարթում չլաց, ըսեր էի: Յուեաեսս զժողո՞ճ մը, միականի ճանրորդ մը չսեպուելու համար այսօր ալ կը պարտաւորիմ խոտտովանիլ թէ մասնական այլ իրական զարթման մը, իմացական շարժման մը սկզբնաւորութիւնը կը տեսնեմ մայրաքաղաքիս Հայերուն մէջ, և սրտազին կ'ուրախանամ:

Այս զարթման և շարժման մէջ գլխաւորապէս Միացեալ Րնկերութեանց և մասնաւորապէս դաս մը Հայուհիներու մասնակցութիւնն և զործունէութիւնն ուշադրութեան արժանի են:

Միացեալ Րնկերութեանց վրայ ուրիշ անդամ թերևս խօսիլ յառաջադրելով, այսօր կը փափաքիմ միայն ընդհանրապէս կիներու և մասնաւորապէս Ա. Պօլսոյ Հայուհիներու շարժման վրայ կարծիքներս յայտնել, շարժում որ կրնայ նորանշան իրողութիւն մը սեպուիլ մեր ազգին ժամանակակից պատմութեան մէջ:

Հին և նոր աշխարհներու կիները դարաւոր թմբուլէ մը սթափելով սկսած են ուսնիլ, մարդկային հոգիին և մտքին վերաբերող փիլիսոփայական օրէնները ուսումնասիրելու սովորիլ, ազգութիւն բուռած

ընդհանուր դատաւարներէ ներշնչուիլ, աղջիկ, սիրուհի, ամուսին, մայր ըլլալու բնական և նուիրական իրաւանց հետ նաև կէն, այսինքն ընկերային անջնակա նոսրէն մ'ըլլալու, քաղաքային և մասամբ իւրք քաղաքական ինքնութիւն մը կազմելու իրաւունքն ալ կը պահանջեն, և մենք ալ «հոգի մ'ունին» կ'ըսեն: Իրաւ է որ այսօր սակաւին թոթովման մը կը նմանի այս ասումը, այլ մտքարեւական ողի մ'ունենալու հարկ չկայ զուշակելու համար թէ վաղը բողոքալի աղաղակի մը պիտի նմանի այն:

Իացարձակ սկզբուն մը ծանրակշուութիւնը ունեցող ճշմարտութեանց հանդամանքն է նախ յամրապէս և անասելի զժուարութեանց յաղթելով երևան դալ և ապա տարածուիլ:

Մարդկային օրինադիրներու մէջ հակիրճ բանաձևով մը զետեղուած կը գտնուին ինչ ինչ պարզ ճշմարտութիւններ որք հիմա լուսաւոր մարդկութեան խիզէն ընդունուած են իբր մաթեմատիկական անփիճելի իրողութիւններ և որոնց վրայէն սակայն դարեր անցան, երկիլիոններ վասնուեցան, մարդկային արեան հեղեղներ հոսեցան: Իբր օրինակ կրնանք հոս յիշել օրէնքին առջև մարդուս հաւասարութեան սկզբունքը, և այլն . . . :

Ահա՞ այս կարգի ճշմարտութեանց մին ըլլալէ սահմանուած է նաև կեող հողի մ'ունենալը, ընկերային անձնականութիւն մը ըլլալը, ճշմարտութիւն խորհրդաւոր որուն ներքև անձանթօթ անդունդներ կան պահուած, և որ սաղաքային մէջ անոնց յատալը երևան պիտի հանէ:

Մակաւաթիւ անձեր գիտակցութեամբ, իսկ շատերը նախազգացմամբ կամ բնազդմամբ կը հրապարակեն կնային ինքնութեան, անձնաւորութեան այս օրինաւոր պահանջումը, որ միակամի բնկերարաններու և իմաստասէրներու մերթ քմծիծաղը և մերթբարկութիւնը շարժելու ժամանակ, նաև ծանր մատանջութիւն և համակիր արամադրութիւն մը կը տայ այն հեղինակներու, ինչպէս են Ժ. Մելլէ, Է. Լըկուզէ, Էմէ-Մարիէն, և այլն . . . որք յառաջդիմութեան օրէնքին անխուսելի հետևանաց վրայ կը խորհին և անկից անհաւատալի կարծուած եղբակացութիւններ կը հանեն:

Արդ՝ Հայ կիներն ևս — դժբաղդարար սակաւաթիւ են տակաւին իրեն հետևողները — Հայուհին ևս, կ'ըսեմ, սկսած է ուսնիլ, և ահս օտարուհիներուն պէս ան ալ կ'ըսէ. « Հոգի մ'եմ » և սպառնական լուծութենէ մ'և կարճատև մտածումէ մ'ետք թերևս կը շարայարէ. Արեւելու իրասանս անթմ:

Պատմութիւնը, աւանդութիւնը, սովորութիւնը, օրէնքին անօրէնութիւնը (iniquité), վերջապէս ընկերային ճակատագիրը դատապարտած են կիներ կրաւոր կեանք մը վարելու, որորանէն մինչև ի դեբրեզման գրեթէ բուսապէս աճելու և չորնալու:

Ինչպէս ամեն ազգերու, նոյնպէս և մեր ազգին մէջ կնոջ կեանքին շրջանը նեղ և սահմանափակ է ի բնէ անտի, շրջան ուր անոր աւելի անջըքան թէ միտքն ու սիրտը կը նկատուի իբր ընկերային արժեք:

Ծնիլ և անիծուիլ, սիրամարդի պէս պճնիլ և իբր թուրթակ խօսիլ, սիրել և սիրուիլ, պարել և զբօս-

նուլ, խարել և խարուիլ, դոյութեան կոխին մէջ անոնց (négresse) մը նկատուիլ և իբր զէնք արատաքի կայլակ մը դորձածել կամ պատիւը վնասել, հեշտութեան դործի մ'ըլլալ, ծննդարերութեան մեքենայ մը դառնալ, մասնույն ձեռքէն չթողուլ, տունին հաւքառքունը և աւելին կտնայ ըսնելով օրերը անցունել, խոհանոցին մէջ հոտիլ, Եաշմախի ներքև սքողութիւյ առնական բռնութեանց տակ հիւժիլ, լեզուն կապել, աչքը դոցել, սկանջը խփել, ժամ երթալ, ամիսն անգամ մը խոստովանահօրն սոջև ծուր գնել, օրինական և կրօնական անիրաւութեանց սոջև անդիտարար լսել և կորաքամակ հնազանդիլ Երէնայէն ըսուած ճշմարտութեանց՝ որք վտանգաւոր լուծութիւն մը կը պահեն իր էական իրաւանց նկատմամբ, և երկրային օրէնքի քանահատութեանց՝ որք արդարութեան գաղափարը դուրս կը թողուն իբր բնական մեկնութիւն այս լուծութեան:

Մէն մի կնոջ ընկերական միճակին համեմատ ահս այս եղած է կնային կեանց շրջանն որուն մէջ աւմեն ինչ ոչ կրնանք գիտովին պարտաւել և ոչ ալ արգարել:

Ընդհանրապէս խօսելով կիներն սկսած է քննել իր այս կացութիւնը, տեսնել թէ հոն պարտաւորութիւններ և անիրաւութիւններ կան միայն, և թէ իր մտքին և հոգիին իրաւանց մեծ կարեւորութիւն մը շարուիլ:

Երկու իրողութիւն մասնաւորապէս անոր ուշադրութիւնը կը գրաւեն: Կը գիտէ ան թէ քահանան իր հետք Աւետարանին մէջ կը թախտի՝ միայն ա-

նոր երկնային և ընտանեկան պարտքը ցոյց տալու և երկրային իրաւունքը սքօղելու համար, թէ օրէնս-դիրն ալ օրինադրին մէջ կը դեղեղի այս իրաւանց սահմանը նեղելու և կինը ազայի, խեղի և սրիկալի տեղ դնելով անոր քաղաքային մահուան վճիռը տալու համար . . . . . և երկնային Աւետարանին այս անտարբերութեան, և երկրային աւետարանին այս անդժուածեան դէմ բողոքելու, և՛ իր բնական պաշտօնը վարելէ չդադրելով՝ իրը հողեկիր անձնակա-նութիւն մ' իր ընկերային իրաւունքները պահանջելու ժամը հասած կը կարծէ :

Այս իրաւանց տիրանալու, և այս նպատակին հասնելու դիտաւորութեամբ կը խլրտի, կը շարժի, կը յուզուի, կը գործէ՝ աւերաւութեամբ անգ այլ է-ապէս անսահման ասպարիզի մը մէջ, որ է դպրոցը :

« Ամեն մարդկային գործերը, կ'ըսէ Պըքը, ճրահան և ֆիզիքական օրէններէ կը կառավարուին : » Աինն այս ճշմարտութեան կը վարի, և ֆիզիքական օրինաց ազդումէն կարելի եղածին չափ ազատուելու և իր իմացական քաջողութեան վերաբերող օրինաց թե-րութիւնները լեցնելու, անիրաւութիւնները սրբա-դրելու, մտքին մէջ յեղափոխութեան մը ծնունդ տալու կը ջանայ :

**Ի՞նչպէս :**

Յեղափոխութիւնը հանրապետութեան մէջ վեր-ջացնելու և մարդկային մտքին մէջ ուրիշ մը սկսելու համար ի՞նչ ընել պէտք է, հարցուեցաւ օր մը Ժօզէֆ Լազանալին, որ Բժնվանօթի իմաստուն և հեղաբա-րոյ անդամներուն մին, և հասարակոց կրթութեան

մտանած ողովին նախազահն էր, և որ պարզապէս պատասխանեց .

— Ոչինչ և ամեն բան, այսինքն կրեւ-իւնան իրոց օրէն մը :

Մեր մէջ իդական սեռին կրթութիւնը դեռ քիչ ժամանակէ ի վեր սկսած է, և արդէն Հայուհին — և կ'ալինարկեմ զլիաւորապէս Աոստանդնուպօլլոյ, Իզմիրի, Տիփախի դաս մը Հայուհիներուն — փանա-քի լուսաւորութեան մը շնորհիւ իր անձին վրայ կը տեսնէ մեհենական նուիրականութիւն մը, և սիրուե-լու պարտքին փոխարէն ազատ կամբօնի սիրելու կամ նիւթական բարեկեցութեան մը փոխարէն օրինա-պէս նուիրուելու իրաւունքը կը պահանջէ, դարերէ ի վեր իրեն դէմ զիլուած բռնասիրական սովորու-թիւնները մեղմելու և աստիճանաբար ջնջելու մասին արանց մասնաւոր կամբէն կամ տղիտութենէն հե-տեող անտարբերութիւնը կը նշմարէ, և ինքը մեղ-մել և ջնջել կը յառաջադրէ : Յաջողելու, կրաւոր ոյժ մ'ըլլալէ դադրելով գործունեայ զօրութիւն մը դա-նալու, անասունէն տարբերելու և ստուգապէս ա-սուն էակի աստիճանը բարձրանալու համար կ'ուզէ ազատօրէն խորհել, զբաւ և գործել, այսինքն ասրիւն :

Ապրելու իրաւունքէն միտք մը, սիրտ մ'և ընկե-րական անձնականութիւն մը հանդիսանալու ետակի հարկը կը ծագի :

Իրր միտք՝ այժմեայ կրթական օրինաց և հիմն-արկութեանց կը նայի և կը դժգոհի :

Իրր սիրտ՝ իր ամեն բնական և աղին զբայցմանց զարդացման հակառակող նախադրարմանց և աւե-

լորդապաշտութեանց վրայ կ'ուզէ իր ուշադրութիւնը, և սրամտութեան աչաքակ մը կ'արձակէ :

Իբր ընկերական անձնականութիւն՝ իր նիւթական և բարոյական շահերը բռնաբարող և իր գործունէութեան ասպարէզը գրաւող օրինական սեղանաց և խառութեանց վրայ հետաքննին նայուածք մը կը նետէ, և կ'ըսէ . Նս ալ քաղաքացի եմ :

Ընկերաբանները կը հաստատան թէ ամեն մարդ կային ընկերութիւն բարեշքման օրէնքին կը հնազանդի և թե հարկաւորապէս ժառանգութեան և վարձութեան ազդու մէ արտադրող բարւոքումն, այս ինքն յառաջդիմութիւնն անդ խնայելի է ամեն մարդ կային խումբերու մէջ : Մակայն կինը դարեր տևող իր դերութեան և ազիտութեան մէջ կարծես այդ օրէնքին յամրածին արդեանց դէմ փաստ մը գանձելով, և իր դարդացման, պիտիքն իր իմացական, զգայական և բարոյական յատկութեանց բարւոքման գործը մինչև հիմա լակ այդ օրէնքին, այդ ընկերային նախախնամութեան թողած ըլլալուն զլըջալով և ցաւելով, ինքն ինքնին կ'ուզէ աշխատիլ :

Մինչև հիմակ ինչո՞ւ չուրած էր արդեօք : — Վասն զի ուղելու համար կամքը կը սրտատուօրի շարժիլ մտքէն, և վասն զի այս շարժումը զազախարներու տեսակին կը համարատախանէ միշտ :

Երբ ընկերութեան մը մէջ հիմուփուտ հիմնադրութեանց, օրինաց, ամեն տեսակ ազելութեանց դարերէ ի վեր անվրդով շարունակուած ըլլալը կը տեսնես, հաւաստի եղիթ թէ անոնց և նոյն ընկերութեան անդամներէն ընդհանրապէս ընդունուած

զազախարներու մէջ յարարերական ներդաշնակութիւն մը կայ : Գազախարներու փոփոխման ստաճառաւ երբ այս ներդաշնակութիւնը կը խանդարուի, երբ անհամաձայնութիւնը կը տիրէ ընկերային իրութեանց և մարդուս ֆիզիկական և մտական օրէններէ շարժող կամրին մէջ, յեղաշրջումը կ'սխի նախ թագուն և յամր, ապա յայտնի և անդիմադրելի կերպով, օրինաւոր կամ ազօրինի միջոցներով օրէնադիր ժողովներու մէջ կամ պարտ, և իրապէս չվերջանար մինչև որ ներդաշնակութիւնը չվերահաստատուի, մինչև որ այն ընկերական իրողութիւններն և կեանքի գործերն ալ չհաւանին փոխուելու և բաւական համաձայնելու զազախարաց և զդայմանց կրած փոփոխութեան հետ : Այժմէ կուր շարունակուի, և թէ իրողութիւնները մտային վերանորոգման դիմադրելէ չզապրին, ընկերութեան էութիւնն իսկ վտանգի մէջ կ'ընկնի, և ահա Հեղաշրջող Արէնաէր կատարելապէս իրաւունք ունի երբ իր Ներքստնութեան ընկերային քիտոնութեան անուն նշանաւոր երկին մէջ կ'ըսէ թէ « Հարկաւոր հիմնադրութեանց և ընդհանրապէս » ընդունուած զազախարաց մէջ պէտք է որ բաւաւ կան ներդաշնակութիւն ըլլայ որպէս զի ընկերութիւն մը կարենայ ապրիլ : »

Արդ՝ իխտ բնական է հետեցնել թէ այս հիմնադրութիւնները, քաղաքային և քաղաքական եղելութեանց անխաւառութիւններն արմատ բռնած կը տեսն միշտ՝ եթէ վանտը նշմարելու և քննելու կարողութիւնը արտադրող և անոնց դէմ սրտատելու, մարդկային կամրը շարժելու և գործելու զգացումը

և յօժարութիւնը ներընչող դադափարները տարա-  
ծուած և հանրացած չըլլան :

Ար կրկնեմ թէ յառաջդիմութիւնն ըսելով կ'ըմ-  
բունեմ այս հիմնադրութեանց աստիճանական բարեու-  
քումը, այս անխրաւութեանց, մարդկային բարօրու-  
թեան ամեն խոչընդոտներուն հետզհետէ անհետու-  
մը, և այս անհետումն անհնարին է եթէ մարդս ա-  
նոնց զխտակցութիւնը չունի, զխտակցութիւն որ  
նոյնպէս անհնարին է առանց մտային դարձման :  
Ուսկէ կը հետեւի թէ ամեն մարդկային յառաջդի-  
մութեան սկզբնակէտն է մտքին և սրտին հաւասար-  
բապէս մշակումը, խորհելու և զգալու կարողութեանց  
բարդ աւաճումը :

Տասնեւիններորդ դարու կիներն այս մշակման և բար-  
դաւաճման մէջ կը փնտռէ իր փրկութիւնը : Եւ փրկուե-  
լու համար կը պահանջէ ինքն ալ մասնակցիլ իր կրթու-  
թեան և դաստիարակութեան օրէնքը և ծրագիրը  
չիմեղու դործին, որպէս զի այս օրէնքն ու ծրագիրն  
իր սեռին բնական պայմաններուն և իր ընկերական  
անձնականութեան նոր պահանջումներուն յարմա-  
րին, որպէս զի իրեն համար ևս սկսի մտքի և սրտի  
յեղաշրջում մը, մտածման և զգացման եզանակ մը  
որ իր այժմեայ յառաջդիմական վիճակին և գտնուած  
միջավայրի պայմաններուն յարմարելէ առանց բոլո-  
րովին դադրելու ևս քան զևս բարդաւաճի, և որ-  
պէս զի կնոջ և մարդու ամեն իմացական, զեղադի-  
տական և բարոյական կարողութիւնները բարեօրին :  
Ինչպէս ըսինք արդէն, ընկերաբաններն այս բարեու-  
քումը բարեշրջման օրէնքին կը վերադրեն իբր կեն-

սարանական անհրաժեշտ երևոյթ, իսկ ևս կը հա-  
մարձակիմ տկար դատողութեամբս գլխաւորապէս  
մտքի զարգացման հետեանք դաւանիլ զայն՝ քանի  
որ մարդկային սեռին երկրիս վրայ երեւումն մինչև  
հիմա անզի ունեցող բարեօրմանց դադափարը նախ  
մտքին մէջ ծնած և ապա ընկերութեանց մէջ իրա-  
դորձուած է, քանի որ այս բարեօրմանց ամբողջու-  
թիւնը ներկայող քաղաքակրթութիւնն ոչ սերուճ ար-  
քիւն է բոլորովին և ոչ երկնային և յանկարծահաս  
պարգև մը, այլ դարաւոր ջանադրութեանց, միտ-  
քով երկնուած և յայտնուած դադափարներու, կու-  
ներու, գոհարութեանց արգասիքն է, և քանի որ ա-  
ռանց կամքի և ոյժի միտքն ոչ կրնայ մշակուիլ և ոչ  
ըմբռնել կենդանական և ֆիզիկական աշխարհներու  
տեսարաններէն ընծայուած դասերը և օրինակները :

Արթութեան ճորճիւ գորդանալ և ասորեք կեր-  
պով և հանգամանքով մարդու հաւասարիլ ուղղ  
կիներ իր առջի միայն մէկ տարրէլ տեսած է ցարդ,  
որ է ընտանիքն՝ որ ստիպյն սրանց ձեռնձդութեանց  
կը հանդիպի միշտ, մինչդեռ մարդուս առջև բացուած  
կը տեսնէ ոչ միայն ընտանեաց, այլ նաև արհեստի  
և այլ իրաց աստարէ գները, և զինքը այս երկու շրջան-  
ներէն դուրս ձգող անիրաւութեանց, ինչպէս նաև  
իր սեպհական շրջանին մէջ տեսնուած ձեռնձդու-  
թեանց զէմ գտնապէս կը գանդատի :

Բայց այս խորհրդածութիւններէս չեմ ուզեր հե-  
տեցինի թէ լուսաւոր ազգաց կիներուն ընտանեաց,  
արհեստի և հոգրեկեաց նկատմամբ ստացած ամեն  
յառաջդիմական դադափարներն և զգացումները

կրնան թէ՛ իրենց և թէ՛ մեր կիներուն մէջ այժմէն ամբողջապէս ընդունուիլ, հանրանալ, հաստատ հիմ մը բռնել և իրադործումիլ, նա մանաւանդ Հայուհիներուն մէջ, վասն զի Հայ ազգին քաղաքային, քաղաքական և կրօնական փիճակն, ինչպէս նաև միջավայրն՝ ուր կը գտնուի ան՝ գլխավին տարրեր հանդամանք ունին: «Մէն մի ընկերութեան, կ'ըսէ Սթեն» սէր, և իր բարեչընումի մէն մի կերպարանին յատկացած եղանակ մը կայ մտածելու և զգալու, և մտածման ու գիտցման որ և է երանակ, ելնէ շարժման քաղաքային աստիճանն և միջավայրի պայմաններուն, շիրնար մշտնջենական կերպով հաստատուիլ:»

Բայց ընտանիքի, արհեստի և հայրենիքի մասին կան ինչ ինչ անհրաժեշտ գաղափարներ և զգացումներ որոնց իրադործումին այժմէն փափուքիչ անպատեհ և կանխահաս չէ կիներուն համար, եթէ ի նկատի առնուենք բարեչընումի աստիճանը ուր հասած են և միջավայրի պայմաններն ուր կը գտնուին առտոնք, և ահա՛ թէ անցելոյն և թէ այս իրադործումին հակասակող հին քանսովեանց զէմ կը բողբէ և արտաքի կինը:

Կը բողբէ նախապատմական, հումէական, հելլենական, բարբարոսական և աւատական ժամանակներու օրինաց և սովորութեանց զէմ:

Կը բողբէ աթենական օրէնքին զէմ որ ատեն մը կինը գոյք մը, իր մը կը համարէր և ժառանգային ընչից հետ միասին ժառանգորդին կը յատկացնէր:

Կը բողբէ հումէական օրէնքին զէմ որու զորութեամբ հայր մ'իր աղջիկը կը կարգէր որու հետ որ

ուզէր և կը գտաէր երբոր ուզէր՝ ուրիշ մը տարու համար, առանց անոր հաճութիւնը և հաւանութիւնը ստանալու:

Կը բողբէ աւատական օրէնքին զէմ որուն համեմատ աղջիկ մը առանց իր հօր, տիրոջ և թագաւորին հաւանութեան չէր կրնար ամուսնանալ, և որ անոր գեղեցկութեան վրայ տանանորդի խայտասակ իրաւունքը կը տար երկրին իշխանին\*:

Կը բողբէ Մովսէսին զէմ որ կինը հոգին կ'ուրանար բետլով. «Կինը ստիպուած չէ իր երգումը բռնելու՝ եթէ երգում ընէ:»

Կը բողբէ սիւնհոգոսի մը զէմ որ միջին դարու մէջ կը հարցնէր իւրով թէ արդեօք կինը հոգի ունի՞:

Կը բողբէ տասնութ երորդ դարուն և զայն փառաւորող հեղինակներուն, իմաստասէրներուն, օրէնսդիրներուն զէմ, «Տիարոյին զէմ որուն համար պոռնիկ մ'է կինը, Մօնթէկպիւօյին զէմ որուն համար լոկ հաճելի և փայփայելի արարած մ'է կինը, Ռուսոյին զէմ որ հեշտութեան գործի մը կը համարէ կինը, Վօլթերին զէմ որուն առջև գրօ մ'է կինը\*» և այս արդար բողբէն ետք՝ գիտակցութեամբ կ'արձակէ հանդարտ և խորհրդաւոր վճիռ մ'որ է. «Ո՛չ, ես ալ հոգի մ'եմ»:

Կոստանդնուպօլսոյ Հայուհիներէն ոմանք կարծես այս մեծ վճիռին բնական արդարութիւնը կ'ընդունարեն. Եւրոպիոյ յառաջագէմ կիներուն պէս իրենք ևս՝ նեղ սահմանի մը մէջ գործնական կերպով

\*Sén Histoire morale des femmes. Par E. LEGOUVÉ

և իրենց այժմեայ վիճակին և միջավայրի պայմաններուն տեսութեան կէտովն կ'ազննն բողոքել հին ժամակներէ ի վեր իրենց անձին, մտքին և հոգիին դէմ զիզուած նախադաշարմանց և անօրէնութեանց դէմ, և զէթ մասամբ իւրիք այլ ապահովագրական և հանդարտօրէն զործադրելու համար դատովճիւ մը զոր դարեր անող պայքարներէ ետք լուսաւորութեան ուղին շահած է իզական սեռին համար, յոսաճողորմ են կիներու կրթութեան և դատախարակութեան գործին ուղղակի խառնուիլ՝ յաջողելով կազմելու երկու ընկերութիւններ, որոնց մին Ազգանաւեր Հայաստանէն է, միւսն ալ Գորոցասեր Տէկնանց:

Աւաճիւնին նպատակն է Գրասարժերու զբ ջարժութեան հասարակել, երկրորդինն է Գրասարժի համար ջարժութեան պարտաւորել, նաև անօրէնական Հայաստանէն քրաստիարակութեան նպատակել: Անգամներն են ուսումնական և ուսումնասէր տիկիներն և օրիորդներ որք ժրութեամբ կ'աշխատին առ այժմ: Կ'աշխատին ուրիշին համար, սիրահարելով բարութեան տեսիլին՝ իրենց համաստեներու մտքին և սրտին թշուառութիւնը սփոփելու կը նկրտին, և՛ եթէ յարատեւեն անոնք՝ կրնայ ըսուիլ թէ ապարդիւն պիտի չմնան այս ջանադրութիւնները քանի որ զթասիրութիւնը կնոջ սրտին երկնային և անական արիւններուն մին է:

Ազգանաւերն և Գորոցասերն և թէ կրթութեան ծաւալման շնորհիւ Հայ ընկերութեան համար այժմեայ փամօնակներու ուղին և հարկը ըմբռնելու և ըստ այնմ վարուելու կարող աղճիկներ, ամուսիններ, մշակեր և կիներ յաջողին կազմել կրթութեան նոր և

ընդ հանուր զրութիւն մը հաստատելով և այս դրութեան համեմատ զործելու նիւթական միջոցները ապահովելով ներկային և ապագային մէջ, և եթէ ամենուրեք իրենց օրինակին հետեորդներ գանեն, պահ մը շեմ վարանիր հաւատալու թէ պանծալի յիշատակ մը հրիտակած պիտի ըլլան յաջորդ սերունդներուն:

«Ով որ դատախարակութեան տէրն է, կրնայ աշխարհիս կերպարանը փոխել» ըսաւ Ալյալից:

Խորունկ ճշմարտութիւն:

Կրթութեան և դատախարակութեան պաշտօնը մենաշնորհ մ'ըրէ՛ Աջօրայի թոռներուն համար, և անոնք մարդկային ընկերութիւնը զիզուն (վե՛) իմացականութեանց երամակ մը կը գաւնայ, և անոնք մարդկային միտքը կ'անիր (s'etioler) ծմակի մը մէջ օղէն և արեւն զրիւնելով անող բոյսի մը պէս:

Կը հաւատան ինձ թէ Գորոցասերաց հոգին է Տիւկին Սրբուհի Տիւար, իսկ Ազգանաւերն և հոգին Տիւկին Ա. Ապրօ և հիմնադիրն ալ Օրիորդ Զ. Խանձեանն է. թէ այս պնդել տիկիներն և օրիորդն ունին այնպիսի անդամակիցներ որք անոնց պէս այսպիսի ճշմարտութիւններէ ներշնչուած և համոզուած կը զործեն՝ իրենց ձեռնարկութեանց իրր անայլալիկ նշանաբան ընդունելով այս խօսքը՝ Ընդհանաբէն ժառանգորդն վարձի է ապերախութեան հանրելոյն և պարտաւորելու ընդունելու թրատմութեան սեպել:

Չեմ կրնար երկու ընկերութեանց բոլոր անգամներուն անձանց, բնաւորութեանց և մտային յատկութեանց վրայ մանրամասն տեղեկութիւններ տալ

քեզ, վասն զի Ազգանուէր Հայոհնէրուն և ոչ մէկին հետ տեսնուելու պատիւը ունեցայ տակաւին: Իսկ Դպրոցասէր Տէկնանց մին արդէն, և մի ուրիշն ալ նոր ճանչելու պատիւը ունեցած եմ: Սակայն արժանա հաւատազրիւրնեքէ քաղուած տեղեկութեանց վստահելով կը հաւատամ քեզ թէ Ազգանուէրնէրուն առե նապեա՛ Տիկին Ա. Ապրո՛ կրնայ պարծիլ իր ուսում ներսիւ, բնական խելանութեամբը, լեզուազիտական և երաժշտազիտակա՛, հմտութիւններովն և լեզուանութեամբը, նաև այն ազնուապէս համարձակ, վայելչասիրական (elegant) և յանկուցիչ կերպերովն՝ որոնց կութնած գիտէ բարձրագոյն ընկերութեանց մէջ իսկ վայելի, իշխել և իր ներկայութեան հրապրին ներքև պրկել ամենուրեք ճանճրանալու և յորանջելու սովորողները անդամ: Այս ազնիւ Տիկինն ընկերութեան յառաջդիմութեան հողին նախանձախնդիր է, և իր ատենապետութեան պաշտօնը արդիւնաւոր կերպիւ կը կատարէ: Ըստ իս այժմէն իրաւունք ունի պահանջելու որ հանրութեան օգտին համար թէ՛ իր և թէ՛ ազնիւ աջակիցներուն կողմ մատուցուած ծառայութիւնը ճանչօի: Թէ՛ Ազգանուէրնէրն և թէ՛ Դպրոցասէրնէրը գթութեան մեծ գործ մը կը կատարեն՝ մեր ազգին մտական յառաջդիմութեան նպաստելով: Նիւթական կեանքի թշուառներուն որդրմիւն մեծ առարկնութիւն մը չէ եթէ համեմատուի իմացական կեանքի թշուառներուն ողորմելու վնեմ գործին հետ: Մին կ'ստիպուի պատաստ մը հացով, միւսը կը կազդուրի ճշմարտութիւնը ըմբռնելու ընդունակութեամբ: Ստատեքսի յառաջդի-

մութիւնն ամուլ է, իսկ մտքինը բերրի: Հացին պատասը չուտով կը բորբոսի, այլ ճշմարտութիւնն երբէք: Մին առժամեայ, միւսը յաւիտենական է: Մին ճակատագրին խտտութիւնը միայն մեղմելու, միւսը բարբոսին ջնջելու կը ծառայէ: Քանի որ այսպիսի վնեմութիւն մը կը ճշմարտի երկու ընկերութեանց նորաստիկներուն մէջ, ապագայ պատմիչներու խղճին մի տկար արձագանքն եղած կ'ըլլամ այժմէն՝ եթէ համարձակութեամբ կարծելու թէ Տիկին Ա. Ապրո և Տիկին Ս. Տիւտար ստիպուած են աւանց վճատութեան և իրենց ազնիւ ընկերակիցներուն աջակցութեամբ նախ կատարել իրենց պարտքը, որ է ազգային լուսաւորութեան սպասուհիներն ըլլալ, և ազա վայելել իրենց մի իրաւունքը, որ է պատմական անուն մը թողուլ ժամակակիս տարեգրութեանց մէջ:

Օրիորդ Զապել Խանճեան ևս համեմատաբար հօգարտանալու իրաւունք ունի ըստ իս թէ իբր հիմնադիր Ազգանուէր Հայոհնէրուն ընկերութեան և թէ իբր գրազէտուհի: Այս ազնիւ և տաղանդաւոր Օրիորդն իր միտքը ուսումի նուիրած է, սիրան ալ ընկերութեան: Ամենևին նմանութիւն չունի այն տեսակ մը թերակիրթ կիներու հետ, որք յաւակնութեան և թեթեւութեան տիպարն են, և որք ճշմարիտ գաղափարի մ'օգտակարութեան վրայ քրքրիջ արձակելու և գունեղ թելուկի (գօրտէլա) մը վրայ հիանալու յաջողակութեամբ միայն կը վառաւորուին: Ամենևին ծայրայեղ գովեստ մը տուած չեմ ըլլար եթէ ըսեմ թէ Օրիորդ Զ. Խանճեան հայրական և գաղղիական գպրութեանց հաւատարիմ և վառվառն

սկրուհիներուն և իր սեռին կրթութեան սպասուհիներուն մին է :

Հաւանական է թէ հոս ուրիշ տաղանդաւոր Հայուհիներ ալ կան , սակայն պիտի չլարենամ խօսիլ անոնց վրայ , նախ՝ վասն զի ստույգ տեղեկութիւններ քաղելու պատեհութիւնը չունեցայ տակաւին , երկրորդ՝ վասն զի խնդիրն երկու ընկերութեանց անդամներուն և ոչ թէ անոնցմէ զուրս մնացող կամ անոնց ընկերակցիլ չուզող Արմենուհիներուն վրայ է :

Սակայն ըսի պահ մ'առաջ թէ Գաբրիէլի Տէկնանց ընկերութեան մի անդամը արդէն , ուրիշ մի անդամն ալ նոր ճանչած ըլլալու պատիւը ունեցած եմ :

Առաջինն է հայրենակից մը , Տիկին Լիւսի Եւապուրօֆ : Այդէն ամենուս յայտնի է թէ Պալասանեան գերդաստանին մի այս գորդը նաև Բերալի Հայ ընկերութեան շուրջ աւելցնող ակիանաց մին եղած է իր ուսումնասիրութեամբը , լեզուաղիտութեամբը , և այն շնորհալի յատկութիւններովն որք բարեկիրթ տիկնոջ մը անկորնչելի օժիտը կը կազմեն :

Միւսն է Տիկին Արրուհի Տիւսար , որ ոչ միայն Գաբրիէլի Տէկնանց ընկերութեան ատենապետն՝ այլ նաև՝ իր գրչովը , խօսքովն ու գործքովը մեր ազգային յառաջըլիմութեան համակիր երևոյթներուն մին հանդիսացած է , և՛ իրը այն՝ հեռարնակ Հայերուն և հետաքրքիր դիտողներուն իրաւունք կը տայ իր անձին , բնաւորութեան և տաղանդին վրայ ընդարձակ գաղափար մը կազմելու :

Իր հետը բազմիցս տեսնուած և խօսակցած ըլլալով կրնայի նախ իր անձին նկարագրիլ ընծայել և

անկէ թելադրուած կարծիքներս յայտնել՝ եթէ Էօժէն Միւլի վրձինը և Գասպար Լավաթ երի գիմնադրութեան հմտութիւնը ունենայի : Ներկի է ինձ կարծել սակայն թէ այս աղնիւ տիկնոջ ճակտին վրայ զգօնութեան , նայուածքին մէջ խելանութեան և ուսող երուն ու շուրթ երուն վրայ նրբամտութեան նշոյլի մը բեկբեկումը նշմարելու համար ոչ վաղուքուչ ուշադրութեան և ոչ ալ Տիկին Փօրթ Սանին սլէս Լավաթ երի գիմնադրութեան երկերը ուսումնասիրելու հարկ կայ :

Տիկին Արրուհի Տիւսարին այս բնածիր յատկութեանց վայլ կը տայ ընտիր զգացումներով շարուած բնաւորութիւն մ'որուն գլխաւոր հանդամանաց վերայ կրնաս գաղափար մ'ունենալ՝ եթէ երեակայես համեստութիւն մ'որ չդեղեկի թաղանդի և արժանաւորութեան առջև անկեղծ խոնարհամտութիւն մը պարգևու և իր սեպհական կատարելութիւնները սքօղելու , իր ակմբանոցը (cercle) կաղնու յարդի կանանց և արանց հետ անընդհատ ծպտուն դէմքով և գոզցես արարական հիւրասիրութեամբ վարուելու բնական յօժարութիւն մ'որուն մէջ ոչ սիւղ անք , ոչ սեխ ևեխ և ոչ ալ պահանջատութիւն կը նշմարուի խօսելու , նա մանաւանդ խօսակցելու (causer) արհեստ , կիրթ , ճաշակ և ընտրութիւն որոնց շնորհիւ իր ունկնդիրներուն և բանակիցներուն համակիր ուշադրութիւնը կը գրաւէ և ժամերուն սահիլը կը մտոցնէ ստայիկեան անտարբերութիւն մ'որով գլխէ մարդկային կեանքի սովորական տնայնութեանց , դասնութեանց , ինչպէս նաև քաղցր պարտանաց փարտա-

ման վրայ բարոյական արևութեամբ ժպտիլ, ծայրաշեղ զգայնութիւն մ'որ ընդունուած փանաքի ծառայութեան մը փոխարէն շնորհապարտ մնալու, և դործուած անիրաւութեան մը դէմ տրամապէս մըմնջելու սովորած է. սրամտութիւն մ'որով իր հոգին կը սնի և արդար վրիժառութեան զգացումով մը կը համակուի ճշմարիտը և գեղեցիկը գիտակցաբար անարգողին դէմ, անշուշտ բարեսիրութեան զգացումէ ներշնչուած ժրութիւն մ'որ անընդհատ կը գործէ երկու հայրենիքի՝ այսինքն իր ընտանիքին և իր ազգին բարօրութեան իւրովսանն նպաստելու համար. ներողամտութեան ոգի մ'որ պակասութիւն կամ յանցանք մը քննելու և վճիռ մ'արձակելու ատեն կը զիմէ օրինազիրներու լուսագոյնին՝ որ է կրօնին սիրտը:

Մեր վեհերոտ գրագէտներէ ոմանց կրնայ փրկաւէտ օրինակ մը ըլլալ Տիկին Ս. Տիւսար իր քաջասրտութեամբն որ հանրօգուտ համուզում մը կազմելէն ետք զայն յայտնելու կը համարձակի առանց վախնալու օրինաւոր քննադատութենէ. իր վստահութեամբն սրով իր մտքին ոյժին կ'ապաւինի և կը յանդգնի անարդու նայուածք մը յառել արանց և կանանց բարձրագոյն շահերը վարադուրող նախապաշարմանց և աւելորդ ազաշտութեանց վրայ, այժմեայ տեսութեամբ ըմբռնուած բարոյականի և բնական արդարասիրութեան սկիզբներու համեմատ ընթացքի դիժ մը կազմել իրեն, նուսատ շղթարթութիւնը և քինարոյր քննաբանութիւնը արհամարհել և հաւատարիմ մնալ իր ընդունած գրօշակին: «Մարդս կը

պարտաւորի անդունել հասարակաց կարծիքը, իսկ կինը կը պարտաւորի հնազանդիլ անոր» կ'ըսէ Տիկին Տը Սթալէ:

Գլորոցաւէր Տիկնանց ազնուամիտ Ատենապետը կրնայ Գերբնի հեղինակուհիին այս կարծիքը բոլորովին չընդունիլ՝ քանի որ ինքն իր պարտուց դերին և իր իրաւանց տիրուհին է, մին անմուսնջ կատարելու և միւսը անահ պաշտպանելու պատրաստ, և քանի որ այս կրկին նպատակին հասնելու միակ և անվրիպելի միջոց կը համարի աշխատիլ, աշխատիլ և շարունակ աշխատիլ: «Աշխատութեամբ միայն կը շինուի ազգ մը» ըսաւ ինձ օր մը, խոստովանելով թէ Միքայօն էր այս օգտաւէտ ճշմարտութեան հեղինակը:

Բայց այս աշխատասիրութեան շնորհիւ Տիկին Ս. Տիւսար կրցած է նախ ինքզինքը շինել, ըսել կ'ուզեմ թէ կրթութեամբ և դաստիարակութեամբ յաջողած է կազմելու իր միտքը՝ որ այժմեայ (modern) յառաջդիմութեան գաղափարներու արժէ մ'է. իր սիրտը՝ որ միայն ընտիր զգացմանց ազրիւր մ'է. իր ձեռները որք պաշնակի մը ստեղծաշարին (clavier) վրայ յաջողակորէն կը թրթրան՝ մերթ հոգեկիր վիշտ մը մեղամայձօրէն արտայայտելու և մերթ սրտաբուղիս ցնձութեանց յայտարար ներդաշնակութիւն մ'արտադրելու և ունկնդիրը զնայլու մով համակելու համար:

Ճշմարտասէր ունկնդիրն այս գաղափարներու առջև իր միտքը անխոփելու, այս զգացմանց առջև իր սիրտը պարկեշտութեամբ համակելու, և այս նուազային գեղգեղանաց առջև համարաբար զնայլե-

լու պէտքը կ'զգայ, յօժարակամ խոստովանելով թէ այս վառվառն և բեղուն խոնցականութեան տիրուհին ինչպէս գրող էր և լեզուազէտի յատկութիւններովը, նոյնպէս և մայրերու լուսադոյնին առարկանութիւններովն իրաւունք ունի պարծելու և ազազակելու :

« Ես ալ հոգի մ'էմ » :

Բերա, 7 յունիս 1881 :



**Ս Մ Ա Կ Ք .**

Կառայ աղմկայի թաւարունն այսօր փողոցին քաբայատակներուն հետնան և զիս անկողնիս մէջ զղրդեցարչալուսոյ ժամանակ քնարեկ աչերս բանալով զ մ գ ո հ ո թ ե տ մ ք շ ի ե յ ի , միամտաբար անէծք կարդացի ու նոնց որ Եւրոպայի ամեն նորաձեւութիւնները կը մուրան և Բերայի փողոցները ճառագայէլս մօտան կը մտնան : Պահ մ'ետք վերջին նամակը անգամ մ'ալ որոճացի , և սկսայ օրուան ժամերս վատնելու եղանակին վրայ խորհիլ :

Պատուհանէն նայեցայ նախ զէպ երկինք , ուր կապարադոյն և բաւական սպանալի ամպ մը մեղմ միկ կը քշուէր՝ չէ թէ կէսօրուան ջերմութիւնը ամաքելու այլ Իքսիօնի մը հետ համբոյրներ փոխանակելու տրամադրութեամբ , ապա նայուածքս անհողա-

պէս ուզուեցաւ զէպ ի Պատիւր , ուր ծովին կապուեալեղ մակերևոյթը , նաւերը , Գրղ-Պուլիսին և ասիական ափերը՝ Մօսա-Պուրնուէն մինչև Ռուկիւտարի հրաւանդանն լայնածաւալ մառախուղնէրու մէջ ընկղմեր և աներևոյթ եղեր էին բոլորովին :

Արևն իր բոյսով կ'ողողէր սենեակս երբ ճանրայ ելայ , և շուտով կամուրջին քով գտայ ինքզինքս , այլ ոչ չողեհաւը , որ արդէն մեկնած էր , և՛ չկրնայով դապել անհամբերութիւնս՝ համարձակութեամբ երկթի նաւակ մը մտայ և վատահեցոյ թերևս կազմուելու և ուսելու պատրաստ կոհակներու որոնց նենգասիրական մտանութեան կիներ միայն կրնայ հաւասարիլ , եթէ մաթեմատիգական ճշմարտութիւն մը կրնայ սեպուիլ Շէյքսպիրին կարծիքը . . . : Ինչո՞ւ չէ . միթէ Աստուծով ետք աշխարհիս երկրորդ արաբրիչը չէ՞ բրիտանական այս անմահ հանձարը . . . : Մտցեր էի թէ՛ ջուրերուն վերեւը՝ մթնոլորտին վրայ ուրիշ անբաւ մառնութիւն մը ստացած ուած էր արդէն :

Աներկիւղ յառաջեցինք , և պահ մ'ետք դիտեցի որ միգապատ մթնոլորտի մը մէջ թաղուած էի . նաւակին խելքէն անդին ոչինչ կ'ընդհամարէի , և նաւա վարն ամպած բար ուրուական մը կ'երևէր ինձ : Այս մարդը չուարումս և անհանգստութեանս նշանները անանկելով ուղեց հանդարտել զիս և հաստատել թէ Ալբուր-Պուրնուի առջևները կը գտնուինք և թէ մտուշը շուտով պիտի փարատի : Վատութիւն սեպեցի նա հանջելը , և հաւանեցայ կուրօրէն զէպ ստաջ նաւելու :

Անթափանց սպիտակութիւն մ'ամեն բան կը վառագուրէր ի դուր դէպ ի վեր կը նայէի սպայծառ երկնից գէթ մի կէտը տեսնելու յոյսով: Աըլէի միայն Վասպորի գիւղերն երթեւեկող շողեհաւերու անիւններէն ջուրերու յուզուիլը ու փրփրիլը, նաև Մարմարայէն եկող շողեհաւերուն զանգակի ձայները որք յուզարկաւորութեան հանդիսի մը սգալի հրաւէրը կարգացող զանգակի հնչիւններուն չափ աղետալի և մահարոյր կը թուէին ինձ:

Անգամ մ'ալ նայուածքս յառեցի նաւավարին վրայ, բայց այնպիսի հակակրօթեամբ որուն գուցէ Գարօն իսկ սովորած չէր երբ աստուածներու վրէժ-խնդրութեան նահատակուած գեհնապարտները Աքերօնի ջուրերուն վրայէն կ'անցունէր:

Երևակայեցի թէ մեր դիւրարեկ նաւակն արդէն շողեհաւէ մը զարնուելով կ'ընկղմէր և զիս իբր կեր կը նուիրէր թիւնոսներու (thon), թիւնիկներու (scombres) կամ շանաձուկերու (requin) և ասոնց նման ծովային ուրիշ վագրերու որք կը վխտան Մարմարայի մէջ: Ուստի բոլոր բարոյական արիութիւնս ժողվեցի լուզորդի և սոզորդի (plongeur) կարողութիւններս պատրաստելու համար Վասպորի յորձանաց դէմ որք Մալթրօէմի մ'անդթութեամբ կը վարուին եթէ ոչ նաւերու և նաւակներու, գէթ մարդկային դիակներու հետ, և որոնց պտոյտներն անըմուռնի դիտակցութեամբ մը թերևս նոյն պահուն հեղնալի քրքիջ մը կ'արձակէին տղայական յանձնապատասնութեանս գէմ:

Անասելի անձկութեամբ լի ժամէ մ'ետք ցահարն

սկսաւ ուրուաղբիլ շուարուն նայուածքիս առջև: Պրծայ, ազաղակեցի մտովին: Այս աղաղակն ինձ համար ունեցած փրկաւէտ նշանակութեամբը թերևս կը հաւասարէր Քրիստոթ Արմեդոսին «երկիր, երկիր» գոչող ուղեկիցներու ձայնին՝ երբ ասոնք աւաջին անգամ Պահամայի արշիպեղապօսը նշմարեցին:

Պահ մ'ևս թիավարելէն ետք հասանք չէ թէ Գատը-Գիւղի նաւամատոցն այլ Քաղկեդոնի հրուանգանը, որ այսօր Մօտա-Պունու կ'անուանի և ուր Մարմարան կը նեղնայ Վասպորի նեղուցի կազմելու համար:

Մօտա-Պունուն Ֆէնէր-Պունուի հանդիպակայ հրուանդանին հետ կը կազմէ գողցես բնաշէն նաւահանգիստ մ'որ հռոմայեցի գանձապետ Էօթրօրին շինածն է: Միհրդատ երկու հազար տարի առաջ՝ Պիթինիայի բնակիչները հուրի և սուրի տալէն ետք երբ Քաղկեդոնին վրայ արշաւեց՝ Աւրելիոս Գօթապետին գէմ պատերազմելու համար, իր նաւատորմովը այս նաւահանգստին առջև բերաւ, թշնամիին նաւերուն չորսը այրեց, վաթսունը բռնեց և յաղթութիւնը տարաւ:

Պչրասիրական ձաշակի մը համեմատ շինուած մարանողներուն նայելէն ետք վերջին ակնարկ մ'ալ նետեցի Ֆէնէր-Պունուի փարոսին, որուն տեղն ատենօք ծովային Աստղիան մեհեան մը կար, երբ՝ չգրտեմ ինչպէս՝ միտքս եկաւ թէ կենացդ վիպային ժամանակաց վերաբերող տեսարանի մ'առջև կը գտնուիմ:

Գիշեր մը մինչդեռ կայսեր գահակալութեան տարեկարծին ստիւ ըլիւր փամփուշտներու և այլ հրա-

յին խաղերու լըյսերն օղին մէջ սուբալով ելել է՛ կ'առնէին և լուսնոյ տմոյն ճառագայթներուն հետ կը մրցէին, տենդահար և սիրահարն Նելլալն այս հրուանդանէն նաւակ մը մտաւ Ծօքսին հետ, և՛ տրտմապէս անոյ՛ էրազներու և փախուսիկ երանութեան մը տեսիլներու ասպաւորութեան ներքև ճգմուած՝ Վոսիւրի ասիերը քերեց մինչև Պէպէք՝ որպէս զի գտնէ ծովագոյն քօզը կամ, լաւ ևս է բսել, Վիլին որ՝ վճուղներու թագուհի՝ Թիթանիտային պէս նաւակին հետ ջուրերուն վրայէն սահելով մերթ կ'երևէր և մերթ աներևոյթ կ'ըլլար անոր սիրարեկ աջաց:

Անշուշտ Վօտա-Պուրնուի ամառատանց մէկին պատուհանին սուղև նստած թոյլ տուիր սիրալլաութեանկայութեանց արտադրել այն զեղահիւս նամակը, որ ըստ իս Անգլիական Նամականիկո գոհարներուն ընտրելապոյնն է\*, և սրուն մէն մի տողին մէջ վառվառուն մարի մը, սիրակէզ սրտի մը, երանութեան ծարաւի հողոց մ'աւիւնները, զգայութիւններն և օրհներգութիւնները հրային տառերով արձանագրուած են: Ո՛րք են երիտասարդութեան և բանաստեղծութեան, սիրոյ և ծագլիի, զգացման և սրտի անընդհատ բախման այն օրերը: Անյարիր դրօրեցան անտէր ալ անցելոյն յատակը: Ինչո՞ւ Վամարդիւնին պէս չաղերսեցիր Յանանակը որ զաղբի քեզի համար թռեւէ և թշուառներու համար միայն սահի եթէ՞ ինչպէս կարծողներ կան՝ գուն էիր իսկ Նելլան, և

\* Տե՛ս Անգլիական Նամականիկո կամ Հայոս մը ճակատագրը, Էրես 240. հեղինակ Մ. Մամուրեան:

թէ Քաղիկոյնին յաւերժահարս Արմենուհիներուն մին էր Վիլին, եթէ երջանիկ էիր զէթ հետուստ և անոր լոկ յիշատակումն ու լուսաղիծ պատկերումն, և եթէ տեսլական երանութիւնն հողոցդ կը բաւէր իբր անունդ: Ունքդ մի պատեր քեզի այն ատենուան Քաղիկոյնի սիրահար բանաստեղծներուն մին հաւմարելուս: Անշուշտ փիլիսոփայի մ'անոց պաւթեամբն ու բնագանցական գաղափարներով: Վիլին հրապոյրներուն զէմ դիմուած չէիր այն ժամանակ, և ոչ ալ կրնայիր նախահայրք սեպել Քսենոգրապը, որ Քաղիկոյնին, պոսիւրն Վիլիներու երկրին մի գաւակն ըլլալով հանդերձ Փրինէլի սիրազրդիւ հրապոյրներուն և Աղէքսանդրի պարզ և ներուն կրցաւ զլմայրել՝ առաքինութեամբ, անշահարնոցութեամբ և ժուժկալութեամբն երևելի հանդիսանալու համար . . . : Դուն անոր պէս չէ թէ երկինց այլ երկրի դաւակնեզար: Ձքնաղ Վիլի մ'ունեցար: Ո՛ր է ան: Վետթեան անպատու կրցաի մը պէս սե հողին տակ փառեցնու և ցեցակեր ջնջուեցնու մինչև հիմա . և եթէ ընդ հակառակն մտցաւ քեզի և ուրիշի մը յանձնեց իր սիրաը և բազպը, զեւ կենդանի է, և ժամանակը, ամուսնական կենաց տհաճութիւնները, քաղցր պատրանաց փարատումն ինչ աւերու մներ ըրած են ցարդ իր զէմբին վրայ: Ո՛ր է նաև քու այն ատենուան սիրադ, և եթէ հիմակ գողարիկ և սիրաւէտ զգացմանց դերեզման մը չէ այն, կրնոյ նոր Վիլիէ մը ներշնչուել, բունիկը և Նամականիկո մէջ նկարուած սիրաբոյր զգացմանց և գաղափարաց հիւսը ընծայել:

Եթովոյրիան ըստ ամսամեաց հասակին մէջ խոսու

տովանեցաւ թէ շէր կրնար վերարտադրել այն սիրաշունչ և հրակէզ տողերը զոր իր դիւցազանց մին, Բընէ, Ամերիկայի բարձրաբերձ ծառանտառներու խորերէն և անբառ անյուսուածեան մը վիճէն իր սիրուհիին՝ Սելիւթալին գրեց՝ երբ քսան տարեկան էր ինք: Ինչ որ կարելի չէր Լէ Նուէդի հեղինակին, մի-թէ հնարին է Անգլեական Նաճականքն գրողին: Չգիտեմ: Կան ինչ ինչ մարդկային սիրտեր, որք սպինքսի մը մշտնջենական բնակարաններն են և թերևս իշրաւուներ ունիմ կարծելու թէ քուկդ ալ անոնց կարգէն է . . . ճիշդ այն հոյակապ Արմենուհիին սրտին պէս որ Պայրընի Ծովանէին (le corsaire) յիշատակովն երբեմն թուճա կ'էլնէ իր թագուն զգայմանց թուճար խզելով և սիրաբեկ կոյսի մը պէս կարմրելով . . . :

Թափառական երեսակայութեան քննահամար իւրեններովն այսպէս ժամի մը չափ վառանելէն ետք ճանբայ ելայ, կէս հազարամեթրի չափ քայլեցի և հասայ Գառը-Գիւզ կամ Քաղկեդոն, որ իր անուներ այսօր հեղատահ ջուրերով քանի մը պարտէզ ջրեղէն ետք ծովը թափող և Քաղկեդոն կամ Գառը-Քէօյ-Սուլու ըսուող դեռակէն առած է:

Այդ դռնուէի արդ հողի մը վրայ ուր հին դարերու, հեթանոսութեան հողեվարքի և քրիստոնէութեան ծագման ժամանակներուն նուիրական յիշատակները կ'արթննան մտածողին յիշողութեան մէջ, և մեղամաղձային անհողութեամբ մը դէպ ի կոտանողնուսօլիս կը նայելի առանց տեսնելու որ և է ինչ: Այդ խոստովանիմ թէ կոյր ըլլալու անդուսող փափաք

ունեցեր եմ կենացս մէջ, բայց կ'ուզելի Հովերոսի կամ Միլլոնին պէս անմահ կոյր մ'ըլլալ և չէ թէ մնայլապատ հորիզոնէ մը կուրցած թշուառ մահկանացու մը: Այս փառամուրթեանս պատիժը հիստ կը կրէի գէթ ժամուան մը համար: Բիւզանդիոն տալիս աներեւոյթ կը մնար ինձ մասախուզներու վարադայրի մ'ետև:

Երբ Բիւզանդիոնի հիմնադիրները Քաղկեդոն հասան և Ապոլոնին տաճարին մէջ պատգամին խորհուրդ հարցուցին նոր քաղաք մը շինելու համար, « Կոյրերու քաղաքին առջև » պատասխանեց ան: Պատգամն իբրև ունի իր երգիծարանութեան անթարկելու Մեկարիացի Յոյն գաղթականները, որք ՉճՅՅ տարի առաջ երբ Քաղկեդոնի հիմնադրութեան ձեռնարկեցին, չտեսան Ոսկեղջիւրի հրաշտի գիրքը:

Միթէ այն ատեն ևս՝ այսօրուան պէս՝ Ոսկեղջիւր և իր ափերն ու բլուրներն բնկղմեր էին մնայներու ծովի մը մէջ: Միթէ Մեկարիացիք ևս կուրցեր էին ինձի պէս: Չգիտեմ: Պատմիչները սովորութիւն ունին ամեն բան գրելու, և սակայն Քիլիկական կամ բնկերական օրինաց տեսութեան կէտով կարեորութիւն ունեցող իրողութիւնները մտնալու: Ես չեմ համարձակիր Արքիտաի ուղեկիցներուն գէժ սցալխի վճիռ մ'արձակելու՝ քանի որ անձանօթ են ինձ պատմական գէպ մը, իրողութիւն մ'արտադրող սարազաներ և պատճառներ:

Յիլիկական օրէնքն աշխարհիս պատահարներուն մէջ սակալ խորհրդաւոր մասնակցութիւն մը կ'ունենայ: Հոս բնկերային աշխարհ մը կը կործանի, հո՞՞

նւրիչ մը կը կանգնի, և մարդուս արմանքը զարմանա-  
 քը գրաւող այս ահագին գէպքը զերասանական յա-  
 ջողակութեան մը, անհատական նախաձեռնութեան  
 (initiative) մը, նիւթական և մտական ոյժերու զինա-  
 կցութեան մը, կարգէ դուրս առաքինութեան կամ  
 հանճարի մը վերագրել և հիանալը բաւ կը համա-  
 բինք: Օրինակ. Գորսիքացի ռազմագէտ բռնաւոր մը  
 Եգիպտոս կ'արշաւէ, Փարաւոններու տիրանեան գե-  
 րեզմաններուն վրայէն դարերու և հին աշխարհի դէմ  
 սպառամբներ կ'արձակէ, և ապա Թրանսա վերադառ-  
 նալով Եւրոպան կը նմանեցունէ սպանդարանի մ'ուր  
 քսաներեք տարուան մէջ տասնեօթն միլիոնի չափ  
 մարդիկ կը մեռնին և երկիրիոններ կը վասնուին ի  
 փառս Բիթիին և Նարոլէոնին: Պատճառ: Վասն զի,  
 կ'ըսէ սպամիրը, Թրաֆալկարի նաւամարտին յաղ-  
 թողը չկրցաւ դանել և բռնել Պոնաբարդը Եգիպ-  
 տոս տանող նաւատորմիդը: Ան, բայց արդեօք բու-  
 ըրողին աններելի յաւակնութիւն մ'ըրած կ'ըլլանք՝  
 եթէ ըսնք թէ աշխարհիս խաղաղութեան դէմ Նաւ-  
 բոլէոնին հետ ուրիշ անգիտակից դաւադիր մ'ալ կար  
 այսինքն այն քամին որ Թրանսայի նաւերը ժուանի  
 ծովածոցին մէջ օրերով անշարժ ութեան դատապար-  
 տեց և Նէլսըն ծովակալին խնդարկութիւնները զե-  
 րեկեց: Այս քամիին շունչին մէջ դերերկրային կամք  
 մը, խորհրդաւոր գործակցութիւն մը, մեղսակցու-  
 թիւն մը նշմարելը միթէ կրնայ բոլորովին բանա-  
 ստեղծական կամ միսթիզական երեակկայութեան մը  
 վերագրուիլ: Պատմական և Ֆիզիզական օրինաց  
 փիլիսոփայութեան խորերը չթափանցած ըլլալս խոս-

նոթանելն և այս շեղումովս նոր Հերտերներու և  
 Պըրըներու մտածելու առիթ մը տալն ետք՝ կը շա-  
 բունակեմ համեստ ուղիորի սրաշուն:

Այլուր գեղերելէ առաջ ուղեցի տեսնել վազմի  
 բարեկամ մը: Գուռը բացող պատաւ սպասուհւոյ մը  
 տղեղագէտ խորումստ և կերբերոսաշան գէմը մար-  
 դասիրական զգացման նման հով մ'տուա՝ անունս  
 և այցելութեանս նկատմամբ բացատրութիւն մը  
 տրուելն ետք, և իսկոյն ինքզինքս դուայ . . . ին աւ-  
 ջև: Մտերմական ուժ գնութեամբ մ'իր ձեռքը թո-  
 թուեցի և բարեկամութեան փոխադարձ զգացումէ  
 ներշնչուած քանի մը սիրալիլ խօսք փոխանակեցինք,  
 և յետոյ սկսանք իմ և իր անցելոյն վրայ խօսակցիլ  
 և հաստատել թէ ժամանակն ու բացակայութիւնը  
 չկրցեր էին մեր բարեկամութեան համը խախտել:

Մինչդեռ մէն մի բառ կարճես յաակակցէս կըռե-  
 լէն ետք արտաբերելու ձևով կը խօսէր ան, ևս ու-  
 շաղրութեամբ մտիկ կ'ընէի ու միանգամայն խուզ-  
 արկու նայուածքով իր կերպարանը կը զիտէի: Բաւ-  
 ական տարիներ անցեր էին այն օրէն ի վեր ուր այս  
 խելացի անձն իզմէն բաժնուած և մեկնած էր Կոս-  
 տանդնուպոլիսը իր տաղանդին և բնածիր գործու-  
 նէութեան աստարեղ մ'ընելու համար: Ժամանակին  
 և կենսամասը զրազումներէ հետեող հողնութիւնը  
 չկրցեր էին աւերել անոր զիմական գիծերը, թէև  
 հեռաքնին նայուած մը թերևս կարենար նշմարել  
 անոց վրայ արդիւնաւոր կերպիւ վարուած կեանքի  
 մը ներգործութիւնը: Այս աղնիւ անձն իր զգօնու-  
 թեամբը, կենաց յարակից գծաւարութեանց մէջ

վնասելը վատութիւն սեպող արիութեամբը, իրու-  
ագ խտական և լեզուաղ խտական հմտութիւներովը կը  
վիայլի :

Այսօր Օսմանեան տէրութեան հաւատարիմ պաշ-  
տօնակալաց մին է ան : Գատաուորի պաշտօն կը վա-  
րէ, և կրնամ ըսել թէ այս ամբողջ յատկապէս ընտ-  
րած է որպէս զի՛ ինչպէս կ'ըսէ Մովսէ՛ր՝ հոն ազարա-  
լեան ունեւայ պարտաակիր ծարր ծնալս, և չէ թէ ճէ՛ֆ-  
րիաներու պէս իր խիզճը և պատիւը ծախելու :

Այս ազատութեան շնորհիւ իրաւունք պիտի ու-  
նենայ նա մեռնելու ժամանակ իր ձեռքը ցոյց տալու  
կատկածաւոր քննող ատններու, և ըսելու .

Rien dedans, rien dessus.

Ոչ ոսկէն աղաք, ոչ արեան քէ՛ծը :

Ասկէ կը հետեի թէ պաշտօնական շրջաններու  
մէջնորդան և իշխանութեան հրապոյրներն բարեկա-  
միս մտական և բարոյական յատկութեանց նկատ-  
մամբ չունեցած են և անչուշտ պիտի չունենան այն  
ազնետալի ազդումը, որուն կենթարկուին Հայազգի  
էֆէնդիէրէ ոմանը՝ մանսըլմէէ\* (mancelenier) շուքին  
ներքեւ անդ խտապէս նստող Անթիլյեան խառնածին-  
ներուն պէս . . . :

Իերա, 10 յունիս 1831 :

\* Անթիլյեան կողմերուն վեջ բռնակը լեռնաւոր ծուր-  
ծարան ներքեւ նապոյին առողջութեանն անոք աղբրումն կը  
խանգարուի :

Ն Ա Մ Ա Կ Ժ .

Նախորդ ուղեգրութեանս մէջ պատմուած այցե-  
լութենէս ետք հետաքրքրութիւն ունեցայ Քաղկե-  
դոնի շրջակաները փոքր ինչ անանելու և անոնց բնա-  
կան զրկց և գեղեցիկութեանց վրայ դէ՛թ հարեանցի  
զաղափար մը ստանալու :

Յունիսէն մինչև յուլիսի վերջն այս քաղաքին մէջ  
կարծես արեւազարծային կլիմաներու յատուկ տաք  
կայ, և ըստ իս կոյրերուն Գաղաթն ամառուան մէջ այս  
անպատեհութիւնը ունի միայն : Այն ժամի չափ ման  
գալով սկսայ տաքնալ և քրտնիլ : Զգացի թէ ծարաւի  
էի և՛ աղբիւր մը գտնելու յոյսով՝ քայլերս շտապե-  
ցի, յաջ և յահեակ խուզարկու նայուած մը նետե-  
լով : Ապարդիւն մնաց ջանքս, և հարկադրուեցայ ե-  
րազելու այն անպատու՛մ գոհունակութիւնը, որով  
Վ. Հիւկոյի համբաւաւոր թխապարան օր մ'ամբողջ  
հետիտան և ծարաւարեկ թախաւելէն ետք աղբիւ-  
րի մը գիմած էր :

Թող պահ մ'եւ շարունակուէր տանջանքս, և ա-  
հա՛ ժան Վալժանին արժանի անյազութեամբ երա-  
նութեանցս սաւջինը պիտի սեպէի չորարեկ կոկորդս  
զովացնելու հաճոյքը՝ եթէ ստիպուէի գիմելու Զա-  
րեթայի աղբիւրին անդամ՝ որ Քաղկեդոնի հնախօ-  
սական և բնական այլ աներևոյթ հետաքրքրութեանց  
մին է, և որ՝ պատմիչներէ ոմանց և Շարլը Թեքսիէի  
կարծեսց համեմատ՝ պզտի կոկորդիլոսներ կը սնէր  
իր ջուրերով :

Բարերախտարար կառք մը տեսայ որ դէպ ի ծով-  
եզերք կը վերադառնար, և որ ակնարկի մը վրայ մօ-  
տեցաւ ինձ :

Շուտով Գառը—Գիւզի նաւամտայցը հասայ,  
որճարանի մը մէջ ծարաւս յագեցուցի և ամբողջ մը  
վրայ տեղաւորուեցայ՝ փոքր ինչ հանգչելու, ապա  
այլուր ժուռ դալու և մինչև Նւսիլուտար երթալու  
դիտաւորութեամբ :

Այլլակի ճարփոշն ի բերան մինչդեռ Վասիտրի եր-  
կինքը վարադուրող մառախուղներուն կը նայէի, որք  
դանդաղ քասիի մը շունչէն կ'սկսէին յամրաբար աւ-  
լուիլ և հետզհետէ անհետիլ, ձեռան մ'ուսիս վրայ  
բարեկամարար հանդէիլը զգացի : Վեր ըրի զլուստ  
և տեսայ ծանօթ դէմք մ'որ ժպտուն և սիրուն ե-  
րեւելու պահանջոտութիւնը ունէր, և որուն վրայ  
սակայն յոգնութեան, վհատութեան և թերեւ թաւ-  
գուն թշուառութեան փախուսիկ հով մը նշմարել  
կարժեցի :

Պարոն Գ... միջահասակ, փոքր ինչ անձեայ և  
քումայթ երիտասարդ մ'է : Մազերուն վաղահաս ա-  
լեւորութիւնը, այտերուն զողաւորութիւնը, աչացը  
ներքե կազմուած կիսարուր և սեւանման զիծերը,  
չալիկին և օձիքին աղտը, կիսամաշ և կեղտոտ թիկ-  
նոցի մ'երեւուն թեւերն ու Ստամբուլի փողոցներուն  
ցեխի ցայտերը անդամող մուճակները կը հաստա-  
տէին թէ զիշերները ճրագին առջև կը տքնէր ան,  
և ցորեկներն ալ տակաւին կը վարէր «ֆորթի» և ապա-  
շտորհ պաշտօն մ'որ է վարժապետութեան, այսինքն  
չայ մանկուտոյն միտքը և սիրտը կազմելու պաշտօնը :

Ճակատին վրայ կը բեկրեկէր հասուն իմացակա-  
նութեան նշույլ մը, իսկ տչքէն երբեմնակի կը ժայթ-  
քէին սրտմտութեամբ համակուած հողւոյ մը կայծերն  
ընկերային ճակատապրին, մարդ կային անտարբերու-  
թեան և բախտին ճայրայեղութեանց դէմ :

Իր միտքը բաւական լուստ որ դազափարներով  
ընցուն, սիրան ինչ ինչ բնախր զգացու մնելով, ինչ-  
պէս նաև անտեղի փառասիրութեամբ մը զեղուն,  
իսկ ստամբարը մերթ ընդ մերթ դատարկ մնալու սո-  
վորած կ'երեւէր : Ընչպէս ըսի արդէն, բախին լաւա-  
դոյն նշանակութեամբը վարժապետ և դաստիարակ  
մ'էր ան : Ինչ զժրպայտութիւն . . . :

Պարոն Գ... միշտ կը դանդաղ երկրի և երկնից,  
մարդու և Աստուծոյ, էլին և չէին դէմ . . . : Այս ան-  
ձին սովորութեանց մին է սակայ գեախնը նայելով  
խորունկ մտմտութի երթալ, և հոն արդարութեան  
ստուեր մը չտեսնելով տրտմապէս ուշարիլ, անե-  
րեւելի գորութեանէ մը ցնցուիլ, մեղամաղձօրէն դէպ  
ի վեր նայիլ, և մտախն ու բարոյական աշխարհի  
արարչազորութեան մասնակցայի մը դիտակցու-  
թեամբ միտքարուիլ . . . : Գիտէ ան թէ մարդկա-  
յին միտքն ու սիրտը մուրազազազազազազ և վատ  
զգացմանց բեռին ներքե կը տաղնապին, և թէ իրը  
վարժապետ և դաստիարակ ինքն է այն բառնալին  
որ կրնայ այս բեռը վերցնել, որպէս զի հնարին ըլ-  
լայ մարդուս աստիճանարար կանդնիլ, թե ու թիւ  
առնուլ և յառաջդիմութեան վերին անձրկտաններուն  
մէջ ճայրել :

Ուստի կը փառաւորուի վարժապետական պաշ-

տօնին վեհօթեամբը: Իրաւունք ունի: Կը պանծայ նաև իր դրաղիտական արժանիքով: Գլխէ նա թէ ստամոքսին թեթեւութեան պատճառաւ երբեմնակի կը հոտի իր շունչն որ սակայն նախապաշարմանց և մտային ամեն տեսակ հիւանդութեանց վրայ կարող է փշելու՝ ամառ գիշերները միմեջորտին ապականութիւնը աւելոյ հիւսիսային հովին պէս:

Պարոն Գ... նուիրական յանդգնութիւն մ'եւս ունի, որ է արհամարհոտ նայուածքի մը ներքև ճզմել Մեթերնիկի բեկորները, լոկ իրենց սսկոյն հրապոյրովն արբշիտ միամիտները և զբաղիտական կամ խմբագրական անտեղի արժանապատուութեամբ փքացող մօրուքաւոր կամ անմօրուս զէվէկները: Ինչո՞ւ համար. — Վասն զի ասոնք Պիզմարքի, Բօշիլտի, Հիւկոյի հովեր կ'աւնուն, ճշմարիտ փարժապետի մը տաղանգը, կենսաբոյր մտքի մը փրկաւէտ բեզմաւորութիւնը կը յանդգնին բազղատելու ողորմելի ամլութեան մը հետ որ կ'անուանի շուկայական փորձառութիւն և զոր գուցէ ապուշն իսկ կրնայ օրուան մը մէջ ստանալ տղայական խարեքայութեանց և հրապարակի սատանութեանց նկատմամբ:

Պարոն Գ... փարժապետութեան պաշտօնին հետ զժբայտութեան ուրիշ պատճառ մ'ալ ունէր:

Օր մ'իւր կուրծքին տակ սրտի նման բան մը կրէլը, ասոր ալ երբեմնակի անօթեհնալը նշմարած և յագուրդ գանելու հարկը զգացած էր: Ուստի գէթ այս առթիւ բախտին յաղթելու յոյսով ամուսնական վիճակահանութեան մը մասնակցած և փոխանակ քին (quine) մը շահելու զբոյի մը հանդիպած էր: «Ո՞վ

կրնայ յաղթել բախտին»\* կ'ըսէ հառմայեցի բանասէիւսը: Պարոն Գ... իր ազատութիւնը և անկախութիւնը տուժեղէն ետք ըմբանած էր այս հարցման դառն ճշմարտութիւնը . . . :

Այս կանամբի զժբաղիւն մտական կարողութեանց սուղինն է սուր յիշողութիւն, և իր բնաւորութեան արող հանգամանաց մին է անզուսպ հետաքրքրութիւն: Արկիւս յատկութիւններ, որոնց շնորհիւ իր միտքն ազգային և զբական զիպաց, կարևոր կամ անպէտ իրողութեանց յիշարան մ'է:

Կրնաս այս յիշարանին զիմել անկասկած՝ եթէ հետաքրքիր ես զիտնալու թէ Տօզթոր Սերփիշէն իր հանճարեղ զէմքը ինչպէս կը ծուէր երբ՝ Արեսփոխանական ժողովին իրր ատենապետ՝ ազգային բեմէն սահմանադրական ճշմարտութիւններ կ'արձակէր, սուր նայուածքը հեղնապէս շեշտելով և ուշադրութիւնը դեռ աներևոյթ ընդ զիմաղիւրներու կասկածելի լուութեան աւելով: Թէ Օտեան էթիւտին քանի՞ անգամ թաղիկնակով — զողունի՞ էր և սր գեղանիլինն էր այս արդեօք — իր ճակտին քրտինքը կը սրբէր երբ՝ տղազրտկան ազատ օրէնք մը շինելու առթիւ իր սկզբունքը Տէրութեան սկզբանց հետ կը համեմատէր և երկու տեսակ ճշմարտութեանց միջև խորունկ վիճ մը կը նշմարէր: Թէ Բարունակ պէյն որսն թեւադրութեամբ պատրիարքական տեղապահին քով ինքնիշխանարար կը գահէր և թրթրակ լեզուներէ գանիլ կ'զգար: Թէ երբ այս հրամանապետութեան

\* Quis vincere fatum!

ժամանակ հաղարաւոր սահմանադրականներ Պատ-  
րիարքարան խուժեցին և փակեցին, Չըրաճեան Սար-  
գիսն որ բազմեցին տակէն մուկի ծակ մը մտաւ ա-  
հարեկ, և որոնն գրպանին մէջ մնացին ազգային  
պաշտօնատան բանալիները: Թէ Նէվրուզեան Յովա-  
կիմ — ուր են այս աշխոյժ և կրակոտ Հայուն հե-  
տևորդները — հոգ եւոյս Թագ թագեան Պօղոս սրբա-  
զանը պատրիարքական դահէն վար առնելու համար  
առաջին անգամ որոնն առնը դազանի ժողով գո-  
մարեց իր համամիտներովն ու դաւադիրներով, և որ  
ամենզուկ ու հանճարեղ զբաղէտին զրեղ տուաւ այն  
ամբաստանութեան զիրը, զոր Դիոփոզ մը ստորագրեց:  
Թէ որոնն էր Ա. Փանոսեանին քունքը զզրգող այն  
ամիրայական ձեռքն որ օրն երեք անգամ մարբուե-  
լու պէտք ունէր: Թէ 1868ի մայիս ամիսուան մէջ  
կատարուած տարեդարձի հանդիսին առաջին կեց-  
ցէն որ բերնէն արձակուեցաւ: Թէ Սեփան փաշան  
ինչո՞ւ ժածանակին հետ կը քծնէր և ազգային պատ-  
գամատան բեմին վրայ պէրասէր կեող մը սէս կը  
կտրուէր: Թէ որ երեսփոխանը կը մրափէր և որը  
կը յօրանջէր՝ երբ Ռուսիեանն ազգային հանդանա-  
կութեան մասին իր շինած տեղեկագիրը կը կարգար:  
Թէ Չամուրճեան պատուելին Երևակին որ թիւին մէջ  
և ինչ առթիւ անկրօնութեանս վրայ հրաւիրեց Կրօ-  
նական ժողովին ուշադրութիւնը, խղճովին սարսու-  
լով և երեսը խաչակնքելով՝ երբ լսեց թէ Քրիստո-  
սին անքառ արջալուսոյ անունը տուեր և քրիստոնէու-  
թիւնը բարոյականութեան հիմ չճանչէր էի Ծաղկին  
մէջ: Թէ որ պատանուհին էր այն հրեշտակն որ՝ Մ.

Պէշիքի աշխանի մի սիրերդին նայելով՝ Այլ մտազըյի  
դիւթական կուշտրուն վրայ նազելարար կը թեա-  
ծէր Պըքիիէմի մ'արժանի հրապոյրներուր . . . : Թէ  
. . . թէ . . .

Պարոն Գ. . . ոչ միայն վարժ աղետ, այլ նաև մի-  
ջակ զբաղէտ մ'է: Ասկէ կրնամ գուշակել թէ Քաղ-  
կեղ սնացի մ'է ան: Եւ իրօք պատմիչ մը կը կարծէ  
թէ Քաղկեղ սնի բնակիչներն երբէք չկրցած են նշա-  
նաւոր հանդիսանալ զբաղանու թեան մէջ: Ուսկէ  
ժողով մտած է այս աննպաստ կարծիքն և որբան  
ճանարտանուն է: Այ իսեմ . . . : Բայց անոնք այս  
դժուարամարս թշնամանաց պէմ կրնան միթիթա-  
րուիլ, սիդալ իսկ, երբ խոստովանիմ թէ Քաղկե-  
ղ սնացիք եթէ ոչ զբաղան պէթ ձկնորսական արհես-  
տին մէջ երևելի հանդիսացեր էին — մեզք որ այն  
ձկնորսներու հարազատ թուանց և ոչ մէկին հան-  
դիպեցայ տակուին՝ լարիս կարթը ազէկ կապել և  
ծայրի խոյժը այս ծովերու վարպետ ձուկերուն ձրի-  
արար չկրցնել ուսնելու համար — նա մանաւանդ  
չառ ճարպիկ էին ուսկան շինելու և լարելու թիւ-  
նիկներու համար: Այս համեղ ձուկերը Վոսփորի մէջ  
կը վրտան, ինչ ինչ եղանակներու մէջ անկից անց-  
նելով Աւ ծովը կ'երթան, ուր զուգուէին եւք կը  
վերադառնան, Միջերկրական ծովը կը մտնեն և երկ-  
րազուշտիս բարբառքը իրենց ուղեորութիւնը կը շա-  
րունակեն:

Պ. Գ. . . արցէն անթոս մ'ասած և զլանիկ մը  
վաւած էր:  
Որպիսութեանս վերաբերող քանի մը հարցումներ-

բէ՛ կտք պահ մ'ինձ նայեցաւ անմուռնչ, և սպա ը-

ԱՅՍԱԼ .

— Լրագիրներէն իմացայ Կ. Պօլիս եկած ըլլալդ:

— Լրագրաց մէջ անուանս յիշուիր աւելի խմբա-  
դրապետաց ներողամտութեան և համակիր զգաց-  
մանց կը վերադրեմ՝ քան թէ անձնական արժանեացս:  
Շնորհակալ եմ՝ այն բարեկամներէ կամ ծանօթներէ  
որք իմ վրայ խօսելու արիւթիւնը ունեցան: Իրօք  
արիւթիւն մ'է դժգոհութիւն պատճառելն այն տե-  
սակ մը մեծատանց, որք կը կարծեն թէ Հայ թեր-  
թի մը պարտքն է միայն իրենց խլրտումներուն և  
փափառքներուն փողարն ըլլալ . . . :

— Ազատութեան սիրահարի մը զարտեան լուրն  
աւելի կարեւորութիւն ունի յառաջդ խնութեան այժ-  
մեայ գործաւորաց քով քան թէ ոսկեբարձ միամիտ-  
ներու աղմկայի բարեդործութիւնը կամ ապարդիւն  
փառասիրութիւնը . . . :

Չուզելով ծանրանալ նիւթի մը վրայ՝ որ անձնա-  
կանութեանս կը վերաբերէր՝ լսեցի:

Պարոն Գ . . . հասկնալով լուութեանս պատճառը,  
ինքն ալ լսեց պահ մը, սպա ըսաւ .

— Կարծեմ թէ առաջին անգամն է մայրաքաղաքս  
ուզելորից: Ի՞նչպէս դտար Բիւզանդիոնի Հայոց  
կեանքը:

— Տասնութ տարի առաջ արդէն եկած եմ Պօ-  
լիս, ուր երկու փոփոխութիւն մասնաւոր ուշադրու-  
թիւնս կը գրաւեն . մին փողոցին մէջ, միւրը Հայոց  
վրայ: Այն ատեն Բերայի և Ստամբուլի շուներն՝ ըստ  
վիճակադրութեանց՝ տասն հազար էին, իսկ այսօր

երեսուն հազար, և փողոցները իրենց լեզուով առ-  
լելու պաշտօն կը վարեն . . . : Այն ժամանակներն  
սպգախրութեան զգացումն ոմանց սրտին մէջ, իսկ  
հիմա շատերուն շրթանց վրայ եռեւեփ կ'ելնէ . . . :  
Իսկ Գատը-Գիւղի մէջ . . . ինչ անհուն տարբերու-  
թիւն այն ատենի Քաղկեդոնիին և հիմնականին մէջ:  
Ամենուրեք հոյաչէն տուներ, սիրուն ամարանոցներ,  
տաղաւարներ, մաքուր և լայն փողոցներ, ծառուղի-  
ներ, պարտէզներ, այգիներ և գոհունակ բնակիչներ:

Պարոն Գ . . . փոքր ինչ կարմրելով խնդալէն ետք,  
ըսաւ .

Գատը-Գիւղին այժմեայ բնակիչները բնակարա-  
նայ և զրից չքեղութենէն, բնութեան գեղեցիկ տե-  
սարաններէն, դալարագեղ վայրերէ և կոհակներու  
մրմունջներէ ախորժ և հաճոյք կ'զգան: Ճարտարա-  
պետական պերճանքն և շուայլութիւնը կը սիրեն:  
Գուցէ կրնայ ըսուիլ թէ այս ճաշակն ու յօժարու-  
թիւնն ինչ ինչ հարուստներու ժառանգութիւն մնա-  
ցած է Ռիւֆինէն, որ երկու հազար տարի առաջ  
Քաղկեդոնին Կրեստն էր:

— Ո՛ւր են անոր հոյակապ ամառատան և իր Ռչ-  
ֆնօքօլէ՞ ըսուած թաղին հիմերը, հարցուցի: Ո՛ւր են  
փառաւոր պալատին աւերակները, հեթանոսութեան  
և քրիստոնէութեան ժամանակաց վերաբերող եկե-  
ղեցիներուն և մեհնաններուն հետքը:

— Հարցուր Կ. Պօլսոյ մեղիթներուն և բաղանիք-  
ներուն, պատասխանեց Պ. Գ . . . հնադիտական մե-  
լամաղձութեամբ:

Իրօք Քաղկեդոնի հին յիշատակարաններէն զրե-

թէ ոչինչ մնացած է այսօր : Մեհեանները, եկեղեցիները, քաղաքակիրթ ընկերութեան մ'ամեն ճարտարապետական հաստատութիւնները, որք ատենօք կարձեռն թէ ժամանակին ամենազօր կարողութիւնը կ'անդ սոնէին, երկրաշարժ երու, պատերազմներու և յեղափոխութեանց ցնցումներէն կործանեցան և իրենց քարերը Պօլիս փոխադրուեցան :

Համեմբ' երեւելի պատմիչը՝ Քաղիկոսնի յիշատակարանաց քարերուն այս ճակատագրին վրայ խորհելով և չկրնալով գտակ իր սրտին ցաւը, կ'աղաղակէ .

«Ա՛խ, եթէ այս քարերը կարենային ազազակել, մեզ սխտի կրկնէին Աստղիան զիշերային հանդիսից մէջ նուազուած օրհներգութիւնները, նաև այն սաղմուսերգութիւնները որք սուրբ Եւփիսիա եկեղեցւոյն մէջ կ'սրտային . . . . . »

Եւ մինչդեռ այս է աշխարհիս ճարտարապետական հրաշակերտից և մարդ կային ամեն երեւելի հիմնարկութեանց ճակատագիրն, որուն վրայ իմաստասիրական և մեղամաղձային խորհրդածութիւնները և ներու ջեն արդիւնիւր Եփեսոսներու, Բալմիրներու, Նինուէներու աւերակաց վրայ արտասօք թափելու ջւայլութիւնը սիրող հնարաններն և բանահիւսնէրը, մարդս՝ ինչպէս կ'ըսէ Ալֆիէրի\* անասմանութեան վճիռներուն գէ՛մ կը յանդգնի սրամտութեամբ դանդաատելու, անանելով թէ ինքն անմահ չէ ծնած :

Ալֆիէրի չիշեր որ եթէ ժամանակին անդ իմա-

\* Caddono le città, caddono i regni,

E l'uom d'esser mortal par che si sdegni!

դրելի յարձակումէն քաղաքներ և իրենց իրաւունքը պահանջող ժողովրդոց չունչէն դահեր կը սասանին, ևս քան զէս կը կործանին, կայ բան մ'որ անկորնչելի է, յաւիտենական է, անմահ է, այսինքն ճմարտութիւնն որուն որորանն է մարդկային միտքն, և գեղեցիկն զգացումն որուն ազրիւրն է մարդկային սիրտը . . . :

Ժամանակը մեռցուց կապալաւութեան մեհեանները, քրիստոնէութեան տաճարները, ռազմագիտական անասիկ բերդերը, ամեն հոյակապ շինութիւնները, բայց չկրցաւ ջնջել անոնց դադափարը և ձևը երկնոզ միաքերը և սիրտերը, որք մշանջենապէս կ'ազրին շատ ազգաց մէջ, և ահա՛ այս ազգերն անմահ են, վասն զի, կ'ըսէ Է. Գիլնէ . « Բոլորովին կը կորնչին այն ազգերը միայն որք չկրցած են ճարտարութեան կամ բանահիւսութեան անմահ ձևով մը շքուիլ : »

Շոգենաւը սուրբով Պօլիս վերադառնալու նշան և մեր խօսակցութեան վերջ տուաւ : Պարոն Գ. . . կրկին տեսութիւն մաղթելով մեկնեցաւ, և սահ մը ես ալ Լալէթս մը մտայ և Քատը-Գիւղէն հեռացայ : Անցայ Հայտար փաշայի տափաղաշէն, որ Տօղանձըլար-Մէյտանը կ'ըսուի, և որ կը տարածուի Քաղիկոսին մերձակայ և հոյաչէն գօրանոցէ մը մինչև Իւսիլուտար : Հայտար փաշայի արեւելեան կողմին բլրակներուն, դաշտերուն, այգիներուն, պարտէզներուն և երփնագեղ կախչներով ու մարդարտածաղիկներով պըրող նարօտից վրայ գմայլելն, շերտ մակորասի ազրիւրին հեռքը ի նանիւր փնտուէլն ետք՝

չարունակեցի ճանրաս, և հասայ Իսկիւտար: Պուլ-  
կուրբու (Տամաթրիս) լեռան ստորտարը գրեթէ տա-  
փածե և ամբիթի էտորի նման զառիվայրի մը վրայ  
չինուած է այս քաղաքը, ճիշդ ուր որ ժամանակաւ  
Քաղկեդոնացիք գինարան մը շինած էին:

Իսկիւտար\* կամ Խրիսօրօլիս†, որուն շուրջն Ա-  
թենացիք պատ մը քաշեցին և զայն բերդ պարզաբ մը  
ըրին Պոնտոսէն եկող և Վոսփորէն անցնող նաւե-  
րուն տուրքը հոն գիղելու և սլահելու համար, Պուլ-  
սոյ հանդիպակայ կողմն է: Նուիրական է այս քաղա-  
քը, վասն զի այն եղաւ Օսմանեան հարստութեան  
սրբանք:

Իսկիւտար աւելի հին յիշատակներով երևելի է  
պատմութեան մէջ, ինչպէս են և պիտի ըլլան Վա-  
թերօ, Սասուփա, Սեասան, և այլն: Քսենոփոնի ա-  
ւաջնորդութեամբ Տիգրիս գետին ավազնէն խոյս  
տուող տասն հազար ճոյները մինչև Տրասպիզոն հաս-  
նելէն ետք Խրիսօրօլիս հասան և եօթն օր մնացին  
«իրենց կողոպուտը հոն վաճառելու և սպա Եւրոպա

\* Իսկիւտար պարսկերէն բառ մ'է որ կը նշանա-  
կէ սորհանդրակ կամ սորհանդրակներու օլեան, վասն զի  
Կ. Պօլիս. և Ասիա գացողներուն առաջին կամ Ասիոյ  
ամեն կողմերէն Կ. Պօլիս եկող ուղեւորներուն վեր-  
ջին կայարանն էր այն:

† Պատմիչներք կը կարծեն քէ Ակամեմնոսի եւ  
Խրիս. իսի տղան Խրիսիսն է այս քաղաքին հիմնա-  
դիրք, եւ այս պատճառաւ հիներք Խրիսօրօլիս կամ  
Խրիսիսի քաղաք կ'անուանելն այժմեայ Իսկիւտարը:

անցնելու համար» կ'ըսէ պատմիչը: Պատմիչներն այս  
Բէրէց Նահանջին վրայ սքանչացումով կը խօսին, ա-  
րիւթեան և քաջագ ործութեան իբր նախանձելի օ-  
րինակ կը յիշեն այս քաղաքը, զոր յատկանիչելու  
համար մեզմ' և քաղցրահնչիւն խօսք մը կ'ընտրեն,  
Նահանջ կ'անուանեն: Յանդիսու թեան և մեղադրա-  
նաց ամենափոքր ակնարկութիւն մ'անդամ չեն ը-  
ներ անցէն և անմեղ ժողովրդոց կեանքը, պատիւք  
և գոյքը թողլով քէ-ցաղանց դէմ . . . :

Այս տեսակ կատածելի քէ-ցաղանց վրայ սքանչա-  
ցող և ծնրազրող պատմիչներուն վրայ ես ալ կը հըն-  
նած, տեսնելով թէ անտր սրբան յաջողակ են իրենց  
ողնասխնը ծռելու և սողալու կոչա այժի ամարդու-  
թեանց և գինու որական բանութեան արեւտարի քմա-  
հաճութեանց սոջն: Պատմութեան դաստուռներու  
կը պատկանի այս գիւրակոր ինդճերու սխալը ուղ-  
ղել և չթողուլ որ նորածիլ միտքերը պատմական  
պատրանայ և սոսք ճշմարտութեանց նահատակին . . . :  
Խրիսօրօլիսը նշանաւոր հանդիսացնող իրողութեանց  
միւսն է այն երևելի ձախտամարտը, զոր Աստան-  
դիանոս Քրիստոսէն 524 տարի ետք Ղլւչինիոսին  
գէտ մղեց և յաղթեց:

Եթէ Աստանդիանոսի յաղթութեան ատարէզը  
չտեսայ, գէթ ուրիշ յաղթողներու յետին հանդ ստա-  
րանին վրայ մեղմամոլճօրէն մտախոհելու առիթ ունե-  
ցայ: Կ'ակնարկեմ այն գերեզմանատան որ Իսկիւտա-  
րի մեծ հիւանդանոցին և Վոսփորի ավանց միջևն է,  
և ուր Գրլոմի պատերազմին մէջ մեանող Անդիսացիք  
հանդարտօրէն կը մտին առանց լսելու այն հեծիլասն-

քը ու վայնասունները, որոնցմով մայրեր, քոյրեր, ամուսիններ խորհրդաւորապէս կը տրամախօսեն ինքերմանի բլուրներուն վրայ և Մալաքօֆի խրամներուն մէջ թափառող Ռուսի ուրուականներուն հետ, առանց լսելու նաև այն անդրադերեզմանական և հեղնալի քրքիջը զոր անշուշտ Նիկողայոս կայսեր օղաշուռդին Սեռանի յաղթահար թշուառին դէմ ի խաւարի կ'արձակէ՝ տեսնելով թէ աշխարհիս քաղաքակրթութեան և խաղաղութեան համար ինչ փրկաւէտ և տեական արդիւնք ունեցան Գրքովի պատերազմը սուրած օրինական սպանութիւնները:

Այս ախուր խորհրդածութեանց տպաւորութեամբն համակուած էի երբ ինքզինքս դտայ իճառի էի Հայ ազիլանց վարժարանին մէջ, որուն տէրն ու վերատեսուչն է յարդի Մ. Մէլզուրեան: Յանպատրաստից մէն մի դասու աշակերտուհեաց մի քանին քննեցի, և նկատողութեան առնելով մէն մի սանուհեոյ սրքան ժամանակէ ի վեր աշակերտելը, անկեղծապէս գոհ և ուրախ եղայ: Այս բարեկարգ վարժարանին ծրագիրն Հայուհեաց այժմեայ բարոյական և մտական պիտոյից կը համապատասխանէ ուստի ցաւելով զարմացայ երբ լսեցի թէ Իւսիլուտարի մէջ ևս Հայերն իրենց աւանդական օտարասիրութեան հետեւելով նախամեծար կը համարին օտար քան թէ Հայու վարժարան յղել իրենց զաւակները: Հոն պատիւ ունեցայ տեսնուելու Մէլզուրեան վարժարանին նորընտիր հոգարարուհիներուն հետ: Մին էր Տիկին Մ. Պիլօրեան, միւսն էր Օրիորդ Զ. Խանճեան: Այս Օրիորդին վրայ արդէն կարծիքս յայտ-

նած ըլլալով, նորէն խօսիլն աւելորդ կ'երևի ինձ: Տիկին Մ. Պիլօրեան մտքուր հայերէն և ֆրանսերէն խօսող և իզական սեռին կրթութեան համար անձնուխրարար աշխատող շնորհալի և բարեկրթ Հայուհի մ'է, նաև անգամ Աղբանուէր Հայուհեաց ընկերութեան: Արնամ հաւաստել թէ այս ընկերութեան պարագլուխներուն և ամենէն աւելի ժրութեամբ և անչափանդուրութեամբ զօրծողներուն առաջինն է ինք:

Միտալիւ և համակիր ընդունելութենէ մ'եռք ճանբաս շարունակեցի և հասայ մինչև Տոմսթրիսի գառիթափին միջավայրը, ուր սարահարթ տեղ մը կայ սօսիներէ հովանաւորուած: Այն ժամի չափ հանդէսէ և ստամբախ աղբրասլի պահանջումները կարելի եղածին չափ գոհ ընելէն ետք՝ դերբուկ ճանբէ մը մազլցելով վեր ելայ մինչև լեռան գաղաթին մօտ, որ նշանաւոր է իր սաստկահոտ նոճիներով և ուփիներով:

Չամիլճայի բարձունքէն նայուածքիդ սոջև հիանալի տեսարան մը կը պարզուի: Հարաւէն Մարմարան, Հիւսիսէն Ասիոյ ախուրը կ'երևին որք մինչև Սև ծովին բերանը կ'երկարին. այս կողմէն աչքիդ սոջև սիգարար կը կանգնի ժեան (Հսկայ) լեռն որ իր կատարին ծառերէն կը ճանչուի: Արևելեան կողմն են Նիկովիոյ ծովախորը, Իյսանաց կղզիները, Պիթինիայի լեռներն ու դաշտավայրերը: Այս հանրածաւալ պատկերին շրջանակին մէջ բնութեան հրաշալի վրձինով նկարուած կը տեսնես Պլոյլուք-Տէրէէն մինչև Պոլիս տարածուող Վասիօրը, որ իբր

կղզիացեալ լին մը կ'երևի, որուն մէկ կողմն ՚Իւս-  
կիւտար և միւս կողմն ՚Բիւզանդ իոնն ամբողջ կը տես-  
նուի, և որուն զիւթական ափանց Քայլքհանէները  
խակ հեռադիտակով կը տեսնի: Այս Քայլքհանէի սո-  
վորութիւնը ծագում առած է Յուստիանոս կայսեր  
իշխանութեան ժամանակ Քաղկեդոնի ծովեզերքը  
չինուած նկուղներէն ուր նաւակները ջուրէն կը քա-  
շուէին և կը պահուէին:

Արևը մտքը մտնելու կը մտէր: Տամաթրիսի լե-  
ռան դագամէն հիացման վերջին ակնարկ մ'ալ նե-  
անցի առջևս տարածուող տեսարանին այս ամեն  
բնական շքեղութեանց և վեհափառութեանց վրայ-  
ապա վար իջայ՝ գլխիփրկու հաւանականութեան  
դէմ դրուչութիւններ բնեւոյժ, և մէկուկէս ժամէն  
ետը ինքզինքս գտայ Վիքրանուրին պանդոկը:

Բերա, 15 յունիս 1881:



**Ն Ա Մ Ա Կ Ժ Ա.**

Կենաց անտանելի ճանճրոյթներուն մին է յան-  
կողնի մնալ և չնիրհել:

Կիրակի օրուան առաւօտը Քէհատհանէի բլուր-  
ներուն ստորուն և Պրիզէս գետին ափանց վրայ գե-  
ղերելով վատնելու յառաջադրութեամբ երկկ զիշեր  
կանուխ անկողին մտայ, սյլ չկրնալով քննել՝ փորձ-

առութիւն և դազափար ունեցայ այն շարչարանաց  
վրայ օրոնց ենթարկուեցաւ Տամիկն՝ որպէս զի բունա-  
դառուի յայանելու թէ որունն էր իր ձեռքը Վաթի  
Ժե.ին դէմ գինոզ կամբը:

Բարերազգարար արքայասպան չէի և ոչ ալ կը  
փափարէի եղած ըլլալ Պրիսթոսին և Գասիոսին պէս,  
զորս Տանթէ իր վերջին գեշեներդութեան մէջ աս-  
տուածաստրանի մը, Յուզա Խոկորիովուացիին հետ  
միտսին եռադլխեան վիշտովի մ'ատամանց կը մատ-  
նէ՝ Քրիստոսին և Յուլիոս Կեսարին մէջ ջկրնալով որ  
և է տարբերութիւն մը նշմարել . . . :

Ալ կրկնեմ թէ ոչ արքայական կենաց թշնամի մը  
էի, և ոչ ալ Ֆէնիքներու կամ Նէնիէնէներու (չքա-  
պաշա) բնիկրութեան վերաբերող յեղափոխական մը:  
Անկեղծապէս կը ցաւիմ Նէօպոլիտներու, Բիզպօօֆ-  
ներու և այն ամեն անոցք արքայասպանաց վրայ  
որք բնիկրային հիւանդութեանց դարմանք անծի մը,  
արքայական վեհափառութեան մ'անհետման մէջ կը  
փնտսեն:

Սակայն այս ցաւէս մի հետեցներ թէ հակակրու-  
թիւն ունիմ մահարույր գինուց դէմ: Քուէ լիցի:

Դաշոյնն արգահատութեան զգացում մը կը ներ-  
շնչէ և հրատի մը բոցերը սրտատուջ տեսարան մը  
կ'ընծայեն ինձ: Միայն թէ նախանձելի քաջազործու-  
թիւն մը չեմ համարիր Բազայեայի զանակը Անրի  
Դ.ին սիրտը մխել, ժան չիւսը հաւատարմութեան  
խարբոյլին վրայ տապկել:

Ես կը սիրեմ այն գրիւռէտ դաշոյնը, որ կ'ա-  
նուանի Բուսոյին խօսքը, և կը դուրսդուրամ այն հրա-

տի բացերուն վրայ զոր կ'արծարծէ Վոլթերին նուիրական շունչը :

Այս խօսքէն կ'արտադրի ճշմարտութիւնն որ անգլիմադրելի է :

Այս շունչէն կը կազմուի բազմութեանց սարսուռն որ վտանգաւոր է :

Ճշմարտութիւնը տեղի կը տայ թագուն ցնցումներու , որք հետզհետէ կը սաստկանան , կը ծաւալին , ընկերային մնաստկար և արդէն խախուտ հիմնադրութիւնները կը սասանեն , կը փլին :

Բազմութեանց սարսուռն ալ կ'արտադրէ ուրախան մ'որ այս փլատակները կ'աւելէ , կը տանի :

Այլ հաւանիմ ուրեմն ճշմարտութեան ցնցումով տապալելու և հեղնութեան շունչն հրահրուած կրակին տալու այն ամեն մալար դրութիւնները , ազգասպան աւանդութիւնները , որոնցմէ բնականաբար ծնունդ կ'առնուն ընկերային ամեն տեսակ ազեղութեանց ժառանգորդները , և կը դատապարտուի ոճրագործ ձեռները , որք Պեղարիայի Բաբելոնիան վրայ կը խնդան , և անխուով կը ջնջեն ինչ որ անբռնաբարելի է , ինչ որ անգառնալի է , այսինքն մարդկային կեանքը :

Պէտք է ուրեմն անպատիժ թողուլ ժողովրդոց իրաւունքը կապտող յանցաւորները , հարցուի ինձ դուցէ : Ոչ : Պէտք է պատժել : Բայց պատժել թիւփեհալին պէս որ Հռոմի Լաբրերը կը մտրակէ և կը հալածէ , Տանթէին պէս որ միջին դարու գիշերակերները ծծմբային լիճերու կրակին և սաղայէլներուն շամիրին կը մատնէ , Վ. Հիւկոյին պէս , որուն Շա-

նէմանը շարագրող գրիչը կայսրութեան մը կուրծքը կը մխուր մարդուս կենսահանդոյցը (coeur vital) ծաւալող գնդասեղի մը պէս , և վաղրին ոսկրները կը փշրէ տաղի մը մէջ : \*

Անգոսնելի չէ այս պատիժը , վասն զի Բանթէունի և Ուէյթ մինիսթրի խաւարին անդուհնդներէն վաղրերու և դայերու հեծկրտանքը կը լսուի , և այս « գերեզմանային յաղթութեան » դատապարտուած միւս գիշակերներուն երկիւզալի գաս մը , իսկ ասոնց նա հատակներուն խորհրդաւոր պատուէր մը կը տայ . . . :

Արդ՝ քանի որ թագակիր գլուխ մը կտրած չէի , կամ քանի որ Խերոյէն Արանտիէին պէս այսահանութեան ոճիրով ամբաստանուած և Բիշիլէյի մը \*էֆոններուն հրամանաւ ոտներս և ձեռներս տանջարանաց մէջ չէին ձգմուր , ինչ պատճառաւ չէի կրնար սչքս խփել :

Վասն զի հեանք չի :  
Արապին վրայ խիծուրիծ գնող Հոյ գրագէտ Հիբոյրաթի մ'ախտարանական հմտութիւնները կը հաստատեն թէ Բիւզանդիոնի այժմեայ կլիմայական հիւանդութեանց մին է մարդուս մարին տանջուելն անշարժ գաղափարէ (idée fixe) որ ջլատ կազմութեանց համար ճորճինքն քնարեր յատկութեանց ներհակ ներդրութիւնը ունի . . . :

Չլային հիւանդութիւն : Ահա՛ ակտ մ'որ ատեն մ'անուն չունէր , որ գոյութեան կռիւն մտկոյնա-

\* On entend dans son vers craquer les os du tigre.  
Les quatre vents de l'esprit. V. HUGO

կան սատարութիւնէն ծաղում առած է, և ոչ բնական գիտութեան — նմանարուժական թէ աշարութեան, քեզ կը թողում երեւակացի — համար ապահովութեան դանակ (sous-pape de sûreté) մ'է, նաև պարտուալ մը քնտանեկան թաղուն արամներու և մատուցելուց պարտաւորութեան համար . . . :

Անչորժ գաղտնարէ մը գրատիրը Չլային հիւանդութեամբ հասկուելու կը նմանի :

Տուր ինձ գաղտնար մը, և քեզ տամ հարիւր միլիոն, կ'ըսէր կատակարան կործուած անարժան գանձադէտ մը : Բարիցի բասիլին հեղնութեանց այս նահատակը խիստ անկատար կը խօսէր :

Աը ճանչեմ արդ բողոքի անձեր որք այս հիւանդութեան ողորակի մարտիրոսներն եղած են հարմը գանձու և մի խոնկերը գրողանելու անչորժ գաղտնարէն տանջուով : Արնայ բուսի թէ անոնք տեսակ մ'ընկերային ցնդա շեաներ են, և կ'անուանին բնադէտ, մեքենադէտ, բժիշկ, մի խոփոյ, գրագէտ, ճարտարագէտ, խմբախր, արեւոտագէտ, գանձադէտ, բազմա զիր և Արգարիտ գրողին աստիճանարդ աշակերտ :

Այս ցնորասաներէն անձիւր իրեն յատուկ երազ մ'ունի : Մին օգտարի ին զեկը, միւր Քեզեքեքին գարեանը, այս՝ չոյ կ'առքը ան իջտպէս կեցրնելու միջոցը, այն՝ թորախախն զեկը հնարել, ուրիշ մը կապարը ոսկոյ փոխելու համար : Մեր իւր թըրամեծ իսթին մի խոփոյ պոխան քա ը լոկ Քերայի գիշերաըջիկն սպաշանալ Արթերի (Չ. բ. թ. լ. ա. ղլկան տաճարին երկրպագու Լախնուրու անկէլի հաւատարմութեան ճարը գանձել կ'երազէ . . . :

Աը կրոնեմ այս երազտես մարտիրոսաց անհանգստութիւնը և իրենց ըզիզին անախորժ ճիտումը :

Աող՝ կարծես թէ այս մարտիրոսաց մին ալ ես եզիր էի անկողնի մէջ :

« Անոնք իր ցնորք կը նկատեն մարդ կա ին միւր » տը, այն բով սրուն մէջ կը կապուի մարդկութեան » պատմութիւնը » կ'ըսէ Չոյ գրող խառնի մ'իր մի երկին մէջ սրուն ձեռագիրը կարգ առ շորհօր վաշեկի :

Փառասիրական անզուս զգացման մը թեկերը յիս կը շարժին, սրտիս անդունդները կը յուզին և պատմական աստահարներ կ'ուրուսող ըլին : Անրթին կը խնդային զխոսիլ թէ այս անդնդոց յատակը ցնդական փափոքներ կը կապուին : Արտիսն Չոյ գրատիրու հոն խոսիլին ի հաստարտիտան ճշարտութիւնը, և կը հասանի որ եթէ այս փափոքներս կատարելու չիջոյր և հարքը օճենայի, ես ալ կրնայի աշխարհս գարեպնել :

Երազներ կը տեսնի — և ի՞նչ արդեօք չէ երազած իր կենաց մէջ — և կ'ախտատի ասիկարութեանս վրայ :

Կ'երազի՛ Արբի գաղտնի պէս գաղտնարի մը վեհութիւնը որ ըրձքն փեշութեան հետ գուզել և ժողովրդային փրկութեան մը հերոսն հանդիսանալով մշտնջենապէս արեւը աղերու այն յիշողութեան մէջ որ կ'անուանի պատմութիւն, կամ՝ միջն հիմա ընդունուած գիտական ճշարտութիւններ տապալելու համար՝ երկնել բնախառնան շոր ճշարտութիւն մը Կախը ոսին սլմ' ասանց սակայն հաւատաըննութեան

ատենին անջև ծնրադրելու և առանց մեղադրելու՝ կարտինալ Կասարբո Պորճիային հրատչն ահարեկ, կամ հրատարակել քարոյական անըրբ ճշմարտութիւն մը Սօկրատին պէս, թէ և կը մտածէի թէ սուր կարելի էր ինձ ևս դտնել Թէօթօմբային նման սիրուհի մ'որ պէս զի ես ալ Անիթիսի նահատակին պէս՝ անոր հետ տեսնուէի՝ իր դեղեցիութեան մէջ երկնային ճարտարադէպին մատը նշմարելու և իր շրթուներէն փիլիսոփայութեան մեղրը քաղելու համար, կամ Մշակին և իր Էնթելէկէնցեային արիթմեան լեզուն և քաղարական ուղղութեան զաղտնիքը ըմբռնել՝ որպէս զի յանկարծ երևելի հանդիսանամ, ազատութեան և գիտութեան գիւցազանց կամ մարտիրոսաց դասն անցնիմ, աշխարհիս ուշադրութիւնը իմ վրայ հրաւիրեմ, մարդկային խցճի նայուածքը գործերուս վրայ սեւեւեմ, և համբաւին թեւերուն վրայ նստելով արեղերաց շրջանը առնում, և այսպէս ազդային տարեգրութեանց անմոռանալի անուն մը հրիտակեմ:

Բարեկամ, ահա՛ կը դիտես որ փառասիրութեան՝ և չէ թէ փառամոլութեան՝ զգացում մ'էր իմ այս ամեն մատանջութեանցս պատճառը:

Ոմանք հոչակաւոր ըլլալու փառամոլութիւնը ունին: Այս ինչ աշխարհականը ճարտարապետական հրաշալիքու մը կ'այրէ, և ոճիրով մը պատմութեան մէջ իր անունը կը դրոշմէ մշտնջենապէս. այն ինչ և կեղեցականը, զոր հանձարեզապէս յանդուդն երևակայութիւն մը «Աստուծոյ վիժակիր» անուանեց, մեր օրերու հոչակաւոր երեւոյթներուն մին կը հանդիսանայ՝ զլիսուն վերեր սրբութեան և անուաններ.

քև իշխանութեան հեղուցութիւն մը կրելով . . . : Ես կ'առնեմ այս տեսակ փառքերը: Ատելութիւն, որուն կրնայ հաւասարել միայն ստութեան, մալութեան և նուաստութեան դէմ՝ զգացած զգուանացս սաստկութիւնը: Ար սիրեմ միայն ինչ որ վեհ է և ազնիւ, և «Մարգս, ինչպէս կ'ըսէ Րընան, զձձութիւնը և նուաստութիւնը արհամարհելով միայն կրնայ վեհ և ազնիւ հանդիսանալ»: Բաւ կը համարիմ ինձ օգտակար փառասիրութիւնները, երազները:

Սակայն այս փառասիրական երազներուս ամենէն ձանձրալին, միտքս ամեն բանէ աւելի մտրակող դաշտափայն էր մեր ազդին և աշխարհութեան ինչ ինչ չափ հերուն մէջ համաձայնութիւն մը գտնել և խղճի հանդարտութեամբ յայտնել զայն:

Ճակատագրին պէս անողբելի և անշարժ էր այս զաղափարը: Արք մի բազմանս սոյն զաղափարն ըզըզ կը բռնէր և անողբմարար կը ճնշէր: Այնքան սաստիկ էր այս ճնշումն որ կրնար բան մը ժայլովիլ գանկէս:

Հանձմիր թէ խեղութիւն:

Հանձարի ժայլքումը կրնար հաւանական ըլլալ եթէ Կտիրոնի կամ Տարվինի ըզգին նմանէր իմն: Սակայն ձեռքս ճակատս կը տանէի, անոր արամս զիժը կը չափէի, տրտմապէս կը դիտէի որ այս տեղի Հայ դրագէտներէն Պ. . . ին պէս ոչ Պըբին և ոչ ալ Պ. . . ին պէս Վ. Հիւրիսին դանկը ունէի, ուստի գլուխս կ'օրէի յուսարեկ, և կը հարցնէի իւրովի.

Խեղութիւն սիրի ժայլքի արդեօք:

Մարդկային մտաց շնորհիւ ֆիլիղական և ընկե.

բոկոնն աշխարհաց ճակատաց իրնեւրուն զէմ մերթ մասամբ իւրք և մերթ բոցորովին յազթանակ տանիւլը կարելի եղած է: Միտքս իր րեսին ծանրութեան ներքև շարչարտոզ այս գաղափ րին, այս տեսակ մը ճակատագրալին պաշտրեան զէմ արդեօք ինձ ևս կարելի չէր յազթական հանդիտանալ:

Հուսաւորութեան ոգին անթոյլտուութեան նաւ հատակաց, ընկերական գեհնեան պարտոյց և թիարանի (S. J. Loret) յաճախարդաց շարչարանքը մեզմեց վտար ինչ: Ինչ ալ պիտի չամբարէր արդեօք:

Ինչ որ անհարին կը թուէր իղճիս, ինչ որ՝ ըստ իս՝ ստույթ իւն մ'է անթեքի բնասորութեանց տաջև, իրտա հնարին և ճշմարիտ կ'երևի սմանց օրք թերեւս անկեզձ են: Անկեզձ ապէս սխալօղնեւր կամ կարմրեւր ապ'իւ յատկութիւնը բարեմտութիւն սեպօղնեւրք կ'րանն:

« Բանի օր Պետութեան և ազգին շահերը կը համաձայնին, կրնանք համարձակապէս յայտնել աս համաձայնութիւնը՝ մարդ կալին արժանապատուութիւնը կանգուն և բնասորութիւնը անթեքի և անեզձ պահելով: »

Բայց ևս չեմ հաւատար, և կը տրտմիմ այսպիսի ստույթեան մը հեռեանաց վրայ:

Ո՛ր որ ճշմարտութիւնը վտանգ, ստաքինութիւնը միտմտութիւն, անկեզձութիւնն արդեւր, երկղի տութիւնը սատանութիւն կամ յաջողալութիւն, մոլութիւնը բարեբօյստութիւն, կարճատեսութիւնը քաղաքացի տութիւն, անձնալին շահը կենաց առաջին և վերջին նպատակ, և հանրական շահուց նկատ-

մաթր անտարբերութիւնն ալ խոհեմութիւն կը սեպուի, հոն ընկերական մարտիք խելրդ մ'ունի: Անգարմանելի է հիւանդութիւնը: Պատրաստէ յուզարկաւ սրութեան հանդէպ և Փաստ ի Բարձրանք երգող տիրացուներ:

Մածձիւնի սա կարծիքը կ'ընդունիմ. « Լաւագոյն է օր ազգ մը գերի բլլայ քան թէ ստույթեան մը հաւատաց. վասն զի միտն միջ գէթ սարսեւր, լսիլ տու սով ազգանեւր կը սովորի: »

Սրտուը շլթապղերձ խլզներու աւաքինութիւնն է:

Ապախանութիւնը ննխա իւղճերու յատկութիւնն է:

Հաշտարար նուաստութեանց և անպատիւ գիւջումներու գէմ հախարութիւնս այսպէս յայտնեւնեաք կը հարցնեմ թէ օ՛ր է այս համաձայնութիւնը: Ինչ ինչ շահերու նկատմամբ կը փնտաւմ զոյն, այլ ի զո՛ր:

Եւ յորտի ազգն ունի աւնպիտի կրօնական, պատմական, կրթական և իրութեան շահեր, օրք օրեւնաօր են իրեն համար, և օրք շեն համաձայնիր Տէրութեան շահուց հեա օրք նոյնպէս օրինաւոր են իրեն համար:

Այս բազմազան շահուց մէկին նկատմամբ միայն կրնամ իրք օրինակ՝ ենթադրութիւն մ'ընել:

Կ'ենթադրեմ թէ ազգային մուղովին իւսան Սողաններն օրին մէկ յանկարձ պիտի յիշեն թէ իրենք Աւետարանին ճշմարիտ հեռեօրդներ են, և թէ իրենց հրապարակային կենաց մէջ կը պարտաւորին

ներչնչուիլ այն սուրբ սկիզբներէն որք այս բարոյա-  
կան ճշմարտութեանց աւանդարանէն կը բղխին, և  
որոնց երկուքն է եղբայրութիւն և հաւասարութիւն:  
Այս սկզբանց համեմատ աղջիկ զաւակ մը տղայ զաւ-  
կին պէս հոգեկիր և հաւասար է իր ծնողաց սովե-  
հաւասար է ուրեմն նաև իր իրաւունքն անոնց ծա-  
ռանդային ընչից վրայ, և Հայ ազգին ու Օսմանեան  
ազգին շահուց համաձայնութեան հաւտացողներն  
ահսօ օրէնք մը կը ծրագրեն՝ հաւասար բաշխման սկիզ-  
բը չիմ բռնելով: Լաւ, բայց կնոջ հաւասարութիւ-  
նը հաստատող Աւետարանը չհամաձայնիր Գուրանին  
հետ որ բացարձակապէս ազատ ընչից ծառանդու-  
թեան մէջ կը մերժէ հաւասար բաշխումը: Արդ՝ եւ-  
թէ Հայուն համար ծառանդային իրաւանց նուիրա-  
կանութիւնը սուրբ գիրքէ մը կ'արտադրի, Իսլամին  
համար ևս մի և նոյն նուիրականութիւնն ալ սուրբ  
գիրքէ մը կը բղխի: Ո՛րք է այս երկուստեք նուիրա-  
կան շահուց համաձայնութիւնը, և ո՞վ է այն երես-  
փոխանն որ պիտի համարձակի այս համաձայնութեան  
հաւտող աւանց խզճովին մեղանչելու կամ միամտա-  
բար սխալելու:

Այս և ուրիշ այս տեսակ շահուց համաձայնու-  
թիւնը գտնելու համար ահսօ այսպէս շարունակ կը  
խորհչի անկողնիս մէջ և չէի յաջողեր վերջ տալու  
վարանմանցս:

Գիշերն ի բուն միտքս շարչարուեցաւ գինքը  
գրաւող դադափարներէն ազատուելու համար: Բայց  
ի զուր: Ոչ միայն մինչև առաւօտ քնաթափ տառա-  
պեցայ, այլ նաև գիշացի թէ մարմնովին կը սարսռէի,

ջերմութեամբ կը տաղնապելի, պաղ քրտինք կը թա-  
փէի:

Անկողնէս վար իջայ կարծես տենդ ահար, Քէհատ-  
հանէ երթալու նպատակս ուրիշ օրուան թողուցի, և  
Մոլիէրին պէս ըսի.

«Անիծեալ բլլայ խորհելու սովորութիւնը:»

Կարծելով թէ ջերմի հիւանդութիւն ունիմ, ըստ  
սովորութեանս թարմ հաւկիթ մը կրնելու տեղ ծա-  
մուան մը մէջ քանի մը քննաւորի ղեղահատ կրնեցի,  
որք ոսկեզօծ չէին, և պահ մ'ետք անակնուրնի հան-  
դատութեան մը նշաններն երեցան իմ վրայ: Ըսել է  
թէ միայն երեակայնութիւնս էր տենդահար:

Կարդն և կաւ նախաձառելու. պահ մ'ետք զգացի  
թէ ալ բոլորովին քաջող էի, և այս յանկարծահաս  
բոյժը քննաւորի ջերմախոյս գորութեան վերագրելով՝  
մտապէս գոչեցի. Կեցցէ Ամաղամբօ, կեցցէ նաև կրնը:

Կ'երեակայեմ կարեկցութեան այն ժպտար, որ  
չթմանց զբայ կը ծրագրուի, և չտեսնելով որ և է  
յարարերութիւն կնոջ ու քննաւորի մէջ՝ դուցէ իւրու-  
վի կ'ըսես:

«Խեղճ բարեկամ, Եհեանք է և կը բանդադու չէ:»

Բայց ոչ կը բանդադու չեմ և ոչ կ'երազեմ: Արշի-  
շեմ ինչ որ տարիներ սուաջ խերար Տը Ներվալի Լը  
Մօնք Տրամալէի անուն հանդիսին մէջ հրատարակուած  
էր: Պիտի տեսնես որ քննաւոր գտնողը Հնդկի մ'է,  
և գտնուելուն պատճառն ալ գեղանի Հնդկուհի մը:

Ահաւասիկ Լը Մօնք Տրամալէին յօդուածը.

«1636ին Բերուին կառավարիչն էր Սոյանայի  
փոխարքայ՝ Տօն Կօմս և Տը Գապրերա Տէլ Շինտն . . . »

Ամաղամբո՛ որ Բերուի Հնդիկ ցեղերուն մէկին գլուխն է՝ կը սիրէ գեղանի Հնդկուհի մ'որ ստիպոյն չսրբեր ցեղապետը, վասն զի արդէն իր սիրտը նուիրած է փոխարքային տղուն՝ Սյանիացի Ֆերնանին: Գո՛րազք և ոչ այնքան վայրենական էր Ամաղամբո ին այս անբը: Աննուհէ ցեղապետն անդուժ Հնդկուհւոյն անտարբերութեան պատճառաւ կը շարձարուի, յուսահատութեամբ և ջերօք հը-անդո-մե՛ծք կը համարուի: Այն ատեն թունաւորուելու գիտաւորութեամբ ջուր կը խմէ լճալէ մը որուն մէջ քնա բուսած և թունաւոր կարծուած ծառին կոճղիքը կային: Բայց Ամաղամբո՛ փոխանակ մեռնելու՝ իր շէթէ սիրտին այլ տենդային հիւանդութենէն գիւթալան զօրութեամբ մը բոյժ գտած ըլլալը կ'զգայ: Ահա՛ նոյն միջոցին քնքնայն առնդախտը յատկութիւնները գտնուեր էին:

« Ամաղամբո իր քաջասպիտութիւնը պատահաւորութեամբ կը համարի շնորհալի Հնդկուհւոյն մտնայու և իր հայրենեաց հարստահարէններէն վրէժ լուծելու: Իր անց զթապէս վրաւորուած սրտը դո՛հ բնելու լաւագոյն միջոցն է թողուլ որ Այանիացիք մի առ մի մեռնին այն ստիպի ջերմէն որ Ամերիկայի մէջ գրեթէ անբուժելի հիւանդութիւն մ'էր: Հնդիկ ցեղապետը հասաւ իր նպատակին: Վարնիացիք կը մեռնին, մինչդեռ Հնդիկները կը գիւնդուին հիւանդութեան: Արեւ ընդարձակ գերեզմանատուն մը դարձաւ, որուն բնակիչները զրկուցն եղաւ վարենին, քանի որ Արեւու խորանին առջև երգում բրաւ և իր համացեղներէն խօսք առաւ ամենին երկան չհանելու թանկագին գեղը: Բայց փոխ-թագուհին տենդահար

կը հողեվորէ, և գեղանի Հնդկուհին իր սիրահարին մէջ մտնայու մահուան առջև կը յուզուի: ստիպոյն անտիական ազջկան ժամանակ չարութիւն հիւանդը աւզաւելու, և նոյն ինքն Ամաղամբո՛ հիւանդի անձնուելութեամբ մ'եղալը փոխարքային կենդան՝ Տոնաթէօտորա ին կեղտոյն վրայ գնելով՝ կը հարկադրէ զան վրաւ լաւ բնութիւն խմելու . . . : Ամաղամբո բաւ չհամար իր իր այս անձնուիրութիւնը: Կ'զգայ թէ իր սրտն եսեկութեան տակուին, ուստի Հնդիկներուն հրատէն կ'ողտակ իր անօգրթ սիրուհին, և ստիպոյն իր այս մտանութեան պատիժը կը կրէ կարծրին վըրայ գաղտնի հարուած մ'ընդունելով: »

Գեղանի և անզգայ Հնդկուհին իր կեանքը փրկող Ամաղամբո ին գերեզմանին վրայ արդահատութեան արսուցի կայրակ մը թափեց արդեօք: Ար բուն սիրահարն՝ Ֆերնանին այսօրին իր տիրոջ հուստարիմ մնալու ուխտին գէ՛մ սրբազգծութիւն համարեց այն գերեզմանին վրայ քա՛նի մը ծաղիկ թափմովն: Հեղինակն այս մասին բան մը չբտեր: Տո՛ւր այս նիւթը Եթովպիայի մը կամ Ա. Հիւելոյն, և ահա՛ կ'ունենանա սրտատուչ սրբաբոյ մը:

Իսկ ես իր սկան կամ երկուստեան տենդէս ազատիս քնքնայն զօրութեան վերայ բելով՝ կը մաղթեմ որ յա՛ր աննուց և հանդիս թափասի խեղճ Ամաղամբոյն ուրուայանն Ամերիկայի երկրից անբաւութեան մէջ, մաղթեցով նաև քեզ անոր պէս անդուժ և ուխտագոհ Հնդկուհւոյ մը հանդիպել, հը-անդո-անուց և այս անոյ՜ հիւանդութեամբ իր լստաւազի . . . :

Բէրա, 1882:

### ՆԱՄԱԿ ԺԲ.

Ամառուան երկար օրերն և իրենց հետ Ազրբեան կղզեաց յառուկ ջերմութիւններն ահա կը մօտին՝ այժմէն ոմանց ուրախութեան և ոմանց ալ տրամու-  
թեան հեռատեսիլ պատկերներ ընծայելով: Չմե-  
ռուան աղմկաւի կեանքէն ձանձրացողները, թաւելու  
պարապստ երեակայութիւնները, ժանդաշար սիր-  
տերը, հիւանդոտ կուրծքերը, միշտ մը մտահալու,  
երանութիւն մը ժարսելու, բաղլին դէմ անիրու-  
ութիւն մը ներելու, բանահիւսական հրաշակերտով  
մը փառաւորուելու հարկադրուող հարուստները,  
Քեօնառն գրագէտներն և հոօբէկները կ'սկսին գրաւոր  
անդիմաց բնիլի փափաքներէ և անոյշ երազներէ: Հո-  
վասուն դիւրք գտնել, զով ու մարութ օղ շնչել, գե-  
փիւսին մեղմիկ շունչը ծծել, տերեախիտ ծառոց  
չուքին ներքեւ սրատապարուիլ, նուազած ոյժերը կաղ-  
դուրել, մաշուած մարմինը նորոգել, հեզասահ ջրոց  
մրմունջով կամ օղաշու արարածոց կենդանի երա-  
ժշտութեամբը ներշնչուիլ, վերակենդանանալ, յու-  
սող բիլ և սպառաչիկն նայիլ ժպտելով, ահա ասոնք  
են այն փափաքներն ու երազներն որոնց երջանակա-  
բար կամ մարտիրոսաբար կ'ենթադրուին մարդիկ:

Պատրաստի ամուսնու խտրակներուն կամ կա-  
կուղ բազմոցներուն վրայ անհոգաբար ընկազմելու  
սովորող կեղանիները նոր աշխոյժ և յոյս կ'առնուն,  
և եղանակին յարմար հազուստի կապուստի, շոպ-

լութեան և սերձանաց յօժարութիւններ կ'ստանան:  
Ախաւեսո նայուածները կ'ողևորին, յանդդնութեան  
չեչտով մը կը սրուին և յազմութեանց կը պարապս-  
տուին: Աղօթքէ ձանձրացող և շարժելու վարանող  
կնային չորթներ՝ արուած և շխտարուած խոստում-  
ներ կը յիշեն կարեկցարար կամ սողայնլարար, կեն-  
ցազատիական կամ Լութիւններով կը խլրտին, կը  
ժպտին, և սիրամայր սղբատաց նկատմամբ իրենց  
սղաշութիւնը կամ դանդաղութիւնը մտանալ կը յա-  
սաջադրեն:

Անտիական աղջիկն ձմեռ գիշերները դաշնակին  
տաջն՝ աչքը ձայնագրութեանց տեսիլն և խելքը սի-  
րականի մը տուած ժամանակ Ամբաստանլարի Բէկէթ,  
Մէքեթի սրտայոյզ եղանակը բնոյ միջած և հօշմած ըլ-  
լար բաւ շնամայիր, և ահա լիջօրեայ հանգ ստեան  
ժամերը գործնական սիրով սի մը նայնեղութեանց  
նուիրելու, և արտերի կամ սցրի կիմն ալ սուկի վի-  
պասանութիւն մը կրողելու քան թէ կարողալու մտա-  
նութեամբ և յասաջագրութեամբ կ'ափափուի: Հի-  
մենտախ աստարէն խոյս տալու կամ ներս մանելով  
անոր խորձրդաւոր շուքերուն տալու խնկու նոպաս-  
կով ժամողրութիւններ և սիրային արամներ կ'ա-  
բուադրին սիրոյ աշտատութեան կուսակից դուժան-  
ներու և երանութեան ծարաւի գժբաղդնութու սրտին  
մէջ: Ահնայ քաղցրութեանց և դասնութեանց հա-  
կապատիկներուն վրայ անձն իւր իր մնային, սրտին,  
հասակին, գաղտնաբաց, զոյս մանց, կարողութեանց  
և յօժարութեանց համեմատ կը մտախոհէ, կը յու-  
զուի, կը շարժի, կը յուսայ և ինքնին ծափ կը գարնէ՝

գիւղադնացութեան եղանակին գալուստը չնորհաւորելով:

Հասաստները, քսակին հետ խորհրդացելէն ետք նպաստուոր հաշուելիլու մը գտնող բարեբախտներ, երերուն կամ հասաստուն յաջողութեան մը վաստից շահագէտները, գրեթէ առանց գործելու հասարակին գանձէն կոխիլ ամապան ընդունողներն և երբեմն ալ հարկէն ստիգեալ տղաքաները կը պատրաստուին ուրեմն քանի մ'ամիսսուն համար Բերայէն չուէլու: Չնոստան կրճ կորստիներ կը ծածկուին, վարագոյրներն և օթոյները կը ծաղլուին, հայելիները, լամպարները, ամսաներն ու գաշակները կ'արջուրին փոշիլին և ուտիճին յարձակմանց գէտ պաշտպանուելու համար, աւերոյք ծառաներն և մեծանեծ շաղթութեանց ստփորութիւնները կ'արտաքսուին՝ աւերութեանց և դժգոհութեան ալ իրապէս գուցէ թագուն խնայասլութեան և կամ ստուգապէս ստամանակեայ պարզասլութեան և թեթեւութեան պատճառներով, և օգալտիսութեան պատրաստութեանց հնչուքն և աղմուկը կ'սկսին:

Իրարանցումն և աճագործումն աւելի մեծ են մտնաւանդ Բերայի այն տեսակ մ'ընտանիքներու մէջ որք ձեռն ի բուն միջին բանտերու նման տուններու մէջ կ'ոսնին, լոյս չեն ասնուր, մարութ օդ չեն շնչեր, բոյսի երես չեն տեսներ, թաշունի գալլայիլը չեն լսեր, խոնաւութեան մէջ կը բորբոսին՝ իրենց մարմնոյն աղտը բեհեզի՝ և խզիլն կեղտը գիւտակի մշները ծածկելով:

Երիվարը, կաւքը, թրամիլը, թիւնէլը, ջրե-

նաւը, նաւակն անընդհատ կը շարժին, կը գործեն՝ արագ փոխադրութեան մ'անեն գիւրութիւնները ընծայելով:

Վասիւրի և Մարմարայի գլուղերն ու կղզիները նոր շարժում և կեանք կ'առնուն, ամայի ամառատունները, տաղաւարները կը լեցուին, ծառերն իրենց չուքով և ծագիկներն իրենց հոտով նորեկ բնակչաց գալուստը կը շնորհաւորեն: Մովեղերեայ ճեմաբանները, գրասպարները, սրճարանները կը նորագուին, կը ներշնչուին, կը զարգարուին, երեկոյեան և գիշերուան տեսութիւնները, գուարճութիւնները, զրօսանքը, իրասկզութիւններն ու վշխուկները կը պատրաստուին՝ անհող մեծատանց և մարդկային առնէաներու (տոն) ժրութիւնը և աշխոյժը գրգռելով, վայելման հրաւեր կարգալով:

Բերայի թափստական և օտարական ուղեորին կը մնայ ուրեմն իր արկղերը կայել, մնաս բարեխայցեատեսները գրկել բարեկամաց և ծանօթից, կերպիւ ի իր մտնուց կամ ընդհատել օտար երկրի մը մէջ ստացուած նոր ստփորութիւնները, նոր յարաբերութիւնները, և մեյամաղձօրէն հրամեջտալ աքելելեան քաղաքաց Աէփիաթանին, և թէ չուզեր ցրելին արեւաշար տաղնագիլ, օրն ի բուն փոշի կլէլէ, և գիշերները յորանջել թիւ փիլ-Պաշլի կամ թագախմբի ծառուզիներուն մէջ:

Ճամն օրուան և օրը շարժումն չափ երկարատե և յամբարալ կիւրի ի երկրի մը մէջ ուր գործ չունիս և կը գեղելու աննպատակ, ուր մէն մի քայլափոխից կը հանդիսիս անցորդներու՝ որոնց գէտքն

անճանօթ և անտարբեր է, տուներու՝ որոնց տձև ճակատը փոշիէ խաւի մը ներքև տղ եղապէս թ աղբաժ է՝ չպարտով լեցուած և ծածկուած գ իմական խորտու ներու պէս, դոց դուռներու՝ սրբ դերեզմանական կափարջի մը հակակրու թ իւնը կը ներքնչեն քեզ, պա տուհաններու՝ ուր կը յուսաս տեսնել զուարթ երես ներ, ժպտուն շուրթեր, բարեկամական դէմքեր, և ուր սակայն հերմետապէս (hermétique) գոցուած փեղկեր և արևարդեղներ կ'երկին միայն թարթա փուն նայուածքիդ : Հոս կ'երկի պանդոկ մ'ուր դա տարի ստամբսներ պնակներու կը գ իսեն՝ Տոն ժիւ անի վարքային մէջ Բեարիլոյին գ իակը լափփոզ նո թի նաւարեկներուն պէս : Տոն՝ երգ եղիկ սրճարան մ'ուր Բարիլի բնիկային կոյուզինքն (égout) — դու իմն պոսնիանոցէն — եկած կ'իներ կերկերուն ճայնով մը քօ-քօրններ կ'երգեն և իրենց մերկու թ իւնը կը հանտխեն պատանիներու և ճերտնիներու առջև : Ամենու բեր կը տեսնես փողոցներ կամ գ ուհն ներ, գրօտարաններ, մի քանի հասարակային պար աշգններ, բարեղնեան բաղնաթ իւն մը, անբնդ հաս երթ կեկուլթ իւն, շարժ ում, իրարանցում, գործունէ ութ իւն, այլ գ ու, օտարականը լքուն և պանդուխտ, դու կը կարծես թէ յուսահատական առանձնութեան մը, ամայի անապատի մը մէջն ես, ուր մնալը ճանճ րանալու և հիւժելու համակերպիլ է, եթէ նիթա կան կամ բարոյական շահ մը, հրապոյր մը, կամ թ ա դուն խորհուրդ մը չունիս :

Չանճրոյթ . ինչ սակալի բառ . . . : Մարդկային հոգեոյ ամենէն անտանելի հիւանդութ իւնն է այն :

իրօք աչք ունիս՝ բնութեան և աշխարհի տեսարա նայ առջև գնայելու, ականջ ունիս մարդկային և գերմարդկային ներդ աշնալու թ իւնները վայելելու, թև ունիս՝ անչր գեաներու մէջ թուելու և հորիզոն ներու անդունդներն աներեւոյթ ըլլալու, զօրաւոր թոքեր ունիս անապալօղ ծծելու, հոգի մ' ունիս ան եզրութեան վրայ հի սնալու համար, այլ ինքզինքդ շլիթայուած կը համարիս : Ա՛ղբ աս թէ հաւատաքննու թեան քն քաշէի մը մէջ երկաթ է անուրի մը կապուած ես : Այլ գ տնես ի քեզ բնիկերա ին Խելօլէն մ'որ ինչ պէս կ'ըսէ Տանթէ՝ բերդին մէջ գատապարտուած է իր թ շնաթիին գանկը կրծելու և անօթի մեանելու . գողցես հանդիպելով Մեախիլի նայուածքին՝ հոգ և ին և մարմնովին կը քարանաս, և ահա շարժելէ, շնչելէ, զգալէ, ապրելէ գող ըլլող, այսինքն ճանճրոյթէն հոգեոյ մաշուիլը գ իտելով՝ կ'ըսես . անճնէ, քաջա դաէր . . . :

Մայիսի վերջին օրերէն առաւօտ մ'այս խորհրդա ժութեանց և տպաւորութեանց դրդումովն որոշեցի վերագարձի պատրաստութ իւն տեսնել և Բիւզան դիոնէն մեկնի՝ վայելելէն ետք սակայն իրաւանցս մին, որ էր Քէհաաշանէի բնական գեղեցիլութեանց հանդիսականն ըլլալ արևուն ծաղ ման ժամանակ և երազողներու յատուկ ծուլութեան մ'անուշութեամբն զմայլիլ : Այս զմայլման իրաւունքն եթէ ոմանց հո մար անըմբռնելի, գէթ իշխանութեան կողմէն ան բունարարելի ճանչուած է . . . : Քայելու, դեղերե լու, երկինք նաւելու, Աստուծոյ և բնութեան ճար տարութեանց վրայ հիանալու ազատութ իւնը՝ շնչե

լու և հաց ուտելու աղատութեան պէս՝ տակաւին նուիրակն կը համարուի հոս : « Տղաները միայն կը յօրանջեն արևազային և արևամայրին շքեղութեան սուղե » կ'ըսէ Է. Գինէ :

Ուստի կիրակի առաւօտ մ'առանձին ճանրայ և լայ և Բերայի մեծ փողոցը սկսայ քայլերովս շարել : Շատ կանուխ ելեր էի, և կրնայի գիշերուան լուսթիւնը և մենութիւնը շարունակուած համարիլ՝ եթէ ճանրուն վրայ չհանդիպէի քանի մ'անցորդներու՝ որք անշուշտ կանուխ գործ սկսող բանուորներ էին, և բազմաթիւ շուներու՝ որք հոն հոս անհողարար պառկած և կամ մեծահաց սեղանի մը մշրուները լլեւլու և ոսկրները կրծելու զբաղած էին : Տղեղ և ալտոտ շուներ՝ որք՝ ինչպէս կ'ըսէ Էտմոնտո Տէ Ալիշի՝ « կենդանի աւելի » գործ կը տեսնեն, և որո՞ց դէմ հակահրութիւն կ'զգալի և դժգոհութեամբ դէմքս կը ծռէի, թերևս յանիրաւի, քանի որ կը մոռնայի անոնց հաւատարիմ կենդանիներ ըլլալը և Քաղաքապահ ժողովին ալ Պրիարէի բազուկներ շունենայը . . . : Թո՛ղ ներէ ինձ Տիկին Տը Մթ աւելի ողին որ կ'ըսէ . « Որքան աւելի ճանչեցի մարդերը, այնքան աւելի սիրեցի շուները : »

Եթէ՛ ձայնս կարենար Ղազարոսի գերեզմանին վրայ որոտացող երկնային ազաղա՛րին պէս անսահմանութեան խորհրդոց վարագոյրը պատուել, \* Տը Լիւ-

\* Lazare ouvrit les yeux quand Jesus l'appela; Quand je lui parle, hélas, pour quoi les ferme-t-elle? Où serait donc le mal quand de l'ombre mortelle

չեմայնի անուանի հեղինակուհին կը հրաւիրէի այժմեայ Բիւզանդիոնի փողոցները, և տարակոյտ շունիմ թէ այս տեղի շուները մօտուտ տեսնելէն ետք՝ անոնց նկատմամբ պիտի շունենար այն համակրութիւնը որով իր քնքոյշ մատերն իր շրթ ունքէն, երեւէն, ծունկերէն չհեռացող Գարլէնը կը շոյէին, կը զգուէին . . . : Գժբազղաբար ներելի չէր ինձ և ոչ իսկ երազել ինչ որ դարուս երևելի հանճարին մերժուեցաւ իր սիրելի աղջկան գերեզմանին վրայ :

Թագ սիւմի մօտ մինչդեռ վար և վեր նայելով կը յառաջէի՝ աշխարհիս և իր ազտեղութեանց, երկնից և իր շքեղութեանց վրայ արտամապէս խորհելու կամ հողեատութեամբ հրճուելու համար, կառքի մ'անիւներուն հողմման հեռաւոր աղմուկը լսելով կանկաւի :

« Աըքամահրեմ հետաքրքրութիւնը » կ'ըսէ Ղորս Պայրն : « Գիտութեան մայրն է հետաքրքրութիւնը » կ'ըսէ ժիււ Սիմոն :

Որո՞ւ պէտք է հաւատալ . . . : Գուցէ երկուքին ալ : Իսկ ես կը խոստովանիմ թէ հետաքրքրութիւնն երկրորդ բնութիւն մ'եղած է յիս : Հեռաւորար սպասեցի և ահա՛ կառքը դադրեցաւ գլորուել և դուրս տուաւ բաւական հասակաւոր մարդ մը զոր յանուանէ քաջ կը ճանչէի, իսկ յսկանէ անդամ մը միայն տեսեր էի երրորդի մ'առջև : Եվրթիկ Պէյն — այս էր

L'amour violerait deux fois le noir secret, Et quand, ce qu'un dieu fit, un père le ferait? V. HUGO. Les Contemplations.

Քարդուան անունը — անունով Հայազգի այլ սիրտովն  
անազգի, և մայրաքաղաքին այժմեայ նշանաւոր ան-  
ձանց մին կը համարուի արտաքին շարքէ խարուող-  
ներու կամ շահ սխնդիրներու առջև: Իր դէմքը կը  
նմանի մշտնջենական լիմակի մ'որուն վրայ նետուած  
թուփը հանդարտօրէն և անպատիժ կը սահի՝ ինչպէս  
մոյկը (patin) սառին վրայէն. իսկ լեզուն երկու պաշ-  
տօն կը վարէ միայն. մին է քմացը հետ կափկափիլ  
(elaquer) պարօշին ընտիրը ճաշակելու համար, միւսն է  
դուրս ցցուիլ՝ մեծամեծներու ոտքը լղելու յօժարու-  
թեամբ: Ոսկին, հացն ու կիւնն անոր կենաց զլիաւոր  
նպատակները կը կազմեն: Դրամին առջև ծունր կը  
դնէ, խոհանոցին վեհութեան առջև ծափ կը զար-  
նէ, և ամենէն պատուաւոր կիւնը համա մը համարե-  
լով՝ անոր առջև կը խօսի առանց ձեռնոցի, ալիքն  
ապերասան լեզուով, Մի կարծեր թէ Եփրթիկ Պէյն  
միտք և սիրտ չունի: Աւելի միտք մ'որ չիլ է. ունի  
սիրտ մ'որ միտին է: Միտն յատկութիւնն է խարել, ի  
միւսինն է առել: Այս առեւութեան գլխաւոր առ-  
արկան է որքին վեհագոտութիւնն որուն առջև մենք՝  
Քալէօշ անքո՝ ակամածութեամբ կը խոնարհինք: Սակայն  
արժանապատուութիւն ըսուած զգացումն վնասա-  
կար չուայլութիւն մ'է այս անձին համար: Անազգի  
Պէյն իր այս սկզբան շնորհիւ ոսկի կամ աղբեցու-  
թիւն ունեցող մեծամեծներուն առջև կը ստուգայ, ա-  
նոնց սեղանին կը յարի՝ կազմիւն վաթթուող կիւն  
ալէս, Թրիպիւլէի գեր կը խաղայ, և իր ուղեւորներն  
գիրարկորութեան վրայ արգահատութեամբ կ'զմայ-  
քի: Պատրիարքարանին միտնորաք վտանգաւոր կը

համարի, և խաչելութեան պատկերին առջև սարս-  
առղ Մեփիսթօյին պէս կ'ահարեկի ազգային պաշտօն  
վարելու առաջարկութեան մ'առջև՝ որպէս զի իր  
դիրքը կասկածելի չընէ: Ալլա, մարդկութիւն, յա-  
ռաջգիմութիւն, հանրական շահ, ճշմարտութիւն,  
առաքինութիւն, բարոյականութիւն, իրեն համար  
ասոնք ազեղութիւններ են որք ժանտախտի մը  
ուպաւորութիւնը կ'ընեն իր երեւակայութեան վրայ:  
Բայց թէ Հայոց և թէ օտարաց ակմրանոցներուն,  
նամանաւանդ կանանց ընկերութեանց մէջ Եփրթիկ  
Պէյն կը մոռնայ իր ընկերական կացութեան ծագու-  
մը, որ է հացկատակութիւն. հոն Մէտիէրի և Լըվ-  
լէյսի հովիբ կ'առնու. մեծատունի և կնոսքի գոհնիկ  
ձեւեր կ'ընէ՝ պատշաճութեան և վայելչութեան ամեն  
օրէնք առաթուր կոխելով և մոռնալով որ եթէ ոչ  
իւր խիղճը, գէթ կօշիկը խթան մ'ունի: Լուի ԺԴ-  
եւ սովորութիւն ունը որտորութեան զբօսանքէ  
մ'ետք կօշիկներով և մտրակի ձեռնին խորհրդարանը  
մտնելու և անոր որոշումները ջնջելու: Բայց Օրիորդ  
Լազարիէրին յաջորդող գոռող և փառասէր Տիկին  
Մօնթեարանին հետ սիրային ժամագրութեան մ'ի-  
րաւունքը շահելու համար իր արքայական վեհագա-  
ուութիւնը մեկուսի կը թողուր և աւելորդ չէր համար-  
բեր կանոնաւոր պաշարման մ'ամեն սաղմագիտական  
հնարքները ի գործ դնել, նախ գեղանի և խելանի  
մարդիլուհիին սիրտը գրաւել, այսինքն ալ Քայն սկսիլ  
օժիւրին համեւելու համար:

Եփրթիկ Պէյն աւելորդ կը համարի այս փափուկ  
զգուշութիւնները, և այս կամ այն կնոջ անգամ մը

քարն տուած ըլլալու պատեհութիւնը իրեն համար իրաւունք մը կը սեպէ համարձակապէս անոր կարգալու հրաւէր մ'որուն պատասխանն է Մարի Պիէրին բիփօլմըրը . . . : Այս կանամբի այլ երբեմնակի Ռեքայի սիրատանց թագուն յաճախորդն անգամ մ'առանց կարմրելու լրբութեան փորձ մ'ընելէն ետք ալ շիկնելու յատկութիւնը կորուսած է : Իրօք բնախօսաները կը հաստատեն թէ մարդկային կազմութեան գործարանաց միոյն յատկութիւնն երբ սովորի կիրքով կամ կամովին նենդուելու , հուսկ յետոյ գործարանն իսկ Ֆիզիզապէս նենդուած և խանդարուած կ'ըլլայ : Շփման Պէյին երեսն անգամ մը շարժելէն ետք ալ իրապէս կորուսած էր շիկնելու Ֆիզիզական յատկութիւնը , հետեւաբար ապտակը կրնար անոր վրայ դրոշմուիլ առանց ամենափոքր հետք թողլու : Անամօթութիւնն անոր սիրտը և կնամուտութիւնն ալ դանկը պարպեր էին բոլորովին . . . :

Այս էր ահա այն անձն որ կառքէն դուրս նետուելով կողմնական փողոցի մը մէջ աներևոյթ եղաւ իսկոյն , և որ թերևս գիշերն ի բուն Միւրմընէի մը առաջնորդութեան շնորհիւ սիրատան մը մէջ տքնած էր իր ներքնապէս քայքայուն առողջութիւնը մաշելով և լի կարծուած քսակը պարպելով . . . :

Ակնարկով մը վարձեցի կառքը , և ժամի մը չափ յամրապէս սահելէն ետք կառուղիի մը վրայ , զոր Բերացիք Սուլթան Ապտ-իւլ-Ազիզի կը պարտաւորին , ինքզինքս գտայ բարձրադիր վայր մը ուսիէ Գէհաուհանէն - և իր լայնատարած շրջականերն առջևս կը պարզուէին մոզական շքեղութեամբ :

Արշալուսոյ նորածին ճառագայթներն արևելքէն կ'սկսէին արձակուիլ և հորիզոնին վրայ կարմրափայլ սաւան մը տարածել . քսակի մը յետնորդ աստղեր , զոր իր վառ վռուն երևակայութեամբը տիկին Տիւսաք « Աստուծոյ աչքէն ընկած լուսեղէն արտօսք » կ'անուանէ բանահիւսարար , հետզհետէ կ'աղօտանային և կ'աներևութանային : Օղբ գեղեցիկ , պայծառ և զով էր : Նրկնից հաստատութիւնն իբր անբաւ գմբէթ մ'իր կապուտագեղ շքեղութեամբը բիւրբար կը հրապուրէր : Կարծես թէ Արարչին հրամանաւ ողիները , որք Ալան Քարտէքի և բոլոր « Բէլէլներու (ողեպալա) » դաւանութեան համեմատ եթերական անշրպեաներու մէջ երկրի խոններով կը վխտան , արշալուսոյ խորին և լռին ժամերը պատեհ առիթ սեպելով հոյ թ հոյ հոն խոյացեր և իրենց շունչովն երկնից անդունդները մաքրեր էին : Մինչ այս , մինչ այն օրուան աստղն արդէն իր ակնխառնիկ և լուսարորոք ափսէն հորիզոնին վերեւը բարձրացնելով ոսկեղէն փոփէ թափանցիկ խաւ մը կը կազմէր Գէհաուհանի մերկ կամ զարդարուն բլուրներուն , դալարագեղ մարդափայլութեան , ծառի և թուփի շքեղաձև փունջոց տերևալի կատարներուն , ինչպէս նաև Պարպիզէս գետին վճիտ և հանդարտ ջուրերուն վրայ , որք չորս հազար բամբակի չափ տարածուող ձորի մը մէջ արծաթեայ օձարտոց ժայռակէն մը կը կազմեն , և հեզիկ ու մնջիկ սահելով Ոսկեղջիւրի խորը կը թափին՝ Միտարիսի ջուրերուն հետ խառնուելէն քիչ մ'ետք :

Միայն գեղանի կիները չեն պջրասեր : Ահա Փեպոսի ճառագայթներն ալ հպտանքով կը նագէին , կը

բեկբեկէին, կը շողշողային, կը խաղաղային զաւարեաց վրայ՝ նորաբոյս խոտերուն զիշերային ցօղը անյագաբար և անզթաբար ծծելով: Քանի մը դաշտաց ցորենի հասկերուն հաւասարող կակաչներ՝ զովասուն գեփիւռի մը շունչէն նազելաբար ծուռող և կանաչագոյն ծովի մը ծփին վէտերը ձեւացնող բոյսերուն միջև կը փթթէին, կ'օրօրուէին, կը ժպտէին սպիտակ կամ դեղին մարդ արտած աղիկներու հետ, և բնութեան վսեմ վրձինով նկարուած զմայլելի սպտկերաներ և գեղեցիկ փնէներ կը կազմէին:

Խոխուտ և տձև կամուրջէ մ'անդին մեյամաղձօքէն կը կանդներ կայսերական սլաշատը, զոր Սուլթան Մահմուտ շինել տուած է: Այս սլաշատը կամ տաղաւարն իր շուրջն ունի անտառանման սլարտէզ մ'որ տարիներէ ի վեր մարդկային ուշադրութենէ վրիպած և բնութեան անքննելի խնամակալութեան յանձնուած է: Կնձինները, ցախերը, մուլթղենիները, սօսիները, վարսաւոր ուռիները, աղասիաներն ընդարձակ ծառանտառ մը կը կազմեն հոն՝ սոխակներու և այլ թեւաւոր երաժիշտներու երամներ աներեւոյթ օտտերու կամ թագուն բոյներու մէջ սլատսպարելով, կէսօրուան ջերմադին ժամերուն սաստիկութիւնը զովութեամբ անընդհատ մեղմելով, և իրենց խիտ տերևներովն ալ արևին ուղղահայեաց ճառագայթից գէժ անհունութեան խորհրդաւոր մատերով հիւսուած վարադոյր մը կազմելով:

Պարպիզէս գետին ափանց վրայ արդէն քանի մը կառք կը շրջէին՝ տեղ տեղ կանկ առնելով: Այս լուսնաբերուն երկուքին զուսամուտներէն մանկային ան-

մեզ և կնային գունեղ երեսներ դուրս կը ցցուէին, կը խնդային, կը խօսէին: Քանի մը մանկանց խնդ ուռներն ու խօսքերն տալաւարին պարտիզին մէջ ճառագել սկսող թռչնոց երգերուն հետ կարծես ներդաշնակութիւն մը կը կազմէին: Իսկ մի քանի կանանց կասկածելի երեսներ, որք բիւզանդեան Քոլլայի կամ Շիրթիի պէլի մը զիրկէն նոր ելած սիրավաճառներու կը վերարեթին գուցէ, առաւօտեան հովին և օդին կը յանձնէին իրենց անդոյրէ կրծուած և համբոյրներէ տաշուած այտերը սրբելու դժուարին դործը:

Կենաց, բնութեան, շարժման և ուրախութեան, տղեզութեան և գեղեցկութեան այս ամեն տեսարաններուն առջև կը հրճուէի, կը մտախոհէի, և դողցես կը մտանայի մահկանացու բլլալս:

Կատարանին ճանրայ տուի, տալս սկսայ ման գալ, տեղ տեղ կանկ առնուէլ հանդ չելու համար, քանի մը տեղեկութիւններ ստանալով, ծանօթացրութիւններ նշանակելով և մտածելով թէ դուցէ առաջին և վերջին անգամն է այս դեղեցիկ բնավայրերը (paysage) տեսնելու: Արեւ ժամէ ետք արթութեամբ հաւանեցայ մեկնելու, նաւակ մը մտայ, և հանդ արտապէս Կալաթայի կամուրջը հասայ՝ Ասկեղձուրի մէջ նաւելու առեն Խաս-Գիւղին վրայ բազմիցս արտմութեան և զարմացման նայուած մ'արձակելէն ետք: Իրօք այս դիւզն ուր առենօք նշանաւոր Հայեր և հաստատութիւններ կային, այսօր կիտաւեր տուներու, խարխուլ շէնքերու անշուք և ողորմելի դէպ մը կը կազմէ, և տեղ տեղ իրարու մօտող և երկինքը ծածկող վտան-

տողաւոր պատգամներու կամ տանեաց քիւրսու-  
տակէն երբ անցնելա, երբ դոց դուռները և պատու-  
հանները տեսնես, երբ փողոցներուն ամայութիւնը  
և բութիւնը նշմարես, ակամայ կը կարծես թէ ան-  
դոցն բնակիչները վանարգելութեան մը դատապար-  
տուած են, և թէ դիւզն ալ ահադ ին վանք մ'է աւե-  
լի քան թէ շարժող, դորժող, աղբող բնակիչներու  
փեթակ մը:

Ար պարտաւորիմ արդ վեքջտալ ուղեդ բութեանցս՝  
պատրաստ քլլալով քիչ օրէն շողենաւ մանելու և շու-  
տով ձեռքդ սեղմելու, եթէ սակայն Մարմարայի  
կամ Միջերկրականի ջուրերը խաղ մը չխաղան ինձ՝  
Բերա, 1881:



**ՆԱՄԱԿ Ա.**

Ազնիւ Մամուրեան,

Ուղեգրութեանց վերջինը Հայոց դրական հան-  
դէսներուն ընտրելագունին ուղղելէն ետք՝ 1881 յու-  
նիս ամսոյ մէջ շողենաւ մտեր և Բիւզանդիոնին  
մնաս բարեաւ ըսեր էի այն մեղամարտային տրամա-  
դրութեամբ որուն ուղեւորներէ տմանք ակամայ կ'ենթ-  
արկուին, զգալով թէ յետինն է այն նայուածքը դոք  
Աստանդիուպոլսոյ կամ ասոր նման չքեղաղլիք քա-

ղաքի մը բնական և արհեստական փառաւորութեանց  
մրայ կ'արձակեն՝ դէպ իրենց երկիրը վերագտնա-  
լու ժամանակ:

Մուզիւ երբ Աւստրիական շողենաւն Ոսկեղջիւ-  
րի նոր կամբջէն դուրս ծովը դրաւոյ նաւերու և շու-  
ղենաւերու արեւուփ անտառէն անցաւ, երբ Սլոյոյ  
— Պուրնուի տրամադէս խորհրդաւոր արտաւորը քե-  
րեց, երբ Մարմարայի հանդարտ և երկնադոյն մակե-  
րեցիքը կազմող ծփին և հեղատահ ալիները ձեղքելով  
բաւական հեռացաւ, երբ Հին-Պալատին հրուանդա-  
նէն մինչև Լյիոյ բլուրներու վրայ տարածուող Սասմ-  
պօլ և իր սրածայր մինարէները, Մագրի-Վիւզ և  
Այա-Սթեֆանօ Աստանդիուպոլսոյ ձախ կողմէն,  
խոյ Իսկիւտար, Քատը-Վիւզ, Յէնէր-Պազէ՛ֆի և  
Պիթիւնիոյ արշալակազայ սան աջ կողմէն սկսան սակա-  
տա սակաւ նսեմիլ, հորիզոններու հետ խառնուիլ և  
կապարադոյն անդերու նոսնաթիւտա մանրեցիթ  
քլլալ, շիրցայ թախմութեան զգացման մը գիտնողբել:  
Այս տրամադի տարաւորութեան և ստաւել սաստ-  
կանալը կ'զգայի՝ անուշաղիւր և տարտամ նայուածքս  
սեւեւելով այն փրփրայի ակօսներուն վրայ որք շու-  
ղենաւին արագընթաց սահումէն անընդհատ կը կապ-  
մուէին և կ'անհետէին իսկոյն՝ ջուրին վրայ տանող  
ամենափոքր փոթի մը թողլու, և որք նոյն լիջոցին  
մարդկային կենցաղի փաղանցուկ իրողութեանց ու-  
նայութեան, ամեն տեսակ երանութեանց և ապե-  
րանութեանց յաւիտենական նորոզ ման և անհեա-  
ման գարմտաղի օրինակ մը կ'ընծայէին ինձ:

Ճաշի հրաւիրող հնչակին ձայնն ընդ հատեց մտա-

խոհաւթիւնս՝ որ ժամէ մ'ի վեր կը տեւէր: Այս հնչիւնը քնարերգային ներգայնակութեանց ամենէն հնչտային և աւարկութեանց ամենէն համոզակերը կ'երևի այն ամեն ստամբաներու որք դատարկութեան զէմ բնածին հակակրութիւն մ'ունին, և այն ականջներու որք միայն ուտելու համար սպրոզներու կը վերարերին:

«Թէև գիտեմ, կ'ըսէ լրբա Պայրըն, պերճախտութեան, ոսկւոյ, կնային զեղեցիութեան, շողքորթութեան, սպառնալեաց գորութիւնը, սակայն կայ ուրիշ գորութիւն մ'որ միւսները կը գերազանցէ, և որ կրնայ մարդկային լաւագոյն զգացմանց հետզհետ սաստկացող գիւրագրութիւնը զայլէ կ'ակնարկեմ այն մագական, անդիմադրելի հնչիւնին որ հողւոյն յուզարկութեան հանդէսը կը գուժէ, և որ է ճաշի զանդակի հնչիւնը:»

Այլ խոստովանիմ թէ մեր շողենաւի սեղանին հրուէքն իմ վրայ շունչեցաւ այս ազդուժը և հրապոյցը: Լաւազոյն կը համարէի նախ յագուրդ տալ նա յուածքին, զոր թերևս վերջին անգամ կը սնէին Բիւզանդիոնի հեռանկար տեսարանն և Վարմարայի վրայ անցնող վերջալուսական ժամերու տխուր քաղցրութիւնն, մինչդեռ հացի պատտա մը կարելի էր միշտ գտնել, մանաւանդ Թուրքիոյ հողին վրայ:

Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ, կ'ըսուի: Ահա՛ քրիստոնէական ճամբարութիւն մ'որ մարդուս ներքին ազատութեան ուրացումն է: Բայց այժմեայ լուսաւորութեան գաւաին ոչ այս ճամբարութիւնը ուսնելու, ոչ ալ Վօլթերին կամ Պլեզլին դիմելու

պէտք կ'զգայ՝ մարդկային կամքի կատարեալ ազատութեան էութիւնը մերժելու և խոստովանելու համար թէ ինքն հարկին, պարագաներուն և շահերուն խաղալիկն է, այսինքն թէ Ֆիզիկական և մտական օրինաց զրգումովը կը շարժի և կը գործէ, և թէ անոնց ազդումն և ոչ թէ ազատ կամքի մը մղումն կը հարկադրուի իր մտական, բարոյական և ֆիզիկական ոյժերը գործածելու ժամանակ:

Մինչդեռ ուղեւորութիւնս յետին համարեր էի ծննդեան երկիրս վերադառնալու ժամանակ, ահա ես ևս՝ նորէն կը տեսնեմ Օսմանեան երկրին մայրաքաղաքը, ըստ իս անձնական գործ մը կատարելու, այլ ընթացիցս և գործողութեանցս շարժառիթով զուցէ իզմէ լաւ ճանչելու սրահանջատութիւնը ունեցողներու կարծեաց նայելով՝ նաև ազգային կեանքը սոսնճասէրելու և Պօլսոյ շքեղութեանց վրայ շնչելու համար: Ահա՛ Ռսկեզջիւր, Գատը-Գիւզ, Գրդ-Գուլէսի, Իւսկիւտար և Պուլիտըրու լեռան զալարաւէտ ու ծառուտ կուշտերն ու բարձունքն երկու օրէ ի վեր ՕթէլՏը Պէշանի պանդոկին պատու հաննելէն նա յուածքս կը գզուեն, և՛ խորհելով իմ այս յանկարծազէտ բացակայութեանս ստիպողական պատճառին վրայ՝ ինքնին կը խոստովանիմ թէ ասանց մասնաւոր գործի երկրորդ ուղեւորութիւն մ'ընելու չպիտի հարկադրուէի, և թէ նաև կարելի չէր աշխատութեան անխուսելի օրինաց շնորհակցել: Աշխատութիւնը մարդուս ձեռքը կը սրբագործէ, քսակը կը փառաւորէ, նաև յեղափոխութեանց ու դարերու փոթորկին զիմակարգ նոր և ընդհանուր ազնուապետութիւն

մը հաստատելու կը նկրտի : Հայ կը տայ այն ոչ միայն այսօրուան այլ նաև վաղուան համար : « Անօթ ութ կեան հետ համաձայնող քաղաքակրթութիւն չկրնար ըլլալ, կ'ըսէ Ալէքսանդր Հերցէն : ստորին դասու ժողովուրդը միշտ ստորին դասու ժողովուրդ սկիտի մնայ մինչև որ յաջողի անունը և ազատ ժամանակ շահելու : » Իրօք վաղը հացի համար աշխատելու չտարտա իլը լոյսի համար աշխատելու ազատութիւն կ'ենթադրէ : Այս է աշխատութեան, այսինքն տասնեկններորդ դարու նոր բռնաւորին անընկճելի կամքն : նուիրական բռնակալութիւն, որուն դէմ ընդ վզին անկարելի է առանց պարտութեան, այսինքն տարելէ դադրելու, և որ ահ ու սարսափ կ'ազդէ միայն Նաժարօնէին պէս հանդիշիլ և քնել սիրողներուն : Իրաւ է որ Պոլսոյ բնակչաց, և մասնաւորապէս Հայոց մէջ չես կրնար տեսնել բուն աշխատասիրութեան ոգին, այն որ դիտական և հնարագիտական ոյժերու կիրառութեամբ օրինաւոր հարստութեան և մարդ կային բարօրութեան մի ազդեւորն և դամ է Եւրոպայի և Ամերիկայի մէջ : Հոս օր մը բաւող հացի համար աշխատողն և սոգա հանդարտօրէն դեղերիլ կամ խօսիլն ընդ հանուր սովութեան մ'է դողցես : Բայց այս մարդ կային անդործունէութեան փոխարէն կը տեսնես բնութեան անընդհատ գործունէութեան և աշխատասիրութեան ոգին, որոյ հրաշակերտից կարգը կը դասուի ստուգիլ Աստիօրի նեղուցն իր քսանեօթն մըրնի չափ տալածուող մոզական ափանց և բուսական ու ճարտարագետական պերճանաց հետ :

Երեք օրէն ի վեր հոս եմ, և արդէն ժամանակ

ունեցայ մինչև Բուսէլի-Հխար երթալու Դէրէէթը-Խայրէճի մի շող ենաւովն, որ Խզիբի Գարջը-Եագա, Գալաթալ, Գարանթինա և Կէօզ-թէփէ ըսուած ծովն զերեայ գիւղերուն մանրագիտական և Կորսնիլ շող ենաւերուն քով Կրէյն Իսթէրի համեմատութեամբ մեծ և հանգստաւէտ երեցաւ ինձ : Յանտին պէս երկդէմ շըլլալով և չուղելով Գէրգէի մը պէս շարունակ դառնալ՝ նեղուցին երկու ափանց տեսքը մի և նոյն ժամանակ վայելելու համար, մասնաւոր ուշադրութիւնս միայն Աստիօրի եւրոպական եղբայր չըրէթութեանց տուի, և ահա հեղահեղ իմ առջև պարզուեցան Ալէքիթալ՝ որ բլուրի մը ստորտան և փոքր նաւահանգստի մը բոլորտիքը շինուած է, և ուր տուներու միջև, բնակիչներու և բոյսերու վերև կը կանդհին սօսիներ՝ որք՝ կը կարծուի թէ՛ համբաւաւոր Պարսպըրուս ծովահինին գերեզմանը կը հովանաւորեն : Զրագանի-Պալան՝ որ իր մերսերէ պահեղով, խոյակներով, դմբթիներովն և փառաւոր ճակարակներով՝ անընկեան շուպրութեան և բազմապիւղ ճարտարագետութեան իր մի ախտանեան նմոյճն խորհրդաւոր շուքեր կը ախտէ Աստիօրի ջուրերուն վրայ : Օրթա-Բիւզ՝ որ նոյնպէս բլուրի մը ստորտը կը տարածուի և որուն ետևն, բլուրին կատարին վրայ ծառերու և թանճրախառն երևնելու միջև կ'երևին Երջարդ-Քէօզ կի սպիտակ պատերը : Գուրու-Չէմէ՝ ուր կը կարծուի թէ Մեակա նաւէն դուրս ելաւ ժայռնին հետ : Արնաու-Բիւզ՝ իր նաւահանգստովն և առաջ տատաւոր նաւերով : Ապէք՝ զոր բարձրաբերձ ծառեր կը հովանաւորեն՝ սիրաճարներու համար բոյներ և թա-

դուճկներու համար քմահաճութեանց ասպարէզներ կազմելով Րուսկի-Հիսար՝ որուն երեք աշտարակները կը կանդնին Նրմակոն ըսուած վիմուտ լեռին ճիշդ այն զտովայրին վրայ, ուր Գարեհ կեցած է՝ իր ահագին բանակներուն Մանարօզ լէսէն շինուած կառնոցին վրայէն անցնելը տեսնելու համար, ճիշդ Քսեմոփոնին պէս որ Տամաթրիսի գաղաթէն կը նայէր երբ իր տասն հազար նահանջողներն այն կամուրջին վրայէն Եւրոպա անցան . . . : Իրօք Վոսփորի ամենէն նեղ վայրն է հոն. երկու հրուանդ աններուն վրայ Սուլթան Մէհմէտ Բ-ի (եւրոպական եզրը) և Սուլթան Պայաղիտ Երըրըմի (ասիական եզրը) իշխանութեանց ժամանակ շինուած այս երկու բերդերը, իբր Եւրոպայի և Ասիոյ շրջաօճիկն հոն իրարու կը մօտին և պատմական համայններ կը փոխանակեն առանց բնաւ անկեղծ հաշտութիւն հաստատելու իրենց մէջ, առանց երբէք վերջ տալու այն հակակրօնութեան, որ աշխարհիս այս երկու նշանաւոր մասերուն քաղաքակրթութեան մէջ կը շարունակուի նախապատմական դարերէ ի վեր. հակակրօնութիւն Եւրոպիոյ, որու լուսաւորութեան հոսանքն զողցես թուրքի մը հանդիպելով կ'արդելու շուտով Ասիանցներու. հակակրօնութիւն Ասիոյ, որ այս լուսաւորութեան մակընթացութեան խորհրդաւոր և հեռաւոր շուկը լսելով ահարեկ կը սարսփի, և անխուսելի այլ փրկուէտ ողողման մը դէմ մաքառելու ասպարիւն փորձը կը շարունակէ :

Ասիական ազգաց կրօնական, ընկերական և քաղաքական հիմնադրութիւնները, ժողովրդոց յատուկ

վարքն ու բարքն, աւելորդ ապաշտութիւններն ու նախապաշարունակները բարեշքման օրինաց անրեղունակ մտայած և թշուառութեան ու տգիտութեան իբր անմատչելի պատուարներ կանգուն կեցած են տակաւին : Բայց յատկապէս ինչ որ յատուկ է այլ ստուգապէս կը գործէ անդուլ, իր շունչն արդէն սկսած է այս պատուարներու նկատմամբ ունենալ այն ազդեցութիւնը զոր Յեսուի փողարն ունեցաւ Նրիքովի պատերուն նկատմամբ : Հետի չէ ուրեմն այն օրն ուր Վոսփորի այս երկու շրջաօճիկը Եւրոպիոյ և Ասիոյ մէջ փոխանակուած համայնքը պիտի դադրի անտարբերութեան համայնք մ'ըլլալէ :

Բիւզանդիոն իր հնաւանդ յիշատակներով, պատմական յիշակերտներու մնացորդներով, բնավայրից և դրից շքեղութեամբ, համաշխարհային բնակիչներով ու լեզուներով, արեւելեան և արեւմտեան վարուց ու բարուց, պատմութեանց և աւանդութեանց զարմանալի խառնուրդով, Կօսէն Ալի մը գրչին սպասող թագուն կամ յայտնի աղեղութիւններով, ընկերութեան բարձունքը և ստորտար գրաւող փտութիւններով ամեն գիտող ու զիտներու հետարբքութեան և ուսումնասիրութեան առարկայ մ'եղած է : Իսկ Վոսփորի նեղուցին և շրջակայից հիմնալի տեսարանը, այն որ Րուսկի-Հիսարի բլուրին բարձունքէն աչաց անջն կը պարզուի մինչև ի Պօլիս, նեղուցին հակադէմ առանց զաւարազարդ լեռնակներն ու սորահարթները, ասոնց զատկայրներուն և ստորտաներուն վրայ խմբովին կամ պարտէզներու, անտառակներու, այգիներու մէջ ցամուցի շինուած ամա-

բանոցներն և շաւիշները, վելլերներու, փաշաներու, հարուստ սեզանաւորներու ծովափնեայ ապարանները, ծաւերէ և ծաղկաւէտ բոյսերէ հովանաւորուած կամ չբջապատուած տաղաւարները, Վոսփորի նաւասահանգի սաները, լճակները, դէպ այս կամ այն ձորն ստղոսկող խորչերն որոնց կապուտաղեղ մակերևոյթն իր ծփին և յամբասան ալիներով շնորհալի հակապատիկը մը կ'ընծայէ Քնէանման մարդափայրերու և մարմանդներու հետ, հորդոտներու հողեղբաւ մեղանաղձութիւնը, երկնից դմբէթը վարագուրող մերթ կապարազոյն և մերթ ծիրանափայլ ամպերն որք հնձոց և ծաղկանց համար կեանք, իսկ ցամաքային և ծովային գայմաններու և ալիիտներու համար շանթ կը պահեն իրենց պատուած կուշտերուն մէջ, Մարմարայի և Աւ Մովի միութեան դիժը կազմող ջուրերուն «յախենական ապստամբութիւնն որով, ինչպէս կ'ըսէ Վ. Հլուիօ, կոհակներն եղբրաց և ստութիւնները ճշմարտութեանց զէմ կը մարտնչին» Թուրնըֆօրի, Բուզվիլի, Գրուայի, Լամարգինի, Կոզիէյի, Շաթօպրիանի, Էմիլ Եղամպերի, Էամոնսօ Տէ Ամիչլի նման երևելի դիտուներու, բանահիւսներու, դրաղէտներու և աշխարհաբջիկներու ուղեղութեանց և զմայլման անապաւելի նիւթեր հայլմայլած, և դրեթէ ամենէն ալ բացարձակապէս սղոքալի վճիռ մ'առած են, որ է ափնաբեղեցեկ, եթէ սակայն ի բաց առնուը սէգ և զժուարակամ Անկլուհի մը, Լէտի Մօնթակ, որ ամեն երևելի ուղեւորներու պէս Աստանդնուպօլսոյ բնական պերճութեանց վըրայ սքանչանալու և աշխարհիս առաջին գեղեցիկ

դիրքը համարելու ժամանակ «թերևս» մը կ'աւելցնէ, «Արդէս դի, կ'ըսէ Ամիչի, առաջնութեան պատիւ իր գեղեցիկութեան համար պահէ:»

Բայց եթէ գեղանի կին մ'իբրուունք ունի անձնական հրապոյրներուն կոթնելով ինքզինքը և օրնութեան մի հրաշակերար սեպելու և իր գեղեցիկութիւնը Բիւզանդիոնի շքեղութենէն վեր դասելու, կնապաշտական չղրքորթութիւնն մ'ըրած չեմ բլլար կարծելովս թէ մայրաքաղաքիս Հայուհիները, Օսմանուհիներն ու Հելլենուհիներն շեն հասնիր Ալպիոնի մեծամիտ դաւալի մը տալու այս իրաւունքը:

«Միթէ ճէն մ'է ան» ալաղակեց Աստարգին՝ չդուտեմ որ պայտաին կամ տաղաւորին պատու հանր դարող Օսմանեան յաւերժհարս մ'ընդշնամբելով (entrevoir) իր վաւ ժուուն երևակայութեան հաստաւածակողմնիւ (prisme) և սրտին աչքովը:

Արեւելքի կանանց գեղեցիկութիւնը հոշակաւոր է, և ի բնէ անախ բանահիւսներու երևակայութեան հողի մը առած և միանդ աւայն գնայում պատճառած է:

Գիցարանները կը հաստատեն թէ օր մը Հերաս Աթենաս և Ասպոլի Թոս լեւան մի անտառին շուքին ներքե երեցան Պարիս անուն արջոյսպրուն այժարածի մը, և շնորհագեղնեթէն անձնուր իր բնական հրապոյրները Երթամու տղուն առջև պարզելով՝ ամենքը միտսին զինքը հրաւիրեցին վճուելու թէ երեք դիցուհիներուն որն էր գեղեցիկազոյնը: Պարիս Ասպոկան տուաւ գեղեցիկութեան պատիւը, և իր այս գեղադրական արդարաւորութեան փոխարէն կըրտեմ

Աստղիան շնորհիւ՝ սիրել Մենելասի կինը՝ Հեղինէն , որուն ասորիածունքուն թիւն երեսունչիցն անցած է սակայն , և որուն համար հելլենական զիւցազանց և թագաւորաց արիւնը Ելիոնի փողոցները ուսողեց , և Տրոիան հուրի և սուրի մասնուեցաւ : Հեղինէին հափափումը անդի առաւ տանամեայ պատերազմի մ'որուն հանդիսականներն էին աստուածներ և աստուածուհիներ , և մարտիկներն էին զիւցազներ և զիւցազնուհիներ և որ՝ ըստ իս՝ պատերազմներուն ամենէն փրկուէան ու արզիւնուսորն եղաւ : Աշխարհս թագակիր պոռնիկի մը կը պարտաւ որի Հոմերոսի Եղիակնը , ինչպէս Կոստանդնուպոլիսն ալ սիրամուկայսրուհւոյ մը , Թէօտորայիս նախածեւանութեան կը պարտաւ որի իր ճարտարապետական յիշակերտներուն ամենէն երեւելին , այժմեայ Այա-Սօֆիան :

Արդ՝ եթէ Բիւզանդիոնի զեղանի Օսմանուհիները , Արմենուհիները , Հելլենուհիներն օր մը Չամիլ-ճայի լեռանց անտառներուն մէջ հաւքուէին և բիւզանդական զեղազէտ Պարսի մ'առջև հանախելով իրենց անձնական և ցեղական շքեղութիւնները՝ ուղէին զիսանալ թէ զեղեցիութեան մասին որ ցեղէն կիներն արժանի են առաջնութեան պատկին , Պօլսեցի Պարսն այժմեայ Մենելասները ամուսիններուն ամենէն դժբաղդները ընելու յօժարութեանը հետ անդամ մը խորհրդակցելն ետք եթէ Արմենուհւոյն տար նախամեծարութիւնը , և կամ եթէ աշխարհիս գեղեցիկազոյն ցեղերուն մին համարէր զան , թերևս ոչ մեծ անիրաւութիւն մը դործած , և ոչ ալ Օսմանուհիներուն և Հելլենուհիներուն զեղեցիութիւնը

անարգած կ'ըլլար : Հայնս սնապարծութիւն և աններելի կողմնապահութիւն , ազազակեն դուցէ հիմակուան հանճարեղ անդրիագ ործներն և պատկերասաններն որք իրենց անդրիներուն կամ պատկերներուն կաղապարը և օրինակը անձամբ հայթայթող արեւելեան զեղանիներու երեսուն կամ թագուն հրապոյնները փորձառութեամբ կը ճանչեն և որք զեղասիրութեան ( amour du beau ) զգացումը իրենց սրտին և մտքին մի անկապտելի ասանձաշնորհութիւնը կը համարին՝ մեզի բոլորովին անձեռնհաս նկատելով զեղազիտութեան մասին : Չեմ համարձակիր Թուրքիոյ ճարտարապէսներուն այս պահանջոտութիւնը խափաքնելու , թէև ներքի է ինձ կարծեյ թէ այս կողմերը տակաւին չգանուած է Ասիայէլ ի կամ Գուսթուֆ մը առջև իր մերկութեան հրապոյնները պարզու և հանճարներու զերեղմանին փոքր բացող Ֆօրնարինա մը , Տիկին Տիւպարի մը :

Կլնդուեիմ հանճարեղ ճարտարապետաց զեղասիրական զգացման սաստկութիւնը , որ սակայն ումանց զժրազուլեան , ոմանց անկման և ոմանց մահուան պատճառն եղած է : Թերևս տարօրինակ և անհուսաալի երևի այս կարծիքս , և սակայն պատմական փաստերով կը հաստատուի այն :

Երբ Անթուան վան-Տիք Սան Լօրենցօ եկեղեցւոյն սիւներուն միոյն կոթնելով անսաւ զեղանի Պրինեօլ կոմսուհին զոր Պրինեօլ կոմսն պատկազրութեան հանդէսէն ետք ձեռքէն բռնելով կը տանել , անդամ մը կոմսին նայեցաւ և իր բարեկամին թիւը բռնելով ըսաւ . « Կեանքս կը տայի եթէ այս մարդուն

կենաց մի քառորդ ժամն իմն ըլլար :» Ահա՛ մշտադ ին սաղաղակ մ'որ սնդարմանելի դժբաղդ ութեան և հոգեմաշ յուսահատութեան մ'արձայանքն է : Եթէ Վլան-Տիք դժբաղդ եզաւ գեղասիրական զգացման մը զօրութեամբ, Գուսթու իր հանճարին մտրկը տեսաւ՝ սխեւով Տիկին Տիւսարին որ միայն իր սիրտը շնորհեց անոր, իր գեղեցկութիւնը թաղակիր տարփածուի մը յատկացուցած ըլլալուն համար, և Ռափայէլ՝ Ֆօրմարինայի\* հրաշալի գեղեցկութեան և մղեղին սիրոյն զոհեցով իր երիտասարդական հասակի առագուծութիւնները՝ ժամանակէն առաջ գեղեցման իջաւ :

Սակայն Կոստանդնուպօլսոյ ճարտարագէտներն ևս եթէ ունին գեղասիրութեան այսպիսի զօրաւոր զգացում մ'և գեղագիտական բարձր ճաշակ մը, թ՛ող չաճապարեն բաղբելու յանուն օտար գեղանիներու, և Հայերուն գեղեցկութիւնը ուրանալու : Ես իմ մասին տրամադիր չեմ ընդունելու այսպիսի բաղբ մը, վասն զի անդրիադ ործները « Խաբէթաներս » ցեղ մ'են » կ'ըսէ բանահիւս մը . « Կաւ պատկերահանները » կը յաւերում ևս ալ : Եւնգուսթիանի ինչպէս պատկերահանին՝ նոյնպէս և անդրիադ ործին ճարտարագիտական փառաց առաջին պատուանդանն է : Ար փութամ՝ միտքս բացատրելու որպէս զի մեզմի ներկայ և ապագայ անդրիադ ործներու և պատկերահաններու բար-

\* Կը նշանակէ փոճապանի աղջիկ : Իրօք Ֆօրմարինային բուն անունն էր Մարկարիբա ճ միա՞օ, և իր հայրը փոճապան մ'էր :

կութիւնը, նաև արևելեան գեղանիներուն նայուածքի հասանական խստութիւնն ինձի դէմ :

Եւժ ճարտարագէտները, գեղասիրական բուռն զգացմամբ դրաւուած հանճարեղ անդրիադ ործներն ու պատկերահաններն ճարտարութեան անմահ ձևերովն, զոյներովն և հանճարին ներշնչօ մներսօլը երբ կը յառաջագրեն ողևորել մարմարինը կամ կտուխ մի բեկորը, զգայնութեան և հոգեթև երևակայութեան մը շնորհիւ կը զալստարեն տեսլական, իտէական գեղեցկութիւնը, և ահա՛ Ռափայէլ իր վրձնող, և ահա՛ Բրաքսիթէլ իր զրօցով կ'աւելիւր մը, անդրի մ'որ դիճերու և զոյներու ծայրայեղ կանոնաորութեամբ, ներգաշնախութեամբ և շքեղութեամբ կ'անուանի հրաշակերտ մը, և որ իտէական կատարելութեանց սիրահար ու գեղասէր հոգիները կը հիացնէ : Այժմար տը Վինչիլին կոչուրուն միտն, Լա Վէրթ Օ Բոշէին, Փրափասի անդրիներու միտն, Ժէ-Բէթէր Օլէ-Բէթէին առջև հողետեսութեան ախնով և անպատում զմայլումով կը համակուրս : Բայց երբ գեղագիտական ճաշակ մը պահանջուած իրական ճշդութիւններ և երկրային հանգամանքը կը քննես անոր վրայ, զմայելու առան նաև մեղմացձօրէն կը դժգոհիս :

Կ'զմայլա, վասն զի հանճարի մը հրաշակերտն աննման և անհամեմատ կատարելութեան և գեղեցկութեան քերճարդայն և քերթայն տխար մը կ'ընձծայէ, և այս վսեմութեամբն ու տեսլական փառաւորութեամբը միտրդ և հոգիդ անընդհատ սրանչացման մը սաստկութեամբ կը շարշարէ : Ար դժգոհիս,

վասն զի այն տիպարին յար և նմանը բնութեան մէջ  
չես գտներ, և ահա՛ վսեմին դէմ կը գտնուէր զայն  
արտագրող ճարտարագէտին, պատկերահանին, անդ-  
րիազործին, բանահիւսին համար շնորհապարտու-  
թեան խորին զգացում մը կրելովդ հանդերձ:

Ռափայէլի հրաշագեղ կոյսերուն վրայ Ղափաթէր  
հիանալու ժամանակ նաև կը արտի, վասն զի կարո-  
րելաբորժուութեան մէջ վտրբ ինչ լափազանցութեան կը նշմա-  
րէ: Տարբերութիւն կը գտնէ այն կոյսերուն և Փոր-  
նարինային, այսինքն պատկերին և բնատիպ օրինա-  
կին մէջ:

«Ամենուրեք, կ'ըսէ Ղափաթէր, Ռափայէլի գոր-  
ծերուն մէջ կը գտնուի Վոեմը (grand), որ անոր  
գլխաւոր յատկանիչն է, բայց նոյնպէս ամենուրեք  
կը նշմարենք պակասութեանը (défaut): Վսեմ կ'անուանի  
ինչ որ յարասե տպագրութիւն և միշտ նոր հաճոյք  
մը կ'արտագրէ: Պահտութիւն կ'անուանի ինչ որ բնու-  
թեան և ճշմարտութեան ներհակն է:

Արդ՝ երբ ճարտարագիտական համճար մը բնա-  
կանէն, իրականէն, ճշմարտէն դուրս հրաշակերտ մը,  
տեսլական տիպար մը կ'ստեղծէ, բնութեան և Աս-  
տուծոյ դէմ գրգիռ (désin) մ'արձակած, անոնց գոր-  
ծերուն իրական շքեղութիւնը չհասնելով քննադա-  
տած և լաւագոյնը երկնելու յանդգնած կ'ըլլայ-  
նաև ամեն կատարելութիւն և ամեն գեղեցիկութիւն  
աշխարհիս և բնութեան մէջ վնասուելու իրաւունք  
ունեցողներուն գեղատիրական զգացումը նեխճած կ'ըլ-  
լայ իր գործին կատարելութեան լափազանցութեամբ:

Երուանդ Ոսկան, որ Հուովի մէջ ուսած է անդ-

րիազործութիւնը, և որ մեր ազգին անունը օտա-  
րաց առջև փառաւորող տաղանդաւոր ճարտարագի-  
տաց մին է, եթէ բաւ չհամարելով այս բացատրու-  
թիւնս ինձ դէմ բողբոջ՝ և մերժէ անդրիազործնե-  
րու ցեղին խաբէբայութեանը, կը յորդորեմ զինքը որ  
գիմէ չէ թէ Հայ լրագրաց էջերուն որք Պօլտոյ տե-  
սակ մը գրչակներուն և փոխադարձապէս խնկարկու-  
ներուն անունները շարունակ հուշակելու պատրաստ,  
իսկ իր, իսկ հայկական քաղաքակրթութեան մի էա-  
կան մասն ներկայող ճարտարագէտի մը գործոց վը-  
րայ ստէպ ծափ զարնելու ժլատ են, այլ դէպ Ու-  
էսթմինիսթրի սրբայտարանը, անգլիական համբաւի  
տաճարը, ուր թագակիր բունաւորներու և բռնակա-  
լուհիներու մօզօլեան շիրիմներուն անհանգստութիւն  
և փառք բերող համեստ գերեզմանի մը կափարիչը  
պիտի գտնէ, որ Ղորտ Պայրընինն է, և որուն վրայ  
կրնայ գրոցովը փորագրել իր բողբոջը, եթէ բացառ-  
րութենէս գոհ չեղաւ, վասն զի անդրիազործները  
«խաբերայից ցեղ» անունով մկրտողն սն է:՝ Ար-  
դէն մեկնեցի թէ ինչ է այս նեղաւորութիւնը: Իսկ  
ես լաւագոյն կը համարելի Երուանդ Ոսկանին ճար-  
տարագիտական տաղանդ ունենալ, որուն կարծես  
նոր փայլ մը կը տայ իր բնագործութեան համեստու-  
թիւնը, և Մոփազէնին (Corsaire) հեղինակին տեսու-  
թեան կէտովն խաբէբայ անուանիլ, քան թէ այժմեայ  
ոնչուք ուղիորի վիճակիս մէջ մնալ և ամեն անդրի-  
ազործներու դէմ յաղթանակ տանիլ:

\* Տե՛ս Տե՛ս Ժե՛ան, Երգ Բ.

Ուստի ոչ այնքան կարևորութիւն տալով Քիւզան-  
դիոնի ճօրատարագ իտայ հաւանական բողբոխն և բար-  
կութեան, կը կրկնեմ թէ Հայուհիներն աշխարհիս  
ամենէն գեղեցիկ ցեղերուն միոյն կը վերաբերին: Ա-  
թէ արևելեան միւս ազգաց գեղանիներն, նա մանաւ-  
անդ Օսմանուհիներն և Հելլենուհիները չախորժին  
այս կարծիքէն և պահանջոտ դռներն դոյն, օտարնե-  
րու վրայութեան կը դիմեմ և կը պրծիմ դուարիթ  
չրթանց հեզնայի քմծիծաղէն և շանթարկու աչաց  
բարկութենէն: «Բնդ ունուեցայ, կ'ըսէ թէօջիլ Կօ-  
թիէ իր Արսաանդ ուաշէն անուն ուղեգրութեանց մէջ,  
չնորձալի կնոջմէ մ'որուն աչերը մեծ ու սև, դէմքն  
երկայն ու ճուածն էին, և որ իր անախական երեսին  
վրայ կը կրէր հայկական ցեղին տիպական (typique)  
գիծերը: Այս ցեղն աշխարհիս գեղեցիկագոյններուն  
մին է, և թերևս յունական ցեղէն նախամեծար հա-  
մարէի, եթէ քթին կորածնութիւնը չսաստիկանար  
տարիքին հետ:»

Կօթիէ Քաղկեդոնի գեղանի Արմենուհիներուն  
միոյն առթիւ այսպէս կը խօսի, և անոր ցեղային գե-  
ղեցիութիւնը յունականէն վեր դասելու կը վարանի  
միայն անկարևոր անպատեհութեան մ'առջև: Ստու-  
գիւ վերջոյն գեղանիի մը տարիքը և պառաւութեան  
ժամանակի քթին ծայրայեղ կորածնութիւնը, և ա-  
հա Քաղկիսցի երևելի գեղադիտի մը կարծիքին հա-  
մեմատ Հայուհին իր գեղեցիութեամբ հելլենուհիէն  
նախամեծար է: Արդ՝ եթէ ոչ գեղադիտութեան  
տեսութեամբ, գէթ գեղատիրութեան գգացմամբ  
դատողներն աւելի ծայրահասակ քան թէ պառաւ

կանանց վրայ կը մնտուեն բնական ձիրք և հրապար:

Իրաւ է որ Ապաթէր յունական գեղեցիութեան  
առջև կը ծնրադրէ և իր բուրմասը գմայլուն խաւ-  
կով կը լեցնէ: Բայց այս ծնրագրութեան և խնկար-  
կութեան բուն առարկան հելլենական հին գեղեց-  
կութիւնն է, Աթենական գեղեցիութիւն, Փրինցնե-  
րու և Սարախաներու գեղեցիութիւն որոնց չէ թէ  
բնատիպ օրինակներուն այլ անդրիններուն կամ պատ-  
կերներուն հանդիպած է Յիւրիիսի հոչակաւոր գի-  
մադէտը, ըստ որում Բերբըլէօի գրկաց վրայ պա-  
րող գեղանիին, Քսենօրբաթի քար սիրտը ողևորե-  
լու անկարող շնորձալիին հիմակ անունները կան մի-  
այն: Ապաթէր ինքն ևս կը խոստովանի թէ այժմեայ  
աշխարհի մէջ էութիւն չունի այս գեղեցիութիւնը:  
Իր այս կարծիքը բացարձակ է և անհիմն: Արիչ բան  
է հելլենական հին գեղեցիութեան այժմեայ Յոյնե-  
րուն մէջ էութիւնը ու բանալ, և ուրիշ բան է այն  
տեսակ գեղեցիութեան աշխարհիս մէջ էութիւնը  
մերժել: Ժօրժ Սան կը բողբոխէ Ապաթի երկն այս բաց-  
արձակ վճաին գէմ, կ'ընդունի հին հելլենական գեղե-  
ցիկներու նման օտարազգի գեղեցիկներու այժմեայ  
էութիւնը, և՛ կըսէ թէ Վենետիկէ Ժարսիանց վրայ տե-  
ած է Հայեր որք Ուիճոսի սարսածներուն պէս գեղեցիկ էին:\*

Ինձ կը մնայ ուրեմն մտղթել խնարհամտութիւն  
Հայ գեղեցիկներու համար, և Տօրվիին ձևափոխու-  
թեան (transformisme) գրութենէն օգուտ քաղելու  
յօժարութիւն օտարազգի գեղանիներու համար . . . :

Բերա, Օթէլ Տը Պիզանս, 1882:

\* Տե՛ս Lettres d'un voyageur, J. SAND.

ՆԱՄԱԿ Բ.

Աղէքսանդր Տիւնայի տղան իր թատերբոլ-  
թեանց աղմկալի այլ իմաստալի յառաջարաններուն  
միոյն մէջ կը պնդէ թէ մարդկութիւնը կազմող ան-  
հատներուն հարիւրին իննսուներեք և տասն մի-  
այն խելանի են, չմոռնալով այս վերջիններուն կար-  
գը դասել ինքզինքը:

Լ'օմ-Պաֆի անուանի հեղինակին չափ յուսուտեա  
չպիտի համարուիմ անշուշտ եթէ ևս ալ կարծեմ թէ  
մարդկանց հարիւրին իննսուներեք ճակատագրին ատե-  
լիներն և միայն տասն սիրականներն եղած են: Ի-  
րաւ է որ մտթեմաթիզական ճշդութիւն չունի այս  
հաշիւս: Սակայն գոյութեան կոիւին ասպարիզին  
մէջ յաղթ ուղղներուն չարչարանաց և յաղթ ողներուն  
վայելմանց տեսարանը գողցես կը հաստատէ թէ չա-  
փազանց չէ այս կարծիքս: Աւելորդ կը համարիմ հոս  
երանութեան և ապերանութեան խնդ իրները յու-  
զել և անոնց նկատմամբ իմաստասիրական խորհրդա-  
ծութիւններ յայտնել, որք ոչ միոյն և ոչ միւսին  
լուծման չեն կրնար նպաստել: Ճշմարտութեան քրէթե-  
րիօն (criterium) գտնել կարելի է, այլ մարդկային եր-  
ջանկութեան կամ սպերջանկութեան համար գտնելն  
անկարելի կ'երևի ինձ: Վշտահարներու և ուրախ-  
ներու էութիւնն անուրանալի է, այլ վշտի կամ  
ուրախութեան պատճառներն ընդհանուր և հաս-  
տատ օրէնքէ չեն արտադրուիր, և հետևարար չեմ

կրնար հաստատել թէ այս կամ այն անձը վշտացը-  
նող կամ ուրախացնող պատահար մը, իրողութիւն  
մը մի և նոյն ներդրածութիւնը պիտի ունենայ ամեն  
անձանց վրայ հաստատապէս: Կը կրկնեմ սակայն  
թէ դժբախտները բախտաւորներէն շատ աւելի են:  
Աշխարհս ստոյիկեաններու համար մշտնջենական  
Գեթսեմանի մ'է, իսկ Երիզիւրեաններու համար Ե-  
դեմ մը: Շատերը մահահարուէր գիշեր մը կը սեպեն  
կեանքը, իսկ քիչերն երջանկաւէտ օր մը: Ասոնց մէջ  
կան ոմանք որք կենաց երևուին կամ թագուն մար-  
տիրտութեանց վրայ դադափար չունին և կամ չու-  
նենալ կը ձևացնեն. չեն ճանչեր ոչ միայն ֆիզիզա-  
կան ցաւերը, այլ նաև այն բարոյական անդարմա-  
նելի վիշտերը որք վերի և վարի անստուգութեանց  
տեսարանէն կը բղտին և հաւատքի ծարաւի բարձր  
սիրտերը և բեղուն միտքերը կը մաշեն, և լոկ իրենց  
բերկրութեանց և գրօսանաց վրայ խօսելու ժամա-  
նակ երբեմն ալ կ'ըսեն.

«Նարողին տեսնել և մեռնիլ:»

Արդ՝ բնութեան արտաքոյ կարգի պերճանաց մին  
չվայելած մեռնիլն զեղազիտական հեշտութեանց  
սովորող բարեբախտներու համար եթէ կորուստ մը  
կրնայ սեպուիլ, ի հարկէ աւելի մեծ կորուստ մ'ը-  
րած կ'ըլլան այն աշխարհաշրջիկ երջանիկներն և  
կամ հետաքրքիր ուղեորներն որք Կոստանդնուպօ-  
լիս կը գան, և իրենց շրջապայութեանց և խուզար-  
կութեանց շուտով վերջ կը տան՝ առանց տեսնելու  
Պէօլիւք-Տէրէն որ Վաթիորի զիւղերուն թագուհին  
կը սեպուի:

Այս նեղուցին հակադէմ ամիսնց և լեռանց վը-  
րայ ամփոփուած բնական ճարտարապետութեան մը  
բիւր շոպյութեանց տեսքէն հրճուելու ժամանակ  
անդդող և անփորձ ուղեորի մը պարտքն է ուրեմն  
իր հոգւոյն հիացման բոլոր կարողութիւնները չփառ-  
նել, և աւելի գեղեցիկ տեսարանի մը համար վերա-  
պահել իր զգայնութեան և երևակայութեան ոյժե-  
րուն մեծադոյն մասը :

Բայց, բարեկամ, ըստ իս լուսադոյն է սարիւլ քան  
թէ մեռնիլ Պէօլիւք-Տէրէն տեսնելէն ետք, և տա-  
րակոյս շունիթ թէ այս մասին դուն ալ համամիտ ես  
իմ հետ, քանի որ անշուշտ ատենօք Անկլիական կամ  
Քաղկեդոնեան Արիի մը հետ այս գիւղին երեկոյ-  
եան և գիշերուան շքեղութիւնները վայելած ես իր  
հրապարակին և քարափանց վրայ, և քանի որ նա-  
խամեծար համարած ես այս վայելմանց յիշատակով  
տակաւին սիրտդ և երևակայութիւնդ պարարել քան  
թէ սև հողին ներքև փախի :

Արածես թէ արևելեայ ժողովուրդները կենաց  
ամեն հանդամանաց և իրողութեանց մէջ արևմտեայ  
ժողովուրդներէն աննպաստ կերպով պանազանուե-  
լու և գոյութեան ճակատավայրին յետնորդները  
մնալու դատապարտուած կ'երևին : Յարողայի լու-  
սաւորութեան զաւակն ունի անընկճելի խինքնութիւն  
մ'որ իր դադախարներու ազատականութենէն և իր  
զգացմանց մեծութենէն կ'արտադրի, և որուն վրայ  
կոթնելով ամենևին վհատութիւն չզղար բնական և  
անողբելի անհաւասարութեանց առջև . իր մարմնոյն  
վրայ ցնցոտիք, սլլ սրտին մէջ արջ և մ'և մտքին մէ

ծիրանի մ'ունենալը, և բնութեան բարկքը ամենուն  
հետ հաւասարապէս վայելելու իրաւանց աչքն բլլա-  
լը զիտէ : Մինչդեռ Առնտանի, Բարիլի, Վիլէնայի  
ազնուականն և խուժանը, զօրաւորն ու տկարը, բե-  
հեզն ու քուրջը Հայտ Բարբի, Շանգ-Լիփզէի, Բրատո-  
յի մէջ ազատութեամբ կը շրջին և իրարու կը քսուին,  
մինչդեռ այս կը նկրտի կենսամաշ մտատանջութեան  
մը ձանձրոյթը փարատելու, և այն մոռնալու քսակի  
մը դատարկութեան անախորժ անպատեհութիւն-  
ները իր սաջև անդ իտակցարար պարզուած բնական  
փաստերութեանց շնորհիւ, Պէօլիւք-Տէրէ իր հե-  
աւաորութեամբը, գլխիտեան բարձունքովն ու ստու-  
րտին հրապարակովը, կանոնաւոր քարափովն ու  
լճաձև ծովով, հոյակապ շէնքերովն և միայն հարուստ-  
ներուն հսկելի կենցաղախրական պահանջուններովն՝  
իրը զիւզ՝ կարծես մենաշնորհ մ'եղած է Պօլոյ և  
մանաւանդ Բերայի այն բնակիչներուն որոնց բնա-  
կարանէն կամ գործատունէն Բաղթօլի ոսկերուղի  
ճուքերը կը հոսին :

Իրօք մայրաքաղաքիս մէջ անդ որժ թափառիլն և  
Վոսփորի եղեմական ախանց վրայ հեշտութիւնը և  
հաճոյքը շարունակ ստեղծել և վայելելն ափբայական  
քսակներու յատուկ շոպյութիւն մ'է : Դժբողաւ-  
բար հիմակ ամիրայութեան անունը միայն մնացած  
է : Հայ կրեստաներու ժառանգորդները տեսան որ  
աշխարհիս մէջ ամեն բան կ'անցնի .

« Ունայնութիւն ունայնութեանց ի նանիր ,  
Ամենայն ինչ բնդունայն է, քա՛ջ ծանիր »

ըսին իբր հարազատ զաւակ Նրիզիւրոսի. կարծեցին թէ ինչպէս ամեն տեսակ փառք, նոյնպէս և ոսկիին փառքը մուխ մ'է և յօդս կը ցնդի այն խորհրդաւոր սրամէն ետք, որ մարդկային յոյսերու, ուրախութեանց և տառապանաց աւերակները մշտնջենապէս կը վարագուրէ, և ահա՛ աւելի մեծ խեղճութիւն համարեցին իրենց կենդանութեան ժամանակ այս մուխով զգլխիլ քան թէ «ի մութ կայան յաւիտենութեան իջնելէն» ետք: Արյուսային անոնք թէ ժառանգային հարստութիւն մ'անսպասուելի է երբ «Փրայակ» է, և թէ զեղխութեանց և չտայլութեանց անդուհըն անհետող ոսկին կրնայ ինքնին վերադառնալ այն քսակն ուսկիչ զայն խորեր էին խաղամուտ թիւնը, անափառութիւնն և Բաֆօսի յաւերժահարստերը: Եկրև տես որ ոսկիին բնութիւնը հետտ և քիչ նախնդիր է: Չգործող ծոյլերու համար ոչ փիւնիկեան թռչունին յատկութիւնները ունի որ կարենայ իւր ածխէն վերածնիլ՝ ըստ Բիլինի, և ոչ Վազարոսի մ'անապահանելի կենդանութեան սկիզբը որպէս զի յարութեան ընդունակ ըլլայ զերերկրային ձայնի մը ազդմամբ: Մեծագումար հարստութիւն վատնող աւսիրայական ժառանգորդներ և թողներ գուցէ սկսած են հիմակ ըմբռնել այս տխուր ճշմարտութիւնը, նաև խոստովանիլ թէ մարդուս արժէքն իր գործքով և չէ թէ սակիովը կը կշռուի . . . : Լաւ է անադան քան ոչ երբէք:

Բնութեամբ հետաքրքիր ըլլալս զիտես արդէն: Բնական էր ինձ ուրեմն սրահ մը մտնալ թէ արժէթութիւն խաղով անոր ասոր տունը փրած և հարստա-

ցած սեղանաւոր մը չեմ, և յիշել թէ իբր անցորդ կրնայի բնական խնջոյքի մը քանի մ'որուան անշուք սեղանակիցն ըլլալ անվտանգ: «Փորք է բաժակս, այլ իմ բաժակով կը խմեմ» կ'ըսէ բանահիւս մը:

Մայիսի միջին օրերէն օր մը Վասպուրի ասիական եզերաց զիւղերը գէթ հետուստ անգամ մը տեսնելու և ապա նաւակով Պէոյիւք-Տէրէ անցնելու յառաջագրութեամբ մտայ շոգենաւ մը, սկսայ կարգալըսգիր մ'որուն տեսութեանց քնարեր ներգործութեան կրցայ զիմադրել՝ մերթ ընդ մերթ այս զիւղերուն վրայ հարեանցի ակնարկ մը նետելով, նաև ամատոյցները խոնոզ արանց և կանանց բազմատիպ հաղուստը և կապուստը և բազմութեան իրարանցումը զիտելով: Կարգ ըստ կարգէ կ'երևէին և կ'աներևութանային Գուզիլունճուգ՝ իր փոքրազիր նաւահանդիստով, ուր՝ ըստ աւանդութեան՝ անտիական Իօն\* (Յով) նաւէն զուրս ելաւ Հերայի բարկութենէն ազատուելու համար. Ըստավրօզ, Պէլլէր-Պէյի պալատն որուն ետեք կը կանդնի Տամաթրիս (Պուլկուրը) լեւը. Չէնկէլ, Գուլլի, Վանի և Գանաթիլի զիւղերը: Գանաթիլի մասնաւոր ուշադրութեան

\* Կուստանդնուպօլսոյ նեղուցին Վասպուրս անունը կազմուած է յունական վաս (երկնց) և քորս (անց) բառերէն. վասն զի ըստ դիցաբանական արանդուրեան Ինագոսին աղջիկն՝ Իօ (Յով) Հերայի նախանձնն ազատ մնալու համար Երկնի փոխուած է Դիոսին հրամանաւ, և լողալով այն նեղուցէն անցած է Երբ զինքը կը հալածեր Հերս:

արժանի է իր վրայ տիրող դալարուտ և ծաղկաւէտ բլուրներովն որ իճատիէ կ'անուանի, և որուն աջ կողմէն կը բացուին երկու ձորեր ուր արդէն գացեր էի: Աէօք-Սուլուի համբաւաւոր ձորերն են անոնք, որոնց միջև կը տարածուին Աէօք-Սուլու կամ Աօխոյ անոյշ ջուրերն ըսուած առուակներն և կը հովանաւորին կաղնիներէ, սօսիներէ և մուսթ գեներներէ:

Ժամանակաւ պալատներ, աաղաւարներ, արևելեայ Թրիանօններ կային այս մոզական վայրերն ուր հուրիններ կ'ապրէին, և ուր տեղի կ'ունենային հեշտութեանց և վայելմանց այնպիսի իրողութիւններ որք վիպային և անտիպ են, և որոնց վրայ ճշդիւ գաղափար մ'ունենալ հնարին է այն անձանց միայն որք Վիւքրէնի լճին պալատին դրօսանայ և կամ Ալահամպրայի մէջ վարուած իշխանական կենաց ակառատեսներն եղած են: Եւրօպացի ուղեւորներէ ու մանք Բիւզանդիոնին ճարտարապետական և արքունական յիշատակները, աւանդութիւնները, սովորութիւնները խուզարկելու առթիւ իրենց ուշադրութեան անարժան չեն համարած Օսմանեան հինաւուրց արքունեաց ինչ ինչ վիպային և տրամային դէպքեր, և կը կարծեն թէ ինչպէս Կաբի-Մէրայի պարտիպին պատերուն ներքև տակաւին կ'երևի այն զաւիպային ուսիէ գրուածան յանցաւորներու դիակները Մարմարայի ձկանց կը նուիրուէին, նոյնպէս և Աէօք-Սուլուն հովանաւորող ծառերուն տակ կը տեսնուին դեռ այն թաքստոցներն ուր սիրամուլ մեղապարտներ աներևոյթ կ'ըլլաին . . . . . :

Չգիտեմ թէ ուղեւորներու երևակայութիւնն որ-

քան մասն ունի Օսմանեան հուրիներու և քաջերու վերաբերող այս տարիպային իրողութեանց պատմութեան մէջ: Եթէ սառոյց են այս սպախ մարտիրոսութիւններն և անհետումներն, ասոնց առջև արևելցի ուղեւորին առաջին պարտքն է Սրբոկրատի զիրքը ստանալ և լոին մեղամազձուկեամբ խորհիլը լուսադոյն համարիլ:

Թուրքիոյ մէջ պատմութիւնն անօգուտ ժամանակագրութիւն մ'է առ այժմ: Պատմիչներուն միտքը բանտարկուած և լեզուին շրուշակ մը գրուած է, նա մանաւանդ ժամանակէ մ'ի վեր: Վաստորի ափանց գաղտնիքները կը պարունակեն անշուշտ ճշմարտութիւններ, որք անօգուտ չեն Օսմանեան քաղաքակրթութեան դատին, և զոր սակայն ուղեւորին խիզճն առ այժմ կը գրէ չէ թէ սպիտակ թուղթին, այլ նոյն իսկ այս ափանց վրայ՝ ճիշդ Լյուտրասին սէս, որ վարսաւոր ուռիներէ հովանաւորուած բարեխոնեան գետին եղերաց վրայ օր մը գրեց հետևեալ խօսքը.

«Ճմարտութիւնը յաւիտենական է. ամենեւին չկորնչիլ. միշտ կ'ապրի և կը զարդանայ այն:»

Յաւիտեան մնալու պայմանաւ այսպէս արձանագրուած պատմական ճմարտութիւնն ալ զիտական ճմարտութեան մը սէս կ'ածի, և կը գայ օր մ'որ այն կը զինէ արգարասէր ողիները և կը ներշնչէ անցելոյն հաշուելիլուէն սրտմտոյ խիզճերը: Ազատութիւն չունինք պատմական, ընկերական տգեղութիւններ նկարելու այն գոյներով որոնցմէ կ'ախորժի մեր տկար վրձինը և կրնայ օգտիլ արդարութեան և ճմարտութեան բարեկամը: Բայց օտարական ու-

դէորք կը սխալին եթէ կը կարծեն թէ իրենց զարմանքը գրաւող այս պատմական կամ աւանդական եղբերգութիւնք արեւելեայ արքունեաց յատուկ են : Ընդ հակառակն կը հաւանինք մտադիւր թէ այս տարւփական ողբերգութիւնները թեւադրուած են զեղբխութեան և անառակութեան այն տրամներէն որք քրիստոնեայ աշխարհի արքունեաց , նա մանաւանդ հին Բիւզանդիոնի կայսերական ռալլատներու մէջ աբեան և խոյտառակութեան անջինջ հետք թողած են :

Եւ իրօք Թէօտորայի պալատին ներքև կային խոր վիրապներ , որոնց պատերէն սրածայր մանգաղներ դուրս կը ցցուէին , և ուսկէ ամեն զիչեր նենդութեամբ նետուող և մինչև յատակը վիրամահ գլտորուող զիակները աներեցթ ընելու և անոնց արիւնը սրբելու գործը Վոսփորի ջուրերուն կը յանձնուէր : Այս զիակներն էին այն աննսեհ երիտասարդներն որք Յուստինոսի կնկան հրամանաւ պալատը կը բերուէին զիչերայն , և այս բիւզանդեան Մեսալինին և իր չորս ընկերուհիներուն , այսինքն Պելիզէրի կնկան՝ Անտոնինային , Մակեդոնիային , Իզիտորային և Կլիստովային քանի մը ժամուան անառակութեանց և հեշտութեանց գործիներն ըլլալէն ետք հետաջինջ կ'ըլլային Անտրամիթիս անուն Արարի մը մեղսակցութեամբ և մատնութեամբ :

Թէօտորա հետևորդներ ունեցաւ միջին դարու մէջ : Այս Մեսալիններն էին Մարգրիտ , Պլանչ և Մարի Տը Պուրկոներ իշխանուհիներն որք գիւերները դիմակաւորուելով Նելսի աշտարակին կամ մօտակայ տան մը մէջ մի և նոյն մոլեկան շուայտութեանց և

զազանարարոյ տարփանաց սոսկալի և պժգալի տեսարանը կ'ընծայէին , այս կամ այն անցորդը , այս կամ այն հաստարազուկ բեռնակիրը , ըրիչը ներս առնելով , և իրենց ուղածը անոնցմէ ստանալէն ետք թշուառները տուրակի մէջ դնելով Մէն գետը նետելու պաշտօնը Թամբէսթ անուն «էէֆի մը կը յանձնէին : Սակայն Թէօտորայի մանգաղներուն և Պուրկոների իշխանուհիներու տուրակին մէջ տարբերութիւն մը կար : Առջիններէն ազատիչն անկարելի , իսկ վերջիններէն՝ կարելի էր երբեմն : Իրօք Պուրիտան կրցած է ազատիլ , կ'ըսուի , իր տուրակէն , այլ թատրոններու մէջ և հրապարակի վրայ կաքաւող կայսրուհւոյն մանգաղներէն չկրցաւ փրկուիլ և ոչ իսկ իր միածին զաւակն՝ Յովհաննէս՝ զոր Անտրամիթիս անոր զիչերային տարփածուներուն մին կարծելով խոր վիրապը նետեց նոյնպէս : Այն կինն , որ օր մ'Այսասօֆիան վերաջինելու նախաձեռնութիւնը պիտի ունենար երկնից հետ հաչտուելու համար , միամիտ երիտասարդներ իր անասնային և մոլեկան կրից և քմահաճութեանց կը զոհէր առանց խղճմտութեան , առանց կարեկցութեան , առանց լսելու այն խորին հառաչանքը և հեծկտանքը որք իր նահատակաց մայրերուն կուրծքը կը ճզմէին , և ահա՛ ճակատադիրն իր վրայ կ'առնու զան պատժելու և անողքելի արդարութեան գործ մը կատարելու պաշտօնը , հասարակաց ու միանգամայն թագակիր պոռնիկի մը քար սիրտը վիրաւորելով ճիշդ այն գէնքով , որով ինք կեղեքած էր այնքան մայրերու սիրտերը :

Անցիլը միջին դարէն և եկուր մինչև 18րդ դարը :

Ահա քեզ ուրիշ քրիստոնեայ կայսրուհի մ' ես, Մեծն  
 Կատարինէ ըսուած կին մ' որ իր խառնադնաց ընթաց  
 ցից սրատճառաւ ապտակ մը կ'ուտէ իր ամուսինէն՝  
 Պետրոս Գէն, և որ՝ Ռուսիոյ գահատառանգ մը տա-  
 ըւ համար՝ նախ քանի և ապա կամովին Յովթիքօֆի  
 գիրկը նետուելէն ետք կը շարունակէ շարունակ խզել  
 ինչ որ Աստղկան գօտին կ'անուանի Բօնիաթեփօքիի,  
 և հուսկ յետոյ Օրլօֆի հետ, որ Թամբէսթի և Անտ-  
 բալիթիսի վայրաց դերը խաղալու չգարանիր՝ իր կայ-  
 սերական տարիուհուոյն թշուաւ լծակիցը մեղցնելով:

Պատմութեան մէջ կը վխտան այս տեսակ զեղ-  
 խութեանց և արիւնարոյր տարիանաց օրինակներ,  
 որք զարմանք չեն տար ինձ բնաւ:

Գերութեան և ազխութեան մէջ սպահուած կրնն  
 ի բնէ անտի կամ բռնութեամբ և կամ յօժար կա-  
 մօքն անասնային կրից ծառայող ստորին էակ մ'ե-  
 դած է ընկերութեան ամեն դասերու մէջ: Չգիտցած  
 է բնաւ թէ մեհենական նուիրականութիւն մ'ունի  
 իբ անձն: Քրիստոնէութիւնը կնոջ չլրցաւ տալ այս  
 գիտակցութիւնը և վերստեղծել զան: Հիմա յառաջ-  
 գիմութիւնն իբ վրայ առած է այս վսեմ սրաշօծը,  
 և հետի չեն այն ժառանգակներն ուր կրնն իր իմացա-  
 կան բոլոր իրաւանց տիրուհին ըլլալէն ետք բնակա-  
 նաբար պիտի թոթուէ գերութեան շղթաները, որք  
 անոր հոգւոյն գործունէութիւնը կը ջլատեն, և ու-  
 բոնցմէ արտադրուած ձանձրոյթն զէնք անկուժ կ'ա-  
 տաջնորդէ շատ անգամ:

Շող ենաւէն Գանտլիթ ելնելով վերջ տուի այս  
 խորհրդածութեանցս, նաւակ մտայ, և Պէօյիւք-Տէ-

րէ հասնելով ուշադրութիւնս տուի նոր իրողութեանց  
 և նոր տեսարանաց:

Այս գիւղը Աւ ծովին մօտ խորշի մը բոլորտիքը  
 շինուած և տարածուելով բարձրացած է բլուրի մը  
 վրայ, որ շրջակայ և հանդիպակայ լեռնակներով,  
 գիւղերով, նեղուցին լճաձև տեսարանով, հոյաչէն  
 տուներովն, պարտէզներովն և զմայլելի հորիզոնովն  
 ստուգապէս բնութեան մի գեղեցիկ հրաշակերարը  
 կրնայ սեպուել: Մէկ ծայրը կը հասնի մինչև Քէֆէլի  
 -Քէօյ, որ նոյնպէս խորշի մը բոլորտիքը հպտանօք  
 կը պարզուի, և որուն ետեւն է ընդարձակ ձոր մը:  
 Այս ձորը կազմուած է մարգագետիններէ և մար-  
 մանդներէ, և կը յանդի գէպ ի Պելլրատի անտառն,  
 ուր կայ եօթն սօսիներու փունջ մ'որք Եեդի-Գարն-  
 րաշ կ'անուանին, և որոնց հնագոյնն առաջին խա-  
 ջակիրներուն հրամանակալ՝ Կօսթրուա Տը Պուլեօնին  
 անուանով կը յիշուի, թէ և ասոր բանակին հոն կանկ  
 առած ըլլալն աւելի աւանդական քան թէ պատմա-  
 կան իրողութիւն մ'է: Պէօյիւք-Տէրէի հիւսիսային  
 կողմն են Մէզար-Պուրնու, որ հին Սիմասի հրուան-  
 դանն է, Սարը-Եէր և Եէնի-Մահալլէ ըսուած գիւ-  
 ղերը:

Ասիոյ կողմէն նայուածքը կը յատի ժէան (Հսկայ)  
 անուն լեռան վրայ ուր արծիւներ կը թեւարկեն և  
 կարծես կը մրցին ծովին մակերևոյթը երամովին քե-  
 րող ալիւրոններու հետ, և որ զանազան աւանդու-  
 թեանց նայելով « Հերքիւլէսի Անկողինը » կամ « Յե-  
 սուի Գերեզմանն » է. ժէան լեռն ծառազարդ և դա-  
 շարուտ դառիթախներովը, ծաղկաւէտ ստորոտներու

վը կ'իջնէ ծովեզերքն ուր երկու կանաչաւէտ հրուան-  
դաններու միջև Ումուր-Նէրիի խորը կը կազմուի :

Պէօլիւք-Տէրէի լաւագոյն սանդղակն է Օթէկ Տը Պէկ  
Վիւ, որուն դարաստափէն իմ առջև պարզուած կ'ե-  
րևէր չորս կողմէն կանաչազարդ և գեղածիծաղ բլուր-  
ներով, պարտէզներով, զուարթ ծովեզրներով փա-  
կուած լիճ մը զոր կը կազմէ Վոսփորի նեղուցը, և  
ուր սիրահարներ կամ ամուսիններ ժուռ ածող նաւ-  
ակներ, կօնտօլներ և վարքաներ կը վխտան երեկոյ-  
եան հանդարտաւէտ ժամանակ, և գիւղին ծովափն-  
եայ հրապարակին բաղնութեան և շարժման հետ  
բնական շրջանակի մը հետաքրքրական պատկերը կը  
կազմեն : Այս պատկերը իր շրջանակին իրական չքե-  
ղու թիւններով և մանրամասն հանդամանաց ճշդու-  
թեամբն երևակայութեան մը համար նկարագրել կամ  
գեղասիրական ըմբռնումներու ծարաւի նայուածքի  
մը համար նկարել ուզող ուղևոր մը կը պարտաւորի  
ունենալ կամ Թէօֆիլ Կօթիէի գրիչը, և կամ Սպտ-  
ուլլահ Յըբարց լուսանկարութեան մթին սենեակը  
և այն քիմիագիտական գործողութիւնները, որոնց  
չնորհիւ այս Հայագրի նշանաւոր ճարտարագէտները  
ստուգիւ Մանտէ Տակերի փառաւոր յաջորդներուն  
կարգն անցած և մայրաքաղաքիս մէջ լուսանկարու-  
թեան արհեստը յաջողած են մենաչնորհ մ'ընել ի-  
րենց գործարանին համար : Հոն առիթ ունեցած եմ  
տեսնելու Աոստանդնուպօլսոյ ամենէն չքեղ բնավայ-  
րից և հոյակապ շինութեանց տեսարանները արտա-  
դրող լուսագիծ պատկերներ, որք բնատուր օրինակ-  
ներու հետ ունեցած իրական նմանութեամբ և ճշդու-

թեամբ ճարտարագիտական արտադրութիւններ սի-  
րողին ուշը կը դբաւեն, և որք ամեն հետաքրքիր,  
նա մանաւանդ Եւրոպացի ուղևորներու համար մազ-  
նիսական անդիմադրելի հրապոյր մ'ունին :

Հոս քանի մ'օր մնալու և Ֆար Իէնիէի քաղցրու-  
թիւնները վայելելու զիտաւորութիւն ունենալով,  
թերևս յաջորդ նամակի մը մէջ խօսիմ քեզ Պէօլիւք  
-Տէրէի ուրիշ հանգամանաց և իր ծովափնեայ հրա-  
պարակին իրողութեանց վրայ :

Պէօլիւք-Տէրէ, 1882 :



Ն Ա Մ Ա Կ Ք .

Աիրակի օրն արևամայրի ժամանակ Պէօլիւք-Տէ-  
րէի հրապարակն իջայ, շրջագայութեանց և գրօսա-  
նաց, կենսալի շարժմանց և բնական գեղեցիկութեանց  
տեսարանի մը հանդիսականն եղայ : Ատելու և տես-  
նելու, զիտելու և խորհելու բաւական ընդարձակ և  
ազատ ասպարիզի մը մէջ գտնուիլս, ժամերուն ան-  
ձանձիր սահիլը զգացի, և գոհունակութեամբ խառն  
տալաւորութենէ մը զրդուելով՝ իւրովի ըսի .

Մեզք որ ժամանակը շուտ կ'անցնի :

Ստուգապէս մենք ենք անցնողն և ոչ թէ ժամա-  
նակն որ անանց և անսպալելի է, և որ տեսողութեան  
անբաւութիւն մ'է՝ անձրպետներու անբաւութեան

պէս : Բայց եթէ ոչ իրապէս՝ գէթ առ երևոյթս ժամանակը կ'անցնի, երկիրն իր ասանցքին վրայ յաւիտենապէս կը թաւալի, լոյսն ու խաւարն անընդհատ իրարու կը յաջորդեն բնութեան անխփփոխելի և անխուսելիօ բինաց համեմատ : Արդ՝ մարդկային կենաց մէջ կան պատահարներ կամ պարագաներ, ուր կրնանք, անչուչտ միամտաբար և բնազդօրէն, երկրիս հորվումը, լուսոյ և խաւարին մշտնջենական յաջորդումը ժամանակ մը դադրեցնելու փափաքը տածել, որպէս զի այս ինչ պատահարին վրայ ապահովապէս իշխելու, այն ինչ պարագայէն աւելի մեծ օգուտ մը քաղելու պատենհութիւնը ունենանք, և կարենանք զերևել ճակատագրին հետտութիւնները :

Այսպէս կիրակի օրն իրիկուն հանդիսաւոր պարագայի մը մէջ կը գտնուէի, և կը փափաքէի Յիսուսի զերեկրային սրբութեան աէրն ըլլալ, անոր պէս երկնային ոյժ երով զինուիլ՝ աստուածաշնչային ճշմարտութեան մը համեմատ՝ արևին շրջանը, կամ՝ այժմեայ դիտական ճշմարտութեան համեմատ՝ երկրիս հորվումը քանի մը ժամ դադրեցնելու համար, թէև՝ պահ մը խորհելով՝ խոստովանէի ինքնին թէ անծանօթ ուղևորի մը չէր կրնար շնորհուիլ ինչ որ՝ ըստ պատմութեան՝ Վաթեքոյի ճակատամարտին օրուան իրիկուն մերժուեցաւ Սուրբ—Հեղինէի կզգին նետուելու սահմանուած մեծանուն կալանաւորին :

Երբեմն մարդուս վայելմանց ձևերուն մին է շարունակ փափաք մը կազմել և զայն օր մը կատարուած անանելու երազովն սպրիլ : Անկատար մնալու սահմանուած իզձէ մ'եթէ կ'ուզես կամովին և զիտամար

խարուիլ և անյուսու թեան չմատնուիլ, սիրէ և խնդրէ անհնարինը, և եթէ չես հասնիր նպատակիդ, գէթ հնարաւորին իրականութենէն և ազեղութենէն իսկոյն ձանձրանալու և տհաճութեան նորանոր զգացումներէ տառապելու հարկին մէջ չես գտնուիր : — Ատի հով կլնել է, ըսես զուցէ : Ժան Ժագ Բուսսայդ կարծիքէն չէր : Գիտէր ան թէ Տիկին Տ'Աուրբօ Սէն—Վամպերին տարփուհին էր, այլ նչոյարիէ հովանոցի մը ներքև զեղանի սրարածին հետ գրեթէ ամեն օր տեսնուելովն և անոր վարդապոյն ըզուենելուն և ոչ մի ծայրը համբուրելու շյաջողելովն ինքզինքը հավուլ մը չէր համարեր, և անչուչտ չհամարեց՝ երբ մանաւանդ հարկադրուեցաւ ըստ իս խիստ միամտաբար՝ ինքնապատնութեամբ կենացը վերջ տալու՝ իր փափաքները իրապէս կատարող Թերեզ Վասթօրին մատնութիւնը ընելն ետք . . . :

Աս ևս ասո՞ Պէյիւք—Տէրէի երեկոյեան ժամը անշարժութեան գատապարտելու փափաքը կը տածէի՝ չգիտեմ ինչո՞ւ, և քաղափանց վրայ ման գալով կը ցաւէի, վասն զի արևը հետզհետէ մայրը կը մտնէր, վերջաւուսական ստուերները մթնոլորտը գրաւելու կը պատրաստուէին, հարկաւ վարագուրելու համար տեսարան մ'որ զուարթ, օգտակար և հետաքրքրական էր :

Արճարանները լի էին համազգային քաղմութիւն մը կազմող տեղաբնակ և տարաբնակ յաճախորդներով, որք ավտոներու վրայ կը խոնկին, կը ծխէին, քովարար ըմպելիներ և անուշեղէններ կ'ապասխին, իր խօսէին, կը խնդային, քրքիջ անզամ կ'արձակէին

ումանք, և այս ճայներու, շշուկներու վերևն երբեմնակի կը լուսէին երաժշտական խուռմրի մ'անոյշ եղանակները: Պահ մը գլխովին զգածուիլս և յուսողուիս զգացի՝ ուշ տալով նուազերգութեան մ'որ ձանձրոյթէ սաշուած և թերահաւատութենէ մաշուած հոգւոյ մը վշտագին անձկութեանց ներդաշնակութեան կը նմանէր: Արտաուուջ և մեղամաղձային էր այս նուազերգութիւնն, որուն հոգեգրաքաղցրութիւնը կարծես կը քաղուէր Նլիզոնի մը նուիրական կուշտերը ծածկող տերևախիտ ոստերու սօսիւններէն և խորհրդաւոր մրմունջներէն, որք հոն տիրող և նուագածուն ներշնչող Նւթերբէի մը շունչէն կ'արտադրուէին, և երեկոյեան ասեն խառնուելով Առախորի վրայ մեղմիկ փշող գովափիւս հովի մը հծծիւններուն հետ կենաց ունայնութիւնը և մարդկային իրողութեանց ոչնչութիւնը կը մոռցնէին:

Հրապարակին վրայ նայող պատուհաններն և դուռները կը կազմէին պատկերի տեսակ մը չըջանակներ, ուր տօնախմբութեան մը հրաւիրուած սջրասէր այցելուհիներու պէս պերճանքով և սեթևեթով հազուած շքուած կը դահէին կիներ, որոնց զլուխը խորունկ և նորածն փեղցրի մ'անդունդը, և ձեռքն ալ կաշիէ սևաթոյր կամ մետաքսէ մոխրագոյն թաթ պաններու մէջ աներևոյթ կ'ըլլային: Հարսնիք կարթէ պարահանդէս: Չգիտեմ . . . : Իսկ քարափանց վրայ արանց և կանանց, երիտասարդաց և օրիորդաց բազմաճղի հասանքներ երամովին կ'երթևեկէին, ումանք ման գալով յամբապէս, ումանք իրարու քսուելով կամ ընդհարելով, և ումանք ալ յատուհանի կամ

զբան մը կենդանի պատկերներուն յանդուզն անկարի մը նետելու դիտաւորութեամբ տեղ տեղ կանկ առնելով և հետաքրքիր չարամիտներու ուշադրութիւնը առ ոչինչ գրեկով:

Բօլաններու աղեղնածն ճեղքուածքին միջև կիսովին պահուած մանիշակի և վարդի փնջիկներուն բուրմունքը կնային լանջերէ և թաշկինակներէ արտարուող անուշահոտութեանց հետ կը խառնուէին, և օդին մէջ ծաւալելով հեշտասէր թռքերէ անշուշտ հաճութեամբ կը շնչուէին: Անտիական երիտասարդին համարձակ և ուրախ նայուածքը յուսոյ և յաղթութեան հաւատի մը, իսկ մի քանի գեղանիներու բնական կամ շինովի ժպիտը դժբաղդութեան գէժ մը զրգիւ մը կ'երևէր:

Պեղեցիկ ըլլաք և չերևիլ, ձոխ ու փայլուն չորերով զարդարուիլ և այս պերճանքը ցոյց չտալ, օգային ողիներու յատուկ թեթևաքայլ ոտից յայտնի կամ անյայտ հրապոյրը պշրատիրական հնարազիտութեամբ շեշտել և տափածն հրապարակի մը վրայ նազերարար չճեմնն այնպիսի համակերպութիւն մէջ, զոր կամովին փանարգելութեան գտտարարուած կոյսերը կամ վիպային կենաց հրաժեշտ տուող յուսահատ կիները կ'ընդունին միայն, և որ առնական առաւելութեանց գէժ մթերուկի (ruban) ծայրով մը կամ ժպիտի ստուերով մը ցինուիլ և մարտիլ գիտցող փորձաուս քօթկններու համար անըմբռնելի մարտիրոսութիւն մը, սպարդիւն ինքնասպանութիւն մը կը սեպուի դուցէ:

«Պահու ձանայ արհեստը գեղեցկութեան բանաւ»

հիւսուած իւնն է » ըսաւ ճարտարադիտական զգացման տէր և կնասէր հեղինակ մը : Ասոյն Հայազգի և օտարազգի կիներ որք այս օխորժելի ճշմարտութիւնը չուտով լատձ և արգէն իրենց բարուց և սովորութեանց մէջ տեղաւորած էին : Արեւակայէ՛, եթէ կրնաս, այն մեծ և փրկաւէտ յեղաշրջումը, որուն շնորհիւ ազգերը քանի մը տարուան մէջ պիտի կրնային առնու զարեբու կարօտ յառաջդիմութեան քայլերը, եթէ ամեն բարոյական և դիտական ճշմարտութիւններ նորաձեւութեան պէս դիւրաւ տարածուէին և ամենուրեք ընդունուէին : « Այլ կարծուի, կ'ըսէ Վօլգէր, թէ Գաղղիացիք նոր բաները կը սիրեն . սակայն խոհանոցի և ճօրայի վերաբերող նոր բաներն են միայն անոնց սիրածը, վասն զի նոր ճշմարտութիւնները միշտ կը հալածուին, և հիննալէն ետք միայն կ'ընդունուին : »

Ինչպէս գրեթէ ամեն յառաջադէմ քաղաքներու, նոյնպէս և Պօլսոյ, Բերայի, նա մանաւանդ Պօլսիք — Տէրէի հարուստ և միջին դասու վերաբերող կիներն պճնեւրու և շքեղնալու տրհետը ի բնուստ ուսած կ'երևէին, և իրենց պերճանոց ճօխութեամբը շատերը կրնային այժմեայ Միւրիլլօյի մը կրամ Տավիտ Տ'Անժէի մը զեղասիրական զգացումը նորանոր խանդով և աւելնով արծարծել : Ասոյն նաև տեսակ մը կասկածելի և օտարազգի կիներ, որոնց շարքէն նենդուած դէմքը, փոխուած գոյնը և ներկուած ունքը Վեգուսի մոխիրներուն ներքև թաղուած Պօնպէայի և Հեքթիլանի մի անամօթ Հոսմուհիները կը յիշեցնէին, և որոնց իրանի և հասակի վայելածութիւնն

աւելի նենդամիր գերձակուհիի մը հնարազիտութեան քան թէ բնութեան կամակատարութեան արդիւնքն էր ըստ իս : Արօք Բերայի մէջ ևս չեն պակսիր դերձակներ որոնց մկրտան ու մատնոցն երբեմնակի արարչագործութեան սխալները սրբազրելու սատանութիւնը ունին՝ լանջի մը գողաւոր մասերը լեցնելով, թեի մ'անպատեհ ուսեցքը աներևոյթ ընելով, տձև մէջք մը ձեւաորելով, նիհար մարմնոց մը գլուխութիւն և բոլորաձեւութիւն կազմելով, ազգերը, ուսեր և չղիտեմ ինչեր շինելով :

Այն պարագաներ ուր նայուածքը՝ հեռուէն մանաւանդ՝ կը գողուի և կը խտրուի մկրտախն և մատնոցին այս սիրուն գաւաղութեանն, այլ պարողի մը ձեռքն ոչ բնաւ . . . : Ասիկոց կը հետեի ահա՛ վարսի մ'ընկերային օղտակարութիւնը . . . : Իրաւ է որ դերձակուհիներու այս մեղսակցութիւնն և քրահներու խարէութիւններն մեծ վտանդ և անախորժ հետեանք չեն ունենար ստէպ, նա մանաւանդ մայրաքաղաքներու մէջ, ուր կնախնդիր ամուրիներէ ոմանց պահանջածն է կնկան օժիտը, և չէ թէ բարոյական ճրից հետ մարմնոց իրական և բնական հրապոյրներ, և ուր սրակաղութեան հանդիսէն ետք սկսող մեղքալուսինն մեծազուժար օժտի մը շնորհիւ կրնայ անվրդով շարունակուիլ ոչ միայն եթէ հարսանեկան առագաստի մը խորհրդաւոր շուքերուն մէջ երևան ելնեն դերձակի մը նենդութիւնները, այլ նաև եթէ անախոյ ձեռագրի մը անդ տպուած և կարդացուած գիրք մը յայտնուի իսկ այս նենդութիւնները չտեսնելու դատապարտուած շահասէրին առջև . . . :

Բայց ամեն կնախնդիր ամուրի ոչ ոսկեպաշտ և ոչ ալ յսիրացած է բնական և բարոյական կատարելութեանց նկատմամբ: Բանահիւստական և սիրային զգացումն անմահ է, մարդկութեան յարակայ երկտասարդութեան պէս: Քանի որ անկորնչելի է երկտասարդութիւնը, գիտութեան և իրամոլութեան շունչը բնաւ չպիտի կրնայ թունաւորել բանաստեղծային զգացումը, կամ՝ լաւ ևս է ըսել՝ այն վսեմ օրնայ-խիաները, որք տեսակ մը գիտուններու և իմաստասէրներու, անկարներու և ներքինիներու, չտարբել սիրտերու և թղուկ երեակայութիւններու քմծիծաղը կը շարժեն, և որք կ'անուանին կին, գեղեցիկութիւն, լոյս, գարուն, ծաղիկ, երաժշտութիւն, պար, պատկերահանութիւն, անդրիագոծութիւն, և այլն: Զգայնութեան և երանութեան այս մշտածին առարկաներն ստէյլ յալթանակ կը տանին շահած զիտական կամէութեանց և հաշուեսիրական նուաստ յօժարութեանց զէմ, և ահա՛ այս փողփողուն ոչնչութեանց և գօրութեանց զողն իր երջանկութիւնը փնտռող երիտասարդը կը յառաջադրէ գէթ մասամբ իւր զաննել պայն ամուսնութեան մէջ, չէ՛ թէ օժախ կամ ընկերական փայլուն կացութեան մը փոխարէն իր մարմինը վաճառելով, այլ իր հոգին գեղակազմ և կիրթ արարածի մը նուիրելով, սիրելով և գգուելով: Արդ՝ ցկեանս իր հետն ապրելու և կապուելու սահմանուած կնոջ մը թաղուն գեղակազմութիւնը կամ տձևութիւնը ինչպէս ստուգելու է ան . . . :

Հին ատենները, աւատականութեան և ասպետականութեան ժամանակ իսկ Եւրոպայի յառաջա-

դէմ կարծուած երկիրներու մէջ կինը կը նկատուէր իրր վաճառք, որ նշանաւորէ սուսջ ձեռնհաս անձանց միջոցով կը քննուէր: Հարսնութեան պատրաստուած աղջկան ֆիզիզական յատկութիւնները կը գիտուէին և անթերի սեպուելէն ետք միայն կը վճարուէր սակադինն որ էր երեք հարիւր փող: Այսօր կինն իր մը, գերի մ'ըլլալէ զապրած և իր ինքնիշխանութիւնը հրատարակել սկսած է լուսաւորեալ ազգաց մէջ: Գեղեցիկ գէմք մը գեղեցիկ հողւոյ մը հայելին է, կ'ըսուի: Ռժանք բանահիւստական օգորանք կը համարին այս կարծիքը, այլ կան ներհուն անձինք, որք գիտական ճշմարտութիւն մը կը նշմարեն անոր մէջ, ինչպէս Հ. Սթենէր որ գիտական գեղեցիկութեան և հողւոյ գեղեցիկութեան մէջ կազմարանական յարաբերութիւն մը կը նշմարէ: Բայց շնորհալի երեսի մը շնորհալի մարմնոյ մը նմոյշն ըլլալը տակաւին ընդունուած չէ իբր կազմապիտական ճշմարտութիւն մը: Արհն հետի է այն ժամանակներէն ուր լոկ շղարէնայ կամ ուրիշ նրբաթել կրտաւ շապիկով մը միայն կը ծածկէր իր մարմինը Հստիական իշխանութեան ժամանակ Գերմանիայի մէջ ապրող կանանց պէս, ինչպէս կը հաստատէ Տակիտոս: Այսօր իր մերկութիւնը ծածկելու, ամօթ թաճութեան զգացումը կրելու և իր հրապրներուն արժէքը ծածկոյթի շնորհաբազմապատկելու իրաւունքը ստացած է: Թէև տեղն է ըսելու թէ այս իրաւունքը փայլողներուն մէջ կան երբեմն այնպիսիներ որք իրենց գէմքը շինովի յիկելու, նենդելու, իրենց աչերուն թխազոյն ծիր մը կապուելու և որսին նայող օձին պէս մտանութեամբ

և անխռով սպասելու արիւթիւնը ունին: Աինը հիմա կը հագուի, կը գարգարուի, կը շքեզնայ և կը համբերէ անվտանգ և անահ, վասն զի զիտէ թէ ալ անբռնարարելի է: Ա՛ղղայ թէ բնական թագաւոր մ'է ինքն, և ընկերական թագաւորներուն անդամ իր առջև ձեռնամած ծնրադրելը իր իրաւանց մին կը համարի, երբ սակայն նենդութիւն կամ հեղնութիւն չհամարէ այս ծնրադրութեան մէջ: Ար մերժէ բունութիւնը, և նահատակուելու յոժարութիւն չունի առաջուան պէս: Ազատութիւն ունի միայն նուիրուելու, և այս ազատութեամբ կը հպարտանայ, վասն զի նուիրուելու ազատութիւնը կ'ենթադրէ նաև մերժելու իրաւունքը . . . : Ի՞նչ ընելու է այս իրաւանց և դերձակուհիներու մեքենայութեանց առջև: Հարցնէր տեսակ մը քաջապար ամուրիներու, որք վախի մը յորձանայ և հեշտալի արբուութեան միջոցին մէկ կողմէն պարընկերուհի մը կուրծքին ելել ջը համբել կը ձևացնեն, և միւս կողմէն իրենց ուղածը քննելու և ստուգելու պաշտօնը կը յանձնեն չէ թէ սիրարկու նայուածքի մը, այլ ձեռքին որ յանդուզն է և որ վրիպիլ չզիտէ:

Սակայն, բարեկամ, այս խորհրդածութիւններէս մի հետեցներ թէ իդական սեպին զարդարանայ և հագուստի կապուստի շքեղութեան հակառակորդ եմ: Քան լիցի: Ա՛րնդ ունիմ չափաւոր զարդասիրութիւնը, այլ կը գտտապարտեմ պճնամուլութիւնը: Ազգի մ'ընկերական վիրաց վտանգաւորներուն մին շուայութիւնն է: Մարդկային բարօրութեան միջոցներուն վրայ խորհող ընկերաբաններուն խորին մտա-

տանջութիւն կը պատճառէ ժողովրդոց անտեսական գիճակին բարեօրժան խնդիրը: Այս բարեօրժան իր մէջ կ'ամփոփէ ընդ հանուր յառաջդիմութեան պայմանները: Իրօք միտքը և սիրտը մշակելու չհամար ժամանակը հարկաւոր է, և կարելի չէ այս գործին յառկացեալ ժամանակ ունենալ սաւանց հարստութեան, և հարստութիւն լսելով կ'իմանանք աշխատութեամբ արտադրուած և աւելնալով զիրուած խարսիւնը: Արդ՝ եթէ սաւանց օրինաւոր աշխատութեան չիք հանրական և օրինաւոր հարստութիւն, սաւանց խնայողութեան չիք նաև պահպանութիւն հարստութեան: Գրամ շահին ոչ այնքան քաջութիւն մ'է որքան պահելը, և պահելու առաջին թէ ութիւնն է խնայողութիւնը: Պերձանքն ոսկիին ցեցն է: Արդ ոսկին հետաջինջ կ'ըլլայ, իր հետ կ'անհետի նաև մարդուս իմացական և բարոյական զարդացման սահմանուած ազատ ժամանակը: Ար հուանիմ թէ այժմեայ մարդուս պիտոյից սահմանն ընդ արձակուելու կը միտի լուսաւոր քաղաքակրթութեան մ'աճեցուն պահանջմանց համեմատութեամբ, և նորանոր փոփոքներ կը ծնի չարունակ: Փախաքելու լուսպ սնը զգալու բնական զրդման առջև անխռով մնալու և անտեսական հաւասարակչութիւն պահելու համար թիւերու աջակցութիւնը պէտք չէ անդունել: Թուային ճշմարտութիւններն անողորելի են, նաև աղետալի այն ազգաց համար որք համբել և հաշուել չզիտեն: Այս անդիտութեան պատճառաւ երբ շուայութեան ախտը կը ճարակուի, ընկերային ազլ տից վտանգն ալ անխուսելի կը դառնայ: Յոսեանս չպիտի համարուիմ,

կարծեմ, եթէ ըսեմ թէ այս վտանդին զանդ ակն ար-  
դէն սկսած է հնչել մայրաքաղաքիս Հայոց համար :  
Հայը վայելմանց ծարաւէն կը տանջուի, ցուցամու-  
թեան և սնամասուլեան հոսանքէն կը քշուի դէպ  
անդունդը : Արդէն ազքատութիւնն և տնտեսու-  
թիւնն ընդհանրացած են, և ընկերութեան թէ՛ վե-  
րի և թէ՛ վարի դասերուն մէջ կան այնպիսի թաղուն  
տրամներ, որք զիտոյին սփռում կը պատճառեն  
կարեկցութեան զգացման մը հետ : Բայց, ինչպէս բ-  
սի արդէն, չափաւոր զարդասիրութեան կողմնակիցն  
եմ : Ջարդը գեղեցկութեան խնդիր մ'է, և կնային  
գեղեցկութիւնն և պաճուճանաց շնորհիւ անոր կա-  
տարելազ ործութիւնն ընկերային յաստիջութեան  
և ընդհանուր քաղաքակրթութեան նկատմամբ մեծ  
կարեւորութիւն ունեցած են և պիտի ունենան : Ա-  
թէ՛ իրր սկեպտիկեան՝ հաւանիս որ թերահաւատու-  
թեան ժպիտ մ'ուրուաղրի շրթանցդ վրայ այս տո-  
ղերուս ընթերցումէն ետք, դուցէ՛ շուտով պիտի  
զգաս սխալիլը : Է. Բընտն կանանց պերճանաց և պա-  
ճուճանաց նկատմամբ հետեւեալ կերպով կը խօսի իր  
մի նոր երկին մէջ .

« Աստարեալ փիլիսոփայութեան մ'տող և գեղեց-  
կութիւնը չէ թէ շինճու առաւելութիւն մը, վտանգ  
մը, անպատեհութիւն մ'է, այլ առաքինութեան պէս՝  
երկնային պարզ և մը : Գեղեցկութիւնն առաքինու-  
թեան արժէքը ունի : Հանճարեղ մարդուն կամ ա-  
ռաքինի կնոջ պէս գեղանի կինն ալ Աստուծոյ նպա-  
տակին մի կերպարանը, երկնային դիտարութեանց  
մին կ'արտայայտէ : Գեղանի կինն կ'զգայ իր այս յատ-

կութիւնը, և անկէ կը հետեւի իր մեծարտութիւնը :  
Բնազգմամբ կ'զգայ այն անբու գանձը զոր իր մար-  
մնոյն վրայ կը կրէ : Շատ ազգի գիտէ թէ առանց  
խելքի, առանց տաղանդի, առանց մեծ առաքինու-  
թեան ինքն Աստուծոյ առաջին ցոյցերուն կարող  
դասուած է : Աւ ինչո՞ւ գեղանի կինն արդիւրի իրեն  
տրուած պարզեին արժէքը երեւան հանելու, իրեն  
բաժին ընկած ազամանդը ընդելու գանելու : Ջար-  
դարուելով պարտ մը կը կատարէ ան : Արդ ործադրել  
ճարտարութիւն մը, ընտիր ճարտարութիւն մը, որ  
կերպիւ իւր ճարտարութեանց ամենէն շնորհալին  
է : Չհաւանինք մուրտելու այն բաժնիճաղէն, զոր  
ինչ ինչ բառեր սնամիտ անձանց շրթանց վրայ կը  
զրոյսեն : Հանճարեղութեան գարնին կը շնորհուի  
այն Յոյն ճարտարագիտին (artiste) որ կրցաւ լուծել  
անշոյժ խնդիրներու փափկադոյնը, այսինքն զարդա-  
րել մարդկային մարմինը, այսինքն զարդարել ինչ որ  
արդէն կատարելութիւնն է իսկ, և սակայն կան մար-  
դիկ որք Արարչին գեղեցկադոյն գործին այսինքն  
կնոջ՝ իր գեղեցկութեան մասին՝ Աստուծոյ հետ գոր-  
ծակցելու փորձը յարդ ու զարդի խնդիր մը կը հա-  
մարին : Կնոջ զարդարուելու արհեստն իր բոլոր նրբու-  
թիւններով իրեն յատուկ մեծ ճարտարագիտութիւն  
մ'է : Այս ճարտարագիտութեան մէջ յաջողիլ կրցող  
զարեբն և երկիրներն մեծ զարեբն են : »\*

Կը տեսնես որ Բընտն հեթանոսական աշխարհի

\* St'e Marc-Aurèle et la fin du monde antique.  
Հեղինակ Է. Բընտ :

վախճանը և քրիստոնէութեան տիրապետութեան սկզբնաւորութիւնը նկարագրելու համար գիրք մը կը շինէ, այլ և այլ ազանց ից և իրապաշտութեանց վրայ փիլիսոփայօրէն խորհելու և գրելու ատեն առիթ կը գտնէ և պատեհ կը համարի կնային գեղեցկութեան և զարդագիտութեան վրայ աւելի քննահետաքրքան թէ գիտական տեսութեամբ խօսելու, որով ծանրակշիւ և ոչ այնքան ախորժելի մատենի մ'ընթերցումն ալ հրատարակ'ստանայ: Բայց Յէսասէ Աննաքոնսթեան անուանի հեղինակն կնային գեղեցկութիւնը երկնային հեղինակութեան մը վերադրելու, և յարգութեամբ շնորհիւ Ֆիլիդական հրատարակներու կատարելագործութիւնը հաստատելու ժամանակ զանց կ'ընէ նշանակել ընդհանուր և անվրիպելի յատկանիշեր, որով կարելի ըլլար աշխարհէ գանաղանել և ընտրել թէ կնային և թէ առնային գեղեցկութիւնը, և որք ամեն երկիրներու և ազգերու մէջ անոր յայտարար նշանները սեպուէին: Իր հզօր մտքին անարժան չէր այս նիւթը: Սակայն երբ Որնան տղէտ կնոջ մը գեղեցկութիւնը իսկ երկնային սարգէ մը կը համարի, իր ընթերցողաց իրաւունք կը տայ կարծելու թէ ինքն մարդուս բարոյական գեղեցկութեան և Ֆիլիդական գեղեցկութեան մէջ բնական յարաբերութեան մ'էութիւնը չընդունիր, այսինքն թէ ստորին իմացականութեան տէր անձ մը կրնայ գեղեցիկ, ինչպէս և բարձր իմացականութեան տէր անձ մ'ալ կրնայ աղեղ ըլլալ, և հետեւաբար կը մերժէ «երեսին հոգւոյ հայելին» ըլլալը, և կամ հակասութեան մէջ կ'ընկնի:

Իրօք երևելի գիտուններ՝ կոթնելով կազմադրատական մեծ օրէնի մը վրայ, որ է «մարդկային գործարանաց զարգացումն իրենց տրուած վարժութեան համեմատութեամբ» կը հաստատեն թէ գեղեցիկ բնաւորութեան մը, այսինքն իմացական և բարոյական ձրից գեղութիւնները մարդկային երեսին վրայ կ'արտադրեն շարժուն ձևեր, որք կ'անուանին արտայայտութիւն գէմքի, և որք ստիտութեամբ եթէ սակալ կրկնուին, մնայուն և անշարժ կ'ըլլան, փոփոխելով ոչ միայն մարմնոյն կաշին և զնդերքը, այլ նաև երեսին բարեձևութիւնը կազմող ոսկրները: Ասկէ բնականաբար կը հետևի թէ իմացական և բարոյական տղեղութիւններն ալ հակառակ աղբուրը կ'ունենան մարդկային գէմքին վրայ: Այս տեսութեամբ կազմադրականութեան անմարդկային ճակատին, խնձորին (pomme), քթին ու բերնին այս ինչ կամ այն ինչ ձևը գեղեցկութեան և այս ինչ կամ այն ինչ ձևը տղեղութեան նշան կը համարին,\* և անկից ըստ այնմ հետևութիւններ կը հանեն նաև բնաւորութեան մը, մարին և հոգւոյն գեղութեան և տղեղութեան նկատմամբ: Բայց չեմ կարծեր թէ մարդուս մարին և իր երեսին գեղեցկութեանց մէջ գտնուած բնա-

\* Օրինակի աղագաւ՝ ճակատին ցեղութիւնը, ծամելեաց դէպ ի դուրս յառաջանալը, արտերուն ցոյցալիս դուրս կարկառիլը, քրին կարճութիւնը եւ տափարակութիւնը, ագերուն իրարմէ ցեղաւորութիւնը երեսի գեղեցկութեան ցկատմամբ պակասութիւնը կը սեպուին:

կան յարարերութիւնը տակաւին անցած ըլլայ զիտական անվիճելի ճշմարտութեանց կարգը: Այս յարարերութիւնը գուցէ աւելի ստուգանման քան թէ ստոյգ իրողութիւն մ'է: Բայց որոնք որ զիմական և մարմնայ այլ մասանց զեղութեան նշանները ցոյց կը տան, հելլենական հին տիպարին տեսքէն կազմուած գեղազիրտական ըմբռնումներու համեմատ կը խորհրներութիւն կայ: Արդ՝ ըստ իս գեղազիրտական ըմբռնումին և գեղասիրական զգացումին մէջ տարբերութիւն կայ: Աւերուպայի կամ ուրիշ յառաջագէտ երկրի մը ճարտարագէտն իր երեւակայութեամբ և գազափարներով կ'ստեղծէ իտէական գեղեցկութեան տիպարը, և իր երկին վրայ չընդունիր այն ամեն ձևերը, որք՝ բազմատուելով հելլենական տիպարին ձևերուն հետ՝ իրը ազգութեան հանդամանք կ'երևին իրեն: Բայց՝ ընդ հանուր կերպիւ խօսելով՝ մարդս գեղեցկութեան, նա մանաւանդ կնային գեղեցկութեան մասին աւելի գեղասիրական զգացումով քան թէ գեղազիրտական ըմբռնումով գատողութիւն և ընտրութիւն կ'ընէ: Ան կ'զգայ գեղեցկութիւնը և չէ թէ կը ճանչէ բնածին գաղափարներու համեմատ: Սովորութիւնն և բնաւորութեան ազնիւ յատկութիւնները մեծապէս կը նպաստեն այս զգացումը ներշնչելու, և ահա՛ այս պատճառաւ ինչ որ Աւերուպայի կամ ուրիշ լուսաւորեալ աշխարհի մը մէջ ֆիլիղիական գեղեցկութեան յայտարար և անվրէպ նշանը կը սեպուի, Ասիոյ, Ափրիկէի, Ովկիանիայի մէջ կրնայ ներհակ տպաւորութիւն արտադրել մարդուս վրայ: Բնական է թէ ամեն կին աշխարհիս հինգ մասանց մէջ մի

և նոյն գեղազիրտական կամ գեղասիրական գաղափարը կամ զգացումը չտար: Ասկայն Աւերուպայի ճարտարագիտութեան (art) տեսութեամբ մարդկային գեղեցկութիւնն ունի ընտրութեան և գատողութեան յատուկ նշաններ, քրիստոս մը, եթէ կ'ուզես, բայց ամեն մարդու գեղասիրական զգացման տեսութեամբ չունի: Հելլենացոց և Հուսայեցոց ստեղծական (plastique) ճարտարութենէն թելադրուած պոփմեայ ճարտարագիտին ընտրութեան և գատողութեան յատուկ նշաններուն երկուքը միայն ընդհանրական և անվիճելի հանդամանք ունին ըստ իս. մին է մարդկային մարմնայ յուսկերպային ֆէշը (ligne elliptique) որ զլուսէն մինչև ոտքը կը տարածուի յամենուստ և ամենուրեք, և որ միևնոյն ձուակերպութեամբ խորհրդաւոր և զմայլելի շրջաններ կը կազմէ. միւսն է ֆոնը: Բայց՝ ինչպէս ըսի արդէն՝ մարդուս թէ գեղասիրական և թէ գեղազիրտական ճաշակը գոուող բոլոր ախորժելի բարեձևութիւններն այս երկու նշաններէն չեն բաղկանար միայն: Ար տեսնես այս կամ այն կիներ, որուն թէ բարոյական և թէ ֆիլիղիական ճրից ամբողջութենէն հուսկ յետոյ քու վրայ կ'արտադրել խորին տպաւորութիւն մ'առանց մամանակ տալու քեզ որ մի առ մի զննես և համրես այս տպաւորութիւնը կազմող հանդամանքը և զայն բազմատես ուրիշին նոյն տեսակ յատկութեանց հետ: Ասկիտ սիրել այդ կիներ, և՛ որովհետև սիրածդ է ան՝ քեզի համար աշխարհիս առաջին գեղեցիկն է մինչև սիրոյդ գաղբիլը: Անոր մտղերը, երեսին կըրածնուութիւնը կամ հաւկթոձևութիւնը, ճակատը, ունքը,

աչքը, քիթը, բերանը, շրթ ունքը, ակուաները, ա-  
կանջները, վիզը, կուրծքը, ձեռները, սրունքը, ու-  
քը քեզի համար մարմնապիւն չքեզութեան մը ներդաշ-  
նակ մասունքը կը կազմեն՝ գեղասիրական զգացմանդ  
համեմատ գեղեցկութեան հրաշակերտ մը կը ներկա-  
յեն, այլ անտարբերի մը, այլ Չինացիի մը, Ապխսի-  
նիացիի մը, Օթմանթօթի մը վրայ ոչ միայն մի և նոյն  
հաճելի տպաւորութիւնը չալիտի ընեն, այլ նոյն իսկ  
ճարտարագէտ մ'անշուշտ պահաւթ իւններ պիտի  
նշմարէ անոնց վրայ: Ըսել է թէ անոնք մարդկապիւն  
գեղեցկութեան բացարձակ և տիեզերական անվրի-  
պելի նշանները չեն սեպուիր, քանի որ՝ ինչպէս կ'ը-  
սէ Պիւլսնէր՝ գեղեցկութեան գաղափարը բնածին չէ:

Այս նիւթին վրայ ուզեցի կարծիքներս քել զմ'եր-  
կարօրէն յայտնել, դիտելով թէ գեղեցկութեան,  
նա մանաւանդ երեսի գեղեցկութեան խնդիրն ազգի  
մը ցեղական բարեշրջման և իմացական յառաջդիմու-  
թեան հետ սերտիւ յարաբերութիւն ունեցող խնդիր-  
ներուն մին է:

Աերջ տալով շեղումիս, որուն տեղի տուին կնա-  
յին զարդարասիրութիւնն և ասոր նկատմամբ Բընա-  
նին յայտնած կարծիքներուն մին, կը կրկնեմ թէ  
կինն իրաւունք ունի պարզօրէն և չէ թէ շուայօրէն  
զարդարուելու: Լաւ կտրուած և յարգարուած բո-  
պայի մը խնդիրը կը պարունակէ իր մէջ յեղափոխու-  
թիւն մ'որ յառաջդիմութեան տեսութեամբ նկա-  
տուելով անհաշուելի հետեանք ունեցած է որոնց  
համար որ հելլենական և հռոմէական քաղաքակրթու-  
թեանց ժամանակներու կնոջ և այժմեայ կնոջ վիճա-

Պին տարբերութիւնը փոքր ի շատէ ուսումնասիրած  
են:

Իրկմայիտն Կալաթէի գեղահրաշ արձանը շինելէն  
ետք անոր սիրահարեցաւ, և մերմերին անդութ և  
անզոյ գեղեցկութեան վրայ ափսոսաց, զի կենդ անի  
չէր այն: Աստղիկ սիրարեկ ճարտարագիտին դ ժրագ-  
դութենէն արդ ահատութեամբ յուզուեցաւ և հոգի  
տուաւ արձանին՝ որ կիրթ ճաշակի մը համար՝ գիծե-  
բու և ձևերու շքեղութեան հրաշակերտ մ'էր, և Կա-  
լաթէի անդրին կենդ անութեանը հետ նոր գեղ մը  
ստացաւ, և Կիրարոսի ճարտարագէտն իր սիրոյն աւ-  
արկային կրկին գեղեցկութեամբը զգլխեցաւ:

Կինն ևս բնութեան բովին մէջ ձուլուած գեղա-  
քանդակ և ասուն անդրի մ'է, բայց այս բնական  
հրաշակերտին ի վազուց անտի կը պակսէր շեշտ մը,  
հոգի մը, և այս պակասը լեցուեցաւ բոպային գիւտու-  
ղը: Իր սիրտը և միտքը մշակելու իրաւունքէն ստաջ  
այրը հրապուրելու իրաւանց տիրուհին ըլլալու պար-  
տաւոր էր ան, հրապոյր որ յորդ ու զարդի շքեղու-  
թենէն կ'արտագրի, և որ իրեն համար Համէթին  
Թոս պէ օր նօթ Թոս պէ ին կարևորութիւնը ունի: Դիր  
կնոջ մտքին իրաւանց տաջն արդեւ մը, և թերես ան-  
մուռնչ համակերպի այդ բռնարարութեան, որուն  
մէջ ոչ այնքան վտանգ կը տեսնէ իր անմիջական շա-  
հերուն գէմ: Սակայն դիր օրէն մ'որ իր մազերը հիւ-  
սելու, իրանը գօրսէի մը մէջ ճնշելու, մարմնը բո-  
պայով մը ձեւաւորելու, վերջապէս իր բնական գե-  
ղեցկութեան շնորհք մը, նոր հոգի մը տալու ազա-  
տութիւնը խափանէ, և անոյ կ'զգայ թէ իր գլխաւոր

ոյժը, իր առաջին զէնքը, իր էութիւնն իսկ վտանգի մէջ է, և կ'ընդվզի. թերևս ապստամբի անգամ այն ազնուապետական Հռոմուհիներուն պէս որք իրենց ամուսինները գրաւող Հռոմէական էֆէրններու դէմ առաւելութեամբ և յաղթութեան հաւանականութեամբ մրցելու համար ասոնց պերճանաց և պճնանաց օրինակին կը հետեւէին, և որք իրենց հազուելու շքուելու իրաւունքը բռնաբարող Օթէա:ի օրէնքը ջնջել տուն՝ Հռոմի հրապարակին վրայ հաւքուելով: Հասան իրենց նպատակին. կրցան Փրինէի, Լախաներու հետևորդ հելլենական էթէրններու հետ մրցիլ և ասոնց յանկուցիչ յատկութիւններէն զգուշացնել իրենց ամուսինները: Չկարծուիր: Հին ժամանակի Երէֆներէ ոմանց գլխաւոր ոյժն ու հրապոյրն չէ թէ միայն իրենց պերճանքէն և հազուստի շքեղութենէն կ'արտադրուէին, այլ նաև իրենց սիրաէն որ բանահիւսական զգացմանց մշտավաւ հնոց մ'էր, իրենց միտքէն որ գիտական և իմաստասիրական դաղափարաց դարբնոց մ'եղած էր, և որով կը ներշնչէին իրենց ժամանակի հանճարները իսկ:

Եթէ հաւանիմ սակաւամիւ բացառութիւններ ընդունելու, չեմ վարանիր կարծելու թէ ինչպէս Պօլսոց ամեն նշանաւոր արուարձաններուն և դիւղերուն, նոյնպէս և Պէօյիւք-Տէրէի մէջ կիները, վերին և միջին դասու վերաբերող կիները տակաւին պերճանքը և զարդարանքը բաւ կը համարին իր միջոց և ոյժ գեղեցկանալու և իշխելու. իսկ իրենց սիրաբ մշակել, իսկ իրենց միտքը յղիւլ աւելորդ և անօգուտ զարդ, այսինքն զանց կ'ընեն անկորնչելի դեղեցկութիւնը,

և միայն վաղամեռ հրապոյրներու կը յատկացնեն ամեն ջանք և զոհողութիւն:

Բանահիւսութիւն, իմաստասիրութիւն, գիտութիւն, պատմութիւն, յառաջդիմութիւն, ազգային վերաշինութիւն կամ անկում, ահա խնդիրներ որք ձանձրալի կը նկատուին: Լամարգին, Տը Միւսէ, Միշլէ, Լիթրէ, Պէրնար, Սըէնսէր, Տըլլըր, Պիւխներ, ահա անուններ որք թերևս դաս մը կանանց չրթանց ծանօթ են, այլ մտաց բոլորովին անհպելի և անծանօթ, անպատեհութիւն որուն գլխաւոր պատասխանատուութիւնն արու սեսին կը պատկանի: Եկուր, մտիր Բերայի մէջ տուն մ'որուն նմանները չեն պակսիր և ուր ոչ ոք կը հարցնէ քեզ թէ խից՞դ ազա մը կը կրէ՞ թէ ոչ, բաւական է որ քսակը սակերուզիս և կօշիկը փայլուն ըլլայ, և ուր խաղի սեղանի մը բոլորովքը հաւքուող ուրուականներէ երկու քայլ անդին իր բազմոցին վրայ կը հանդչի ակիկնն որ պճնամուրթեան կենդանի տխարոն է: Դքսուհի յատուկ կամէութիւններ և յօժարութիւններ ցոյց կը տայ, ամենուն ուշը կը դրաւէ իր խորհուն զէմքովը, գրգռիչ զիրքովը, պաճուճանաց պերճութեամբը, հրամայական ձևերով, և մերթ ընդ մերթ արձակուած գրեթէ անարդու նայուածքովը: Անհոգ ապէս երկնցած է հոն, գլուխը թեւին մէջն է առած, և կը խորհի խորունկ կերպով, չէ թէ խաղամոլներուն սեղանը ստապալելու, խօսակցութեան նիւթեր ընծայելու և մտային վայելման ճաշակը անոնց նուիրելու համար, վասն զի վերնատունը, դու իմն միտքը, գրեթէ թափուր է, այլ մտթեմադիլական ճշդութեամբ գտնեա

լու համար բողոքի մ'այն սահմանը, որով կարելի ըլլայ սրբահանդիսի մը մէջ մերկ երևիլ՝ հագուած ըլլալէ առանց դադրելու :

Ահա այս և այս տեսակ խորհրդածութիւններով և տարւորութիւններով գրաւուած կը շարունակէի յաջ և յահեակ սրտոյտ ընել երեկոյեան ժամանակ և դիտելու համար նայիլ, երբ հանդիպեցայ քանի մը ծանօթներու, որոնց հետ դիչերը անցուցի, և որոնց վրայ թերևս խօսիմ' ուրիշ ուղեգրութեան մը մէջ :

Պէտլուք-Տէրէ, 1882 :

Վերջ



ԵՐԿԱՍԹԻՐՈՒԹԻՒՆՅՔ

ԳՐ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ

	Պրնիք
ՄԱՂԻԿ, Հանդէս գրական և իմաստասիրական. հինգ րարուան կողմուած (1860-65) .	60
ԹՇՈՒԱՌՆԵՐ (Վ. Հիւլօ) 10 հարոր .	31
ՄԱԹԻԼՏ (Էօժէն Սիւ) 4 » . . .	15 78
ՄԱՆՕՆ ԼԵՍԲՕ (Ապէ Բրեվօ) 2 » . . .	2 10
ՄԱՐԻՕՆ ՏԸ ԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԻՔԸ (Էօժէն Տը Միլլուր) 5 հարոր	10
ՊԱՐՈՆ ՏԸ ԳԱՄՕՐ (Օգթալ Ֆէյիէ) 2 »	5 20
ՌԱՖԱՅԷԼ (Լամարդին) . . . . .	2 60
ՕՐԻՈՐԳ ԼԱ ԳԵՆԹԻՆԻ (Ժ. Սան) . . . . .	3 15
ԳԱՐՈՒՍ ՄԷԿ ԶԱԽԱԿԻՆ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԻՔԸ (Ալ. Տը Միլուէ) 2 հարոր . . . . .	5 50
ՍՕՆ ԱՊԵՆՍԵՐԱԺ (Շաթօպրիան) . . . . .	85
ՌԿԼԵՒՐՈՒԹԻՒՆ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ .	2 20





ՀՀ Ազգային գրադարան



NL0342331

